Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝* **http://www.armin.am**

*Էլ. փոստ՝* **info@armin.am**



# ԵՂԻՇԷ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

## ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ

ԿԱԶՄԵՑ ԵՒ ԽՄԲԱԳՐԵՑ՝

ՆՈՐԱՅՐ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

«ՄՈՒՂՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ • ԵՐԵՒԱՆ 2006

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3(2Հ)
Պ 163

Պ 163 Պահլաւունի Եղիշէ: Յուշամատեան
Կազմեց եւ խմբագրեց՝ Ն. Պահլաւունի.- Եր.:
Մուղնի, 2006, 304 էջ

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 99941-33-43-8
© «ՄՈՒՂՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ • ԵՐԵՒԱՆ 2006

## Շնորհակալիք

Երախտագիտական զգացումներս եւ շնորհակալութիւններս ԱԱ Պատմութեան ինստիտուտի տնօրէն, պրոֆ. Աշոտ Մելքոնեանին իր առաջաբանի առթիւ, եւ «Մուղնի» հրատարակչականի ղեկավարութեանն ու աշխատակազմին յատկապէս Ռուզան Պետրոսեանին եւ Վարդան Դալլաքեանին իրենց նուիրուած ու ջանադիր աշխատանքի համար:

Նորայր Պահլաւունի

Երբ թերթում ես Եղիշէ Պահլաւունու սոյն աշխատանքը, ամեն մի էջ քեզ ներքաշում է աւելի ու աւելի հետաքրքիր դէպքերի նկարագրութեան մէջ, որոնցում, բացի կատարուած իրողութիւններից, որոնք ոչ միայն ականատեսի ու մասնակցի, այլեւ վարպետ շարադրողի կողմից են ներկայացւում, կան նաեւ ժամանակները բնորոշող շատ փաստեր ու տուեալներ:

Ցաւօք, մեր պատմագրութեան մէջ շատ սակաւ են այն աշխատութիւնները, ուր հեղինակները կարողանում են վեր կանգնել իրենց անհատական մօտեցումներից, առաւել եւս կուսակցական ու հատուածական գայթակղութիւնից, իսկ Պահլաւունու տուեալ գործում այդ հարցը աւելի քան լուծուած է: Հեղինակը անկողմնակալ է, իրատես թէ՛ երեւոյթներն ու դէպքերը նկարագրելիս, թէ՛ անհատներին բնութագրելիս: Գրքում անաչառօրէն ներկայացուած են տարբեր գաղափարների գործիչներ իրենց երբեմն հակամերժ, երբեմն շինիչ ու օգտաշատ գործունէութեամբ: Ե.Պահլաւունու թէ՛ հաւատը, թէ՛ նուիրումը մէկն է. հայրենիք, հող, ժողովուրդ, որոնց շուրջը ծաւալւում են դէպքերն ու դէմքերը:

Հրատարակչութիւնը իր շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսքն է բերում սփիւռքահայ մտաւորական, հասարակական, ազգային գործիչ Նորայր Պահլաւունուն ոչ միայն սոյն գիրքը լոյս աշխարհ բերելու նախաձեռնութեան ու հովանաւորութեան, այլեւ ոչ պակաս կարեւոր՝ նախնիների յիշատակը յարգելու, վառ պահելու եւ գնահատելու համար:

Սա ապացոյց է իր ժողովրդի, իր ծնողաց ու նախնիների նկատմամբ ունեցած թէ՛ սիրոյ, թէ՛ պարտքի ու պարտականութեան զգացողութեան: Նա եւս իր նախնեաց արեան կանչով դարձել է մշակն իր ժողովրդի, ինչպէս իր ազնուական հայրն էր՝ մարտի դաշտում:

Երեւոյթ, որ խիստ ցպահանջ է այսօր եւ բարի օրինակ մեր երիտասարդութեան դաստիարակութեան գործում:

Հրատարակչութեան կողմից

## Առաջաբան

Իւրաքանչիւր ժողովրդի կեանքում լինում են շրջադարձային ժամանակաշրջաններ, որոնց ընթացքում պատմութեան թատերաբեմ իջած բազմաթիւ գործիչներ դառնում են այդ շրջափուլի տարեգրութեան անմիջական ստեղծողներն ու առաւել գործուն դէմքերը: Սակայն իրերի բերումով պատմութիւնը ոչ միշտ է, որ արձանագրում է իր արժանաւոր զաւակների կենսագրութեան յիշարժան դրուագները, յաճախ նոյնիսկ առհասարակ մոռացութեան է տալիս նրանց ողջ հայրենանուէր գործունէութիւնը: Կարելի է ասել, որ այդօրինակ գործիչների մի մասը բաժին է ընկնում 20րդ դարի առաջին տասնամեակների փոթորկուն ժամանակաշրջանին, որը տրամաբանօրէն ասպարէզ է հանել ազգային գործիչների մի ողջ աստղաբոյլ:

Ուրախալի է, որ վերջին տարիներին բազմաթիւ յայտնի դէմքերի գործունէութիւնը լուսաբանող աշխատութիւնների կողքին հրատարակւել են գրքեր, որոնցում արժանին է հատուցւում նաեւ ազգային այն գործիչներին, որոնք որոշակի եղանակ են ստեղծել մասնաւորապէս 19րդ դարի վերջի եւ 20րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման, Առաջին աշխարհամարտի տարիներին կամաւորական շարժման ծաւալման, Հայաստանի 1918-1920թթ. Հանրապետութեան կայացման գործում:

Այդպիսի անձանցից է Եղիշէ Պահլաւունին՝ ժամանակի ճանաչուած դէմքերից մէկը. Նշանաւոր ազգային-կուսակցական ու հասարակական գործիչը, 20րդ դարի սկզբին Սուրմալուի գաւառում տեղի ունեցած կարեւորագոյն ազգային գործերի ականատեսը, Անդրանիկի ու Իշխան Արղութեանի կամաւորական գնդերի մարտիկը, եւ որ շատ աւելի կարեւոր է՝ 1918թ. ամռանն ու աշնանը Գանձակի ու Բագւի հայութեան ինքնապաշտպանութեան ղեկավարներից մէկը, Հայաստանի առաջին նորանկախ հանրապետութեան կայացմանն իր նպաստը բերած գործիչը, մինչեւ իր կեանքի վերջը քաղաքական վտարանդու կարգավիճակով իրանահայ գաղութում հայապահպան գործունէութիւն ծաւալած արուեստասէր մտաւորականը:

Հայ ընթերցողի ուշադրութեանը ներկայացւող սոյն գիրքը, որն ամենայն բարեխղճութեամբ հրատարակութեան է պատրաստել սփիւռքահայ գործիչ, Եղիշէ Պահլաւունու արժանաւոր զաւակ Նորայր Պահլաւունին, գալիս է նոր լոյս սփռելու անցեալ դարի առաջին քառորդի խռովայոյզ իրադարձութիւնների վրայ, ինչու չէ, նաեւ՝ սրբագրելու հանրայայտ դէպքերի ու դէմքերի հետ կապւած առանձին դրւագներ:

Աշխատանքն ունի հետաքրքրական կառուցւածք, որն աւելի նպատակային է դարձնում ինչպէս յուշերի հեղինակ Եղիշէ Պահլաւունու խօսքը, այնպէս էլ գրքի կազմող Նորայր Պահլաւունու բարի ցանկութիւնը՝ հանրութեանը հասանելի դարձնել հայոց պատմութեան մոռացւած ու ուշագրաւ էջերը, վեր հանել ինչ-ինչ հանգամանքների բերումով դեռ ստւերում մնացած մարդկանց կեանքի յիշարժան դրւագները եւ կատարել որդիական բնական ձգտումը՝ հրատարակւած տեսնել հայրական յուշերի հաւաքածուն:

Առաջին բաժնում տեղ են գտել մամուլում ժամանակի տարբեր գործիչների յուշ-գնահատականները Եղիշէ Պահլաւունու ազգանւէր գործունէութեան մասին: Մասնաւորապէս մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում 1918թ. Բագւի ինքնապաշտպանութեան եւ հայ գաղթականութեան փրկութեան գործում Ե. Պահլաւունու ներդրման մասին նիւթերը: Ուշագրաւ է, որ ժողովածուի երկրորդ մասում, ուր արդէն զետեղւած են Եղիշէ Պահլաւունու հեղինակած զանազան յօդւածները, ընթերցողը միեւնոյն պատմական իրադարձութեան մասին գտնում է նոյն պատասխանը, այսինքն՝ տարբեր ականատեսների ու Պահլաւունու հաղորդումները – ե՛ւ նոյնանում են, եւ լրացնում միմեանց՝ կասկածներ չթողնելով դէպքերի իսկութեան վերաբերեալ հետազօտողի մօտ:

Ե. Պահլաւունու յօդւածները նոր խօսք են պարունակում յատկապէս 1918 թ. Արեւելեան Անդրկովկասի պատմութեան փոթորկուն ժամանակաշրջանի վերաբերեալ: Թուրքական ներխուժման պայմաններում, նորահռչակ երեք հանրապետութիւնների միջեւ ստեղծւած բարդ կացութեան մէջ դէպքերի զարգացումը պատմական պատասխանատւութեան առաջ է կանգնեցնում մի շարք ազգային-զինւորական գործիչների՝ Համազասպ Սրւանձտեանցին, Սեբաստացի Մուրադին, տւեալ դէպքում՝ Եղիշէ Պահլաւունուն: Վերջինս ՀՅԴ կուսակցութեան հիմնադիրներից Ռոստոմ (Ստեփան) Զօրեանի յանձնարարականով ստանձնում է մի դժւարին գործ՝ Շամախու եւ Գէօգչայի ուղղութեամբ արշաւող թուրք-թաթարական եւ նրանց միացած վրաց մենշեւիկեան ուժերից տեղի հայութեանն ու դէպի Բագու տանող ճանապարհը պաշտպանելու զօրաջոկատներից մէկի ղեկավարութիւնը: Ընդ որում, այդ կարեւոր պաշտօնում Պահլաւունու թեկնածութիւնը պաշտպանում են ոչ միայն դաշնակցականները, որոնց ձեռքում էր իրական զինական ուժը, այլեւ Բագւի խորհրդի նախագահ, նշանաւոր բոլշեւիկ Ստեփան Շահումեանն ու նրա կուսակից ընկերները: Եւ ինչպէս ցոյց տւեց կեանքը, այդ ընտրութիւնն արդարացնում է իրեն. Ե. Պահլաւունու ջոկատը, որին հանդիսաւորութեամբ ճանապարհ է դնում Բագւի գրեթէ ողջ քրիստոնեայ բնակչութիւնը, շնորհիւ մղած ծանր կռիւների կարողանում է ամիսներ շարունակ կասեցնել թշնամու առաջխաղացումը եւ ապահովել հայ բնակչութեան կազմակերպւած նահանջը:

Յատկանշական է, որ այդ մարտերի մանրամասների նկարագրութեան ընթացքում հեղինակը բացայայտում է բազմաթիւ դրւագներ, որոնք առ այսօր դուրս են մնացել ուսումնասիրողների ու ընթերցողների ուշադրութիւնից: Բանն այն է, որ պատմութեանն աւելի ծանօթ էին օգոստոսի 4ին հերոսաբար զոհւած Սեբաստացի Մուրադի, ինչպէս եւ Համազասպի ջոկատների ծառայութիւնները, մինչդեռ Եղիշէ Պահլաւունու զօրաջոկատի ղեկավարութիւնը մնացել էր ստւերի տակ: Ուսումնասիրողների համար մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում մի շարք նորայայտ փաստեր՝ կապւած ՀՅ Դաշնակցութեան անդամների, մասնաւորպէս Ռոստոմի ու Ա. Գիւլխանդանեանի եւ լայնախոհ բոլշեւիկներ Ստ. Շահումեանի, Ալ. Ջափարիձէի եւ այլոց փոխգործակցութեան մասին: Պահլաւունին արժանին է մատուցում այն համայնավար գործիչներին, որոնք, հասկանալով Բագւի ուղղութիւնը պաշտպանելու հարցում դաշնակցականներով համալրւած ջոկատների բացառիկ նշանակութիւնը, չեն առաջնորդւել նեղ կուսակցական շահերով եւ ազգային խնդիրներն աւելի բարձր դասելով, գնացել են համագործակցութեան: Նոյն կերպ վարւել է ինքը՝ Պահլաւունին. որոշակի գաղափարական տարաձայնութիւնների պարագային մտերմութիւն հաստատելով համայնավարներ Շահումեանի, Ջափարիձէի, Պետրովի եւ այլոց հետ: Վերջիններս էլ չեն զլացել պատեհ առիթի դեպքում իրենց հիացմունքը յայտնել Պահլաւունու հասցէին:

Նման ազգօգուտ գործելակերպի դրսեւորումներ տեսնում ենք նաեւ 1921թւին, երբ նախկին իշխանութեան ներկայացուցիչների, այդ թւում Ե. Պահլաւունու նկատմամբ հանդէս են բերել խորհրդային ղեկավարներ Ալ. Մեասնիկեանն ու Ս. Տէր-Գաբրիէլեանը՝ ստանձնելով իրենց երաշխաւորութեամբ նրան չեկայի բանտից ազատ արձակելու վտանգաւոր յանձ-

նառութիւնը: 1922թ. Ջէմալ փաշայի սպանութեան առնչութեամբ, երբ Թիֆլիսում կրկին ձերբակալւում է Պահլաւունին, նման քայլ կատարում է երբեմնի կամաւորական, այժմ բոլշեւիկ, ռազմական ու պետական գործիչ Հայկ Բժշկեանը՝ Գայը: Նրան եւս յաջողւում է իր անձնական երաշխաւորութեամբ ազատել իր վաղեմի զինակից ընկերոջը: Ցաւօք, նման փոխգործակցութեան դէպքերը եզակի են եղել եւ ընդհանուր կուսակցական-քաղաքական իրարամերժութեան պայմաններում չեն կարողացել դառնալ անհանդուրժողականութեան արիւնալի հետեւանքների կանխարգելիչ գործօններ ու կրել են միայն անձնական բնոյթ:

Ե. Պահլաւունու յուշերում մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում Վրաստանի Դեմոկրատական Հանրապետութեան կառավարութեան ցուցումով թուրք-թաթարական ուժերի կողքին, հայկական ջոկատների դէմ կռւող զօրավար Լ. Մաղալովի (Մաղաշւիլի) զօրախմբի կրած խայտառակ պարտութեան անցքերը: Բացի հայութեան արեանը ծարաւի թուրք-թաթարների կողմն անցնելու վրաց իշխանութիւնների դաւաճանական քայլը շատ ծանր է նստում վրացիների վրայ. հարիւրաւոր երիտասարդներ զոհւում են Պահլաւունու ուժերի դեմ կռւում կամ գերի ընկնում: Ի դէպ, մազապուրծ փախուստի դիմած Մաղալովը յետագայում դառնում է անգլիացիների ճնշմամբ Վրաստանին բռնակցած Ջաւախքի հայութեան նկատմամբ պատժամիջոցներ իրականցնող զօրախմբի հրամանատարը:

Պատմագիտական արժէքից զատ հրատարակւող գիրքն ունի դաստիարակչական մեծ նշանակութիւն: Այն ամբողջապէս տոգորուած է հայրենասիրական շնչով: Այդ կոնտեքստից դուրս չեն մնում յուշերի հեղինակի մայրն ու կինը, որոնք զաւակի ու ամուսնու կողքին, հայրենիքի համար վճռական ժամին նախընտրում են պայքարի ուղին, իրենց օրինակով ոգեշնչում ուրիշներին:

Պահլաւունու յօդուածները հազւագիւտ նիւթ են պարունակում նաեւ խորհրդային իշխանութեան առաջին ամիսներին երկրում ստեղծուած մղձաւանջային իրավիճակի, 1921թ. Փետրուարեան ապստամբութեան, զանգուածային բռնութիւնների, Դաշնակցութեան «ինքնալուծարման գործընթացի» եւ այլ իրադարձութիւնների մասին: Ուղղակի պատմութեան բացառիկ նմուշներից է դաշնակցութեան նկատմամբ կազմակերպուած դատավարութեան ժամանակ համայնավար գործիչ, յետագայի ականաւոր պատմաբան Աշոտ Յովհաննիսեանի արտասանած ճառի սղագրութիւնը: Համարձակ գործիչը, չընկրկելով չեկայի (Արտակարգ յանձնաժողով) կողմից



սպասւելիք բռնութիւնների առջեւ, անաչառօրէն ներկայացնում է Դաշնակցութեան գործունէութիւնը եւ անգամ դիւանի նախագահի այն հարցին, թէ ըստ ձեզ մենք պէտք է դասեր քաղենք դաշնակցութեան գործունէութիւնից, տալիս է դրական պատասխան, արժանանում ներկաների բուռն ծափահարութիւններին:

Մեծ հետաքրքրութեամբ են կարդացւում խորհրդային բռնամեքենայի ճիրաններից Պահլաւունու փախուստի ու ոդիսականի մանրամասները, Օրէնբուրգի Բուզուլուկ կայարանում մեծանուն բանաստեղծ Վահան Տէրեանի անշուք շիրմաքարին հանդիպելու նկարագրութիւնները: Ծա[illegible] յուզիչ է, երբ երբեմնի հայ զինուորական ու պետական գործիչը, այժմ՝ Միջին Ասիայում փախստական օտարականն արժանանում է հոգատար, զուտ մարդկային ու հայեցի վերաբերմունքի իր հայրենակիցների՝ տեղի երկաթուղային գործի ղեկավար աշխատող, բոլշեւիկ Կ. Եսայեանի, թուրքական եաթաղանից փրկուած ախալքալաքցի մի ընտանիքի կողմից, միաժամանակ ճաշակում այլ հայրենակիցների դաւաճանական քայլերի դառնութիւնները: Այդուհանդերձ, նրան յաջողւում է հրաշքով փրկւել եւ անցնել արտասահման:

Պահլաւունու հեղինակած մէկ այլ յօդուածը, որը վերնագրուած է «Իգդիրեան յիշատակներ», եզակի նիւթ է պարունակում հայկական Սուրբ Մարի կամ Մարիամ, այժմ՝ օտարահունչ Սուրմալուի գաւառի պատմութեան, մարդկանց կենցաղի, նշանաւոր տոհմերի, Իգդիր Կոմիտաս վարդապետի այցելութեան, ցարական իշխանութիւնների, մասնաւորապէս գաւառապետ Բոգուլաւսկու հակահայ ձեռնարկումների, հակակառավարական յուզումների, ՀՅԴ կառոյցի եւ այլնի մասին:

Կարծում ենք, որ սոյն օգտաշատ գիրքը կարեւոր նպաստ է բերելու հայոց նոր պատմութեան չլուսաբանուած խնդիրների ուսումնասիրութեանը, արժանանալու է ընթերցող հասարակայնութեան ջերմ վերաբերմունքին եւ իւրայատուկ խթան է հանդիսանալու նոյնատիպ, սկզբնաղբիւրային արժէք ունեցող աշխատանքների յետագայ հրատարակման համար:

**Աշոտ Մելքոնեան**
**պրոֆեսոր**

# Խօսք որդիական

«Ալիք» օրաթերթի 1961 թւի Փետրուարի 4ի համարի առաջին էջում հրատարակուած մահազդով Հ.Յ. Դաշնակցութեան Բիւրօն, Թեհրանի եւ շրջանի ընկերները, «Ալիք»ի խմբագրութիւնը եւ հրատարակչական մարմինը ցաւում էին հետեւեալը՝ «Այսու յայտնում ենք ընկերներին, բարեկամներին եւ ծանօթներին, որ ուրբաթ, Փետրուար 3ին, երեկոյեան ժ. 5.1/2ին երկարատեւ հիւանդութիւնից յետոյ իր մահկանացուն կնքեց Հ.Յ. Դաշնակցութեան մարտական սերնդի լաւագոյն ներկայացուցիչներից, վեթերան՝ ընկ. Եղիշէ Պահլաւունին:

Երկուշաբթի, Փետրուար 6ին, առաւօտեան ժ. 9ին հանգուցեալի դին, «Ալիք»ի շէնքից փոխադրուեց Դուլաբի գերեզմանատուն եւ ամփոփուեց Հ.Յ. Դաշնակցութեան պանթէոնում՝ սգակիր հարազատների, դեռեւս ապրող իր զինակից ընկերների ու թեհրանահայութեան հանրային-հասարակական մարմինների ներկայացուցիչների մասնակցութեամբ: Այսպէս էր աւարտւում Արարատի հովանու տակ Մայր Արաքսի ափին, Իգդիրում 1884 թւականի Օգոստոսի 1ին ծնւած եւ հայրենի կարօտն իր հոգում անթեղած խիզախ ու ըմբոստ Եղիշէ Պահլաւունու ողիսականը: Նա 12րդ զաւակն էր Մկրտիչ Պահլաւունու (ծն. 1841ին, մահացած 1918ին) եւ Ծովինար Թադէոսի Կամսարականի (ծն. 1845ին, մահացած Երեւանում 1939ին) նահապետական եւ բազմանդամ բարեկեցիկ շէն օջախի: Նրանց յարկի տակ հիւրընկալուել եւ օթեւանել են Կովկասից Վան, Մուշ, Տարօն ու Սասուն՝ դէպի Արեւմտեան Հայաստան մեկնող եւ այնտեղից վերադարձող գործիչներն ու հայդուկները:

Իգդիրում են եղել Մկրտիչ պապիս աւագ եղբայրը՝ Եղիշէն (որի անունն է կրում հայրս), ապա Արսէն, Մուշեղ, Գրիգոր, Մելիտոս, Վահան, Յակոբ եւ Նիկողոս եղբայրները: Ըստ հանգուցեալ հօրս պատմածի՝ տան ուսուցիչն է եղել Վենետիկեան Մխիթարեանների կրթութեամբ հանրածանօթ Գնունին: Տաւիս եղբայրներն են եղել Նաւասարդը, Մուշեղը եւ Մալիջանը:

Ունեցել են կալուածներ Բարդողեան լեռնաշղթայից դէպի հարաւ ընկած Կոգովիտ գաւառում՝ Մոլլա Ղամար, Գիլլիջա եւ Աբաս գեօլ գիւղերը:

Մկրտիչ պապիկը եւ Ծովինար տատիկն ունեցել են ութ որդիներ եւ հինգ դուստրեր.

1. Գայանէ՝ ծն. 1861ին,
2. Սաթենիկ՝ ծն. 1863ին,
3. Ծողակաթ՝ ծն. 1865ին,
4. Արամ՝ ծն. 1869ին,
5. Վահրամ,
6. Արտաշէս՝ ծն. 1873ին,
7. Գրիգոր,
8. Մուշեղ,
9. Մեսրոպ՝ ծն. 1879ին,
10. Վարազդատ՝ ծն. 1880ին (վախճանւած 14 տարեկանում),
11. Գայանէ (2րդ)՝ ծն. 1882թ. Յուլիս 19ին (երկար տարիների վաստակաւոր ուսուցչուհի Երեւանում),
12. Եղիշէ՝ ծն. 1884թ. Օգոստոս 1ին, Իգդիրում, վախճանւած 1961 թւի Փետրուար 3ին, Թեհրանում),
13. Թէնի՝ ծն. 1886ին:

Այսպիսով՝ հայրս, որպէս կրտսերագոյն արու զաւակ, գուրգուրանքի, ուշադրութեան եւ իր բոլոր մանկապատանեկան չարութիւնների համար ներողամտութեան առարկայ է եղել թէ՛ ծնողների եւ թէ՛ իր երէց քոյրերի ու եղբայրների կողմից:

Բազմաթիւ յուշագրութիւնների մէջ եւ հայ ազատագրական շրջանի ու յատկապէս կամաւորական շարժման տարիներին վերաբերող նիւթերի ու հրատարակութիւնների հեղինակների կողմից յիշատակութիւններ կան Իգդիրի Պահլաւունիների գերդաստանի՝ Արտաշէս եւ Մեսրոպ ու Արամ Պահլաւունիների եւ յատկապէս Եղիշէ Պահլաւունու վերաբերեալ:

Ես այստեղ անտեղի եմ համարում վերջինիս նկարագրային գծերի՝ խիզախութեան, ուղղամտութեան, անաչառութեան եւ այլ յատկանիշների անդրադառնալ հանգամանօրէն՝ կրկնութիւններից խուսափելու համար, որովհետեւ, սոյն յուշամատեանում արդէն խօսուն վկայութիւններ ու անդրադարձներ կան այդ մասին, սակայն անհրաժեշտ եմ համարում յիշատակել համաշխարհային ռազմական իրադարձութիւնների ու պատմու-





Եղիշէ Պահլաւունու ծնողները՝ Մկրտիչ եւ Ծովինար Պահլաւունի

թեան իր լաւատեղեակ լինելու հանգամանքը եւ արուեստի նկատմամբ, թատրոն թէ երաժշտութիւն, իր մեծ հետաքրքրութիւնն ու սէրը:

Արուեստի նկատմամբ իր սիրոյ ապացոյցն է այն հանգամանքը, որ Կարսի անկումից յետոյ Էրզրումի գերութեան շրջանում սկսել է զբաղուել փորագրութեամբ, եւ որի խօսուն արդիւնքը արուեստի այն գործերն են, որոնք ներառուած են այս հատորի մէջ: Ունէր նաեւ գեղեցիկ դրամատիկ տենոր ձայն եւ հիանալի էր երգում ընտանեկան ու ընկերական հաւաքոյթներում, յատկապէս ռուսական ռոմանսներ:

Հայր իմ թանկագին.

Յուշամատեան եմ խորագրել այս հատորը, որովհետեւ այստեղ ամփոփուած են առաւելաբար բազմաթիւ յուշագիրների կողմից քո գործունէութեան ու Հայաստանի ազատագրական պայքարին բերած մասնակցութեան մասին վկայութիւններ եւ անդրադարձներ, քան քո անձնական յուշերից յիշատակ մնացած սակաւաթիւ էջերը, որոնք մեծ ճիգով հնարաւոր եղաւ քեզ համոզել թղթին յանձնելու կեանքիդ վերջին տարիներին: Գիրքը հրատարակութեան եմ յանձնում մահուանդ 45 ամեակի առիթով:

Հայրենիքիդ ու ծննդավայր Իգդիրիդ կարօտաբաղձ հոգով ու տառապանքով վերջակէտ դրեցիր արկածալից կեանքիդ՝ գնալու եւ միանալու քո զինակից ընկերներին տարագրութեան տաժանքն ու տառապանքը կրելուց յետոյ, սակայն միշտ փարած մնալով այն վսեմ ու հայակերտ կազմակերպութեանը, որի զինւորագրեալը մնացիր մինչեւ վերջ:

Սիրասուն մօրս դաստիարակութեան հետ զուգահեռ քո շնորհիւ մանկութեան եւ պատանեկութեան օրերից ես ճանաչեցի մեր հայրենիքը իր պատմութեամբ ու աշխարհագրութեամբ՝ չնայած զրկուած նւիրական Արարատի հովանու տակ լինելուն, եւ Հայաստանը դարձաւ ոգեղենացած մի երազ մանկապատանեկան օրերիս, մինչեւ որ կեանքիս դէպի մայրամուտ թեքուելու օրերին այդ երազն իրականացաւ՝ Հայաստանի անկախացումից յետոյ իւրաքանչիւր տարի հայրենիքին իմ պարբերական այցելութիւններով:

Քո շնորհիւ շատ վաղ, ես տեղեկացայ Պահլաւունիների թողած տոհմական աւանդին ու ժառանգութեանը: Ոգեւորութեան ու հպարտութեան ներշնչման աղբիւր հանդիսացան Ամբերդն ու Մարմաշէնը, Ապուղամրենց եկեղեցին, Բջնին ու Կեչառիսը, հայրենանուէր սպարապետ ու Անիի պաշտպան Վահրամ Պահլաւունու հերոսութիւնները եւ Գրիգոր Մագիս-

տրոսի մեծագործութիւնները, Սանահինի համալսարանի հիմնումը եւ ապա Անիի անկումից յետոյ Կիլիկիայում հաստատուած Պահլաւունիների հզօր ներկայութիւնը՝ միշտ պաշտպան հայ ժողովրդի: Արծաթէ դարի մշակութային վերելքը Լամբրոնում, Բարձրաբերդում, Վահկայ բերդում, Կոռիկոսում, Հռոմկլայում, Սիսում, Անարզաբայում եւ այլուր ու կաթողիկոսներ Գրիգոր Գ.ի (1096-1166), Ներսէս Շնորհալիի (1102-1173), Գրիգոր Դ. Տղայի (1173-1193) եւ Տարսոնի եպիսկոպոս Ս. Ներսէս Լամբրոնացիի (1153-1198) եւ նաեւ Պահլաւունի տիկնանց, Լամբրոնի տէր Օշին Բ. իշխանի կին եւ Ս. Ներսէս Լամբրոնացու մայր Շահանդուխտ Պահլաւունու եւ նաեւ Մովքի Ապիրատ իշխանի կին Վանենիի ու Վասիլ իշխանի կին Մարեմիկի բարեսիրական գործունէութիւնները:

Մինչեւ այժմ էլ, երբ մտորում եմ քո մասին կարծես դեռ լսում եմ հնչեղ ձայնդ, որով իմ անցած մանկութեան օրերում պատմում էիր հայրենական աւանդութիւններն ու առասպելները եւ քո յօրինած քաջազն «Որդու Փոզան»ի խիզախ արշաւանքների մասին: Որտեղի՞ց էիր գտել այդ արտառոց եւ գեղարուեստական որեւէ հրապոյր չունեցող անունը՝ Որդու Փոզան, որը սակայն դարձաւ իմ մանուկ օրերի երեւակայութեան ասպետը, որովհետեւ, երբ մանկական հետաքրքրութեանս բաւարարութիւն տալու համար մէկ օր հարցում արեցի այդ մասին, բացատրեցիր, թէ դա նշանակում է բանակ ոչնչացնող, փոշիացնող: Ա՜խ, այդ Որդու Փոզանի պատմութեան անվերջանալի շարքը իր զանազան դրուագներով, որն այդպէս էլ անաւարտ մնաց, սակայն դարձաւ մանուկ ու վաղ պատանեկութեան օրերիս ոգեւորութեան աղբիւր, որ, հեծած իր սպիտակ ու թեւաւոր նժոյգին, արշաւում էր սուսերամերկ՝ Հայաստան աշխարհի մի ծայրից միւսը՝ հարուածելով, ջարդելով, փշրելով ու փոշիացնելով մեր հայրենի հողն ասպատակող որեւէ թշնամու, ճիշտ յար ու նման յոյն դիցաբանութեան հերոս-դիւցազուն Բելլերոֆոնին, որ աստուածների օգնութեամբ, սանձելով Մեդուզայի մարմնից ծնուած թեւաւոր նժոյգ Պեգասին՝ յաղթել էր Քիմերա հրէշին: Ճիշտ Պեգասի նման Որդու Փոզանի նժոյգը եւս, քո պատումով, հայր իմ թանկագին, Մասսի քաջքերի օգնութեամբ օժտուած էր առասպելական ունակութեամբ, որ վայրկենաբար կտրում էր հսկայական տարածութիւններ եւ իր սմբակի հպումից, ինչպէս Պեգասը Հելիկոն լեռան վրայ բխեցրեց Հիպպոկրենէ աղբիւրը, անմահական ջուր էր ժայթքեցնում Հայաստանի ժայռերից: Մինչեւ այսօր էլ կարծես լսում եմ երգածդ Կողբայ լէլէները, նաեւ հրաշալի կատարումով Ալեքսանդր Սպենդիարեանի ու



Սպիրիդոն Մելիքեանի ստեղծագործութիւնները եւ ռուսական ռոմանսները:

Այդ բոլորը մնացին լոկ յիշատակ, ինչպէս նաեւ դու:

Եվ իրապէս ի՞նչ մնաց քո եւ քո սերնդակից ու զինակից գաղափարական նւիրեալներից, որոնք հայրենասիրութեան՝ բարձր այդ առաքինութեան ըմբռնումն ու գիտակցութիւնը, հայութեան ու հայկականութեան պահպանման, տեւականացման անհրաժեշտութիւնը եւ պայքարի ոգին աւանդեցին ու ջամբեցին յետնորդ սերունդներին:

Յիշատակնե՜ր, յիշատակնե՜ր միայն եւ ամբողջ մի կեանք՝ հայրենիքի կարօտաբաղձութեամբ խաչակրութիւն ու թափառում երկրէ-երկիր, հայրենազուրկ ու տարագիր օտար հորիզոններում ու յաջորդաբար բացուած վիհեր ու բարձրացող հողաթումբեր, որոնց ցուրտ սառնութիւնը հազիւ թէ նուազագոյն չափով ջերմացւում է հայրենիքից բերուած ու մասունքի պէս գուրգուրանքով պահուած հողի մի պտղունց փշրանքով, որ այն էլ քիչ «երջանիկների» է վիճակւում, եւ դա ճակատագիրն է եղել մի սերնդի, որը կերտիչն է հանդիսացել այսօրուայ հայկական պետականութեան: Դու չունեցար նոյնիսկ քո ծննդավայր, հարազատ Իգդիրիդ այդ մի պտղունց հողն անգամ, միայն Արաքսից, այն էլ Պարսկաստանի ափից, երբ մի քանի ընկերներով Ս. Ստեփանոս Նախավկայի վանքն էինք ուխտի մեկնել. բերածս մի սրւակ ջրով ի վիճակի եղայ ցօղելու դամբանդ եւ դամբանաքարիդ վրայ քանդակել տալու մեծանուն հայրենակցիդ, պատանի օրերիդ պաշտածդ ուսուցչիդ՝ Աւ. Ահարոնեանի – որի կողմից ըմբոստ ու խիզախ նկարագրիդ համար «Հոնների առաջնորդ» տիտղոսին էիր արժանացել – կարօտաբաղձութեան սոյն քառատողը.

*Աւեր տաճարի կանթեղ պլպլան,*
*Որ գերեզմանիս մէջ իսկ կմխայ,*
*Թէ Այրարատի ծոցում չյանգչեմ,*
*Եվ Արաքսը չօրօրի քունս յաւերժական:*

Հայր իմ թանկագին, ընդունիր ուրեմն քո յիշատակին նւիրուած այս յուշամատեանը.

**Յարգանք վաստակիդ,**
**Պաշտամունք՝ գաղափարիդ,**
**Համբոյր՝ շիրիմիդ:**

**Երախտապարտ որդիդ՝**
**Նորայր Պահլաւունի:**

# ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ
# ԵՒ
# ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

**Կարօ Գէորգեան**
Ամէնուն Տարեգիրքը 1962թ.
Բէյրութ-Լիբանան
էջ 607

## Եղիշէ Պահլաւունի

Մէկը՝ մեր մարտական սերունդի արժանաւոր ներկայացուցիչներէն: Մէկը՝ որ բազմաթիւ ճակատներու եւ կրակի գծերուն վրայ իր թանկագին մասնակցութիւնը բերաւ հայ ժողովուրդի ազատագրական պայքարին:

Եղիշէ Պահլաւունի ծնած էր Իգդիր, 1884ին: Աւարտած էր ռուս զինուորական վարժարանը: Ժամանակ մը Լեհաստանի մէջ ծառայելէ յետոյ կը վերադառնայ հայրենիք: Ա. աշխարհամարտին իբրեւ կամաւոր կը մտնէ Անդրանիկի զօրամասին մէջ եւ Սմբատին վիրաւորուելէն յետոյ կը դառնայ Անդրանիկի օգնականը: Այնուհետեւ կը միանայ Իշխանին[1] եւ 1914-16 տարիներուն կը ծառայէ անոր եւ Քեռիի զօրամասին մէջ իբրեւ վաշտապետ: Այս հանգամանքով, Ե. Պահլաւունի, զօր Նազարբէգեանի հրամանին տակ մասնակցած է Դիլմանի մեծ ճակատամարտին, ուր պարտութեան մատնուեցան Խալիլ փաշայի ուժերը, եւ այդ առթիւ ստացած է շքանշան:

Բագու է 1918ի Մարտին եւ պետը հարուածային այն վաշտին, որ քաղաքին հարաւային թաղամասը մաքրագործեց թաթար մարդասպաններէն: Այնուհետեւ, Ապրիլին, իր 20րդ գումարտակով կ'անցնի Շամախի եւ Գէօգչայի շրջանը եւ հոն ալ կ'աւլէ կը սրբէ թաթար դաւադիրներն ու անոնց օգնող բազմութիւնները: Այս գումարտակի ուժեղ պաշտպանութեան շնորհիւ, այլեւ անոր միացած օժանդակ ուժերով, բոլորը միասին 2000 կռուող. կարելի կ'ըլլայ յառաջացող թրքական ուժերէն փրկել տասնեակ մը հայ գիւղերու բնակիչները եւ հասցնել զանոնք Բագու: Ու կռիւները, միշտ Ե. Պահլաւունիի ղեկավարութեամբ, կը շարունակուին նաեւ Բագւի նաւթահորերու շրջանին մէջ եւ կարելի կ'ըլլայ փրկել նաեւ այդ շրջանի աշխատաւորները: Տեղահանուած այս բազմութիւններէն եւ Բագուի տեղական բնակչութենէն շուրջ 30.000 հոգի կը ստիպուին նաւերով ապաս-

---

[1] Իշխան Արղութեան

տանիլ իրանական սահմաններէն ներս եւ հասնիլ Էնզէլի, երբ թուրքերը կը գրաւեն Բագուն 15 Նոյեմբեր 1918ին: Եւ երբ երեք ամիս յետոյ դաշնակիցները կը քշեն թուրքերը Բագուէն, փախստականները կը վերադառնան նորէն այնտեղ:

Ե.Պահլաւունի միշտ ժողովուրդին հետն է եւ Բագու կը մնայ մինչեւ 1919ի Մայիսը, երբ Հայաստանի ներքին գործոց նախարարութեան հրահանգով, ուրիշներու հետ, կը մեկնի Երեւան եւ հոն կը նշանակուի երկաթուղային միլիցիայի ընդհանուր պետ եւ մեծ դեր կը խաղայ Մայիսեան համայնավար ապստամբութիւնը զսպելու գործին մէջ:

Հայ եւ թուրք պատերազմին, Ե.Պահլաւունի կը կռուի Կարսի ճակատին վրայ եւ երբ այս ամրոցը կը գրաւուի Թուրքերէն, Եղիշէն կ'իյնայ գերի, կը ղրկուի Կարին եւ ծանր պայմաններու մէջ կը մնայ հոն աւելի քան մէկ տարի: Ազատ արձակուելուն, կը վերադառնայ Երեւան 1921ի վերջերը եւ այս անգամ, հետապնդուելով Չեկայէն, ամիսներով ծպտուած կը պահուտի Երեւանի այգիներուն մէջ՝ ահ ու սարսափի մատնելով հետապնդող չեկիստները: Ի վերջոյ, սակայն կը ձերբակալուի եւ կ'աքսորուի Տաշքէնդ եւ ապա Սամարղանդ, ուրկէ կը յաջողի գաղտնի ճամբաներով հասնիլ Բագու եւ հոնկէ ալ անցնիլ Թաւրիզ 1925ին:

Շատ համառօտակի տրուած այս նօթերն ալ կը բաւեն պատկերացնելու դիմագիծն ու քաջագործութիւններն այս աննկուն մարտիկին, որ մէկ րոպէ անգամ չթերացաւ իր պարտականութեանց կատարման մէջ եւ գտնուեցաւ միշտ ռազմագէտ ղեկավարի դիրքերուն վրայ, զմայլելի անձնուիրութեամբ մը:

Դաշնակցական՝ դեռ պատանեկան օրերէն, եղած է ան Դրոյին մանկութեան ընկերը եւ Ա.Ահարոնեանին աշակերտը Իգդիրի մէջ: Իր ամբողջ կեանքը նուիրում մը եղաւ իր պատկանած կուսակցութեան եւ անոր միջոցով հայ ժողովուրդին, թէ՛ մարտադաշտերու վրայ եւ թէ՛ այնուհետեւ իրանահայ գաղութին մէջ, ուր ապրեցաւ 35 տարի, այնտեղ եւս լաւագոյնս կատարելով իրեն վստահուած ազգային-հասարակական եւ կուսակցական բոլոր պարտականութիւնները:

Փակեց իր աչքերը 76 տարեկանին, Թեհրանի մէջ, Փետրուար 3ին, յետ երկարատեւ հիւանդութեան:



**Գրեց՝ Ա. Աշխատունի**
**(Զաքար Եօլեան)**

# Եղիշէ Պահլաւունի

1961 թւի Փետրւար 3ին ծանր հիւանդութիւնից յետոյ իր մահկանացուն կնքեց մարտական սերունդի ներկայացուցիչ ընկ. Ե. Պահլաւունին: Ծնուել էր 1884 թւի Օգոստոսի 1ին Սուրմալուի գաւառում՝ Իգդիրում: Նախնական կրթութիւնն ստացել էր նոյն վայրում: Պահլաւունիների տունը՝ երկիր գնացող եւ այնտեղից եկող ու վերադարձող յեղափոխական գործիչների, խմբապետների ու հայդուկների համար եղել է ազգային հարազատ օջախ:

Երիտասարդ Եղիշէն, ազդուելով հայրենասիրական գաղափարներից, որոշում է նուիրուել հայրենիքի ազատագրական պայքարին: Այդ նպատակն իրականացնելու համար նա մտնում է զինուորական դպրոց՝ որպէս իւնկեր (ռազմական դպրոցի սան):

Աւարտում է դպրոցի դասընթացը: Ռուսական զինուորական իշխանութեան կարգադրութեամբ ուղարկւում է Լեհաստան՝ ծառայելու բանակի մէջ, ուր եւ կատարում է իր զինուորական պարտականութիւնը: Լեհաստանից վերադառնում է հայրենիք:

Մենք Եղիշէին հանդիպեցինք Բագւում՝ Բալախանիի Հ.Յ. Դաշնակցութեան աշխատաւորութեան շարքերում 1904 թւին: Ստանձնել էր «Բալախանիի կրուժոկ»ի տեղական աշխատաւորական թատերասրահում տեղի ունեցող թատերական ներկայացումների ձեռնարկների եւ հասարակական ժողովների ու հաւաքոյթների վարչական կարգադրիչի պարտականութիւնը: Ունէր անուշ ձայն, երգում էր հայկական եւ ռուսական երգեր՝ խանդավառ տրամադրութիւն ստեղծելով ունկնդիրների մէջ: Առաջին աշխարհամարտին, 1914 թւականին, Թիֆլիսում կազմակերպւած Ազգային խորհուրդը կոչ հրատարակեց, որով դիմում էր հայ ժողովուրդին՝ զինուորագրուել կամաւորական շարժման համար կազմակերպուելիք խմբերին, որոնք կողք կողքի պիտի կռուէին ռուսական բանակի հետ՝ ընդդէմ դարաւոր թշնամի Տաճկաստանի, յանուն հայրենիքի ազատագրութեան:

Եղիշէն արձագանգում է այդ կոչին ու զինուորագրւում Անդրանիկի զօրախմբին: Այդ մարզում մասնակցում է տարւող կռիւներին: Անդրանիկի օգնական Սմբատը վիրաւորւում է կռիւների մէջ: Եղիշէն Անդրանիկի կար-

գադրութեամբ նշանակւում է փոխարինելու Սմբատին: Միաժամանակից ներքին տարակարծութեան հետեւանքով մի քանի այլ զինակիցների հետ Եղիշէն հեռանում է Անդրանիկի զօրախմբից եւ անցնում է Իշխան Արղութեանի զօրախումբն ու մասնակցում Իշխանի եւ Քեռիի հրամանատարութեամբ վարւող բոլոր կռիւներին՝ վաշտապետի պաշտօնով՝ Արեւմտեան Հայաստանում: Եղիշէն վաշտապետի պաշտօնով մասնակցել է նաեւ զօրավար Նազարբէգեանի հրամանատարութեամբ Դիլմանի (Ծահփուր) ճակատագրական կռիւներին՝ Խալիլ փաշայի զօրաբանակի դէմ, որին ջախջախելով պարտութեան են մատնում՝ խոշոր կորուստներ պատճառելով տաճիկներին: Եղիշէն պարգեւատրութեան է արժանանում: Կամաւորական բանակը երախտաշատ գործունէութեամբ ռուսական բանակին խոշոր օժանդակութիւն է բերում:

Չնայած այդ կարեւոր հանգամանքին՝ ապիկար ցարական կառավարութիւնը, իր հակահայկական քաղաքականութեան հետապնդման հետեւանքով, լուծարքի է ենթարկում կամաւորական խմբերը եւ այս այն ժամանակ, երբ Արեւմտեան Հայաստանի ժողովուրդը ռուս դաւադիր ռազմական քաղաքականութեան հետեւանքով ենթարկւում է տաճիկների բարբարոս տեղահանութեան եւ բնաջնջման 1915 թիին՝ արաբական աւազուտ անապատներում:

Եղիշէն 1918 թիին վերադառնում է Բաքու, ուր Մարտ 17ին Ադրբէյջանի Մուսաւաթ ազգային կուսակցութեան ղեկավարութեամբ շղթայազերծուած էր ապստամբութիւն՝ նորաստեղծ յեղափոխական իշխանութեան դէմ, որին գլխաւորում էր Բաննորական խորհուրդը իր գործադիր կոմիտէով, պահանջում էր Բաքուն յանձնել Ադրբէյջանի իշխանութեան: Ռոստոմի[2] կարգադրութեամբ Եղիշէն նշանակւում է Բաքւի թաթարական հաւային թաղամասի վաշտի պետ՝ պաշտպանելու համար Պարապետից մինչեւ ծովափնեայ սահմանագիծը:

Ռազմական խիզախ գործողութեամբ այդ ընդարձակ թաթարական թաղամասը մաքրագործւում է թաթար «ղոչիների» (վարձկան մարդասպաններ) հրոսակային խմբերից եւ ենթարկւում է յեղափոխական իշխանութեան տեղական տնօրինութեանը:

[2] Ռոստոմ Զօրեան – Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր երրորդութեան անդամ: (*Խմբ.*)





Վերին շարք՝ Երւանդ (Անդրանիկի քրոջ տղան - Եգեան), Սուքեան Արտաշէս (Ախալցխացի), Նիկօլ Վաշտապետ (Ղարսեցի), Գրիգոր Ամիրեան, դոքտ, Եր. Խաթանասեան:
Բ-շարք՝ Եղիշէ Պահլաւունի, Սեպուհ, Անդրանիկ, կապիտան Յովսէփեան (յետագային գեներալ), Սմբատ, Ջամալեան Արշակ:



Կանգնած՝ Բէնօ (Իգդիրցի), Նադօ (Մշեցի), Մուրադ (Խարաբշատցի, Մուշ), ?:
Նստած ձախից աջ՝ Եղիշէ Պահլաւունի, Սմբատ Բարոյեան:



Ա շարք, ձախից աջ՝ Տէր Գրիգոր Դարալագեազցի, Նաղօ, Մշեցի Մգրօ, Աւագ Բէջանեան (Շուշեցի), Մշեցի Սմբատ, Եղիշէ Պահլաւունի, Յովնան Զեյթունցի (հնչակեան), Ղազախեցի Վահան:
Բ շարք՝ Ղազախեցի Իսրայէլ, Առաքել Սարգսեան (ամենակրտսեր կամաւորը, Ղլարցի), VI-րդը - խմբապետ Փիլոս (Խնուսցի), VIII-րդը - Ղարաբաղցի Բախշի:

Այդ թաղամասի Նիկոլայեւսկայա փողոցի վրայ գտնուող «Կասպի» ռուսատառ թերթը, որի խմբագիրն էր Ալիմարդանխեան Թոփչիբաշեւը, տպարանը եւ խմբագրատունը Եղիշէի անմիջական նախաձեռնութեամբ եւ գործադրութեամբ մոխրակոյտի է վերածւում:

Այդ թերթը համաթրքական պրոպականդի օջախ էր եւ հայադաւ քաղաքականութեան օրգան: Մարտեան ապստամբութեան դէպքերը աւարտւում են յեղափոխական իշխանութեան յաղթանակով:

Բագւի Բանւորական խորհուրդը ղեկավարւում էր Մոսկւայից՝ Լենինի հրահանգներով Կովկասեան գործերի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումեանի առաջնորդութեամբ, որ Բանւորական խորհրդից անկախ կազմակերպել էր Բոլշեւիկեան սովնարկոմ (ժողովրդական կոմիսարների խորհուրդ)՝ իր նախագահութեամբ:

Այդ Սովնարկոմի քաղաքական նպատակն էր իրականացնել «Պրոլետարական դիկտատուրան», բայց չէր յաջողում, որովհետեւ իրական ուժ չունէր: Եղած ռազմական ուժերը գտնւում էին Հ.Յ.Դաշնակցութեան ղեկավար մարմնի տրամադրութեան տակ:

Բոլշեւիկեան քայքայիչ ամբոխավարութիւնը հասել էր իր գագաթնակէտին: Քայքայւած էին հասարակական կազմակերպութիւնները, եւ ստեղծւել էր անիշխանութիւն: Բոլշեւիկեան համաժողովրդական քայքայիչ արարքների հետեւանքով ծնունդ էր առել համաժողովրդական ցնցիչ դժգոհանք: Բանւորական խորհրդում քննութեան է առնւում այդ պարագան եւ որոշւում է նաւթաշխարհում համաժողովրդական հանրաքւէ կատարել ի խնդիր բոլշեւիկեան իշխանութեան վստահելիութեան:

Այդ հանրաքւէի արդիւնքը քննւում է Բանւորական խորհրդի փոթորկայոյզ նիստում եւ քւէարկութեամբ, բոլշեւիկների աղմուկ-աղաղակների տակ, ձայների մեծամասնութեամբ վաւերացւում: Բոլշեւիկեան իշխանութիւնը տապալւում է: Այդ առթիւ Ստեփան Շահումեանը գերագրգիռ տրամադրութեամբ շանթ ու կրակ է սփռում հակաբոլշեւիկ պատգամաւորների՝ էսէռների, էսդէկների եւ Դաշնակցականների հասցէին՝ իր խօսքերը համեմելով փողոցային հայհոյանքներով: Մթնոլորտը յղի էր ծանր անակնկալներով: Բոլշեւիկեան սովնարկոմի հրահանգով Բանւորական խորհրդի շէնքը շրջապատւում է բոլշեւիկեան ուժերով եւ զրահապատ կառքերով՝ նպատակ ունենալով գնդակահարել խորհրդի հակաբոլշեւիկ պատգամաւորներին: Այդ բախտորոշ ժամին Եղիշէն իր յանդուգն ու խիզախ վարւելակերպով՝ զինակիցներով խորտակելով պարէտի եւ պահակների յա-

րուցած մուտքի արգելքները, թափանցում է Խորհրդի ժողովասրահ եւ յայտարարում. «Ընկեր պատգամաւորներ, հանգիստ կատարեցէք ձեր գործը, ո՛չ մէկ բոլշեւիկեան ուժ չի յանդգնի կրակ բանալ ձեր վրայ, մենք մեր ուժերով արդէն շրջապատել ենք նրանց: Եթէ փորձեն հրազէնի կրակի դիմել, կոչնչանան մեր ուժերի հարուածների տակ:

Խորհրդի հակաբոլշեւիկ պատգամաւորները, իրենց աշխատանքն աւարտելով, առանց փորձանքի ցրւում են:

Այդ ժամանակ տաճիկները շարունակում էին զօրագնդեր կենտրոնացնել՝ Բագուն եւ իր հարուստ նաւթահանքերը գրաւելու համար եւ ազատագրելու իրենց հովանաւորած Ադրբէյջանին Ռուսաստանի տիրակալութիւնից:

Բագւի յեղափոխական իշխանութիւնը, ահազանգ հնչեցնելով, զօրահաւաքի է ենթարկում բովանդակ նաւթաշխարհի աշխատաւորութեանը: Գումարտակներ կազմակերպելով՝ ճամբում է ռազմաճակատ՝ տաճկական յառաջացող զօրաբանակի դէմ: Ռազմաճակատն սկսւում էր երկաթուղու Քիւրդամիր կայարանից, ուր կուտակւած էին տաճկական մեծաքանակ ուժեր: Շամախիի եւ Գէօգչայի շրջանի հայութիւնը օրհասական ծանր վիճակի էր մատնւած տաճիկներին օժանդակող տեղական թաթարների կողմից: Եղիշէն նշանակւում է 20րդ գումարտակի հրամանատար եւ 1918 թւի Ապրիլ ամսին իր գումարտակով մեկնում է Շամախիի եւ Գէօգչայի շրջան՝ պաշտպանելու համար այնտեղի հայութիւնը, մանաւանդ որ այդ շրջանը մօտ էր պատերազմական թատերաբեմին: Տեղական թաթարները յարաբերութեան մէջ էին տաճկական զօրահրամանատարութեան հետ: Եղիշէի հեծելազօրի պետն էր կոռնետ Ս. Լալայեանցը, որ ահաւոր մաքրագործում է կատարում Շամախի քաղաքի մէջ:

Դիպւածով անգլիացիները ձերբակալում են նրան եւ յանձնում Ադրբէյջանի իշխանության: Նրան տանում են Գանձակի բանտը եւ գնդակահարում:

Եղիշէի գումարտակը հայութեան թշնամի տարրերին ամլութեան է դատապարտում: Ժողովրդի ինշնապաշտպանութեան համար Պահլաւունի Եղիշէն արժանանում է Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավար մարմնի եւ Բագւի Ազգային խորհրդի գնահատանքին: Յառաջացող տաճկական ռազմաճակատի աջ թեւի հետ 20րդ գումարտակը կուի է բռնում Գէօգչայի շրջանում, մերթ պաշտպանողական մարտեր է մղում՝ ապահովելու համար Աւանաշէն, Զայիշէն, Ղալագետ, Կերք, Քեալբանդ, Քեշխունդ եւ փոքր Գան-



ձակ գիւղերի տեղահանման գործը, մերթ պաշտպանում է հարիւրաւոր որբերի տեղաշարժը: Դիրքային բուռն կռիւներ են մղւում կասեցնելու համար թշնամու կրկնւող յախուռն յարձակումները: Օրհասական այդ ծանր դրութիւնը 20րդ գումարտակի համար սկսւում է Կարամարգեանից եւ շարունակւում է հարիւրաւոր մղոններ: Տաճկական զօրքերը կրնկակոխ հետեւում են թէ գաղթող ժողովրդին եւ թէ նրա պաշտպան զօրագնդին: Սակայն թշնամու ջանքերն ապարդիւն են անցնում շնորհիւ անվեհեր զօրամասի կորովի ռազմունակութեան: Գումարտակի կազմն ուժեղացնելու պահանջ է զգացւում: Տեղական կազմակերպւած ուժերի մի գումարտակ՝ ցարական բանակի սպայ Յովհաննէս Զանումեանի գլխաւորութեամբ, եւ մի ուրիշը՝ Զաքար քահանայի գլխաւորութեամբ, միացւում են 20րդ գումարտակին: Այդպիսով Եղիշէի գումարտակի թիւը հասնում է երկու հազարի: Որոշւում է տեղահանւած ժողովրդին Բագու գաղթեցնել: Բոլշեւիկեան ամբոխավարական պայքարի հետեւանքով քայքայւած էր ռազմաճակատի կենսամթերքի եւ ռազմամթերքի մատակարարումը: Կարամարգեանից հարիւրաւոր կիլոմետր տարածւող ամայի եւ անջրդի անապատի ճամբան կտրելով թշնամու հարւածների տակ, պաշտպանելով գաղթող ժողովրդին ու որբերին՝ 8-10 օրուայ ընթացքում դժոխային պայմանների դիմագրաւումով հասցնում են Բագու: Բագւում Եղիշէն հանգստացնում է իր զօրամասը եւ համալրման է ենթարկում: Սպայակոյտից ստացած հրամանի հիման վրայ Եղիշէն իր գումարտակով շարժւում է դէպի Բագւի Հիւսիսային շրջան եւ բռնում Զաբրանդ, Մաշտաղա-Շուվալան թաթարական գիւղերի ծովամերձ ռազմագիծը, ուր կուտակւած էին տեղական թաթարների զինւած ուժերը: Տաճիկներին օժանդակող այդ ուժերը ձգտում էին ապահովել ճամբան՝ Մուրսէլ փաշայի ռազմաճակատի ձախ թեւի յառաջացման համար:

20րդ գումարտակը, արի ու անձնւէր վճռականութեամբ հոյակապ ու ահաւոր հակագրոհով թշնամու ջանքերը ամլութեան ենթարկելով, ամրացնում է իր դիրքերը: Մաշտաղի ռազմատեղամասում Սեպտեմբերի 7ին (1918թ.) տաճիկները խոշոր ուժերով, միացած տեղական կռւող թաթարների հետ, գրոհում են 20րդ գումարտակի դէմ՝ նպատակ ունենալով ճեղքել ռազմաճակատը, որպէսզի թափանցեն ընդարձակ տարածութեան վրայ գտնւող նաւթահանքերը, ուր աշխատում էր հայ աշխատաւորութիւնը: Գերհերոսական հակագրոհով տաճկական ուժերը յետ են շպրտւում, որով փրկւում են ստոյգ կոտորածից հայ աշխատաւոր զանգւածները:

20րդ գումարտակը, օրհասական կռիւներով ստեղծուած պայմանների հետեւանքով, աստիճանաբար նահանջում է դէպի Բագւի արուարձան Քիշլի աւանը՝ հնարաւորութիւն տալով նաւթահորերի հայահոծ աշխատաւորութեանը նահանջելու Բագու:

Տեղի է ունենում Բագւի անկումը, եւ տաճիկները Սեպտեմբերի 15ին (1918թ.) մտնում են Բագու: Ժողովրդի մէկ մասը, շուրջ երեսուն հազար հոգի, նաւեր նստելով, անցնում է Պարսկաստան՝ Էնզելի (Փահլաւի): Երեք ամիս յետոյ եւրոպական դաշնակիցների կողմից առնուած որոշումների հետեւանքով տաճիկները հեռանում են թէ Բագւից եւ թէ Անդրկովկասից՝ ստեղծելով Բագւում Ադրբէյջանի Մուսաւաթական կառավարութիւն: Պարսկաստան ապաստանած ժողովուրդը վերադառնում է Բագու: 1919 թւի Մայիսին դաշնակցական գործօն ընկերները կուսակցութեան որոշումով Բագւից տեղափոխւում են ազատագրուած Հայաստանի մայրաքաղաք Երեւան՝ լծւելու գործի: Ե.Պահլաւունին՝ Բագւի հերոսամարտի ոգին հանդիսացող, ներքին գործոց նախարար Ա. Գիւլխանդանեանի կարգադրութեամբ բարձր լիազօրութեամբ նշանակւում է Ալեքսանդրապօլի երկաթուղու միլիցիայի պետ: Այդ մարզում եւս Եղիշէն արդիւնաշատ պետական եւ հասարակական գործ է կատարում՝ վերջ տալով տիրող անիշխանական եւ քաոսային կացութեանը:

Բոլշեւիկների եւ քեմալական Տաճկաստանի միջեւ կնքուած բարեկամական պայմանագրի հետեւանքով Տաճկաստանը պատերազմ է շղթայազերծում ազատագրուած Հայաստանի դէմ, որով քաղաքական դիւրութիւններ են ստեղծւում Խորհրդային կառավարութեան համար՝ թելադրելու իր գաղութարար պայմանները Հայաստանի կառավարութեանը: Եղիշէն ուղարկւում է Կարս՝ օգնելու տաճիկների դէմ ռազմական գործողութիւններին: Տաճիկները, օգտւելով բոլշեւիկների տարած բարոյալքիչ պրոպականդից հայկական զօրամիաւորումների շարքերում, գրաւում են Կարսը: Եղիշէն գերւում է տաճիկների կողմից եւ ձմռան սառնամանիքին իր շատ զինակիցների հետ միասին քշւում է Էրզրում (Կարին), ուր աւելի քան մէկ տարի ապրում է գոյութեան անմարդկային պայմաններում: Կարսի պայմանագրի հիմունքներով 1922ին ազատագրւում է գերութիւնից եւ վերադառնում է Խորհրդային Հայաստան՝ Երեւան: Չեկան հետապնդում է Եղիշէին բանտարկելու համար: Երեւանի այգիներում իր մի քանի զինակից ընկերների հետ թաքնւելով՝ սարսափի են մատնում իրենց հետապնդող չեկիստներին: Ի վերջոյ Եղիշէն ձերբակալւում է եւ աքսոր-



ւում Անդրկասպեան երկիր Թուրքեստան, Սամարղանդ, որտեղից իր ճարպիկ հնարամտութեամբ գաղտնի վերադառնում է Բագու եւ ոդիսական տառապանքներով յաջողում է անցնել Թաւրիզ (Իրան) ու միանալ իր գաղափարակից տարագիր ընկերներին:

**Մ. Մարութեան**
**«Փակուած վարագոյրի առջեւ» հատորից**
**Դէմքեր**
Նիւ Եորք, 1981

## Եղիշէ Պահլաւունի

Հարկադրանք չէ:

Պարտադրանք չէ:

Բայց վաղուց ի վեր հոգիս պարտադրում եւ հարկադրում էր, ես ինչո՞ւ համար այսքան ուշացրի գրել ինձ շատ մտերիմ, սիրելի եւ վերին աստիճանի համեստ ու լուռ եւ իր անցեալի մասին երբեք չխօսող մի ընկերոջ մասին, ինչպիսին էր Եղիշէ Պահլաւունին:

Այդ թելադրանքը, պարտադրանքը, հարկադրանքը ու գրել ստիպողը իմ սիրտն է եղել եւ դէպի Եղիշէն ունեցած խոր սէրը:

Ժամանակները գահավիժօրէն, խոր ակօսներ ձգելով, նօսրացնում են Եղիշէների սերունդին պատկանող մարդկանց թիւը, եւ այդ պատճառով էլ նրանք մնում են ստուերի մէջ, աղօտանում է նրանց պայծառ դէմքը ու յաճախ էլ մոռացութեան ապերախտ շղարշով ծածկւում:

Թէեւ Եղիշէի մասին գրուել է, բայց քիչ է գրուել, գուցէ իմ գրածն էլ ոչինչ չաւելացնի եղածների վրայ, բայց որովհետեւ այդ գրուածքների վրայ ժամանակն իր սւաղն է դրել, եւ նոր սերունդը գրեթէ անծանօթ է Եղիշէներին, ես ուզում եմ վերակենդանացնել այն յիշատակները եւ կարճ հանդիպումները, որ ունեցել եմ Եղիշէի հետ, ինչպէս նորոգել են տալիս հարազատները իրենց մէկ սիրելի դեղնած կամ մաշուած նկարը, որպէսզի իր իսկական դէմքով տեսնեն:

Եթէ նա այսօր ողջ լինէր, 95 տարեկան պիտի լինէր, բայց նա 77 տարեկանին հրաժեշտ տուեց այս կեանքին: Մի քանի ամիս յետոյ նրա մահուան քսանամեակն է: Վերջին անգամ նրան տեսայ 1960 թուականին. երբ վերադարձայ Թեհրան եւ իմացայ, որ հիւանդ է, առաջին այցելութիւնս նրան տուի: Եղիշէից շատ քիչ բան էր մնացել: Իմ վերադարձից 10 ամիս յետոյ նա մեկնեց՝ միանալու իր զինակից ընկերներ Անդրանիկին, Սմբատին, Սեպուհին, Իշխանին, Քեռուն եւ բազում ուրիշ ուխտուածների:

Ո՞ւր ասես որ չի եղել այս հերոսատիպ մարդը: Ռազմական ուսումնարան աւարտելով, որպէս ռուսական բանակի սպայ, ուղարկւում է Լեհաստան:

1904–06ը՝ Բալախանի աշխատաւորների պրոպագանդիստ: Բագու: Կամաւորական շարժում: Եղիշէն առաջիններից է լինում, որ զինւորագրւում է կամաւորական գնդերին Անդրանիկի խմբում՝ որպէս վաշտապետ: Խմբապետ Սմբատի վիրաւորուելուց յետոյ նշանակւում է նրան փոխարինող: Յետոյ կանգնի Իշխան Արղութեանի եւ աննման Քեռիի մօտ՝ որպէս վաշտապետ:

Նազարբէգեանի հետ մասնակցում է Դիլմանի ահեղ ճակատամարտին եւ իր կատարած քաջագործութիւնների համար պարգեւատրւում է:

1918ին կը վերադառնայ Բագու:

Մասնակցում է Մուսաւաթականների դաւադրութեան պատճառով ստեղծուած կռիւներին, ապա Շամախիի կռիւներին՝ որպէս հրամանատար: Բագւի բոլոր կռիւներին իր մասնակցութիւնն է բերում: 1918ին հեռանում է Բագւից: 1919ին իր պատկանած կուսակցութեան կարգադրութեամբ գալիս է Երեւան: Ընկեր Աբրահամ Գիւլխանդանեան, որպէս ներքին գործոց նախարար, Եղիշէին նշանակում է Շիրակի երկաթուղու միլիցիապետ:

Կարսի օրհասական օրերին Եղիշէին ղրկում են Կարս: Կարսի գրաւումով՝ Եղիշէն շատ ուրիշների հետ գերի է ընկնում թուրքերի ձեռքը եւ տարւում է Էրզրում:

Ահաւոր տանջանքներ կրելուց յետոյ կ՚ազատի ու կը հասնի Երեւան: Չեկան կը հետապնդէ, սակայն չի յաջողի նրան ձերբակալել: Իր ճարպիկութեան շնորհիւ կանցնի Անդրկասպեան երկիրներ եւ ծանր ու դժւարին տաժանքներով կը հասնի Թաւրիզ՝ միանալով իր տարագիր ընկերներին:

Այս բոլորը ես իրանից չեմ լսել՝ չնայած 1935ին, երբ իրեն հանդիպեցի Սալահապատում[3] եւ այնքան խնդրեցի պատմել, նա ասաց.

–Անցեալը անցել է, այդ մասին խօսելը բոլորովին աւելորդ է, մտածենք ներկայի մասին:

Հետագային ինձ այս բոլորը պատմել է հանգուցեալ Արամ Ալչունեանը, երբ գտնւում էի Աբադանում[4]:

---

[3] Աւան հարաւային Պարսկաստանում, ուր երկաթուղագիծ էր կառուցւում:

[4] Հարաւային Պարսկաստանում նաւթարդիւնաբերական եւ նաւթազտարանների խոշոր քաղաք: (*Խմբ.*)

Եղիշէն իր կատարածների համար փակուած եւ կնքուած դուռ էր:

Ես իրեն տեսայ առաջին անգամ Բագւում:

Դեռ Հայաստանը անկախ չէր:

1918 թւի Յունուարին ես եւ մի ուրիշ ընկեր Հայաստանից մեկնեցինք Թիֆլիս եւ ապա Բագու:

Թէ ինչո՞ւ: Պատմեմ ձեզ:

Երեւանում Արեւմտահայ ուսանողական-աշակերտական մի ուժեղ կազմակերպուած միութիւն ունէինք, որի անդամները աւելի քան հազար հոգի էին. այդ միութիւնը գործում էր Դաշնակցութեան դրօշի տակ, եւ բոլորն էլ մկրտուած դաշնակցականներ էին:

Մի թերթ էինք հրատարակում, որ կոչւում էր «Երկիր»: Շաբաթաթերթ էր: Հազիւ երեսուն թիւ կարողացանք հրատարակել եւ ստիպուած եղանք փակել՝ թուղթ չունենալու պատճառով:

Ունէինք խմբագրական կոլեգիա, որին մաս էին կազմում Հայկ Ասատրեան, Սահակեան, Բարսեղեան եւ ես: Չգիտեմ թէ որտեղից Հայկ Ասատրեանը լսել էր, թէ Բագու կարելի է թուղթ գտնել: Այդ պատճառով էլ որոշեցին, որ ես ու Սահակեանը գնանք Բագու եւ թուղթ բերենք: Սահակ Թորոսեանը մի նամակ տւեց մեզ յանձնելու ընկեր Աբրահամ Գիւլխանդանեանին:

Ես ու ընկերս, զինուած Թորոսեանի տուած նամակով, մեկնեցինք:

Մենք տեղեկութիւն չունէինք, թէ ինչ է կատարւում Բագւում: Երբ հասանք Թիֆլիս, այդ մասին մեզ յայտնեցին եւ խորհուրդ տւին ետ վերադառնալ: Բայց մենք երկուսս էլ «Քեալահախ» տաքգլուխ էինք, ոչ ոքի չը լսեցինք եւ երկաթուղի նստելով՝ ճանապարհ ընկանք:

Ամեն երիտասարդի մէջ մի փոքր արկածախնդրութիւն կայ:

Երկաթուղու մէջ զգացինք, որ իրաւ մի բան կատարւում է: Հայ եւ թուրքեր առանձին քուբէներու մէջ էին նստած եւ յովազների նման իրար էին նայում: Բարեբախտաբար հայերը աւելի շատ էին եւ մինչեւ ակռաները զինուած: Մենք անզէն էինք: Բարեբախտաբար, մենք տեղ գտանք մի խցիկում, ուր զինուած հայ կամաւորներ կային: Նրանք սիրով մեզ տեղ տւին: Նրանցից մէկն ասաց.

-Երբ գնացքը որեւէ կայարանում կանգ կառնի, վար չիջնէք: Եթէ մի բանի պէտք ունէք, մենք կտանք:

Երկու ժամ յետոյ հասանք մի կայարան: Լսեցին կրակոցի ձայներ, մեր



խցիկում նստած կամաւորները, զէնքերը վերցրած, դուրս ելան, նրանցից մէկն ասաց.

- Տեղներիցդ չշարժւէք եւ պատուհանից գլուխ դուրս չհանէք:

Անցաւ մի րոպէ, կրակոցները դադարեցին, եւ մեր բարեկամները ներս մտան: Պարզւեց, որ թուրք կողոպտիչները յարձակւել են գնացքի վրայ, բայց, հանդիպելով դիմադրութեան, փախել են: Վագոնում եղած մի քանի թուրք վաճառականները կուչ էին եկել եւ հայհոյում էին յարձակողներին:

Կամաւորներից մէկը հարցրեց.

- Տղերք, որտեղի՞ց էք գալիս:

- Երեւանից եկանք Թիֆլիս եւ Թիֆլիսից թռէն վերցրինք:

- Հա, ձեզ չասացի՞ն, որ ճանապարհները անապահով են, եւ Բագւում էլ հայ եւ թուրք իրար վրայ ատամ են սրում: Այսպիսի խառն ու անապահով ժամանակին ինչպէս էք ռիսկ արել եւ ի՞նչ գործով էք գնում:

- Ուզում ենք գնալ եւ մեր թերթի համար թուղթ գնել:

- Թուղթ ինչի՞ համար է:

- Մեր թերթի համար:

- Մի՞թէ Բագւում թղթի գործարան կայ:

- Մեզ ասացին, որ ճարւում է:

- Բայց ո՞ւր էք գնալու եւ ո՞ւր էք իջնելու: Ծանօթ, բարեկամ, ազգական ունէ՞ք Բագւում:

- Մենք միայն մի նամակ ունենք պարոն Աբրահամ Գիւլխանդանեանի վրայ, ուզում ենք նրան տեսնել:

- Իսկ ո՞ւր էք պառկելու:

- Չգիտենք, հաւանաբար պարոն Գիւլխանդանեանը մի կարգադրութիւն կանի:

- Գիւլխանդանեանը այնքան զբաղուած մարդ է, որ այդ բանով նրան չի կարելի անհանգստացնել: Լսեցէք. երկու ժամից յետոյ հասնելու ենք Բագու, մենք ձեզ կը տանենք Գիւլխանդանեանի մօտ, կը յանձնենք նրան ու յետոյ կերթանք մեր գործին, մենք ձեզ մենակ չենք թողնի, որ գնաք, անփորձ տղերք էք, մի փորձանքի կարող էք հանդիպել:

- Շնորհակալ ենք ձեզանից:

Հասանք Բագու:

Կէսօրից յետոյ ժամը 4ն էր:

Ջինւորները մեզ առաջնորդեցին: Մի սեւ շէնք էր: Դրան առաջ երկու

զինուած պահակներ կային: Հաւանաբար մեզ առաջնորդողները նրանց ճանաչում էին:

– Ե՞րբ եկաք, տղերք,– ասաց պահակներից մէկը:

– Հենց նոր հասանք: Այս երկու ջահելները մեզ հետ էին, եկել են Բագու՝ ընկեր Գիւլխանդանեանին տեսնելու, նամակ ունեն: Չուզեցինք մենակ թողնել:

– Ուզում էք ընկեր Գիւլխանդանեանի՞ն տեսնել,– ասաց պահակներից մէկը:

– Այո,– պատասխանեցինք:

– Նամակ, յանձնարարական ունէ՞ք:

– Այո: Սահակ Թորոսեանի նամակը տուինք պահակներից մէկին:

– Սպասեցէք, նամակը յանձնեմ պարոն Գիւլխանդանեանին, տեսնենք, թէ ինչ է ասելու: Սպասեցէք, հիմա կը վերադառնամ: Քիչ յետոյ եկաւ եւ ասաց.

– Համեցէք ներս: Շնորհակալութիւններ յայտնելով մեզ ուղեկցողներին՝ մտանք ներս: Գրասեղանի առաջ նստած էր մի կլորիկ, բարի դէմքով մարդ, որի ձեռքում էր մեր նամակը: Ժպտալով նայեց մեզ եւ ասաց.

– Նստեցէք մի քիչ հանգստացէք: Յետոյ դառնալով իր կողքին նստողին՝ ասաց.– Հաւանաբար մերոնք տեղեկութիւն չունեն այստեղի անցուդարձից, ապա թէ ոչ այս անփորձ երիտասարդներին այս վտանգաւոր ժամանակներին չէին ուղարկի այստեղ: Եղիշ ջան ծանօթացիր: Եղիշէն միջահասակ թիկնեղ, համակրելի եւ ժպտադէմ մի մարդ էր: Մօտեցաւ մեզ ու մեր ձեռքը սեղմեց:

– Եղիշէ Պահլաւունի: Այնքան ուժեղ սեղմեց ձեռքս, որ մատներս իրար կպան, եւ եթէ ամօթ չլինէր, պիտի ճչայի: Նոյն դրութեան մատնուեց եւ խեղճ ընկերս, որ ինձանից աւելի թոյլ էր: Հետագային երբ շատ մտերմացանք, իմացայ, որ դա նրա սովորութիւնն է, եւ շատերը նրան բարեւելիս վախենում են ձեռք տալուց: Այդ ձեռքի սեղմումը եւ հրաշալի զգացումով երգելը ժառանգաբար անցել է իմ սիրելի ընկերոջս՝ Եղիշէի զաւկին՝ Նորայր Պահլաւունուն:

– Կուսակցակա՞ն էք,– հարցրեց ընկեր Գիւլխանդանեանը:

– Այո,– պատասխանեց ընկերս:

– Եղիշէ, այս երիտասարդներին յանձնում եմ քեզ, ինչպէս նաեւ պիտի աշխատես թուղթ ճարել նրանց համար:

– Ո՞ւր պիտի գիշերէք,– հարցրեց Պահլաւունին,– ծանօթ, բարեկամ ունէ՞ք:



– Ոչ:

– Մի մտածէք, ամէն բան կը կարգադրեմ՝ չնայած որ ես էլ նոր եմ եկել: Գնանք, ընկերներ:

Շնորհակալութիւն յայտնելով ընկեր Գիւլխանդանեանին՝ մեկնեցինք: Երբ իջանք փողոցը, նա մի րոպէ լուռ կանգնեց եւ յետոյ ասաց.

– Նախ գնանք մի բան ուտենք: Յետոյ կը մտածենք քնելու մասին: Երեւի սոված կը լինէք:

– Սոված չենք, ընկեր Պահլաւունի:

– Ինձ հետ պարզ եղէք, ոնց որ ձեր մեծ եղբօր հետ պիտի լինէիք:

Մեզ տարաւ մի հայկական ճաշարան: Լեփ-լեցուն էր: Մի քանի սեղաններից սկսեցին կանչել.

– Եղիշ ջան, եկ մեր սեղանին:

– Պահլաւունի, մեր սեղանին պիտի գաս:

– Տղերք ջան, հիւրեր ունեմ,– ասաց Պահլաւունին:

– Հիւրերդ մեր աչքի վրայ տեղ ունեն:

Վերջապէս նստեցինք մի սեղանի, ուր երեք հոգի էին նստել, որոնցից մէկը գնդապետ էր: Պահլաւունին մեզ ներկայացրեց բոլորին, բայց դժբախտաբար անունները մոռացել եմ: Ըստ երեւոյթին Պահլաւունուն շատ էին սիրում, որովհետեւ շատերը, իրենց սեղանները թողած, մօտեցան ու նստեցին մեր սեղանին, եւ ամէն մէկը մի բան էր պատուէր տալիս: Ամէն կողմից առաջարկում էին Պահլաւունու կենացը: Իրապէս անօթի էինք եւ լաւ կերանք: Մերժեցինք խմիչքը, որ մեզ առաջարկում էին:

– Դէ հիմա գնանք,– ասաց Պահլաւունին: Յոգնած կը լինէք, կը քնէք ու կը հանգստանաք: Ես առաւօտեան կը գամ ձեզ կը տանեմ: Տնից դուրս չգաք մինչեւ իմ գալը:

– Իսկ հիմա ո՞ւր պիտի տանէք:

– Եկէք, որոշել եմ ձեզ տանել տիկին Աստղիկի տունը, նա էլ ձեզ նման երկու տղաներ ունի: Մեր մէկ լաւ ընկերոջ կինն է եւ յարմարութիւն ունի ձեզ տեղ տալու:

Գնացինք տիկին Աստղիկի տունը, որ շատ հեռու չէր: Նա շատ սիրով եւ ջերմութեամբ մեզ ընդունեց: Պահլաւունին պատմեց մեր Բագու գալու նպատակը: Տիկին Աստղիկը մի սենեակ ցոյց տուեց, ուր երկու մահճակալներ կային:

– Դուք կարող էք այստեղ հանգիստ քնել, տղաներս երբ գալու լինեն

կը պառկեցնեմ հիւրասենեակը։ Մի մտածէք, ամէն յարմարութիւն ունեք։ Նախ մի բան պատրաստեմ՝ ընթրեցէք։

-Մենք լաւ ընթրել ենք,- ասաց Պահլաւունին։

-Դէ, ես գնացի, վաղ առաւօտեան ժամը 8ին պատրաստ եղէք։

Պառկեցինք եւ հրաշալի քնեցինք։

Առաւօտեան մէկը դուռը ծեծեց։

-Ո՞վ է,- ասացի։

-Բալիկներս, վեր կացէք, ժամը 7ն է, հիմա ուր որ է կը գայ Եղիշէն։ Վեր կացէք նախաճաշ արէք եւ պատրաստ եղէք։

Մենք հազիւ էինք վերջացրել մեր նախաճաշը, երբ ժպիտը դէմքին ներս մտաւ ընկեր Պահլաւունին։

-Լաւ քնեցի՞ք, տղերք։

-Հրաշալի,- պատասխանեցի։

-Եկէք ինձ հետ։ Երէկ գիշեր ձեզանից բաժանուելուց յետոյ նորից գնացի այդ ճաշարանը։ Այնտեղ էր Սերգօն։ Պատմեցի ձեր այստեղ գալու նպատակի մասին։ Նա ասաց, նախքան Թոփչիպաշեւի տպարանը կրակ տալը, այնտեղ ահագին թղթեր կային, բաւականին բերինք եւ լցրինք Սիմոնի ամբարը։ Հիմա այնտեղ են, կտանք այս տղաներին թող տանեն Երեւան, մեզ այլեւս պէտք չեն։

Մեր ուրախութեան սահման չկար։

Մենք գնացինք այդ ընկեր Սերգոյի մօտ։ Կարծես ղարաբաղցի էր, որովհետեւ իր խօսքերը լաւ չէինք հասկանում։

-Սերգէյ ջան,- ասաց Պահլաւունին,- այդ բոլոր թղթերը կապոց-կապոցների վերածիր, մի լաւ կապիր, վրան գրել տուր. «Երեւան, յանձնել Մարութեանին», տար կայարան, տուր գրագիր Գէորգին, ասա, որ ես եմ ղրկել, եւ պէտք է շտապ ղրկել Երեւան, նա ամէն բան կը կարգադրի։

-Աչքիս վրայ,- ասաց Սերգօն։

Եղիշէն, դառնալով մեզ, ասաց.

-Տղերք ջան, այսօր մի փոքրիկ երեկոյթ կայ։

-Այս խառն օրերին երեկո՞յթ,- ասացի ես։

-Հայի համար մահն ու հարսանիքը միատեղ են։ Այս երեկոյթը կազմակերպուած է պաշտպանութեան ֆոնդի օգտին։ Գիտէ՞ք՝ ով է այս երեկոյթի հովանաւորողը։

-Ոչ,- պատասխանեցի։

-Լսած կը լինէք նշանաւոր դերասանուհի Ազնիւ Հրաչեայի մասին։



-Ես լսած եմ,- պատասխանեցի։

-Հիմա քաշուած է բեմից, տարիքն առած է, բայց յարգանք է վայելում, մանաւանդ, այսպէս ասած, արիստոկրատ դասակարգի կողմից։ Ես ձեզ համար էլ տոմսակ եմ առել։ Երեկոյթը սկսվում է երեկոյեան ժամը 4ին եւ վերջանալու է 7ին։ Գիտէք՝ հիմա գիշերները վտանգով լի են։

-Ի զուր էք մեզ համար էլ տոմսակ առել, մենք չենք կարող գալ։

-Ինչո՞ւ։

-Այս հագուստներով երեկոյթ գնալը...։

-Հիմա ո՞վ է հագուստին նայողը։

Մենք չկարողացանք ընկեր Պահլաւունուն հակառակել։ Համակերպուեցինք։

-Դէ, հիմա գնանք ճաշելու, ժամը արդէն երկուսն է։ Կը ճաշենք, կը գնանք երեկոյթ, յետոյ ձեզ կը տանեմ տիկին Աստղիկի մօտ, իսկ առաւօտեան ժամը 9ին կը տանեմ ձեզ ճամբու կը դնեմ։ Հա, չմոռանանք, առաւօտեան կերթանք ընկեր Աբրահամի մօտ, գուցէ որեւէ նամակ կը տայ, ապա մնաս բարով կասէք իրեն։

-Որքան նեղութիւն կրեցիք մեզ համար։

-Ի՞նչ եմ արել որ։

-Շատ բան։

-Դէ, այդ մասին այլեւս չխօսենք։

Գնացինք երեկոյթին։ Հիւրեր ընդունողը մեծ դերասանուհի Ազնիւ Հրաչեան էր։ Թէեւ տարիքը առած, մազերին ձիւն նստած, բայց այդ տարիքին շատ գեղեցիկ էր։ Մի ազնուական հով կար վրան։ Գեղեցիկ էին իր աչքերը ու հմայիչ։ Իրաւամբ «Հրաչեայ»։ Բոլոր ներս մտնողները նախ մօտենում էին ու համբուրում նրա ձեռքը։ Նոյնն արաւ նաեւ Պահլաւունին, մենք հետեւեցինք նրան եւ առաջին ու վերջին անգամ համբուրեցինք մեծ արուեստագիտուհու ձեռքը։

Յաջորդ օրը ընկեր Պահլաւունին ամեն բան կարգադրած էր։ Գնացինք ընկեր Գիւլխանդանեանին մնաս բարով ասելու։ Ժպիտը դէմքին՝ մեզ ընդունեց, բարի ճանապարհ մաղթելով եւ մի նամակ տալով՝ ասաց.

-Այս նամակը զգուշ կերպով պահեցէք եւ յանձնեցէք Սահակ Թորոսեանին։

Ընկեր Պահլաւունին մեզ տեղաւորեց մի խցիկում, ուր իրեն շատ մտերիմ մէկը կար՝ Պարոյր անունով։ Պատուիրեց նրան, որ մեզ ապահով պիտի հասցնի Թիֆլիս եւ ապա Երեւան, ապա մի կապոց տուեց՝ ասելով.

-Այս էլ ճանապարհի ձեր պաշարը: Համբուրուեցինք, ու գնացքը ազդանշան տուեց մեկնումի: Եղիշէն իջաւ, եւ տեսնում էինք, որ նա դեռ կանգնած մեզ էր նայում:

Հասանք Թիֆլիս եւ յաղթանակ տարած զօրապետի նման մտանք Երեւան՝ չնայած որ մենք ոչինչ չէինք արել եւ այդ բոլորը պարտական էինք Եղիշէ Պահլաւունուն:

Այլեւս չտեսայ Պահլաւունուն:

Տասնեւեօթ տարի յետոյ միայն հանդիպեցինք:

Տասնեւեօթ տարի յետոյ վերադարձայ Թեհրան: 1935ին մեկնեցի Աբատան՝ ներկայացումներ տալու: Հասանք Սալահապատ կոչուած մի տեղ: Այն ժամանակ Սալահապատը գրեթէ ամայի մի տեղ էր: Կային մի քանի տներ եւ հիւրանոցի նման մի բան: Իջայ այդ «հիւրանոցը»: Ուզեցի ընթրել, մտայ ճաշարանի նման մի տեղ, բացօթեայ էր: Տեսայ՝ մի խումբ նստած ընթրում էին: Նրանց մէջ ճանաչեցի գնդապետ Բէկ Փիրումեանին: Յաղթանդամ եւ առնական մի մարդ էր, որին բոլորը Օսիկ էին կոչում: Նրան մի քանի անգամ տեսել էի Թեհրանում քաֆէ «Շիմրան»ում: Նա ճանաչեց ինձ եւ վեր կենալով մօտեցաւ իմ սեղանին եւ հրաւիրեց նստել իրենց սեղանին: Մօտեցայ: Նա ներկայացուց ինձ սեղանի շուրջ նստողներին.

-Դերասան պարոն Մարութեանը նոր է եկել զակրանիցայից: Թեհրանում մի անգամ ներկայ եղայ, մոռացել եմ բիէսայի անունը. էն որ մի մարդ 15 տարի տուրմում-բանտ նստելուց յետոյ փախչում է եւ յետոյ թոյն է խմում:

-Կորրադո,- ասացի ես:

-Հենց այդ: Խնդրեմ, ծանօթացէք: Սկսեցի ձեռք տալ, երբ ձեռք տուի չորրորդ նստողին, ձեռքս այնպէս ուժով սեղմեց, ճիշտ այնպէս, ինչպէս 17 տարի առաջ Բագւում սեղմել էր Եղիշէ Պահլաւունին:

-Ներողութիւն,- ասացի,- Դուք Եղիշէ Պահլաւունին չէ՞ք:

Նա մի րոպէ զարմացած նայեց ինձ եւ ասաց.

-Դուք ինձ որտեղի՞ց էք ճանաչում:

-Բագւից, եւ ձեր ձեռք սեղմելու եղանակը յիշեցրեց ինձ:

-Բագու մենք ո՞ւր ենք հանդիպել: Ճիշտ է թերթերում կարդացել եմ դերասան Մարութեանի մասին: Բայց ես ձեզ չեմ տեսել:

-Պարոն Եղիշէ Պահլաւունի, միթէ դուք 1918ի սկիզբներում Բագու չէի՞ք գտնւում:

-Այո, այնտեղ էի:

-Այդ օրերին երկու երիտասարդներ, աւելի շուտ՝ պատանիներ, եկել էին



Բագու, իրենց թերթի համար թուղթ առնելու, միթէ դուք այն Պահլաւունին չէ՞ք, որ ընկեր Գիւլխանդանեանը մեզ յանձնեց ձեզ, եւ դուք էլ նրանց ամեն աջակցութիւն ցոյց տալուց յետոյ ղրկեցիք Երեւան:

-Հա, հա,- կարծես թէ հիմա յիշում եմ:

-Մեզ տարաք տիկին Աստղիկի մօտ, ուր գիշերեցինք, տարաք մի երեկոյթի, որի հովանաւորողը մեծատաղանդ հանգուցեալ դերասանուհի Ազնիւ Հրաչեան էր:

-Շատ լաւ յիշեցի, բայց այն ժամանակ, դուք այնքան ջահել էիք, իսկ հիմա առնական երիտասարդ էք դարձել:

-Այն ժամանակ դուք էլ շատ թիկնեղ էիք, մանաւանդ ձեր զինւորական հագուստներով, հիմա շատ էք փոխուել:

-Էհ, կեանքը շատ դաժան է: Տարագրութիւնը մեզ մաշեցրեց: Ուրեմն դուք այն Մարութեանն էք: Գրկեց ինձ եւ համբուրեց: Այս ինչ տարօրինակ հանդիպում, Բագու եւ Սալահապատ:

Եղիշէն շատ էր փոխուել, նիհարել էր եւ մի տեսակ ընկճուած էր:

-Ո՞ւր էք ուզում գնալ, ընկեր Մարութեան,- ասաց Պահլաւունին:

-Ուզում եմ Աբադան գնալ՝ ներկայացումներ տալու:

-Հոծ եւ լաւ հայութիւն ունենք Աբադանում, մեծ յաջողութիւն պիտի գտնէք: Եթէ ներկայացման թուականը իմանանք, մենք բոլորս էլ անպայման կգանք ներկայ լինելու,- ասաց Եղիշէն:

-Շատ լաւ,- անպայման կգանք,- ասաց նստողներից մէկը:

-Բայց ձեզ այդքան շուտ չենք թողնում, որ գնաք, մի երկու օր պիտի պահենք ձեզ:

-Տա, տա,- ասաց գնդապետ Օսիկը:

-Դէ հիմա խմենք մեր հիւրի կենացը:

-Խմենք,- ասացին բոլորը:

-Եղիշ ջան, ման օլում, մի հատ երգիր,- ասաց գնդապետը:

-Ի՞նչ երգելու ժամանակ է:

Եղիշէն երգեց. «Դու անմեղ ես, քո աչքերն են մեղաւոր»:

Հրաշալի էր: Բագւի երեկոյթին նա երգեց ռուսական ռոմանսներ: Ձայնը չէր փոխուել:

Երկու օր ինձ ուժով պահեցին Սալահապատում եւ ապա ճանապարհ դրին դէպի Ահւազ եւ Աբադան:

Այդ օրուանից այլեւս չհանդիպեցի Պահլաւունուն, որովհետեւ 1937ին ես

կրկին մեկնեցի Եւրոպա եւ վերադարձայ 1941ին, երբ արդէն աշխարհը կրակի ու ծուխի մէջ էր:

Համաշխարհային երկրորդ պատերազմը արդէն սկսուած էր:

Վերադարձից յետոյ աւելի մտերմացանք եւ համարեա թէ ամեն օր հանդիպում էինք:

Ռուսները մտան Պարսկաստան:

Մեր կուսակցութեան պատասխանատու մի քանի ընկերներ, որոնց մէջ նաեւ ԿԿ-ի անդամներ, բացի ինձանից, որ ԿԿ-ի ներկայացուցիչն էի, հեռացան աւելի ապահով շրջան: Եղիշէն եւ ուրիշներ, որոնք եւս վտանգուած էին, չհեռացան: Այդ մնացած ընկերներով կազմեցինք մի ժամանակաւոր մարմին՝ հանգուցեալ Դր. Յարութիւն Ստեփանեանի նախագահութեամբ:

Այդ արդէն ուրիշ պատմութիւն է:

Ես վարում էի «Ալիք» օրաթերթի խմբագրութիւնը: Եղիշէն ամէն օր գալիս էր ինձ մօտ: Մեր մի քանի ընկերներ առեւանգւեցին կամ բանտարկւեցին: Ինձ ու Եղիշէին շատ ներողութիւն տուին: Դիմացանք: Եղիշէն միշտ մնաց պատնէշի վրայ:

Օրերը գեղեցիկ չէին: Ամեն րոպէ սպասում էինք ձերբակալւելու կամ անյայտանալու:

Պատերազմը վերջացաւ:

1945ի վերջերին ես հեռացայ Պարսկաստանից: Տասնեւհինգ տարի յետոյ վերադարձայ: Իմացայ, որ Պահլաւունին ծանր հիւանդ է: Առաջին այցելութիւնս նրան տուի: Եղիշէից ոչինչ չէր մնացել: Անողոք հիւանդութիւնը բոլորովին մաշեցրել էր նրան: Յաճախ այցելում էի նրան:

1961ին, Փետրուար երեքին, Եղիշէ Պահլաւունին գնաց միանալու իր զէնքի աննման հերոս ընկերներին:

Սիրելի ընկեր եւ թանկագին բարեկամ, Եղիշէ ջան, այս մի քանի տողը, ուր շատ քիչ բան է ասւել քո կատարած գործերից մասին, որպէս մի փունջ ծաղիկ, երկու կաթիլ արցունքի հետ, մահւան քսանամեակի առթիւ, այս հեռաւոր ափից: Ներիր, որ այդ օր գերեզմանդ մնայ առանց ծաղկի, բայց քո յիշատակը չպիտի թառամի, այն փունջ ծաղկի նման, եթէ կարողանայի դնել հեռաւոր շիրիմիդ վրայ:

Հանգիստ տառապած մարմնիդ:



**Գրեց՝ Արամ Ալչուջեան**

**Յեղափոխական ալբոմ**

Դ շարք, 1963, թիւ 5 (41)

## Եղիշէ Պահլաւունին

Մեզնից առ յաւէտ բաժանւեց հայ ժողովրդի արժէքաւոր զաւակներից մէկը, նրա ազատութեան-երջանկութեան համար իր կեանքը ի սպաս դրած Եղիշէ Պահլաւունին:

Կենսագրութիւնը չէ, որ գրի պիտի առնեմ, այլ իրեն բնորոշող մի քանի դրւագներ: Համեստ էր Եղիշէն բնաւորութեամբ: Իր մասին քիչ էր խօսում, աւելի ճիշտը՝ չէր էլ խօսում: Բուռն ու փոթորկալի կեանք է ունեցել, բայց շատ քիչ է պատմել այդ մասին:

Նրա կեանքը համակ զոհաբերութիւն ու մարտնչում է եղել, յանուն իր սիրած ժողովուրդի պաշտպանութեան եւ ազատութեան: Մանր է այժմ գրել նրա մասին, դժւար է գրել, սակայն իր կորստի պատճառով սուգի մատնւած, թէկուզ մի քանի դրւագներ պիտի գրի առնեմ նրա կեանքից ներկայացնելու համար գաղափարական մարտիկին: Բազում էինք, գաղափարական երիտասարդներ մէկտեղ եկած, յաճախ խմբւում էինք, մտքերի փոխանակութիւն էինք ունենում զանազան խնդիրների շուրջ:

Այդ խմբակի մէջ սիրւած ընկերներից էր Եղիշէն, ճշմարտասէր, ընկերասէր, իր բուռն ազգասիրութեամբ մի քիչ ռոմանտիկ: Դուրեկան - հաճելի ձայն ունէր ու սիրում էր երգել տխուր եւ զգացումով լեցուն: Առաջին պատերազմի ճգնաժամային օրերն էին: Ցանկական բանակն արշաւում էր դէպի Կովկաս:

Կամաւորական շարժումը ոգեւորում էր բոլոր այն երիտասարդներին, որոնք ուխտում էին իրենց կեանքի գնով օգնել ժողովուրդին: Մի երեկոյ նահանգական այգու մի բացատի ծայրում հաւաքւած էինք, մեր հանդիպումների ծառախիտ անկիւնում: Չեմ յիշում ի՞նչ լուր էր ստացւել, բայց բոլորս էլ մտախոհ էինք: Խօսում էինք մեր ժողովուրդի ծանր կացութեան մասին: Վէճ չկար, այլ վշտի եւ զայրոյթի արտայայտութիւններ:

- Գիտէ՞ք, տղայք, ես մի քանի օրից մեկնելու եմ ճակատ: Այո, մի քանի օրից մեկնում եմ Թիֆլիս,- խօսողը Եղիշէն էր:

Ոմանք զարմացան, ոմանք հաւանութիւն տուին, յայտնելով, որ իրենք

էլ են պատրաստւում գնալ, իսկ ոմանք էլ տարակուսանքի մէջ մնացին: Բոլորս էլ գնալու էինք, եթէ հնարաւորութիւն ունենայինք դասաւորել ընդհանուր, ուսման եւ այլ խնդիրներ:

–Բայց ինչո՞ւ այդպէս շտապել:

–Ի՞նչ միտք ունի ձգձգելը,– ասաց,– վերջիվերջոյ գնալու եմ,– շեշտեց նա:

–Վճիռը շատ յանկարծակի էր,– ասաց մէկը:

–Ոչ, շատ եմ մտածել,– պատասխանեց:

–Մարդիկ, երբ մտաւոր խանգարում են ունենում, ինքնասպանութիւն են գործում,– ասաց մեր ապագայ բանաստեղծ Ազատը (Վշտունին), իսկ սա գնում է, որ իրեն սպանեն:

Կատակը սուր էր, բայց ոչ ոք չծիծաղեց, Եղիշէի յայտարարութիւնը բոլորին յուզեց: Ոմանք փորձեցին մի քիչ ուշացնել նրա մեկնումը, բայց իզուր: Բաժանւելիս ասաց, որ մէկ-երկու օրից պիտի մեկնի: Շատ ուշ բաժանւեցինք: Բոլորիս համար էլ դժւար էր նրանից անջատւելը: Իւրաքանչիւրս իր խոհերի հետ ցրւեցինք մեկնելով մեր տները:

Յաջորդ օրը Եղիշէն յայտնեց իր մեկնելու օրը եւ ժամը՝ երկու օրից առաւօտեան գնացքով:

Նշանակւած օրը, առաւօտեան երկաթուղու կայարանում էինք: Կային նաեւ շատ բարեկամներ, յանկարծակիի եկած: Մի քանի օրիորդներ ծաղկեփնջեր էին բերել: Մենք մեզ պահում էինք բարձր տրամադրութեան մէջ: Մեր ընկերը խիզախ որոշում էր կայացրել, պէտք էր նրա ոգեւորութեանն ուժ տալ, կամքը անսասան պահել:

Բաժանւեցինք ուրախ տրամադրութեամբ: Այդ օրւանից նա մտաւ մարտական ասպարէզ, որի մէջ մնաց մինչեւ Հայաստանի անկախութեան վերջը եւ մեր Պարսկաստան տարագրւելը:

Ու ինչ նեղութիւնների, ինչ տառապանքների, ինչ ճակատամարտերի ու դժւարին պայմանների մէջ չի եղել նա, անվեհեր հերոսի, անձնազոհ մարտիկի պայծառ անուն շահելով:

Առաջին հերթին նա մասնակից դարձաւ Անդրանիկի բանակին:

Լսեցինք նրա քաջագործութիւնների մասին: Նա մնաց ճակատում մինչեւ 1918 թւականը, երբ հասաւ Բագու, ուր Բագւի բանակի 20րդ գումարտակի հրամանատարն էր: Այս երկար դժւար ճամբայի, կամաւորական գնդի մէջ մտնելուց մինչեւ նկարագրելիքս օրերը գրի առնել չեմ կարող: Արձանագրեմ միայն, որ արդէն թրծւած, անւանի զինւորականի անուն ունէր՝ սիրւած վերին հրամանատարութիւնից եւ իր զինակիցներից:





Կենտրոնում՝ Եղիշէ Պահլաւունին զինակիցների հետ:

* * *

Եղիշէն իր զօրագունդի հետ գտնւում էր Կարամարեանում, զօրամասին մաս կազմելով, որ արշաւում էր Գանձակ, սակայն Կարամարեանի աղէտի հետեւանքով սկսել էր նահանջել: Այդ մասին սեղմ կերպով յիշատակել եմ «Ռոստոմը Բագւում» յուշերիս մէջ (տպագրւած «Հայրենիք» ամսագրում: Շամախիի գաղթի ժամանակ, Եղիշէն իր զօրագնդով մի քանի տասնեակ հազար հայեր փրկեց ստոյգ բնաջնջումից: Իմ արձանագրելիք երկրորդ դրւագը վերաբերում է այդ անցքերին: Աղսու գետը հոսում էր մի ձորում, որի մէկ ափից դէպի վեր բարձրանում էր նեղ ու քարքարոտ մի ճամբայ դէպի Մադրասայի շուրջը ցրւած հայ գիւղերը, դէպի Շամախի, իսկ միւս ափից մէկ ուրիշ ճամբայ տանում էր դէպի Սաղեան եւ այդ տեղից դէպի Բագու: Ռոստոմը մեր երկու ընկերներին յանձնարարեց երթալ անմիջապէս ընդհանուր հրամանատար Եղիշէի մօտ, ասելու, որ նա իր զօրագունդով պիտի մնայ գաղթող ժողովուրդի թիկունքում, ճակատ առ ճակատ մեզ կրնկակոխ հետապնդող թշնամիի՝ տաճկական բանակի դէմ եւ պիտի պաշտպանի ժողովուրդին մինչեւ Բագու:

Մեր ընկերներից Միրաքեանը պատմեց հետեւեալը.

-Երկու ընկերներով գտանք Եղիշէին առաջաւոր դիրքերում: Թշնամին թնդանօթի կրակի տակ էր առել 20րդ զօրամասի դիրքերը: Մենք յայտնեցինք նրան Ռոստոմի յանձնարարութիւնը: Եղիշէն նստեց հողաթմբին եւ կանչեց իր երեք զինակից սպաներին:

-Խնդրեմ կրկնեցէք Ռոստոմի կարգադրութիւնը,- ասաց նա:

Մենք կրկնեցինք յայտնելով, որ ձեր վրայ պարտականութիւն է դրւած մնալ գաղթող ժողովուրդի թիկունքում, ճակատ առ ճակատ մեզ հետապնդող թշնամու դէմ եւ պաշտպանել ժողովուրդին մինչեւ Բագու:

-Պարոն Ռոստոմը գիտի՞, որ մեզ հետ եղած միւս զօրամասերը նահանջել են, եւ մենք մենակ ենք մնացել,- հարցրեց սպաներից մէկը:

-Այո,- ասացի,- պարոն Ռոստոմը գիտի այդ մասին, եւ համոզւած է, որ դուք ձեր զօրամասով կկատարէք ձեր պարտականութիւնը եւ ձեր կեանքի գնով չէք թողնի, որ թշնամին սրածի ժողովուրդին:

Եղիշէն նայեց իր զինակիցներին.

-Այդպէ՞ս է,- հարցրեց:

-Այդպէս է,- պատասխանեցին նրանք:

Եղիշէն ոտքի կանգնեց.

-Վերադարձէք,- ասաց նա,- եւ յայտնեցէք պարոն Ռոստոմին, որ իր հրա-

մանը կկատարի սրբութեամբ, մենք կմեռնենք, բայց չենք թոյլ տալ թշնամիին հասնել մեր ժողովուրդին:

Մենք համբուրուեցինք Եղիշէի եւ իր զինակիցների հետ եւ յուզուած վերադարձանք:

Յաջորդ օրը, կէսօրն անց, նահանջող ժողովուրդն իջնում էր լեռն ի վար: Արդէն նկատում էինք, որ իրարանցում կար նրանց մէջ: Մեր կողմից գաղթողների մէկ ծայրն արդէն բարձրանում էր լեռն ի վեր դէպի Սաղեան:

Յանկարծ թշնամին երեւաց դէպի անապատ ձգւող սարալանջին եւ սարսափահար նկատեցինք, որ նրանք գալիս են ժողովրդի ճամբան կտրելու:

Ճիչն ու աղաղակը հասնում էր մեզ: Մենք եւս խառնուեցինք իրար: Զինուած տղաները խմբուեցին գետն անցնելու համար: Մէկ էլ ոչ ոք չհասկացաւ, թէ որտեղի՞ց դուրս թռաւ 20րդ զօրագնդի մի վաշտ եւ կրակի տակ առաւ յառաջացող թշնամուն: Նրանք յանկարծակիի եկած յետ ընկրկեցին, ապա խուճապահար նահանջեցին: Ժողովրդի վերջին եկողներն արդէն Սաղեանի ճամբում էին, երբ Եղիշէի զօրագունդը դեռ Աղսուի ափից դիրքեր էր գրաւում: Քանի-քանի աննման խիզախութիւններով Եղիշէն իր հրաշալի օգնականներով եւ մարտիկներով պաշտպանեց ժողովրդին եւ ազատելով նրանց սրածութիւնից հասցրեց մինչեւ Խուրդալան, Բագւի տակ:

Խուրդալանից 20րդ զօրագունդը յոգնած, չարչարուած մի տասնեակ վիրաւորներով իջաւ հայոց աւանը, Բագւի ամենահեռու արուարձանում մէկ շաբաթեայ հանգստի հրամանով: Խուրդալանում հանդիպեցինք Եղիշէին, սաստիկ յոգնած էր, կարծես ոտքի վրայ ուզում էր ննջել, բայց առոյգ էր հոգով:

-Չպիտի տանք Բագուն,-ասում էր նա:

Բագւի անկումից յետոյ նա Հայաստանում էր: Այնուհետեւ մինչեւ Հայաստանի Հանրապետութեան անկումը էլ ո՞ր կարեւոր ճակատամարտի, հայ հայրենիքը պաշտպանելու համար տեղի ունեցող ո՞ր կռուին Եղիշէն մասնակից չեղաւ: Անսասան գաղափարական մեր ընկերը, իր կեանքը զոհաբերելու պատրաստակամութեան բազմաթիւ ապացոյցներ տուած մէկ աննման մարտիկ էր: Իր մահկանացուն կնքում է, իր նուիրական նպատակը չիրագործուած: Հայրենիքի ազատագրումը երազ մնաց: Տարագրութեան մէջ տարին մի անգամ առիթ էինք ունենում հանդիպելու հին ընկերներին:

Ոչինչ չէր փոխել նրա մէջ տարագրութեան ծանր կեանքը իր նկարագրում:



Նոյն հաւատաւորը, նոյն ազնիւ ու արդարամիտ եւ նուիրուած ընկերը: Լի ու լի կատարեց իր պարտականութիւնը՝ ընտանիքի, ազգի ու հայրենիքի հանդէպ: Մեր ազատագրական պատմութեան մէջ նա պիտի մնայ մէկը մեր լուսապայծառ դէմքերից:

Թող հողը թեթեւ գայ քեզ, սիրելի Եղիշէ: Հայ ժողովուրդն իր պատմութեան մէջ մի անգին էջ պիտի յատկացնի քեզ, իսկ գաղափարական ընկերներիդ հոգում անմոռաց պիտի մնայ քու անունդ եւ ազատագրուած հայրենիքում դաշնակցական մարտիկի յուշարձանի վրայ ոսկի տառերով պիտի քանդակւի քո անունը:

Հանգիստ տառապած ոսկորներիդ, աննման ընկեր:

**Գրեց՝ Արամ Ալչուջեան**

**Ռոստոմը Բագւում**

«Յայրենիք» ամսագիր, թիվ 7 (365)

Յուլիս, 1956թ.

(հատւած Ե. Պաhլավունու մասին)

## Ռազմաճակատից մինչեւ Բագու

Մերոնք հարուածային կարգով առաջացել էին եւ գրաւել Գէօգչայ քաղաքը, որ թշնամին թողել էր կէսօրին, ճաշի ժամանակ, բոլոր բնակարաններում ճաշը պնակների մէջ թողած եւ կաթսաները օճախների վրայ:

Օգնական ուժեր ստանալով՝ թշնամին մեզ նեղել էր: Սակայն մերոնք չպիտի նահանջէին, եթէ թշնամին օգտագործած չլինէր խմելու ջրի խնդիրը: Նախ՝ ոչ մի հնարաւորութիւն չկար շարժւել երկաթուղագծով, կամ խճուղիով, որովհետեւ թշնամին քանդել էր ջրերի թումբերը եւ ողողել ամբողջ դաշտավայրը՝ անանցանելի դարձնելով այն: Մեր զօրքը ստիպւած էր եղել շարժւել լեռնավայրով: Սակայն, այստեղ էլ թշնամին կտրել էր բարձրից եկող բոլոր առուները եւ մեր բանակը թողել առանց ջրի այդ տաք շրջանում:

Մերոնք նահանջել էին մինչեւ Կարամարեան: Սակայն հնարաւոր չէր եղել կարգադրել ջրի խնդիրը: Կարամարեանում զինւորների եւ սպաների մէջ ծարաւից խելագարուելու դէպքեր էին եղել, ուստի եւ հրաման էր տրուել զօրքին նահանջելու:

Մենք՝ Բանուորական Խորհրդի Դաշնակցական ֆրակցիայից մի խումբ երիտասարդներ, Կ. Կոմիտէի թոյլտուութեամբ, գնացել էինք ճակատ՝ բժշկասանիտարական օգնութիւն հասցնելու համար բանակին եւ հսկելու համար նաեւ պարենաւորման գործին: Մինչեւ Շամախի եւ դեռ մինչեւ Սաղեան՝ ամենուրեք կազմակերպչական աշխատանքներ կատարելով՝ հասանք Աղսու գետի ափի համանուն աւանը: Այստեղ իրազեկ եղանք Կարամարեանում մերոնց վիճակին:

Գիտէինք, որ մեր բանակը, նահանջելով Կարամարեանից, պիտի անցնէր մի հսկայական անջրդի տարածութիւն, եւ յոգնած ու ծարաւ զինւորների համար այդ պիտի լինէր մահացու վտանգ, որովհետեւ նրանց չպիտի թոյլատրւէր գետից ջուր խմել: Բժշկական խմբակը հաւաքեց իր բոլոր ուժերը եւ մեզ էլ աջակցութեան հրաւիրեց: Մեծ թւով թիթեղի ջրաման թէյամանների տակ կրակ արինք եւ ջուր եռացրինք, որ հասնող զինւորներին թէյ տանք:



Արդէն սկսեցին գալ հատուկտոր զինւորներ, յոգնած, ծարաւ, ուժասպառ: Քանի եկւորները քիչ էին, հնարաւոր էր կարգը պահպանել եւ թէյ պատրաստել նրանց համար: Բայց երբ զինւորների մեծ զանգւածը հասաւ, թւում էր թէ դժւար պիտի լինէր նրանց պարտադրել, որ անմիջապէս ջուր չխմեն:

Ահա հէնց այդ ժամին, երբ գետափին գտնւող մէկ այգում ծառերի տակ նստած էինք, ձին քափ ու քրտինքի մէջ կորած հասաւ ուսանող Սոկրատը՝ վար թռաւ ձիուց ու ասաց.

– Ռոստոմը գալիս է, ծարաւից ձեռքից կը գնայ, ջուր հասցրէ՛ք:

Չորս հոգի, որտեղ եւ ում մօտ որ զինւորի ջրաման տեսանք, ջուր լցրինք, կախեցինք վզներովս, թռանք ձիերի վրայ ու քշեցինք Կարամարեան տանող ճամբով:

Տաք, այրող արեւ էր: Բաւական հեռացել էինք Աղսուից, երբ սկսեցին երեւալ հատուկտոր զինւորներ, յոգնած, ոտները հազիւ քարշ տալով: Տղաներից մէկին թողինք հանդիպած զինւորներին թէկուզ մի-մի կում ջուր տալու, իսկ մենք երեքով քշեցինք առաջ:

Հեռւից երեւաց ձիաւորների մի խումբ, որի առջեւից գալիս էր մէկը՝ գլխին սպիտակ երեսսրբիչ, գլխարկի տեղ, Ռոստոմն էր: Երբ հասանք, Ռոստոմը զարմացած նայեց մեզ, կարծես ուժ չունէր հարցնելու թէ՝ ինչո՞ւ էինք եկել:

– Ջուր ենք բերել:

– Հա՞, տւէ՛ք:

Վերցրեց առաջին ջրամանը, թռաւ ձիուց վար, եւ, մօտենալով քայլող զինւորներին, հերթով տւեց ջրամանը զինւորներին: Մի երկու կում հազիւ էր թոյլ տալիս խմելու, ջրամանը իսկոյն յետ էր քաշում եւ դէմ տալիս մէկ ուրիշի շրթներին: Այսպէս մեր մօտի բոլոր ջրամաններից հերթով խմցրեց ծարաւ զինւորներին:

– Դու չխմեցիր,– դժգոհեց մերոնցից մէկը,– էլ չունենք:

Ժպտաց, ձեռին մի կիսատ ջրաման ունէր, դրեց շրթներին եւ, հազիւ մի կում խմած, ջրամանը տւեց իրեն հետ եկող ձիաւորներին:

– Բերաններդ թրջեցէ՛ք,– ասաց ու թռաւ ձիուն վրայ:

Ճանապարհին նա մօտենում էր յոգնած զինւորներին եւ խրախուսում:

Երբ բաւական հեռացել էինք, եւ մեր շուրջը մարդ չէր երեւում, ծոցիցս հանեցի մի թաքցրած ջրաման եւ մեկնեցի նրան:

-Խմի՛ր, վերջապէս,- ասացի:

Նայեց ինձ, գոհունակութեան ոչ մի արտայայտութիւն: Ջրամանը հազիւ էր դրել շրթներին, երբ նկատեց, որ խոտերի մէջ պառկած է մի զինուոր: Վար թռաւ ձիուց, չոքեց, բարձրացրեց զինուորի գլուխը եւ ջուրը տուեց խմելու: Զինուորը խմեց ու բացեց աչքերը:

-Մի կում էլ,- խնդրեց:

Նորից տուեց: Զինուորը խմեց եւ նայեց Ռոստոմին.

-Էս իսկապէս ռոստոմավայել էր,- ասաց, ձեռքը մեկնեց Ռոստոմին եւ, նրա օգնութեամբ ոտքի կանգնելով, բացականչեց, հիմա տեղ կը հասնեմ:

Ու ճամբայ ընկաւ:

Դատարկ ջրամանը Ռոստոմը մեկնեց ինձ: Այժմ գոհունակութեան ժպիտ կար դէմքին: Մտրակեց ձին, բայց շատ մտահոգ էր: Ամբողջ ճամբին ոչինչ չխօսեց:

Երբ տեղ հասանք, անմիջապէս գնաց հրամանատարութեան խորհիրդը: Դուրս եկաւ շատ մռայլ: Իր մօտ կանչեց մեր խմբից երկու հոգու ու ասաց.

-Մենք պիտի նահանջենք մինչեւ Բագւի շրջակայքը: Այս շրջանում ամրանալու հնարաւորութիւն չկայ, ապա անապատ է մինչեւ Բագու: Անմիջապէս այս ճամբով կը գնաք եւ կը հասնէք նահանջող 20րդ բրիգադային: Կը տեսնուէք հրամանատար Ե. Պահլաւունու հետ: Ստացած կը լինի նա պաշտօնական հրաման թէ ոչ՝ նշանակութիւն չունի, իմ անունից կասէք նրան, որ նա իր բրիգադայով պէտք է մնայ յետնապահ եւ պաշտպանի նահանջող ժողովուրդը: Գաւառի ամբողջ հայութիւնը տեղահան ենք անելու եւ այս ձորով բարձրացնելու ենք Սաղեան, ու այնտեղից մինչեւ Բագու: Մինչեւ վերջին մարդը պէտք է նահանջի կուելով եւ պաշտպանելով նահանջող ժողովուրդը: Ուրիշ որեւէ օգնական զօրամաս նա չպիտի ունենայ: Ուրեմն, թո՛ղ դասաւորի իր ուժերը իր հայեցողութեամբ: Լուրը կը տաք, կառնէք դրական պատասխանը եւ անմիջապէս կը վերադառնաք:

Տղերքը թռան ձիերի վրայ: Մօտը մնացել էինք չորս հոգի: Քարտէզը դրեց ծնկներին եւ ասաց.

-Կանգնէք գետը եւ կբարձրանաք դիմացի լեռան ճամբով: Բարձրաւանդակի վրայ փռուած են հայկական գիւղերը, Մադրասան՝ կենտրոնում: Երեք հոգի բաւական է: Սոկրատը կմնայ մօտս: Երեքդ կբաժանուէք. մէկդ՝ աջից, մէկդ՝ ձախից եւ մէկն էլ կենտրոնից՝ կանգնէք բոլոր գիւղերը եւ տեղահան անելու հրահանգ կտաք: Իրար կհանդիպէք վերջին գիւղում եւ



միասին յետ կը գաք: Առաջին գիւղերն անմիջապէս պէտք է շարժուեն, որ յետեւից եկողները խճողում չառաջացնեն: Թո՛ղ վերցնեն հետները, ինչ որ կարող են: Աշխատեցէ՛ք, որ խուճապի չմատնուեն: Միակ ճամբան այս է: Պէտք է իջնեն այն կողմից, անցնեն գետը եւ այս ձորով բարձրանան Սաղեան: Աւելի աջ արդէն անապահով կդառնայ մի օրից: Դէ, ուշանալ չի կարելի: Քնել էլ չէք կարող, գիշերը պիտի ճամբայ կտրէք:

Անցուդարձին շատ մօտիկ կանգնած էինք եւ լաւ գիտէինք, որ եթէ Ռոստոմը տեղին վրայ չլինէր, ոչ ոք պիտի մտածէր Շամախու գաւառի հայ գիւղացիութիւնը տեղահան անելու եւ նրա նահանջը պաշտպանելու մասին:

Տեղին է ասել, որ հայ գիւղացիութիւնը, գտնուելով դէպքերից հեռու, միանգամից անիրազեկ էր անցուդարձից եւ չէր հաւատում մեզ: Մենք ուժով համոզեցինք նրանց, եւ միայն, երբ մէկ գիւղ տեղից շարժուեց, միւսներն էլ հետեւեցին նրան: Այնուամենայնիւ, տեղահանութիւնը հապճեպ եղաւ: Տնտեսապէս շատ կարող մեր այդ գաւառը ահագին հարստութիւն լքեց:

Երբ ժողովրդի մի մասը իջել էր լեռը եւ անցել Աղսուն ու բարձրանում էր դէպի Սաղեան, միւս կէսը կտրուելով վտանգի էր ենթարկուել: Ե. Պահլաւունու ջոկատը հասել էր եւ կտրել արշաւող տաճիկների ճամբան ու փրկել մի քանի տասնեակ հազար հայեր: Մինչեւ ժողովրդի դէպի Սաղեան վերելքը ապահովելը, այդ ջոկատը յամառ ու քաջաբար կուել էր թշնամու դէմ եւ կուելով բարձրացել Սաղեան:

Այստեղ, վերելքի ծայրին դիրք մտած, 20րդ բրիգադան պահեց թշնամուն աւելի քան երկու օր, մինչեւ որ մենք ամբողջ ժողովուրդը անցկացրինք դէպի անապատ:

Պէտք է արձանագրել, որ Ե. Պահլաւունին իր զօրքով հերոսաբար պաշտպանեց նահանջող ժողովուրդը: Իր քաջարի զինուորները բազմաթիւ սքանչելի դրուագներ արձանագրեցին: Բագուն գրաւելուց յետոյ տաճիկ սպաները հիւանդանոցներում եւ գերի ընկած հայ զինուորների մէջ որոնել էին 20րդ բրիգադայի զինուորներին՝ վրէժխնդիր լինելու համար: Չէր սխալուել Ռոստոմը իր ընտրութեան մէջ: Երիտասարդ զինուորական Ե. Պահլաւունին լիուլի արդարացրեց իր վրայ դրուած յոյսերը:

**Ս. Մելիք-Եօլչեան**

«Հայրենիք» ամսագիր, Գ տարի, թիւ 7 (31), էջ 123,

Ա. սիւնակ, Մայիս, 1925

## Բագւի հերոսամարտը
## (հատուած)

Այսպէս ուրեմն, չնայած բոլոր խաղաղասիրական ջանքերին ու զգուշացումներին, Բագւի թուրքերը 1918 թիւ Մարտի 19ին սկսում են ընդհանուր յարձակումը Բագւի հայկական մասի վրայ: Նրանց կողմից այդ կռւում մասնակցում է քսանից-քսանհինգ հազար մարդ թէ՛ քաղաքից եւ թէ՛ մի քանի հարեւան գիւղերից՝ զինւած միայն հրացաններով ու մեծաքանակ գնդացիրներով: Թուրքերի գրոհը ամբողջ գծի վրայ շատ ուժեղ էր, իսկ մի քանի բարձր կէտերում, ինչպէս Կանիթափում, Փոփլուդարում, Վորոնցովսկայա եւ Նիկոլաեւսկայա փողոցներում կուտակւած նրանց հսկայական մասերը մեծ կատաղութեամբ աշխատում են պատռել մերոնց պաշտպանողական գծերը, անցնել թիկունք եւ խուճապ առաջ բերել: Բայց իզուր: Թուրքերի բոլոր գրոհները, ինչպէս ծովի ալիքները, զարնւում են մերոնց ժայռանման կուրծքերին, փշուր-փշուր լինում եւ յետ հոսում:

Սակայն թշնամին չէ յուսահատւում: Նրա նոր ալիքները կրկին շարժւում են եւ նորից, դիպչելով մերոնց, փշրւում են ու յետ շպրտւում... Եւ այսպէս անվերջ ամբողջ օրը:

Թուրքերը չէին սպասում այդպիսի դիմադրութեան: Նրանք չէին կարծում, թէ պէտք է չափւէին հայ աշխատաւորութեան հետ եւս: Նրանք հաշւի չէին առել Հ. Յ. Դաշնակցութեան եւ նրա կազմակերպած հայդուկային խմբերի ոյժը: Նրանք չէին նախատեսել յեղափոխական զանգւածների սերտ համերաշխութիւնը եւ միահամուռ գործողութիւնը:

Երկար ամիսների ընթացքում Բագւի փողոցներում թափառող ու հրապարակներում թափւած ու գազազած հայ զինւորը, զրկւած իր ընտանիքից ու հանգստութիւնից, լցւել էր կատաղութեամբ, զայրոյթի թոյնով եւ բռնւել մի ցանկութեամբ՝ պատժել, պատժել թուրքերին: Եվ նա պատժեց ու իրագործեց իր ցանկութիւնը: Երկաթէ կամքով օժտւած եւ տարիների փորձառութեամբ պատրաստւած՝ նա հանգիստ նստել էր իր դիրքերում



եւ այդ կամքը դարձրել էր նրանց՝ իսկական ժայռեր, որոնց ջարդելու համար հարկաւոր էին Հերկուլէսեան ոյժեր:

Սովետի Գործադիր Կոմիտէի կողմից Ջափարիձէն այդ օրը մի քանի անգամ փորձեց հեռախօսով խօսել թուրք ազդեցիկ մարդկանց հետ՝ համոզելով դադարեցնել այդ անմիտ ու անիմաստ արիւնահեղութիւնը, բայց ապարդիւն:

Թուրքերը շարունակում էին իրենց յամառ յարձակումները՝ յոյս դնելով շրջակայ 32 գիւղերի թուրք գիւղացիների վրայ, որոնց մօտ ուղարկել էին իրենց գործակալները եւ որոնց սպասում էին սրտատրոփ:

Ի նկատի ունենալով թուրքերի այս ծրագիրը՝ Սովետի Գործադիր Կոմիտէն որոշեց կենտրոնացնել բոլոր ոյժերը մի հրամանատարութեան ներքոյ եւ, կուին վերջ տալու նպատակով, պաշտպանողական դիրքից անցնել յարձակման:

* * *

Միեւնոյն ժամանակ Շահումեանը եւ իր կոմունիստ ընկերները, չցանկանալով, որ կռիւը ստանայ ու կրի ազգային բնոյթ հայերի ու թուրքերի միջեւ եւ վերապահելով այդ գործը իրենց՝ կոմունիստներին ու յենւելով նաւատորմի մի քանի բոլշեւիկ նաւերի ոյժի վրայ, ստեղծում են մի բարձրագոյն մարմին՝ «Յեղափոխութեան Պաշտպանութեան Կոմիտէ»ի անւան տակ՝ կազմւած միայն կոմունիստ պարագլուխներից: Այդ կոմիտէն կոչւած էր ղեկավարելու կռիւները: Այդ կոմիտէին մասնակցելու համար Շահումեանը հրաւիրում է սոց.յեղափ. Ս. Սահակեանին եւ Դաշնակցական Ս. Մելիք-Եօլչեանին, ոչ որպէս կուսակցութիւնների ներկայացուցիչներ, այլ անհատապէս: Բայց թէ մէկը եւ թէ միւսը հրաժարւում են՝ վերապահելով կոմիտէում մասնակցելու իրաւունքը համապատասխան կուսակցութիւններին՝ խոստանալով միեւնոյն ժամանակ պաշտպանել բոլոր միջոցներով յեղափոխութիւնն ու քաղաքը:

Յիշեալ Կոմիտէն կազմւում է Շահումեանից, Ջափարիձէից, Կարգանեանից, Մալըգինից, Շեբօլդաեւից եւ ուրիշներից: Նա միեւնոյն օրը՝ Մարտի 19ի երեկոյեան Գործադիր Կոմիտէի որոշմամբ, հրամայում է բոլոր դիրքերում եղած ոյժերին միւս առաւօտեանից սկսել առաջ խաղալ, գրաւել թուրքական մասն ու դիրքերը: Իսկ այդ գործը թեթեւացնելու համար նաւատորմը ծովից եւ Համազասպի 4րդ հրետանին Հայկաւանից կարգադրու-

թիւն են ստանում ոմբակոծել թշնամու դիրքերն ու կենտրոնատեղիները: Եվ Մարտի 20ին առաւօտեան լուսաբացին տասնեակ հազարաւոր հրացանների ճռճռոցին, տասնեակ գնդացիրների տրկտրկոցին միանում են ծովային ու ցամաքային տասնեակ թնդանօթների ահռելի որոտները: Քաղաքը դողում է այդ որոտներից: Ժողովուրդը սոսկում է այդ ձայներից: Հազարաւոր մարդկանց հուռաները խլացնում են ամեն ինչ եւ շշմեցնում բոլորին: Սկսւում է կատաղի գրոհը մերոնց կողմից թշնամու դիրքերի վրայ:

## Կասդիի խմբագրատան հրդեհումը

Այդտեղ ռեալական դպրոցի եւ քաղաքային ինքնավարութեան շէնքի առաջ ուղղակի կարկուտի նման թափող գնդակների տակ գործող դաշնակցական մի գումարտակ Ե. Պահլաւունու եւ Ի. Տէր- Ղազարեանի ղեկավարութեամբ դարձել էր գազան՝ պատրաստ կլանելու ամեն ինչ: Երեք օրեր ու գիշերներ առանց ուտելու եւ խմելու հազարաւոր թափող գնդակների ռումբերի ու կայծերի տակ եւ բոցավառ հրդեհների մէջ գործելով՝ նրանք մոռացել էին ամեն ինչ, միայն մի ցանկութիւն ունէին, յաղթել եւ շուտ վերջ տալ մարդկային սոսկալի տանջանքներին»:



**Սեպուհ**

Տպարան «Հայրենիք», Պոսթըն, 1925թ.

## «Էջեր իմ յուշերէն»

«Երբ անցաւ շրջանը տօնական գինովութեան, ժողով մը ունեցանք Սմբատի հետ: Ներկայ էին նաեւ Ջուլալ, Ամիրեան, Եղիշէ Պահլաւունի, Եգոր, Յակոբ, Նատօ Մելիք, Քիրտ Եղիա եւ ուրիշներ: Մտքերու փոխանակութենէ մը ետք, իսկոյն որոշեցինք յաջորդ օրն իսկ սկսիլ զինորական մարզանքի, մինչեւ Անդրանիկը գար եւ զինքն ընդունէինք զինուորական պատշաճ յարգանքով: Որոշեցինք նաեւ զինուորական կարգապահութեան ենթարկել կամաւորները եւ թոյլ չտալ անոնց, որ առանց հրամանի դուրս ելլէին զօրանոցներէն:

Օրական վեց ժամ մարզանք նշանակեցինք, եւ մարզիչ կարգւեցան Ամիրեանն ու Ջուլալը, որոնք իրենց օգնական առին Եղիշէ Պահլաւունին, Եգորը եւ այն երիտասարդները, որ թուրք եւ ռուս բանակներուն մէջ զինուորական ծառայութիւն տեսակ էին: Այս առաւելութեամբ օժտուած զինորներու թիւը բաւական շատ էր: Մատթէոս Լոպասեանը նշանակեցինք ընդհանուր հաշւապահ:

Երկու օրուան հանգիստէ մը յետոյ, ուրեմն կսկսէինք լուրջ աշխատանքներու: Ջուլալ՝ Փայաջուկի մէջ, Ամիրեան՝ ի Սաւրա, Եղիշէ՝ Ղալասարում՝ արագօրէն առաջ կտանէին մարզանքները եւ ամեն օր կկրթէին զինորները: Մարզանքները միատեսակ էին եւ տեղի կունենային որոշ ծրագրի մը համաձայն: Հաստատ գիտէինք թէ այս ժամուն ինչ որ կը կատարուէր Ղալասարի մէջ Սմբատի վերին հսկողութեան ներքեւ, նոյնը կը կրկնուէր թէ՛ Սաւրայի եւ թէ Փայաջուկի մէջ:

Ա. վաշտ. վաշտապետ՝ Սմբատ. օգնական՝ Եղիշէ:
Բ. վաշտ. վաշտապետ՝ Սեպուհ. օգնական՝ Ջուլալ:
Գ. վաշտ. վաշտապետ՝ Արտաշէս. օգնական՝ Երուանդ:
Դ. վաշտ. վաշտապետ՝ Նիկոլ. օգնական՝ Ամիրեան:»

Գրիգոր Ամիրեան

1986թ., Լոս Անջելես

(հատուած)

# Յուշեր

Կրակոցի վայրը հասնում եմ ճիշդ այն ժամանակ, երբ Սեպուհը, բարկութիւնից կարմրած, տխուր ու գլխիկոր, թողնում էր այդ չարաբաստիկ վայրը:

Իմ հարցական հայեացքիս առանց ուշադրութիւն իսկ դարձնելու՝ քաշւեց դէպի ձախ՝ Աւոյին ուղղութիւնը, որտեղից էլ, Անդրանիկի կարգադրութեամբ, սկսել էր կրակոցը...

Հարկ էլ չկար Սեպուհի բացատրութեան. արդէն ամենքը կրնային տեսնել: Անդրանիկը, ծալապատիկ նստած մի գորգի վրայ, արտակարգ եռանդով աշխատում էր բազմացնել կոնեակի պարապ շիշերը. գիտակցութիւնը կորցրել էր. իր հացկատակ ձիաւոր-թիկնապահներն էլ, նրա հրամանով, չորս հազար քայլ հեռաւորութիւնից, ութ հրացանով՝ ոչնչացնո՛ւմ էին թշնամին...:

Վերցնելով մեր «մոլորած ագռաւներին», որոնց Անդրանիկը վար էր դրել կրակոցի վայրում, վաշտին հետ գնում եմ դէպի ձախ:

Մեր երկու վաշտերը մնացին յետեւում, եւ հրամանի սպասում են շարժուելու համար: Է՛հ, ո՞վ է նրանց մասին մտածողը. ե՞րբ է պատահել, որ իրարից պէխապար չմնանք, մի որոշ հրահանգով շարժուինք: Զօր. Նազարբէգեանի հրամանը շոգիանալուց յետոյ, ո՞վ կը մտածէ երկու վաշտերու մասին: Խե՛ղճ Նիկոլ, սպասելուց ճարահատ, վերջապէս սկսեց սուրհանդակներ ղրկել՝ փաշային հրաման ստանալու յոյսով. ամբողջ գնացողներն էլ, ճիշդ մեր «ագռաւներ»ի նման, ընկնում են Անդրանիկի ճանկը, որ իսկոյն քշում է դիրքերը, վաշտապետներին էլ, գլուխը քարը...: Յուսահատ Նիկոլը՝ վերցնում է Եղիշէին հետ երկու վաշտերն ու գալիս դէպի մեզ. բայց ճանապարհին մոլորուելով ընկնում է ձորը՝ սրընթաց գետակի ափը՝ թշնամու կարկտանման գնդակների տեղատարափի տակ: Նոյն բաղդին արժանանում են Նիկոլին հետեւող Տրուխինի կոզակներն էլ ու, ապաստանելով քարերի տակ, սպասում են, որ կա՛մ թշնամին խղճայ, եւ կա՛մ գիշերը վրայ հասնի, ու ազատուին:



Արեգակը թեքուեց դէպի Շատախի անմատչելի բարձունքները, որոնց նեղ ու մեղ բաւիղներով դէպի հարաւ ուղղուեց տաճիկ հրամանատարը: Մութն ընկաւ, ու խաւարը վարագուրեց նրա յետնապահներին, որոնք աճապարեցին միանալու չուող բանակին:

Առաւօտեան կոզակները գնացին որոնելու թշնամու յետնապահներին, բայց ո՛չ մի տեղ չհանդիպեցին նրանց.մինչեւ երեկոյ, ի զուր փնտռտուքներից յետոյ, վերադարձան բանակատեղ:

Աջ ու ձախ թեւերից թշնամին շրջապատելու գնացող զօրամասերն էլ վերադարձան՝ յոգնած ու ջարդուած, ու այսպէս քսան հազարից աւելի ոյժ ներկայացնող բանակը՝ անճրկած, հաւաքուեց մի անհրապոյր լեռնադաշտում ու վրաններ զետեղեց՝ հանգստանալու համար:

Զօր. Տրուխինի կարծիքով՝ թշնամին պիտի նահանջած լինէր Ջուլամերիկի գծով. ուստի եւ հրամայում է բանակին պատրաստ լինել՝ առաւօտեան շարժուելու դէպի Ջուլամերիկի կուսական բարձունքները: Զօր. Նազարբէգեանի դառն փորձառութիւնը ցոյց տուած լինելով, որ կամաւորական գունդը եթէ շարունակի իր այդ գործունէութիւնը, կարող է մի դժուարութիւն ստեղծել բանակին, վճռականօրէն արգելում է առանց հրամանի մի քայլ առնել, այլ գրաւել այն տեղը, որ նշանակուած է ընդհ. դասաւորման յատուկ հրահանգում:

Մի քանի օրից ի վեր, թշնամին հետապնդելու գործողութեան պատճառաւ, զինուորները հնարաւորութիւն չէին ունեցել տաք կերակուր ուտելու, հաց արդէն միայն երազում էին: Միսը առատ էր, բայց աղ չկար, վառելու փայտ չկար:

Նոր բանակատեղը մի ամայի վայրում էր. նկատի ունենալով զինուորների սոված վիճակը՝ վաշտապետները արտօնեցին, որպէսզի իւրաքանչիւր տասնեակ մարդ ուղարկի՝ մօտակայ քրտական կիսաւեր գիւղից փայտ բերելու եւ կերակուր պատրաստելու համար:

Մի րոպէում մեր գնդի բանակավայրում-ռուսները մեզանից մի քանի վերստ յետ էին-սկսուեց եռանդուն մի գործունէութիւն՝ քաղցած ստամոքսները կշտացնելու մի մրցում: Մի կողմից այս ու այն կողմ ցրուած ոչխարների հօտերից մսացուներն էին բերում. այստեղ օճախ են պատրաստում, այնտեղ շամփուրներ, խարոյկներ բոցավառուեցին, կաթսաները սկսեցին տժտժալ, խորովածի հոտը բռնեց ա՛մեն կողմ...

– Պատրա՛ստ, ձայն տրուեց Անդրանիկի վրանի ուղղութիւնից:

Պղինձները կախ ու շամփուրները շիկացրած, թողուցին զինուորները եւ

իսկոյն շարունակեցին ճանապարհի երկարութեամբ՝ աչքերը յառած դէպի խաւոյկները, եթէ միսը չկերան՝ գոնէ հոտը վայելելու համար…

Վաշտապետները, մտնելով զինուորների դրութեան մէջ, խնդրեցին Անդրանիկից, որ թոյլ տրուի գոնէ պատրաստուած կերակուրը ուտելու: Միջնորդութիւնը անցաւ ապարդիւն: Մինչ զինուորները բաժանւում էին այս երանաւէտ վայրից, ուր համեղ պատառները սպասում էին բզքտող ձեռքերի, ռուսական մի զօրամաս, որին կարգադրուած էր մեզանից առաջ անցնել, օգտւելով առիթից, թափւեց համադամների վրայ ու կերաւ: Հեռւից, մի քանի քայլ տարածութիւնից, դիտում էինք բախտաւոր զօրամասի բարեկենդանը եւ սովածութիւնից ուժասպառ սպասում, որ փորերը կշտացնելուց յետոյ, գան, յառաջ անցնին, որպէսզի մենք էլ հետեւինք իրանց…

Սեպուհը, որուն արդար զայրոյթի բաժակը արդէն յորդել էր, փղձկաց ակամայ ու դատապարտեց Անդրանիկի այս վերաբերումը:

Զինուորների տեսողութիւնից ու լսողութիւնից հեռի, մի վրանի տակ, երկու ժողովրդական հերոսների այս ցաւալի ընդհարումը բանակում լսւեց միայն ուշ գիշերին:

-Սեպուհը չկա՛յ… փսփսալով ասում էին միմեանց զինուորները եւ աշխատում բացատրել հեռանալու պատճառները: Ես, որ Սեպուհի օգնականն էի, նոյնպէս ոչինչ չէի իմանում, որովհետեւ երբ վաշտը պատրաստ էր, եւ զեկուցեց իրան, նա հրահանգեց վաշտին առաջնորդել, իսկ ինք պիտի գար յետեւից:

Դիմում եմ Աւոյին, որ յուզուած է:

Դիմում եմ բժիշկ Տէր Թովմասեանին:

-Սեպուհը Վան գնաց… ասում է յարգելի բժիշկը:

Այս դառն իրականութիւնը շանթահարում է մեզ: Սեպուհի զօրաւոր անհատականութիւնն ու հեղինակութիւնը պակասում էր, առանց այն էլ բարոյական քայքայման մօտեցած վաստակաւոր գնդից. հէգ կամաւորները կորսնցնում էին սրտացաւ ու արի մի հրամանատարի…

Իսկ թէ ինչո՛ւ այսպէս խորհրդաւոր լռութեան մէջ հեռացաւ Սեպուհը, գնդում տիրող հոգեբանութեան ծանօթ եղող անձնաւորութիւնները շատ լաւ հասկանում էին:



## Գլուխ ԺԱ
## (հատուած)

Տասն ամիս յետոյ, գոնէ ես, առաջին անգամ լինելով, ճաշարան էի մտնում. կարծես վայրենացել էի եւ աթոռի վրայ նստելիս ինքզինքս փոխադրուած զգացի մի այլ աշխարհ: Չորս ընկերներով մի սեղան գրաւեցինք եւ աչքաբաց Եղիշէ Պահլաւունիից խնդրեցինք, որ կերակուր ապսպրելու հոգը ինք վերցնի:

* * *

«Կաղից, կոյրից եւ գնտակից զգոյշ կաց»՝ կասէ ժողովրդական առածը, սակայն սրա մէջ բացառութիւններ էլ կը լինեն անշուշտ, հենց այդպիսիներից մէկն էր մեր Իգդիրի կաղ կառապանը, զոր. Եղիշէ Պահլաւունին՝ որպէս հայրենակից, ընտրել էր:

## Գլուխ ԺԲ
## (հատուած)

Տեսնելու էր Իգդիրից ներս մտնելիս մեր կաղ կառապանի գոհունակ դէմքը. ճառագայթում էր, չէր իմանում՝ փողոցում ինչպիսի բառերով շողոմէր ձիերին, աջ ու ձախ բարեւում էր քաղաքացիներին եւ ժպտում անվերջ: Մեր ընկերներից Եղիշէ Պահլաւունին իգդիրցի էր. ինձ չթողուց հիւրանոց գնալու, միասին վերցրեց. միւս երկու ընկերները մի հիւրանոցում թողնելուց յետոյ, կառքը կանգ առաւ Պահլաւունիների տան առջեւ:

Յոգնած էինք եւ մանաւանդ ծարաւած. մի թեթեւ նախընթրիք կատարեցինք ու զով բակում, թախտերի վրայ, երկարուեցինք: Եղիշէն քնեց. իմ քունս չէր գալիս. անյարմար մի դրութիւն ստեղծուեց. տնեցիներին անծանօթ էի. խօսելու ի՞նչ նիւթ պիտի ունենայի. մտքովս ինչե՛ր չէի ասում անպիտան Եղիշէին, որ ինձ այսպէս առանձին թողուց: Որոշեցի փողոց ելնել:

Տասն եւ մէկ ամիս յետոյ, առաջին անգամ Իգդիրում, Պահլաւունիների տան մէջ՝ անկողնում, շորերս հանած քնեցի: Անկողին ընկնելս ու առաւօտեան արթնանալս՝ կարծես մի րոպէի մէջ էր կատարուել: Այնքան խոր քնել էի. անշուշտ գինին էլ իր դերը ունեցած լինելու էր, որովհետեւ ես անսովոր էի գինի գործածելու. երկու գաւաթով, ինչպես կ՚ասեն, «ծախել էի քաղաքը»…

**Գրեց՝ Ռաֆայէլ Խոյլեան**
(հատուած)
«Հայրենիք» Ամսագիր
Յունիս N 6, 1957թ.

## Անդրանիկի կամաւորական զումարտակի հետ

Խաղաղ ճանգստի ժամանակ ես յատկապէս զբաղւում էի ստացուած ռուսերէն գրութիւններով եւ ռուսական հրամանատարութեան հետ կապ պահելով: Կռւի ժամանակ ես թողնում էի «շտաբ»ը եւ անցնում առաջին վաշտի հրամանատար Եղիշէ Պաճլաւունու մօտ ու մասնակցում կռիւներին:

Այդ կռւում մեծ խիզախութիւն ցոյց տուեց վաշտապետ Գրիգոր Ամիրեանը: Վանից շարժւելիս մեր միւս վաշտապետները՝ Սեպուհը, Արտաշէս Սուջեանը, Նիկոլը թողին ու հեռացան Անդրանիկից: Եւ Արտաշէս Սուջեանի փոխարէն վաշտապետ նշանակւեց իր օգնական Գրիգոր Ամիրեանը, Սեպուհի փոխարէն՝ իր վաշտի գրագիր Արտաշէս Միրզայեանը, իսկ Դիլմանի կռւում վիրաւորուած Սմբատի փոխարէն վաշտապետ նշանակւեց Եղիշէ Պաճլաւունին:





Ձախից երրորդը - Եղիշէ Պահլաւունի, չորրորդը - Գերասիմ Բալայեան:

**Գրեց՝ Վարդան Իսկէնտերեան**
«Հայրենիք» ամսագիր, թիվ 375
Բոստոն, Մայիս, 1957թ.

## «Հայ կամաւորի մը յուշերը» (1914-1917)

«Ամեն բանէ վերջ, սիկառ ծխողներուն համար ծխախոտի բացակայութիւնը կատարեալ խենթութեան կը հասցնէր զիրենք: Այսպէս, օր մը իգդիրցի Եղիշէ Պահլաւունին կրակի գիծին վրայ քիչ մնաց հրացանի գնդակով թեւս կամ ոտքս պիտի ծակծկէր, եթէ չխոստանայի կէսը տալ տուփիս մէջ գտնուած «Սօլիտնի» կոչուած սիկառներուն: Կատակ չէր ըներ, կրնար ընել, հաստատ համոզուած, որ ես ատոր համար դատ չէի բանար իր վրայ»:

**Պատմութիւն Իրանի հայ սկաուտական կազմակերպութիւնների 1919-1936,**
Թեհրան, 1974թ. (տպ. «Ալիք»)

## Ռաշտի սկաուտական կազմակերպութեան գործունէութիւնը

Հիմնուած հանրածանօթ նկարիչ, նախկին սկաուտ Յարութիւն Մինասեանի գրաւոր յուշերի եւ Թաւրիզի Հայ Արիների արխիւներից հանուած մի քանի նամակների վրայ:

Պարսկահայ այլ շրջաններում ձեռնարկուած սկաուտական կազմակերպութիւնների հիմնադրման համար, թէ զուգընթաց (1925 թուից) Ռաշտում սկսւում են այդ ուղղութեամբ համապատասխան քայլեր:

Այն օրերին Ռաշտն օժտուած էր մի բացառիկ ուսուցչական կազմով. տեսուչ Համբարձում Տէրտէրեան, ուսուցիչներ՝ հանրածանօթ գրագիտուհի Հեղինէ Բիւզանդ, Նուարդ Պահլաւունի, Վաղարշակ Խաչատրեան, Ադամ Գրիգորեան եւ նման մտաւորականներ:

Բնական է, որ նման մի կազմ, իր դրոշմը պիտի դնէր ազգային-հասարակական եւ մշակութային կեանքի վրայ: Այս դէպքում սկաուտական կազմակերպութիւն ունենալու անհրաժեշտութիւնը չէր կարող վրիպել նրանց ուշադրութիւնից:

Եւ 1925 թուին...

Ազգային իշխանութեան նախաձեռնութեամբ, տեսուչ Համբարձում Տէրտէրեանի եւ Եղիշէ Պահլաւունու ջանքերով, Ռաշտում առաջին անգամ լինելով հիմք է դրւում Հայ Արիների Կազմակերպութեան:

Պատանիների համար աննախընթաց էր այդ երեւոյթը, հրճուանքի եւ ոգեւորութեան չափն՝ անսահման: Նրանք պիտի ունենային իրենց շարքերը, համազգեստը եւ պիտի երեւային հասարակութեան համար տրուած հանդէսներում՝ իրենց մարզական շարժումներով: Պիտի կատարէին շարքային ամեն աշխատանք եւ օժտուէին զանազան կարգի գիտելիքներով:

Հենց առաջին տարին, առաջին իսկ առիթով, Եղիշէ Պահլաւունու ղեկավարութեամբ, հայ արիներն ունենում են իրենց ներքին կազմակերպչական աշխատանքներին զուգընթաց նաեւ դաշտային աշխատանքներ ու հասարակութեան համար ձեռնարկուած մի դաշտահանդէս:





Համբարձում Տէրտէրեան եւ Եղիշէ Պահլաւունի:
Ռաշտ, 1926թ.:

**Հերքում՝ Ե. Իշխանեանի**
**«Լեռնային Ղարաբաղ 1917-1920թթ.» հատորի**
**Ե. Պահլաւունուն վերաբերող հատուածի (էջ 597-560-ում):**

Այդ գրքի 1920 թուի Ալեքսանդրապոլի մայիսեան բոլշեւիկեան ապստամբութեան նկարագրականում Եղիշէ Պահլաւունուն վերաբերող հատուածում կան խեղաթիւրումներ եւ անճշտութիւններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը ո՛չ Հիպերիկի սպանութեան եւ ո՛չ էլ Ռուբէնի եւ Եղիշէ Պահլաւունու փոխյարաբերութիւններին վերաբերող: Հիպերիկը սպանուել է ոչ թէ Եղիշէ Պահլաւունու, այլ մի պատահական գնդակով:

Գալով Ռուբէնի մասին գրուածքին. ընդհակառակը նրանց յարաբերութիւնները եղել են սերտ եւ ընկերական, հակառակ այն իրողութեան, որ Ե. Պահլաւունին երբեմն ունեցել է քննադատական մօտեցում Ռուբէնի յատկապէս զինուորական նախարար եղած շրջանի գործունէութեան վերաբերեալ:

Նրանց սերտ յարաբերութեան փաստն այն է, որ երբ Ռուբէնը եղել է Թեհրանում 1930-ական թուականներին քրդական ապստամբութեան հարցով, ՀՅԴ-ի ժամանակի բիւրոյի ներկայացուցիչ Վարոս Բաբայեանի բնակարանում առաջին հերթին հանդիպում է ունեցել Եղիշէ Պահլաւունու եւ բաշգեառնեցի խմբապետ Մարտիրոս Աբրահամեանի հետ նաեւ կուսակցական այլ հարցերի վերաբերեալ:

Ցաւալի է, որ Ե. Իշխանեանն իր յուշագրութիւններում արձանագրել է այդ տողերն առանց ստոյգ աղբիւրներ մատնանշելու, այլ բամբասանքի բնոյթով իրեն հասած տեղեկութիւնների հիման վրա:

**Խմբագիր Ն.Պ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՒՈՒՄ ՊԱՀՊԱՆՈՒԱԾ Ե. ՊԱՀԼԱՒՈՒՆՈՒՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲՆԱԳՐԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

1-ая
АРМЯНСКАЯ
ДРУЖИНА
25 Апреля 1915 г.
№ 1

Его Превосходительству
Господину Начальнику
Азербайджанского отряда
Генералу Чернозубову

Отъ помощника ротного
командира I роты I Армян-
ской дружины
Егише Никитича Пахлавуни

Прошеніе

Обращаюсь къ Вашему Превосходительству съ покорнѣйшей просьбой зачислить меня въ одинъ изъ стр. полковъ ввѣренный Вамъ в Азербайджанскій отрядъ.
Необходимые документы обязуюсь представить Вашему Превосходительству по первому требованію.
помощ. рот. команд. Е.Н. Пахлавуни

25/IV 1915 года
С. Вардань.

---

Ե. Պահլավունու ռուսերեն ձեռագիրը:

* * *

Ձերդ գերազանցութիւն գեներալ Չեռնոզուբովին,
Ադրբեջանական ջոկատի պարոն պետին

I Հայկական գնդի I վաշտի վաշտային հրամանատարի օգնական
Եղիշէ Պահլաւունուց

Խնդրագիր

Խոնարհաբար խնդրում եմ Ձերդ գերազանցութեանը ընդունել ինձ Ադրբեջանական ջոկատի՝ Ձեզ վստահուած շարային գնդերից մէկում:
Պարտաւորում եմ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել Ձերդ գերազանցութեանը առաջին իսկ պահանջի դէպքում:
Վաշտային հրամանատարի օգնական Ե.Ն. Պահլաւունի
25/IV 1915թ.
Ս. Վարդան

ՀԱԱ ֆ. 121, ց. 2, գ. 156, թ. 1





* * *

Երեւան, 22/X 1919թ.
Հեռագիր
Ներքին գործերի նախարարին
Պատճէնը
Երկաթգծի գործերով ներքին գործերի ընկեր նախարարին

Ոստիկանների սեպտեմբերի աշխատավարձը չի վճարուել: Ոստիկանները սովի են մատնուած: Խնդրում եմ Ձեր կարգադրութիւնը:

Պահլաւունի

ՀԱԱ, ֆ.201, ց.2, գ.377, թ.2

Հ.Խ.Ս.Հ.
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՐԽԻՎ
№ 1247

Дѣло.

Отдѣлъ по Администраціи Министерства Внутреннихъ Дѣлъ.

О службѣ Начальника Александропольской уѣздно-городской полиціи Пашаліанц

Сшито.

Начато 24 октября 1919.
Кончено 23 апреля 1920 г.
На 5 листах.

[illegible]



* * *

ՀԽՍՀ Կենտրոնական արխիւ
N 1247
Գործ

Ներքին գործերի նախարարութեան վարչութեան եւ ոստիկանութեան բաժնի

Ալեքսանդրապօլի երկաթգծի ոստիկանապետ Պաշալեանի ծառայութեան մասին

Սեղան 1
Սկսուեց 1919թ. Հոկտեմբերի 24ին
Ավարտուեց 1920թ. Ապրիլի 23ին:
5 էջ

---

ՀԱԱ, ֆ.201, ց.2, գ.377, թթ.1-3

Александрополь
Начальнику Железнодорожной
милиции Пахлавуни

1954 Выезжайте Эривань для
доклада 2773.

Директор 907
1919
24/X 1919г.

* * *

Ալեքսանդրապոլ
Երկաթգծի ոստիկանապետ Պահլաւունուն

Ներկայացեք Երեւան զեկոյցի համար 2773:

Տնօրէն 907
1919
24/X 1919թ.

---

ՀԱԱ, ֆ.201,ց.2, գ.377, թ.1



М.В.Д.
Директоръ Отдѣла по
Администрацiи и милицiи
Столъ I-ый
№..2915
"30" октября 1919 г.
Гор. Эривань.-

УДОСТОВѢРЕНIЕ.

Предъявитель сего Егише Никитичъ ПАХЛАВУНИ есть дѣйствительно Начальникъ желѣзно-дорожной милицiи Республики Арменiи, что подписью и приложенiемъ печати удостовѣряется.

ДИРЕКТОРЪ Отдѣла
Дѣлопроизводитель

* * *

ՆԳՆ
Վարչութեան եւ ոստիկանութեան բաժնի տնօրէն
Վկայական

Սեղան 1-ին
N 2915
30 Հոկտեմբերի 1919թ.
ք. Երեւան

Սոյնը ներկայացնող Եղիշէ Նիկիտայի Պահլաւունին իսկապէս Հայաստանի Հանրապետութեան երկաթգծի ոստիկանապետն է, ինչը հաւաստում է ստորագրութեամբ եւ կնիքով:

Բաժնի տնօրէն
Գործավար

---

ՀԱԱ, ֆ.201, ց.2, գ.377, թ.3



№ 997
1 ст-19 г.

АЛЕКСАНДРОПОЛЬ
Пахлавуни

Произвести тщательный 9135 въ 75854 - 55221 у 42523 68212 - 56141 - 12252 - 4243 -634015 - 09418 - 25354- -58770 - 65449 - задержать 75854 - 55408 до послѣдующихъ распоряжений 3607

21/IV -26

ДИРЕКТОРЪ

Вѣрно:

Дѣлопроизводитель

* * *

Ալեքսանդրապոլ

Կատարել մանրազնին քննություն 9135 75854-ում-55221 42523-ի մոտ 68212-56141-12252-4243-634015-09418-25354-58770-65449-պահել 75854-55408-ը մինչեւ յետագայ կարգադրությունները 3607:

21/IV - 26

Ճիշտ է

Գործավար

ՀԱԱ, ֆ.201, ց.2, գ.377, թ.4





Именной список Георгиевским кавалерам 1-й Армянской дружины

| № № | Имена и фамилии | Кресты № № | Медали № № | Отметка |
|---|---|---|---|---|
| 73 | [illegible] | | 753777 | |
| 74 | Безоянъ Семен | 296551 | | приказ по [illegible] |
| 75 | Барсемянъ Мкртичъ | 296552 | | Корпусу № [illegible] |
| 76 | Пахлавуни Егише | 296555 | | [illegible] 19 [illegible] |
| 77 | [illegible] | 296556 | | 1915 г. № 10711. |
| 78 | Озанянъ Себух | | 440403 | Верх. Главн. [illegible] |
| 79 | Давтянъ Вахтанг | 298095 | | |

* * *

I Հայկական գնդի Գէորգիեւեան ասպետների անվանացանկ

76. Պահլաւունի Եղիշէ 296555 շտաբի հրամանատարի Հոկտեմբերի 19ի հրամանով

ՀԱԱ, ֆ.121, ց.2, գ.57, թթ.1

А Р М Я Н С К А Я  Ж И З Н Ь.

/ за июнь, июль и август/.

На торжественном собрании, посвященном юбилею, присутствовало до 2.000 человек армянской колонии. От местных властей никого не было. Из дашнаков выступали речами Ваге Арпруни, Егише Паклавуни, Гайк Адджемян, свящ. Гевонд /Хевонд Вартапет/, Акоп Тер-Акопян, Айр Абрам, С. Мелик - Йольчян и др.

* * *

Ատրպատականի թեմակալ Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք Թանգեանի յոբելենական հանդիսութեան մասին զեկոյց «Հայկական կեանք» (1925թ., յունիս, յուլիս, օգոստոս) տեղեկագրից:

Յոբելեանին նուիրուած հանդիսաւոր հաւաքին ներկայ էին 2.000 մարդ հայ գաղութից: Տեղական իշխանութիւններից ոչ ոք չկար: Դաշնակներից խօսքով հանդէս եկան Վահէ Արծրունին, Եղիշէ Պահլաւունին, Հայկ Աճէմեանը, տէր Ղեւոնդը (Ղեւոնդ վարդապետ), Յակոբ Տէր-Յակոբեանը, հայր Աբրահամը, Ս.Մելիք-Եօլչեանը եւ այլք:

---

ՀԱԱ ֆ.113, ց.3, գ.226, թ.147



# ԿԱՐԾԻՔՆԵՐ ՕՏԱՐԱԶԳԻ ՆՇԱՆԱՒՈՐ ԴԵՄՔԵՐԻ ԲԱԳՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

«Հայոց մատուցած ծառայութիւնները հանրութեան դատին անտարակոյս չեն մոռցուիր... Ռուս բանակի քայքայումից յետոյ, անցեալ տարուայ վերջը հայկական զօրքերը Կովկասեան ճակատի պաշտպանութիւնը իրենց վերայ առին ու թուրքերուն յառաջխաղացումը հինգ ամիս ուշացուցին, այսպիսով նշանակալի ծառայութիւն մատուցին Միջագետքի բրիտանական բանակին...»:

**Լորդ Ռոբերտ Սեսիլ**

**(Անգլիոյ արտաքին գործերի նախարար)**

**1918թ. Հոկտեմբեր**

**3-ին Լորդ Բրայսին ուղղած նամակից:**

«Ամերիկացիք պէտք է կանգ առնեն մի վայրկեան եւ խորհին, թէ ի՞նչ կ'ըլլար պատերազմի ելքը կամ տեւողութիւնը Արեւմուտքի մէջ, եթէ թուրքերը ութ ամիս առաջ հասնէին Բագու: Եւ անոնք աւելի կանուխ պիտի հասնէին, եթէ չդիմադրէին հայերը»:

**Ջէյմս Վ. Ժերալդ**

**(Բեռլինի ամերիկեան նախկին դեսպան):**

**Ամերիկեան կառավարութեան**

**ներկայացրած 1921թ. 7 Յունւար յիշատակագրից:**

«Գլխաւոր ազդակը, որ գերման արեւմտեան բանակին խորտակումը առաջ բերաւ, վառելանիւթի պակասն էր, որովհետեւ թուրքերը չկրցան ատենին գրաւել Բագուն, եւ հայերն էին, որ թուրքերուն արգելք եղան Բագուն գրաւելու իր ժամանակին»:

**Զօրավար Լիւդէնդորֆ**
**(գերմանական ընդհ. հրամանատարի յուշերից պատերազմի մասին):**

«Պաղեստինի թուրքական ճակատի խորտակումը վերագրելի է այն իրողութեան, որ թուրքերը հակառակ իմ հրամանին եւ խրատին, երկու զօրաբաժին ուղարկեցին Կովկաս հայերի դէմ կռուելու համար»:

**Զօրավար Լէման ֆօն Սանտերս**
**(Սիւրիոյ բանակի գերման հրամանատարի յուշերից):**

# ՅՈՒՇԵՐ ԲԱԳՈՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՑ

## ԵՂԻՇԷ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

* * *

1918թ. մարտեան դէպքերի ժամանակ պաշտպանութեան համար ինձ յանձնուած քաղաքամասն էր Արմեանսկայա փողոցը՝ «Ֆանտազեա» բաղնիսից սկսած մինչեւ ծովափ, որ պարփակում էր իր մէջ Արմեանսկայա, Լերմոնտովսկայա, Վարանցովսկայա զուգահեռ փողոցները՝ հիւսիսից հարաւ, եւ արեւելքից արեւմուտք՝ Կրիւայա, Վրանգելսկայա, Պարապետ հրապարակը, Նիկոլաեւսկայա պողոտան, Օլգինսկայա եւ Նազարովսկայա ծովափ տանող զուգահեռ փողոցները եւ քաղաքաբերդը (պարսպապատ հին քաղաքը):

Նիկոլաեւսկայա պողոտայի վրայ էին գտնւում «Մետրոպօլ» հիւրանոցը եւ Քալանթարեանների պասաժը, դէմ դիմաց՝ «Կասպի» թերթի տպարանը եւ հրատարակչականը, Իսմաիլէ ազերիական շքեղ քարաշէնքը, քաղաքապետարանի հսկա շէնքը, նահանգապետարանը, «Դիկի» դիվիզիայի սպայակոյտի շէնքը եւ մեծ ու փոքր պաշտօնական շէնքեր եւ Ալեքսանդրեան քաղաքային այգին՝ ակումբի ամառային շքեղ շէնքով: Դէպի հիւսիս-արեւմուտք՝ Կրասնօկրեստովսկայա եւ Պորոխովայա թուրքական կենտրոնները: Կրասնօկրեստովսկայա փողոցում նահատակւեցին բժ. Լեւոն Աթաբէկեանը եւ միւս երկու պատգամաւորները:

Այդ օրերին ինձ հետ էին գործակցում աւագ տեղակալ Ռուբէն Աւագեանը՝ որպէս օգնական, աւագ տեղակալ Վանեա Բաբայեանը՝ որպէս առաջին վաշտի վաշտապետ, կրտսեր տեղակալ Ռուբէն Սիմօնեանը՝ երկրորդ վաշտի վաշտապետ, փոխգլխապետ Տիգրան Յակոբեանը՝ երրորդ վաշտի վաշտապետ, կրտսեր տեղակալՍտեփան Բաբայեանը՝ չորրորդ վաշտի վաշտապետ, ուսանող սպա, կրտսեր տեղակալ Սրօ Խաչատրեանը՝ համհարզ, ուսանող, ապա վառատար՝ Աղասի Կանայեանը, կրտսեր տեղակալ Է. Այւազեան՝ ուսանող, Ստեփան (Ստեօպա) Նաւասարդեան՝ ուսանող, Վարդգէս Յակոբեան՝ ուսանող, Վանեա Տէր-Գրիգորեան՝ ուսանող, Իսրայէլ Տէր-Ղազարեան՝ ուսանող, Աւետիս, ռուսական բանակի լրիւ Գէորգեան ասպետ, աւագ ենթասպա Նուխեցի հարիւրապետ Ամիրջան, աւագ ենթասպա, լրիւ ասպետ ղարաբաղցի Սամսոն, աւագ ենթասպա, լրիւ ասպետ հադրութցի Յարութիւն, աւագ ենթասպա, լրիւ ասպետ գիշեցի Արշակ

Սարգսեան, տեղակալ հեծելազօրի հրամանատարի օգնական Ստեփան Լալայեան, հեծեալ գնդի հրամանատարի աւագ տեղակալ Գերասիմ Բաբայեան, տեղակալ ուսանող:

Վերոյիշեալների մէջ յատկապէս աչքի էին ընկնում աւագ ենթասպա Ամիրջան Նուխեցին: Այդպէս էինք ճանաչում բոլորս հեծելազօրում ծառայած այդ զինուորականին, ինչպէս նաեւ գիշեցի Յարութիւնը, հադրութցի Սամսոնը, զանգեզուրցի Յովհաննէս եւ Աւետիս հօրեղբօր որդիները, երկուսն էլ անգերազանցելի գնդացիրային ենթասպաներ: Վերոյիշեալների կրծքերում փայլում էին 8ական Սուրբ Գէորգեան ասպետի հերոսական պատուանշանները, 4 խաչեր եւ 4 մեդալներ:

Մարտ 23ի լուսաբացից ամբողջ քաղաքը՝ իր շրջապատով արդէն կառավարութեան իշխանութեան եւ տիրապետութեան տակ էր եւ հլու-հնազանդ: Չէին լսւում մուսաւաթականների ամբարտաւան թուրքավարի սպառնալիքները: Ազատ էին արձակւում գերիները, թւով 16 հազար, որոնք տեղաւորուած էին Մայիլեան հսկայ թատրոնում, Նիկիտինի կրկէսում, Համբարձում Մելիքեանի քառայարկ հսկայ շէնքում եւ ունեւոր շատ հայերի իրենց իսկ բնակարաններում, որոնք թուրք ծանօթներին իրենց մօտ էին պատսպարել:

Թիկունքում գերիներին ընդունում եւ տեղաւորում էին Լ. Քալանթարեանը, Ն. Դումանի կրտսեր եղբայր Պալի բէկը, Գ. Բալայեանը եւ Լեւոնիկը: Գերուածների մէջ չէին պակասում շատ ճանաչուած հայասպաններ, որոնք զատւում էին եւ յաւիտենական հանգստաւէտ բնակարաններ ուղարկւում: Քիչ չէր դրանց թիւը:

Բագւից փախուստ տալով՝ թաթարական ուժերը կենտրոնանում են Գանձակի եւ Եւլախի շրջաններում, որտեղ սկսւում են աւելի լաւ կազմակերպել եւ զինել Բագւի վրայ արշաւելու:

Այս պատրաստական աշխատանքներին մեր դարաւոր հարեւան վրացիները՝ չեն խորշում բերելու իրենց անպատուաբեր աշխատանքները եւ ակտիւ մասնակցութիւնը 800ի շուրջ հեծեալների գնդով՝ տխրահռչակ զօրավար Մաղալովի առաջնորդութեամբ ու ղեկավարութեամբ:

Մելիք Եօլչեանը իր յուշերում անտեղեակ գրում է եւ Ե. Մաղալովին վերագրում այդ արշաւող զօրամասի ընդհանուր հրամանատարութիւնը: Ճիշտ չէ՛: Ընդհանուր հրամանատարն էր տաճկական բանակի գնդապետ Ջա-



քի Բէյը, որը երկար ժամանակ աշխատանք էր թափել թաթարական զանազան շրջաններում, մարզել եւ կազմակերպել էր թաթարական երիտասարդութեանը:

Մենք եւս հանգիստ չէինք նստած:

Մուսաւաթականների ցաք ու ցրիւ փախուստից յետոյ մէկ օր Ռոստոմը[5] ինձ շատ խորհրդաւոր ասաց. «Երեկոյեան ժամը 7ին կգաս Բիւրոյի գրասենեակ, միասին մէկ տեղ պիտի գնանք»: Ժամը 6 1/2ին ես չորս տղաներով սպասում էի Բիւրոյի գրասենեակում, Համբարձում Մելիքեանի մեծ շէնքում, Պետրովսկ հրապարակի Տօրգովի փողոցի վրայ՝ Մայիլեան թատրոնին կից:

Լ. Ջառաֆեանը եւս Ռոստոմի հրաւէրով եկել եւ սպասում էր: Ժամանակին Ռոստոմը եւ Ա. Գիւլխանդանեանը եկան, ու մենք միասին դուրս եկանք հրապարակ եւ ուղղւեցինք դէպի Մօլականսկայա փողոց: Հասնելով Մարտին Շաթիրեանի տանը՝ զանգահարեցինք, ծառան բաց արեց դուռը, աստիճանների վրայ Մարտին Սերգէիչը ժպիտը դէմքին դիմաւորեց մեզ, եւ առաջնորդեց ճաշակով ու շքեղ կահաւորուած դահլիճը: Ռոստոմը, խզելով մեր նոր սկսած խօսակցութիւնը դէպքերի մասին, ասաց. «Վերջացրէք անցեալը, անցնենք նորի մասին»,- եւ սկսեց բացատրել, թէ ինչի համար է մեզ հրաւիրել:

Նիւթը, աւելի ճիշտ՝ ծրագիրը, նախօրօք Ա. Գիւլխանդանեանի եւ Մ. Շաթիրեանի հետ կազմել էր: Սկսեց պարզաբանել եւ դառնալով ինձ՝ ասաց. «Վաղուանից կսկսես ցուցակագրել եւ կազմել 1500 հոգուց բաղկացած մէկ գունդ ընտրեալ տղաների, որոնցից որքան հնարաւոր է զգալի թիւ կազմեն ձիաւորները եւ յաւելեալ ձիեր՝ զէնք եւ ռազմամթերք բեռնելու համար, եւ Լ. Ջառաֆեանի հետ պիտի ճեղքէք եւ, վերացնելով ճանապարհի խոչընդոտները, հասնէք Ղարաբաղ: Ձեզ երկուսիդ կտրւի լիազօրութիւն վարելու թէ ռազմական եւ թէ վարչական գործերը՝ ըստ ձեր հայեցողութեան, տեղի մեր լաւ ընկերների աջակցութեամբ, որոնք ձեզ օժանդակողներ պիտի լինեն: Կլինէք խի՛ստ, անողոք բոլոր բարեկամ եւ ոչ բարեկամ տարրերի նկատմամբ, յանուն մեր ժողովրդի: Ձեզ հետ տարած ռազմամթերքով կստւարացնէք ձեր ռազմական ուժը: Հեռու բոլոր խնամիներից, քաւոր-սանահէրներից: Կլինէք անաչառ եւ խիստ ու անզիջող մեղանչողների եւ խոչընդոտողների նկատմամբ:

---

[5] Ռոստոմ Զօրեան - Բագւի հերոսամարտի ոգին: (*Խմբ.*)

Ձեզ հետ, նայած գրաստների թիւն, պիտի վերցնէք ութ լեռնային թեթեւ թնդանօթներ՝ համապատասխան ռումբերով, 20 գնդացիր, 3-4 հազար հրացան: Բոլոր զէնքերը պիտի լինեն անթերի, լաւ վիճակում եւ փամփուշտ, նայած որքան ձիեր հնարաւոր կլինի տրամադրել»:

Մենք շնորհակալութիւն յայտնեցինք մեզ վրայ այդ աստիճան դրած յոյսի եւ վստահութեան համար, Ռոստոմին թողնելով Մ. Ծաթինեանի մօտ, եւ երկու տղաներ, իգդիրցի Ղազարոնց Գեւոյին եւ Վարոյին, հրաժեշտ առանք եւ մեկնեցինք:

Ա. Գիւլխանդանեանին իրենց տուն հասցնելով՝ մենք ուշ գիշերին տուն հասանք՝ ճանապարհին զանազան ծրագրեր մտմտալով:

Յաջորդ օրը վաղ նախաճաշեցի եւ դուրս եկայ սկսելու աշխատանքը: Նախ կանչելով մարտեան կռիւներին մասնակցող սպաներից 4 հոգի՝ պատւիրեցի անմիջապէս անցնեն ցուցակագրութեան աշխատանքին: Առաջին հերթին՝ թնդանօթաձիգներ եւ գնդացիրի հմուտ մարտիկներ, միաժամանակ եւ հեծելազօրի զինուորներ:

Յիշելով մարտեան կռիւների ընթացքում ինձ տրուած բացարձակ լիազօրագրութիւնը՝ Ծահումեան, Ջափարիձէ եւ Կորգանեան ստորագրութեամբ, երեք տասնեակ տղաներ երկաթուղիով ճանապարհեցի նավթահանքեր, ես, երեք հոգի հետս առնելով, մեքենայով մեկնեցի նոյն շրջանը՝ բռնագրաւելու ձիեր: Երկու տեղ միայն կարիք եղաւ ներկայացնելու իմ լիազօրագիրը (Քարտ-բլանշը): Դժւարութիւններ չեղան 7-8 օրում 245 ընտիր ձիեր հաւաքել եւ քաղաք ճանապարհել՝

Մարտին Ծաթիրեանի Բուդաղեան պողոտայի վրայ ունեցած հեծելազօր կոզակների նախկին շէնքը, որն ունէր բոլոր յարմարութիւնները թէ ձիերի եւ թէ զինուորների համար: Քաղաքում նոյնպէս մենք դժւարութիւնների չհանդիպեցինք, քիչ չէին եւ ինքնաբերաբար նւիրաբերողները: Մեզ շատ օգնեց կերի զգալի նւազումը, որը շատ դժւարութեամբ էր ձեռք բերւում եւ սուղ էր մարտ անընականոն ամսի շնորհիւ: Քաղաքում ձեռք բերւած ձիերի թիւն էր 62 գումար 307 ընտիր ձիեր:

Մեզ պակասում էին առնւազն նոյնքան ձիեր՝ մեր ծրագրի նւազագոյնը լրացնելու համար:

Միւս կողմից՝ արդէն ցուցակագրւածների թիւը պահանջածից շատ աւելին էր. ցանկացողները շատ աւելին էին:

Օրըստօրէ աւելանում էր ձիերի ու քիչ թւով, ջորիների քանակը, եւ զատւում էին ռուսական ցարական բանակում ծառայած հեծելազօրի զինուորները, ձիերը յանձնւում էին նրանց ու դասաւորւում՝ բաժանելով հարիւրակների:

Նոյնպէս եւ թնդանօթաձիգների ու գնդացիրաւորների նկատմամբ:

Չէինք լրացրել մեր ծրագրի դեռ 3/4-րդը, երբ մէկը միւսին յաջորդեցին խոչընդոտները:

Նախ՝ տեղեկանալով եւ իմանալով ծրագրի նպատակը՝ Համազասպը դիմում է Ռոստոմին, որ այդ ուղարկւելիք գունդը իրեն յանձնեն՝ յիշեցնելով, որ ինքը երկար տարիներ ապրել է Ղարաբաղում, ծանօթ է շատերին եւ ճանաչւած բոլորից: Յիշեցնում է եւ Ասկերանը, Ղարաբաղի աշխարհագրութիւնը եւ այլն: Սակայն այդ բոլորը լսելուց յետոյ Ռոստոմը պատասխանում է, որ վատն այն է, որ դու շատ ծանօթներ ունես եւ երկար ես ապրել Ծուշիում: Մենք գիտենք՝ ում որտեղ պէտք է ուղարկել եւ ինչ գործ յանձնել: Դու այստեղ պէտք ես մեզ: Համազասպը այդ մտքի հետ չհաշտւեց: Նա ինձ հանդիպեց եւ շնորհաւորելուց յետոյ, թեւը թեւիս անցրեց, մի կողմ քաշեց եւ կամացուկ կրկնեց նոյնը, որ ինքը լաւ ծանօթ է տեղագրական պայմաններին ու ժողովրդին: «Գործի յաջողութեան համար, մենք՝ ես եւ դու, միասին պիտի անենք, ասա Ռոստոմին՝ հրամանատարութիւնը ինձ յանձնի, իսկ դու՝ որպէս օգնական»: Ես նայեցի Համազասպի աչքերին զարմացած եւ հեռացա:

Մէկ ուրիշի կողմից եւս դիմում եղաւ Ռոստոմին, այս անգամ Ռոստոմը սաստիկ ջղայնացած բղաւում է. «Դա քո գործը չէ, գնա գործիդ»:

Մենք արագացրինք հնարաւորինս աշխատանքները Ռոստոմի կարգադրութեամբ:

Ապրիլ 9ին, երեկոյեան, երբ կատարւած աշխատանքների մասին զեկուցում էի Ռոստոմին եւ Ա. Գիւլխանդանեանին, յայտնեցին, որ Ծահումեանը եկել եւ շտապ խնդրում է Ռոստոմին տեսնել:

-Խնդրէք ներս,- ասաց Ռոստոմը:

Մտնելով՝ շատ սիրալիր բարեւեց մեզ: Ես պատրաստւեցի չխանգարել իմ ներկայութեամբ եւ, ներողութիւն խնդրելով, շուտ եկայ առանձնասենեակից դուրս գալու, Ծահումեանը ձայն տւեց, որ ոչ թէ չես խանգարելու, այլ հարցը քեզ է վերաբերում, եւ անհրաժեշտ է ներկայութիւնդ:

-Սիրելի Ռոստոմ,- սկսեց Ծահումեանը-, այդ Ձեր պատրաստութիւնները կապւած են խոշոր դժւարութիւնների եւ մեծ ռիսկերի հետ: Նախ՝ գիծը, որով պիտի Ղարաբաղ գնա Եղիշէն, մի շարք թաթարական գիւղերի միջով է. անխուսափելի են ընդհարումները, գուցէ ճակատագրական: Երկրորդ՝

անկախ առաջինից, մենք որոշեցինք մէկ ուժեղ զօրաբաժին ուղարկել Շամախի եւ Գէօգչայ գաւառները, որի համար մեր կառավարութիւնը նշանակել է արդէն Եղիշէին Շամախիի եւ Գէօգչայի ընդհանուր լիազօր հրամանատար: Ապագայ գործերը եթէ յաջող դասաւորուեցին, նա այնտեղից աւելի ապահով տեղերով եւ աւելի ստուար ու սպառազէն ուժերով կարող է անցնել հասնել իր նպատակին՝ ըստ Ձեր նախօրօք կազմած ծրագրի: Մեր որոշումը անքննելի եւ անվերադարձ է եւ ոչ հեռու Ձեր ցանկութիւնից:

-Անակնկալ է, սիրելի Ստեփան,- շրթունքները ըստ սովորութեան միմեանց սեղմած ժպիտով պատասխանեց Ռոստոմը:

Մենք նայեցինք միմեանց աչքերի: Շահումեանը յարեց. «Զեւ՜ տարակուսում, որ կառավարութեան որոշումը աւելի գերադասելի չէ՝ քան Ձեր «ռիսկովանի» (իր բառերը) ծրագիրը: Վստահ եմ, որ կընդառաջէք, որովհետեւ ապիկար Թաթոսը եւ Լալայեանը չիրականացրին մեր յոյսերի մինիմումը: Ներեցէք, ես շտապում եմ, վաղն առաւօտեան 10ին կանցնեմ Ձեզ մօտ: Ցտեսութիւն»,- եւ ժպտալով մեկնեց:

Ռոստոմը, որ ամբողջ խօսակցութեան ընթացքում մատիտը ձեռքը խաղում էր, ցած դրեց եւ «Հը՜մ» արաւ. ի՞նչ խաղ է դա: «Չե՞ս կարծում, Ռոստոմ, որպէսզի բարդութիւններ չառաջանան մերժման դէպքում, եւ եթէ իրօք Եղիշէն յաջողութիւններ ունենա եւ օգտուի իրեն լայն տրուած իրաւունքներից, կազմակերպի ապահով հայկական Շամախիի գիւղերը, քիչ գործ չէ»,- ասաց Գիւլխանդանեանը: Եւ եթէ ինչպէս ստացուած լուրերն են պարզում, որ մեծ ուժերով պատրաստւում են Բագւի վրայ արշաւել տաճիկ թաթար սպառազինուած զանգուածները, մեր կազմակերպած Շամախիի ուժերը շատ կարեւոր դեր կարող են խաղալ: «Էհ, կգնաս»,- ասաց Ռոստոմը: Աշխատիր շատ տղաներ տանել հետդ եւ, որքան կարելի է, մեծ քանակութեամբ զէնք ու ռազմամթերք պահանջիր: Նրանք, իրենց շահերն ի նկատի ունենալով, շատ են աշխատում սիրաշահել քեզ: Օգտուիր առիթից՝ ի շահ մեր ձգտումների եւ նպատակների: Կլինես ծայրայեղօրէն խիստ եւ կպատժես անխնայ, կազմակերպիր եւ զինիր հայ ազգաբնակչութեանը, ղեկավար դասը մերոնք եւ մեր համակիրներից լինեն անխտիր: Թաթեւոսը դաւաճիր է եւ ընչաքաղց, զգոյշ եղիր նրանից եւ հեռու, միաժամանակ՝ վճռական ու խիստ: Երկար խորհուրդներ տալուց յետոյ, մենք բաժանուեցինք յաջորդ օրը ժամը 10ին իրեն մօտ Բիւրոյում լինելու պայմանով:

Տուն գալով՝ կնոջս սկսեցի նախապատրաստել սպասուելիք ճամբորդութեան մասին: Նա չուզեց հաշտուել այն մտքի հետ, որ մենք պիտի բաժանուենք, թէկուզ կարճ ժամանակով: «Ես էլ կգամ քեզ հետ, ես ումից պակաս զէնք գործածել գիտեմ»: Իրօք, շատ լաւ նշանառու էր, ես նրան նուիրել էի մէկ աւստրիական կարաբին ու մէկ գերմանական փոքր մաուզէր ատրճանակ մեր ամուսնութիւնից յետոյ եւ երկար ժամանակ գործածելու համար պարապել էի հետը: Մի կերպ ես նրան տարհամոզեցի, մանաւանդ որ յարգելի պատճառ էլ կար…

Յաջորդ օրը ժամանակին ես Բիւրօ անցայ: Ռոստոմը եւ Ա. Գիւլխանդանեանը, ըստ իրենց սովորութեան եւ գործերի բերումով, վաղ առաւօտից ամեն օր իրենց ժամին այնտեղ էին լինում: Եկաւ Շահումեանը՝ ժպտալով Ռոստոմի դէմքին նայելով.

-Նստիր, ինչո՞ւ այդպէս անակնկալ եւ շտապ:

-Մենք ստոյգ տեղեկութիւն ունենք, որ Բագւի վրայ են գալու տաճկական մէկ զօրագունդ (կորպուս)՝ Նուրի փաշայի հրամանատարութեամբ՝ ներառեալ ամբողջական ուժերի մասնակցութեամբ, Մուրսէլ փաշայի զօրամասը (դիւիզիա) ու փոքրաթիւ վրացական ուժերով եւ մեծ քանակութեամբ տեղացի զինուորներով,- պատասխանեց Շահումեանը: Մեր յապաղումը կարող է կործանարար լինել եւ ողբերգութեամբ վերջանալ: Դրա համար Ձեր համագործակցութիւնը՝ օր առաջ պատրաստի եւ կազմակերպուած ուժերով դիմաւորելու թշնամուն որքան կարելի է Բագւի սահմաններից հեռու, անհրաժեշտ է: Մենք կազմակերպուած ուժերին շուտով շարժման մէջ կը դնենք: Անհրաժեշտ է Շամախին կազմակերպել, որ ամենակարեւոր կէտերից մէկն է: Թաթեւոսը մինչեւ այժմ ոչինչ չի արել, նոյնը եւ Լալայեանը: Վաղը կամ միւս օրը Եղիշէն պիտի մէկնի եւ հետը տանի տեղում կազմակերպուելիք զօրաբաժնի (բրիգադա) համար համապատասխան զէնք ու ռազմամթերք: Կարծեմ Ձեր ունեցած ձիերը նախնական աշխատանքների համար բաւարար են: Շամախիի եւ Գէօգչայի գաւառներում Եղիշէն կարող կլինի լրացնել թէ հեծելազօրի եւ թէ թնդանօթների ու գնդացիրների համար պէտք եղած քանակը:

Մենք կտրամադրենք բռնագրաւած ձիերի մեծ մասը՝ 70-80 հատ: Խօսքն ինձ ուղղելով՝ «Այսօր ուղարկիր, որ մասնագէտներ հեծելազօրի համար առանձնացնեն եւ ձեզ մօտ փոխադրեն»:

Ռոստոմից դրական պատասխան ստանալով՝ ուրախ տրամադրութեամբ սեղմեց Ռոստոմի եւ Ա. Գիւլխանդանեանի ձեռքը: Ինձ խնդրեց իրեն հետ գնալ, ու մենք դրսում սպասող իր մեքենան մտանք: Գործադիր կոմիտէի

շէնքում մենք անցանք իր առանձնասենեակը, որտեղ հրաւիրեց Ալեօշա Ջափարիդձէին եւ Ղորղանեանին (Ռազմածովային կոմիսար):

Բարձր տրամադրութեամբ յայտնեց վերջին երկուսին Դաշնակցութեան դրական պատասխանի մասին, որ բոլոր ուժերով ու միջոցներով գործակցելու եւ օգնելու են մեզ: Ծանրհաւորեցին ինձ, իմ ստանձնած նոր եւ պատասխանատու պաշտօնի համար՝ առաջարկելով ինձ, որպէս քաղաքական բաժնի ներկայացուցիչ, Սեմիօն Ժգենտիին՝ վրացի, նախածանօթ եւ հաւասարակշռուած յեղափոխական: Ստացա բանաւոր եւ գրաւոր պէտք եղած կարգադրութիւնները եւ լիազօրագիրը, համաձայնւեցին տալ ինձ, նախօրօք համախորհուրդ Ռոստոմի եւ Ա. Գիւլխանդանեանի հետ կազմած, զէնք եւ ռազմամթերք ու հագուստ: Ես վերադարձայ Բիւրօ, որտեղ հանդիպեցի տիկին Բուդաղեանին: Մենք ծանօթներ էինք: Աբրահամը ժպտալով դարձաւ ինձ. «Գիտե՞ս՝ մեծարգոյ տիկինը իր ձին քեզ է նւիրում»: Ես խոստացայ պատերազմը վերջանալուց յետոյ տոկոսով վերադարձնել յարգելի տիկնոջը: Վերոյիշեալ ձին ժամանակին պատկանելիս էր եղել տաճկական բանակի Իսհան Նուրի փաշային՝ Էրզրումի ճակատի հրամանատար եւ բերդապետ: Նա գերի է ընկնում, այդ ձին նւիրաբերում են չորրորդ զօրաբանակի (կորպուս) հրամանատար զօրավար Օգանովսկուն (Լեհաստանում ձուլւած հայերից): Նա այդ ձին նւիրում է իր կրտսեր համհարզ Աշօ. Ծախաթունուն, որ, Բագու գալով, իր հերթին նւիրում է տիկին Բուդաղեանին:

Մենք, բոլոր աշխատանքները վերջացնելով, Ապրիլ 13ին առաւօտեան մեկնեցինք դէպի Շամախի:

Վաղ առաւօտից ամբողջ Ստանիսլաւեան պողոտան եւ Սուրախանսկայա փողոցի աջ ու ձախ մայթերը, պատշգամբներն ու լուսամուտները խռնւել էին տասնեակ հազար հայ եւ ռուս ժողովրդով: Եկան Ռոստոմը, Ա. Գիւլխանդանեանը, Մ. Ծաթիրեանը եւ բազմաթիւ ընկերներ: Ռոստոմի հետ էին Շահումեանը, Ջափարիդձէն եւ Ղորղանեանը: Նոքա կանգնեցին եղբայրներիս, իրենց կանանց եւ իմ տիկնոջ կողքին:

Վերջացնելով պէտք եղած անհրաժեշտ կարգադրութիւնները՝ փոխհարներին պատուիրեցի տալ ազդանշանը:

Ցուցիչ էր տեսարանը՝ 2000 միաձեւ հագնւած, սպառազէն հայորդիները վաշտ առ վաշտ զգաստ շարւել էին Սուրախանսկայա փողոցում: Նրանցից ձախ՝ պատրաստի վիճակում 4 դաշտային թնդանօթներ, աւելի ձախ՝ գրաստները՝ բեռնւած լեռնային թեթեւ թնդանօթներով, եւ 20 գնդացիրներ՝ բարձւած ձիերի վրա:



Ստանիսլաւեան պողոտան պատրաստի վիճակում ուղիղ շարքերով բռնել էր հեծելազօրը՝ 3 հարիւրեակ: Այդքան սպառազէն հայորդիներ պատրաստի վիճակում ե՞րբ էր տեսել այդ ժողովուրդը: Փոխհարների առաջին իսկ հնչիւններին միախառնւեցին խրոխտ ու բարձրաձայն ուռաները զինւորների եւ ժողովրդի: Ամեն կողմից լսւում էին փղձկոցներ հայ կանանց: Արտասւում էին բոլորը, չգիտեմ, գուցէ իրենց զաւակնե՞րի համար, որոնք գտնւում էին շարքերում, թէ անզուգական հայրենասէր հայ կնոջը յատուկ զգացմունքներն էին հուսեցնում այդ արտասուքները:

Ես մօտեցայ Ռոստոմին եւ միւսներին՝ հրաժեշտ առնելու, ողջագուրւեցինք բոլորի հետ, Ռոստոմը յուզւած միայն ասաց՝ «Կատարիր պարտքդ» եւ գրկեց երկրորդ անգամ: Մօտեցայ մերոնց, եղբայրներիս, իրենց կանանց, կնոջս եւ բոլոր իգդիրցիներին, որոնք շարւել էին մերոնց թիկունքում: Տւեց շարժման ազդանշանը, եւ նախ շարժւեցին վաշտերը, սակրաւորների վաշտը, բժշկասանիտարական կազմը, թնդանօթները, գնդացիրները, որից յետոյ հեծելազօրը, որին միացա ես:

Դեռ շատ երկար լսւում էին ուռաների կանչերը: Մենք Հայկաշէնի կողքով անցանք Շամախի տանող խճուղի:

Ապրիլ 15ին երեկոյեան մենք արդէն Շամախի էինք: Մեզ, քաղաքից դուրս, Լալայեանը տեղական բազմաթիւ հայերի եւ մալականների հետ դիմաւորելու էին եկել: Մեծ շուքով քաղաք մտանք եւ նախօրօք պատրաստւած բնակարաններում ու մեզ հետ տարած վրաների տակ հանգիստ առանք ծանր երթից յետոյ, ճոխ եւ առատ ընթրեցինք, Մադրասու, Քեարքեանջի եւ Սաղեանի ընտիր գինիներով յագեցնելով մեր ծարաւը:

Յաջորդ օրը՝ 16ին, կանչեցի Խիլմիլի մալականների մեծ գիւղի ծերակոյտին: Ինը հոգի ներկայացան:

Նրանցից պահանջեցի կառավարութիւնից ստացած իրենց ինքնապաշտպանութեան համար երկու թնդանօթները, 6 հարիւր բերդան հրացանները, ռազմամթերքի ամբողջ պաշարը: Ինձ դեռ Բագւում եղած ժամանակ ռազմածովային կօմիսար Ղորղանեանը, Շահումեանը եւ Ջափարիդձէն յայտնել էին, որ վերոյիշեալ թնդանօթները, ռումբերը եւ 2 հարիւր հրացաններ մալականները ծախել են աղդարացի թուրքերին 2 հարիւր հազար ռուբլիով: «Խիստ կպատժես նրանց այդ հակապետական եւ աննախընթաց արարքի համար: Պահանջիր նրանցից եւ Չուխարիւրտցի մալականներից, պարէնաւորեն ձեզ, եւ նրանցից ապահովիր հեծելազօրի ձիերի կերը: Դրա հա-

մար տրւում է քեզ համապատասխան գրութիւն, պատճէնը՝ մալականների ծերակոյտին» (Ծերակոյտը ամեն ինչ էր մալականների գիւղերում):

Կառավարութեան գրութիւնը երբ յանձնեցի իրենց, եւ թնդանօթների եւ հրացանների խնդիրը մէջտեղ եկաւ, նրանք միմեանց երես նայեցին: Նրանցից մէկը պատասխանեց. «Մենք կամաւորապէս չենք ծախել թնդանօթները, այլ, երբ աղդարացիներն իմացան վերոյիշեալ թնդանօթների մասին, մեզ մօտ եկան նրանց ներկայացուցիչները եւ ուլտիմատիւ ձեւով պահանջեցին իրենց յանձնել լաւ գնով այդ թնդանօթները»: «Հակառակ դէպքում մենք ի վիճակի ենք ուժով տանելու»,- ասացին նրանք: Երկար խորհելուց յետոյ, մենք, խուսափելով մերժման պարագային ստեղծուելիք բարդութիւններից եւ արիւնահեղութիւնից, ստիպւած ընդունեցինք նրանց առաջարկը եւ երկու թնդանօթները, 200 հրացաններ իրենց յանձնեցինք՝ ստանալով 2 հարիւր հազար ռուբլի»:

Այդ բացատրութիւնը մենք լսեցինք միայն:

Պահանջեցինք նրանցից այդ դրամը: Իսկ որպէս պատիժ, որ մեր ընդհանուր թշնամուն են ծախել այդ զէնքերը, պահանջեցի 5 հազար փութ ալիւր, 10 հազար փութ ցորեն, 10 հազար փութ գարի, առւոյտ խոտ, 100 հատ արջառ եւ 2 հարիւր ընտիր ձիեր: Բացի վերոյիշեալներից, 10 օրւան թխւած հացի պաշար: Այդ ներկայացրած պահանջի դրական պատասխանը սպասում եմ մինչեւ վաղը, առաւօտեան ժամը 10ը: Ցտեսութիւն:

Յաջորդ օրը ժամանակին եկան երեք հոգի միայն ծերակուտականներ՝ բերելով վերոյիշեալ դրամը, եւ յայտնեցին. «Ձեր պահանջը վեր է մեր ուժերից, նրա միայն 1/3րդը մենք հազիւ կարողանանք լրացնել»:

Ընդունելով դրամը եւ յանձնելով գանձապահին՝ կրկնապատկեցի պահանջած քանակը եւ, 24 ժամ ժամանակ տալով, վերջացրի խօսակցութիւնը: Նրանց մեկնելուց վերջ հրահանգեցի պատրաստի վիճակի մէջ դնել 20րդ գումարտակը՝ 2 հազար հոգի, երկու թնդանօթ եւ 4 գնդացիր:

Ապրիլ 18ին գիշերով մենք շարժւեցինք դէպի Խիլմիլի, որը 9 կիլոմետր տարածութեան վրայ էր գտնւում Շամախի քաղաքից դէպի հիւսիս արեւելք: Գիւղը տարածւած էր մէկ սքանչելի լեռնահովտում՝ առատ աղբիւրներով եւ բարգաւաճ վիճակում:

Ինչպէս ամեն տեղ Անդրկովկասում, այնտեղ եւս ռուս կառավարութիւնը հայ եւ թուրք ազգաբնակութիւնից բռնագրաւել եւ մալականներին էր յատկացրել ամենաընտիր հողամասերը՝ ջրարբի եւ բարեբեր: Այդ իսկ պատճառով չկար Անդրկովկասում ոչ մի ոչ հարուստ մալականի գիւղ կամ աւան:



Առանց բացառութեան, հարուստ էին մալականների բոլոր գիւղերը՝ ցարական կառավարութիւնից տրւած լայն հնարավորութիւնների շնորհիւ:

Պաշարումը ամեն կողմից վերջանալուց յետոյ թնդանօթները եւ գնդացիրները պատւիրեցի պատրաստի վիճակի մէջ դնել եւ սպասել ազդանշանի:

24 ժամը լրանալուն պէս հրահանգեցի թնդանօթների 2 ռումբ գիւղի ուղղութեամբ վերեւով արձակել: Գիւղի հիւսիսային մասում միայն երեւացին անկանոն շարժումներ, որի ուղղութեամբ վազվզում էին մարդիկ: Պարզւեց, որ նախօրօք պատրաստւած խրամատներն էին լցւում եւ պատրաստւում դիմադրութեան, որոնց մէջ քիչ չէին եւ մօտակայ թաթար Քիրդամլու գիւղից օգնութեան եկածները:

Ժամանակից 5 րոպէ անց տրւեց հրամանը, թնդանօթների եւ գնդացիրների անդադար ռմբակոծութեան պաշտպանութեան տակ, գրոհել գիւղի վրայ բոլոր կողմերից: Երբ գիւղի մի քանի կէտերում երեւացին ռումբերի պայթիւններից առաջացած բոցեր, հրահանգեցի ռմբակոծել գիւղի հիւսիսակողմի խրամատները: Ըստ երեւոյթին խրամներ լցւելը եւ թուրքերի օգնութեան գալը լոկ ցոյց էր՝ սաստելու եւ ազդելու մեզ վրայ: Երբ շղթան ամեն կողմից սկսեց մօտենալ գիւղին, նկատեցինք դէպի մեզ եկող սպիտակ դրօշակով մէկ տասնեակ մարդկանց, անակնկալներից խուսափելով՝ մեր գրոհը գիւղի վրա չդադարեց, ինչպէս եւ այդ ռմբակոծութիւնը:

Գիւղում երեւացողները ընկնում էին մեր համազարկերից եւ գնդացիրների անդադար կրակից: Կարգադրեցի փակել Մարինովկա տանող ճանապարհը, որի ուղղութեամբ ծայր էին տւել փախչողների խմբեր: Օղակը հետզհետէ սեղմւում եւ մօտենում էր գիւղին: Նահանջի եւ փախուստի բոլոր ճանապարհներն անցան խիստ հսկողութեան տակ: Համաձայն կարգադրութեան՝ թնդանօթները եւ գնդացիրները հիւսիս-արեւելքը եւ մասնաւորապէս հիւսիս-արեւմուտքում գտնւող Քիրդամլու թուրքական գիւղը, որը հազիւ մէկ կիլոմետր էր Խիլմիլիից, հերթականօրէն սկսեցին ռմբակոծել:

Գիւղը սկսեց դատարկւել եւ փախչել Ղոնաղռան թուրքական եւ Մարինովկա մալականների գիւղերի ուղղութեամբ:

Ժամը 4ին 20րդ գումարտակը բոլոր կողմերով եւ կարգապահ շարքերով գիւղը մտաւ՝ զէնք ունեցողներին, մալական եւ թուրք, անխնայ պատժելով: Մինչեւ մեր գիւղ մտնելը եւ դադարի հրահանգ տալը գումարտակը կատարել էր իր դերը՝ 7-8 հարիւր սպանւած եւ վիրաւորներ, որոնք ցաքուցրիւ փռւած էին գիւղի զանազան մասերում:

Մեր իջեւանած տեղը հաւաքւեցին կանայք եւ ծերունիներ՝ աղերսելով խնայել եւ խղճալ միւսներին, խոստանալով ամեն ինչ տալ, «ինչ որ պէտք է Ձեզ»: «Մենք քրիստոնեաներ ենք, ինչպէս դուք»:

-Ինչո՞ւ մերժեցիք, ինչո՞ւ չկատարեցիք մեր համեստ պահանջները եւ մերժեցիք նոյնիսկ կառավարութեան տուրքը վճարել:

-Արգելողները չարաչար տուժեցին, մեզ խնայէք:

-Լաւ: Այժմ մենք կտանենք ինչ որ մեզ պէտք է, առանց ձեզ նեղութիւն տալու:

Դուրս բերւեցին հարիւրաւոր սքանչելի ձիեր, լծւեցին տասնեակներով ֆուրգոններ, բեռնւեցին ալիւր, ցորեն, գարի, իւղ, շաքար, պանիր եւ պատրաստի թխուած հաց: Հարիւրաւոր արջառ, կովեր եւ եզներ ու ոչխար: Զարմանալին այն էր, որ 13 հատ դաշնամուրներ կային եւ կահ-կարասի. Շամախի քաղաքի հայ ազգաբնակչութիւնից թալանւած՝ ամիսներ առաջ: Երբ ցոյց տւեցի խմբւած կանանց եւ ծերերին՝ մատնանշելով վերոյիշեալ իրերը, պատասխանեցին, որ այդ իրերը գնւած են մօտակայ գիւղերի թուրք թալանչիներից,- մենք թալանին չենք մասնակցել: Այդ արդարացումները եւ չքմեղանքը չպիտի մեղմէին կատարւած չարիքը մեր ժողովրդի նկատմամբ:

Գումարտակին թողնելով շարունակելու իր պարտականութիւնների լրացումը՝ մենք վերադարձանք Շամախի՝ Բագու փոխադրւելիք կենսամթերքի եւ կենդանիների գործը կազադրելու: Միաժամանակ տեղային ուժերը կազմակերպելու եւ զինելու: Թաթոս Ամիրեանին վերաբերող գրաւոր կարգադրութիւնը երեք հեծեալներով շտապ իրեն ուղարկեցի եւ հրաւիրեցի ներկայանալ՝ ապագայ հրատապ խնդիրների եւ աշխատանքների շուրջ միասնաբար խորհրդակցելու եւ ծրագրելու: Հրաւիրեցի Զարգեարանի շրջանի հայ գիւղախմբերից ցարական բանակի նախկին սպայ, երկար տարիներ բանակում ծառայած եւ ճապոնական պատերազմին մասնակցած Մկրտչին (Տարաս Բուլբա). այսպէս էին նրան անւանում, որովհետեւ արտաքինով կազմւածքով նրան էր նմանում: Հրաւիրեցի նոյն շրջանից եւ նախկին աւագ ենթասպայ, յետագայում՝ քահանայ Տէր Զաքարին: Առոյգ, ամրակազմ եւ կարող մէկ անձնաւորութիւն:

Վերջին երկուսը անմիջապէս արձագանքեցին եւ ներկայացան մեզ: Թաթոս Ամիրեանից ստացայ ժխտողական պատասխան. «Ես իմ գլխին ոչ ոքի չեմ ճանաչում եւ այս (Գեօկչայ) շրջանի լիազօր հրամանատարն եմ»:

Շամախիի գումարտակը՝ 1800 հոգի, արագ կազմակերպւեց եւ զինւեց: Ամեն օր կանոնաւորապէս պարապելով եւ մարզւելով: Գրաւոր յանձնա-



րարական տւեց Տարաս Բուլբային եւ Տէր Զաքարին՝ իրենց շրջաններում շտապ կազմակերպելու երկու գումարտակներ կարող ուժերից, որոնք անմիջապէս կզինւեն, երբ պատրաստ կլինեն: Ժամանակաւորապէս նրանց տւեց Խիլմիլիից գրաււած 500 բերդան, 50 մօսին հրացաններ եւ բաւարար փամփուշտ:

Կանչւեցին եւ մալական ու թուրք գիւղերից ներկայացուցիչներ ամբողջ գաւառից: Շատ չէր ներկայացնողների թիւը: Աղսուի գիւղախմբից ներկայացան միայն 7 հոգի գիւղապետներ, որոնց թւում Լալայեանների գիւղապետ Բաբաքեօխւան Մոզիկ գիւղից, որն առանձին տեսակցութեան ընթացքին մեզ հաղորդեց շատ շահեկան տեղեկութիւններ թուրք գիւղերի, մասնաւորապէս Աղսու շրջանի աշխատանքների մասին, որտեղ տաճիկ սպաների եւ կոմիսարների շնորհիւ կազմակերպւում, զինւում եւ մարզւում է մի շարք գիւղերի երիտասարդութիւնը:

Մեր հետախոյզների բերած շարունակական տեղեկութիւնները լրացնում էին Բաբաքեօխւայի հաղորդածները ու հաստատում:

Միւս շրջաններից եկան 11 հոգի, բացառութեամբ Աղդարա շրջանից, որը ոչ մի գիւղապետ կամ ազդեցիկ մարդ չուղարկեց: Մենք վերոյիշեալների հետ վարչական գործերի դասաւորումը թողեցինք Սեմիօն Ժգենտիին՝ հանգամանօրէն խօսելու եւ բացատրելու կառավարութեան պահանջները եւ իրենց պարտականութիւնները տիրող նորընտիր օրինական կառավարութեան հանդէպ: Իսկ մենք զբաղւեցինք միայն ռազմական գործերով՝ ժամանակ չվատնելու համար: Ապրիլի 20ին աղդարացիներին խելքի բերելու համար ուղարկւեց 20րդ գումարտակը 2000 հետեւակ՝ մեր օգնական աւագ տեղակալ Ռուբէն Աւագեանի ղեկավարութեամբ, մէկ մարտկոց՝ լեռնային թնդանօթներով, 4 գնդացիրներով եւ 300 հեծեալներով. կարգադրեցինք ամենախիստ միջոցներով պատժելու՝ որպէս դաս միւս շրջանների: Վերոյիշեալ գործողութիւնը տեւեց երեք օր, շատ աննշան կորուստ ունեցանք՝ ընդամենը 9ը. 3 սպանւած, 6 վիրաւոր, վերջիններին փոխադրեցինք Շամախիի մեր հիւանդանոցում խնամւելու: Պատժիչ զօրամաս միաւորը իրեն հետ բերեց մալականներից գնւած երկու թնդանօթները, շուրջ եօթ հարիւր հրացան, մեծ քանակութեամբ ռազմամթերք, կենսամթերք, հազարաւոր ոչխար, արջառ եւ 40 ձի: Անասունների խոշոր մասը, ալիւր, ցորեն եւ գարի փոխադրեցինք Բագու՝ մեր Բիւրոյի եւ կառավարութեան, ժողովրդի կարիքները հոգալու համար:

Նոր էր վերադարձել Շամախի 20րդ գումարտակը, երբ մենք ստացանք

Ամիրեան Թաթոսից երկտող. խնդրում էր պատժել Շամախիի վրայով Բագու գնացող, զուտ ռուսներից կազմուած իր գումարտակը, Բագուից իրեն հետ բերուած թւով 500 հոգի՝ երեք ռուս սպաների առաջնորդութեամբ, որոնք ըմբոստացել էին իր դէմ եւ, ամեն ինչ վերցնելով, մեկնել:

Մենք կարգադրեցինք անմիջապէս փակել անցքը երկու կողմից, սպասել մինչեւ բոլորը մուտք կգործեն այդ շրջանը: Նոր էր շառագունել արշալոյսը, երբ նրանք անտեղեակ, թէ ինչ է սպասւում իրենց, մուտք գործեցին փականքի մէջ: Տուեց զինաթափման եւ անձնատուութեան ազդանշանը: Տեսնելով երկու կողմից շրջապատած կազմ ու պատրաստ վիճակում իրենցից գերազանց ուժեր, առանց որեւէ փորձ անելու դիմադրութեան, վար դրեցին զէնքերը եւ առաջացան իրենց ցոյց տրուած բացատը: Երբ բոլորը համախմբուեցին, մենք մօտենալով պահանջեցինք՝ առաջանան ղեկավարները եւ ըմբոստութեան յորդորողները:

Զինուորների ցուցմունքով եւ պահանջով առանձնացան 5 հոգի՝ երկու հրեայ եւ երեք ռուսներ, որոնցից մէկը վառատար մէկ երիտասարդ՝ Լապտեւ ազգանունով: Նրանք իրենց հետ բերել էին 4 դաշտային թնդանօթներ, 9 գնդացիր, 4 ֆուրգոն բեռնուած ռազմամթերք եւ մէկ երթային խոհանոց բոլոր պարագաներով:

Նրանցից վերցուեց 500 անթերի վիճակում ռուսական մօսին հրացաններ եւ 22 հատ նագան ատրճանակներ: Վերջացնելով համախմբումը՝ կարգադրեցինք հանել իրենց դեռ երկու շաբաթ առաջ ստացած համազգեստները, որոնք դեռ լաւ վիճակում էին, փոխարինուեց մերոնց խունացած եւ հնամաշներով: Նոյնը եւ կօշիկները:

Մէկ ֆուրգոն նրանց թողեցինք՝ ճանապարհին յոգնածների եւ հիւանդների համար, մեզնից ստացան բաւարար հաց, եփուած միս եւ հրահանգ՝ Բագու մեկնելու: Մեզ մօտ պահելով միայն վերոյիշեալ 5 ըմբոստապետներին, որոնք իրենց արարքի համար, համաձայն պատերազմական օրէնքի, դատուեցին եւ գնդակահարուեցին:

Ամիրեան Թաթոսին ուղարկեցի միայն մէկ ֆուրգոն եւ տասը հազար հրացանի փամփուշտ՝ գրելով. «Այսքանով բաւարարուիր, որովհետեւ յարգը չգիտես պահելու»...

Դասաւորելով հրատապ խնդիրները գաւառում (Շամախի)՝ մենք ձեռնարկեցինք Աղսուն ապահովելու խնդրով, որ իր աշխարհագրական դիրքով կարեւոր սպառնալիք էր, թէ երկաթուղու, Քիւրդամիրի վրա արշաւող ուժերի եւ թէ նոյն ուղղութեամբ զուգահեռ խճուղիի համար՝ դէպի Հաջի



Ղաբուլ երկաթուղու կայարանը: 26 ապրիլին, մենք՝ երեք հազար հետեւակ, 500 հեծեալ՝ 4 դաշտային թնդանօթներով եւ 12 գնդացիրներով, շրջապատեցինք Աղսու գետակի եւ խճուղու երկու կողմերում մի շարք տարածուած գիւղերը, եւ 27ի լուսաբացին տուեց գործողութեան ազդանշանը: Չորս դաշտային թնդանօթներ սկսեցին հերթականօրէն ռմբակոծել խճուղու երկու կողմերի մերձակա գիւղերը՝ ահաբեկելով եւ աւերակների, փլատակների տակ թողնելով ուշացողներին: Ծայր տուեց խճուղու ձախակողմեան գիւղացիութեան անկանոն եւ խուճապային փախուստը դէպի Քիւրդամիր եւ խորքերը: Զօրասիւները՝ կանոնաւոր շարքերով մէկը միւսին յաջորդող, սկսեցին ուռռաներով առաջանալ՝ իրենց ձայները միախառնելով թնդանօթների գոռոցին եւ գնդացիրների կափկափոցին: Արեգակը նոր էր սկսել բարձրանալ, երբ առաջին զօրասիւները թափուեցին մխացող գիւղերը՝ գրաւելով նպաստաւոր տիրապետող դիրքերը՝ հնարաւորութիւն տալով իրենց հետեւող զորասիւներին: Մի քանի կարեւոր կէտեր գրաւելով՝ փախչողներին հետապնդողներին օգնութեան փութացին չորս երկանիւ սայլակներ՝ երկուական գնդացիրներ իրենց վրայ ամրացրած:

Քառասմբակ նրանք հասան Իբրահիմ բեգլի, Արաբ եւ Դադալի գիւղերը, որոնք գրաւուած էին հեծելազօրի վաշտերի կողմից, նախօրօք գրաւելով եւ առաջ շարժուելով, Թալիշ, Խարաբաշհար, ձախակողմեան գիւղերը, որոնք ժամանակ չունեցան ճողոպրելու: Աւետիսը, իր 8 գնդացիրները շարքով կանգնեցրած Զաղլի եւ Իսմաիլէ գիւղերի դիմաց, սկսեց ուժեղ գնդացրային կրակի տակ պահել մինչեւ երկու վաշտեր իրենց կատաղի, յանդուգն գրոհներով գրաւեցին եւ գիւղերը մտան ու կատարեցին իրենց վրայ դրուած պարտականութիւնը: Մենք նախօրօք խստիւ հրահանգել էինք չխնայել կռւողներին եւ երիտասարդութեան, սակայն, ամենախիստ պատժի կենթարկուեն նրանք, որոնք կկոտորեն երեխաներ, կհետապնդեն կանանց եւ կոյս աղջիկներին ու կսպանեն ծեր ու անկարներ:

Խճուղու ձախ կողմի ճողոպրած զինուած զանգուածները թափուել եւ ամրացել էին, աջակողմեան մեծ եւ բլրակներով շրջապատուած Ղարաբուջար եւ մեծ աւան Քիւրդամիրում՝ շրջանի կենտրոնը, եւ երկաթուղու կայարանը, որը գիւղի թիկունքում էր, ընդամենը 14 կիլոմետր դէպի հարաւ գիւղից:

Հեծեալ գնդին՝ Ստեփան Լալայեանի հրամանատարութեամբ, կարգադրել էինք արագ, իրենց Մոզիկ գիւղը գրաւելուց յետոյ, գրաւել Քիւլալի (դէպի Կարամարեան գնացող խճուղու ձախ կողմը, արեւմուտք Աղսուից), թեքուել դէպի հարաւ՝ Գեարամօրանի, եւ առաջանալ Արաբ, Դադալու գիւղերի

թիկունքով, մօտենալ երկաթուղագծին եւ սպասել յաջորդ կարգադրութեան: Աշխատել հնարաւորութեան սահմաններում աննկատելի մնալ Քիրդամիր եկող երկու կազմակերպուած գնդերով եւ հազարաւոր զինուած խուժանով տաճկական բանակի գնդապետ Նազմի բէյի եւ տխրահռչակ վրացի զօրավար Մաղալովի հրամանատարութեամբ իր «քաջարի 8 հարիւր վրացի կամաւոր ուժերից»: Ղարաբուլաղը եւ Քիրդամիրը գրաւելով՝ մենք մեր բոլոր ուժերը կենտրոնացրինք Բարգիւշատի ուղղութեամբ: Արեւելքից եւ հարաւ-արեւելքից տարածուած լայն անապատում մեզ վտանգ չէր սպասում: Ղարաբուլաղը եւ Քիրդամիրը թշնամուն հակահարուած տալու համար գերազանցօրէն նպաստաւոր կէտեր էին, որտեղ եւ դասաւորեցինք մեր հրետանին եւ գնդացիրները՝ Բարգիւշատը եւ շրջապատը մեր հարուածների անմիջական կրակի թեւարկութեան տակ առնելով: Մեր զօրաբաժինը հերթականօրէն հանգիստ առաւ գիշերը: Նոյնիսկ մէկ-մէկ բաժակ Սաղեանի ընտիր գինին վայելեցին: Ոչ ոք չխանգարեց մերոնց գիշերային հանգիստը: Մենք միայն հանգիստ չունեցանք՝ ամբողջ գիշերը մտմտալով, որոճալով ծրագրեր՝ սպասուելիք լուրջ բախման մասին, տաճկական կանոնաւոր եւ դաշնակից վրացի ուժերի հետ: Մեր հետախոյզները մօտակայ եւ հեռաւոր վայրերից իրար ետեւից վերադառնում եւ տեղեկութիւններ էին բերում: Ապրիլի 27ին առաւօտեան ժամը երեքին յոգնած վերադարձան Հաջի Ղաբուլ ուղղութեամբ ուղարկուած հետախոյզները եւ հաղորդեցին մեր ուղղութեամբ դէպի Քիրդամիր արշաւող զօրքերի մասին: Մենք, քիչ էլ երկարացնելով տղաների հանգիստը, առանց խուճապի, հրահանգեցինք պատրաստ վիճակի մէջ դնել ուժերը՝ գրաւելով նախօրօք որոշուած ռազմակէտերը:

Հրետանին ջղային րոպէներ էր ապրում, թէ երբ է երեւալու թշնամին. խիստ կարգադրուած էր նախօրօք հանգցնել բոլոր կրակները, ոչ մի կենդանութեան նշան ցոյց չտալ մինչեւ տրուելիք հրահանգը:

Առսուի վերին շրջանում պատուիրեցինք զանազան կէտերում վառել մեծ կրակներ եւ անցուդարձ կատարել կրակների շուրջը: Կրակներն այնպիսի տեղերում առաջացնել, որ երկաթուղու գծի կողքով եկողներին պարզ նկատելի լինեն: Այդ կարգադրութիւնը արուեց անմիջապէս, երբ վերադարձան Հաջի Ղարուլի ուղղութեամբ ուղարկուած հետախոյզները:

Արեգակի շողերը դեռ նոր էին լուսաւորել լեռների գագաթները, երբ նկատուեց առաջապահ հետազօտող հեծեալների մէկ հարիւրեակ, որոնք ուղղուեցին Բարգիւշատի թիկունքում գտնուող բլուրները: Մեզ երկար սպասեցնել չտուեց թշնամին: Հեծելազօրի հարիւրեակին յաջորդեցին հետեւակ գն-



դերը, որոնց աջ կողմից ըստ երեւոյթին զինուած խուժանն էր անկանոն առաջանում: Վերջապէս թնդանօթները, որոնք կանգ առան բաւականին տարածութեան վրայ: Մեր դիտակէտից հեռադիտակով պարզ տեսնում էինք, թէ ինչ փութկոտութեամբ հասան Բարգիւշատից երկու թէ երկուսուկէս կիլոմետրի վրա, կանգ առան եւ սկսեցին աշխատել դիրքեր պատրաստել, խրամատներ փորել ու զանազան աշխատանքներ կատարել:

Մենք ժամանակ չկորցրինք. 20րդ գումարտակից առաջին երկու վաշտերին՝ հազար հոգի, կարգադրեցինք աննկատելի, երկաթուղու բարձր լիցքի կողքով առաջանալ մինչեւ հեղեղատի կամուրջը, միշտ արթուն ուշադիր, թշնամու կողմից անակնկալի չգալու համար: Հեծելազօրը խիստ հրահանգ ստացաւ կազմ եւ պատրաստ վիճակում լինել, վայրկեան չկորցնելու, երբ գրոհելու հրամանը տրուի:

Մենք ուշի ուշով հետեւում էինք թշնամու բոլոր շարժումներին: Հրետանու հրամանատար Մասիսին պատուիրեցինք ուսումնասիրել, որքան հնարաւոր է, թշնամու թնդանօթների դիրքը, տարածութիւնը եւ աշխատել նախ՝ նրան լռութեան մատնել՝ առնելով դիպուկ եւ ուժեղ կրակի տակ:

Աղսուի վերին շրջանը, որը մեզանից բաւական տարածութեան վրայ էր, մերոնց առաջացրած խաբուսիկ կրակն ու ծուխը պատել էր ամբողջ շրջապատը: Բոլոր միջոցառումները ժամանակին կատարուեցին անթերի:

Նոր էր երեւացել եւ առաջանում էր նախորդների ուղղութեամբ վրացական հեծելազօրի «քաջարի» դաշնակից գունդը՝ նոյնքան «քաջարի» զօրավար Լ. Մաղալովի հրամանատարութեամբ:

Անակնկալները կանխելու համար կանխապէս յատուկ կարգադրութիւն արուեց Շամախիում թողած գումարտակի երկու վաշտերը՝ 8 հարիւր նիզակ ու հրետանին նոյնպէս պատրաստի վիճակում դնել եւ սպասել շարժման հրամանի: Թէ մալականներից եւ թէ զինաթափուած գումարտակից մնացած փուրգոնները, որոնք մեր տրամադրութեան տակ էին որոշվեց օգտագործել զինուորների շտապ փոխադրման համար: Զարգեարանի գումարտակներին նոյնպէս կազմ ու պատրաստ վիճակի հրահանգ տրուեց:

Վրացական հեծելագունդը նոր էր մօտեցել գլխաւոր բանակին, որն ամրացել էր Բարգիւշատից արեւմուտք՝ Ղազեան, հարաւ՝ Լաքի, Ջալլի եւ Ղարալաղ գիւղերում, վերջին երեքը՝ հազիւ միմեանցից 3-4 հարիւր մետր հեռաւորութեամբ, որտեղ լցուել էր զինուած խուժանը, երբ տրուեց մեր ազդանշանը, եւ սկսուեցին որոտը հրետանու եւ կափկափոցը 12 գնդացիրների: Դէպի հեղեղատի բարձր կամուրջն ուղարկուած վաշտերը ժամանակին բարձրա-

ցան երկաթուղու գիծը եւ ուժգին համազարկերի տակ առան թշնամու կենտրոնավայրը: Մեր սքանչելի հրետանին փոխն ի փոխ հերթականօրէն ռմբակոծում էր թէ բանակը եւ թէ թշնամու հրետանին: Անակնկալի եկած թշնամին չէր նախատեսել կամ չէր հաւատացել իրենց տրուած լուրերին՝ գիւղերից ճողոպրած թուրքերի, որ մենք այսքա՜ն մօտ տարածութեան վրայ պիտի դիմաւորէինք իրենց, մանաւանդ պարզ աչքով երեւացող բազմաթիւ կրակները Աղստի վերին մասում, կռահել էին տւել ըստ երեւոյթին, որ գլխաւոր ուժերը ամենայն հաւանականութեամբ այնտեղ են լինելու: Թշնամին հազիւ էր ուշքի եկել, եւ մենք տեսնում էինք, թէ ինչպէս նրանք ընկրկողներին կանգնեցնում եւ հապճեպով բլուրների թիկունքն էին անցնում եւ երկու գիւղերում դիրք մտնում: Օգտւելով ստեղծված շփոթից՝ մեր հեծելազօրը հրահանգ ստացաւ գրոհելու Մաղալովի վրայ եւ ոչ ոքի չխնայելու: Մեր անզուգական տղաները, որ կարծէք թէ մոռացել էին առաջին թշնամուն եւ արհամարհանք ու նողկանք էին յայտնում վերջիններիս հասցէին, ամենաուժգին թափով փոթորկեցին հրանօթի, գնդացիրների եւ գումարտակների համազարկերի պաշտպանութեան տակ: Սլացաւ մեր հայորդիների սքանչելի հեծելազօրը, որն անցնելով հեղեղատի բարձր ու լայն կամուրջի տակով՝ ընկաւ վրացական գնդի վրայ: Հրահանգուած էր ոչ ոքի չխնայել, որը իրենց իսկ բոլորի ցանկութիւնն էր:

Այո, մեր անզուգական ռազմիկները՝ վրէժով լցուած, հինգ հարիւրեակների բաժանուած, հինգ ուղղութեամբ գրոհեցին տաճիկների կամաւոր դաշնակից քրիստոնեայ վրացիների վրայ: Շշմեցուցիչ էր եւ անակնկալ զօրավար Մաղալովի համար հայորդիների կայծակնային գրոհը սրարշաւ, որին հետեւեցին երկանիւ սայլակները՝ իրենց վրայ ամրացուած գնդացիրներով: Գեղեցիկ հագնուած, սպառազէն կրկնակի քանակի զօրքով զօրավար Մաղալովը մէկ հարուած միայն ընդունեց եւ, ձիերի գլուխները շուռ տալով, եկած ճանապարհը բռնեց՝ հետապնդւելով մերոնցից, սակայն, հանդիպելով վաշտերի համազարկերին, շուռ գալով դէպի հարաւ-արեւմուտք՝ ծածկւեց թուրքական գիւղերի եւ այգիների մէջ: Ճիշտ թիւը չգիտենք, թէ քանի սպանուած թողեց գեներալ Մաղալովը, մերոնք վերադարձան 72 գերիներով, որոնցից երեքը՝ սպաներ: Երբ վերադարձան բոլորը, պատմեցին, որ ընկածների թիւը 150ից պակաս չէր, որոնց թւում՝ եւս երեք սպանուած սպաներ: Բերել էին նրանց արծաթապատ սրերը, ատրճանակները, փափախները եւ ձիերը:



Զօրավար Մաղալովը այսպէս անփառունակ կատարեց իր դաշինքը տաճիկների հետ:

Մեր հեծելազօր գունդը, իր ետեւից ունենալով 8 գնդացիրները՝ ամրացուած երկանիւների վրա, անակնկալ գրոհով շատերին ժամանակ չէր տւել ձիերը նստելու, որոնք հետիոտն էին փախել: Սակայն նրանց յետեւից սլացող 4րդ եւ 5րդ հարիւրեակները, վրայ հասնելով, սրահար էին արել իրենց երեք սպաների հետ շատերին:

Նազմի բէյի գնդերը եւ խառնիճաղանճ փախչող զինուած խուժանը, ամրանալով գիւղերի յարմարաւոր դիրքերում, սկսեցին հազարաւոր հրացաններից եւ տասնեակ գնդացիրներից մի զարհուրելի կրակ բացել մեր ուղղութեամբ, շատ չանցած՝ նրանց ձայնակցեց եւ հրետանին, որը երկար ժամանակ էր, որ լռութեան էր մատնուած՝ հաւանօրէն թիկունքում յարմարաւոր դիրք ընտրելով իր համար: Մեզ հասնում էին միայն թնդանօթների շատ դէպքում չպայթող ռումբերը: Իսկ շատ հեռուից եկած հրացանների եւ գնդացիրների գնդակները մեզ որեւէ վնաս չպատճառեցին:

Թշնամուն պատասխանում էր միայն մեր հրետանին: Խիստ կարգադրուած էր անպատակ գնդակներ չվատնել այդ հեռաւոր տարածութեան վրայ:

Հրետանու մարտը տեւեց մինչեւ երեկոյ: Մեր հրետանին այդ մարտի ընթացքին անբաժին չթողեց գիւղերում ամրացած Նազմի բէյի գնդերին եւ խուժանին՝ երբեմն նրանց այցելելով եւ աւերմունք կատարելով: Դա պարզւեց յետագայում, երբ վերջնականապէս պարտուած աշխարհազօրը կորագլուխ Գանձակ փախաւ:

Թշնամուն վերջնականապէս ջախջախելու համար անհրաժեշտ էր գրաւել Բարգիւշատը՝ իր թիկունքում դէպի հարաւ-արեւմուտք եղած բլուրներով, որը կատարւեց գիշերով, նախապէս լաւ հետախուզումից յետոյ, երբ մեր գիշերային հետախոյզները վերադառնալով հաղորդեցին, որ գիւղը ազատ է:

Առաջին եւ երկրորդ վաշտերին կարգադրեցինք զգուշութեամբ առաջանալ եւ, իրենց ապահովելով յարմարաւոր դիրքերով, անմիջապէս տեղեկացնել: Մինչեւ լուսաբաց դեռ շատ ժամանակ կար, երբ առաջին վաշտապետ Վանեա Բաբայեանից ստացանք երկտող, որով նա հաղորդում էր յաջող եւ անվտանգ գիւղ մտնելը, որտեղ ապահովութեան համար թողնելով երկրորդ վաշտը՝ ինքն առաջացել է եւ տարածութեան վրայ Լաքի, Ջալլի եւ Ղալաղ գիւղերում երեք գերիշխող բարձր բլուրները գրաւել:

Մենք անմիջապէս հրահանգեցինք Շամախիի երկու վաշտերի գումար-

տակապետ Յովհաննէս Ջանումեանին՝ չորս գնդացիրներով արագութեամբ, լոյսը չբացուած նրանց միանալ եւ սպասել կարգադրութեան:

Հեծելագունդը պատուէր ստացաւ նոյնպէս գիշերով անցնել նոյն հեղեղատի կամուրջի տակով եւ այնքան առաջանալ երկաթուղուն զուգահեռ, որքան որ գծի հողային բարձր լիցքը՝ թումբը, անտեսանելի կպահի իրենց, կանգ առնեն, սակայն անաղմուկ եւ պատրաստ վիճակում սպասեն յարմար վայրկեանի՝ գրոհելու թշնամու ձախ թեւի վրայ: Նրանց հետեւեց երրորդ վաշտը 20րդ գումարտակի:

Նախօրօք կարգադրուած Ծամախիի երկու վաշտերը երկու թնդանօթներով Աղսու էին հասել: Նրանց կարգադրուեց միայն թնդանօթները գործեն թշնամու հրետանու ուղղութեամբ, երբ հրաման ստանան:

28ի լուսաբացին, երբ ստացուեցին հաղորդումները բոլոր կէտերից, տակաւին մեր ազդանշանը չէր տրուած, երբ թշնամին սկսեց նախորդ օրուան իր զարհուրելի գոռում-գոչիւնը: Թշնամին չէր կռահել, որ մենք Բարգիւշատը եւ նրա թիկունքում գտնուած բլուրները իրենց քթի տակ գրաւած կարող էինք լինել: Նրանք իրենց կրակը կենտրոնացրել էին Քիւրդամիրի եւ Ղարաբուլաղի վրա, որտեղից նախորդ օրը ճաշակել էին դառնութիւնը: Նրանց այդ սխալը մեզ հնարաւորութիւն ընձեռեց օգտուել առիթից եւ գիշերով գրաւել մեզ համար այնքան կարեւոր եւ նպաստաւոր կէտերը, որոնք գերազանցեցին նախորդ օրուան մեր յաղթանակը: Մեր հրետանուն կարգադրուեց յաջորդաբար անդադար կրակի տակ պահել եւ՛ թշնամու հրետանին եւ՛ թէ գլխաւոր ուժերի կենտրոնը, որտեղից համազարկերն էին լսւում: Հեռախօսով կարգադրուեց Աղսուի երկու դաշտային թնդանօթները շարունակ թշնամու հրետանին իրենց նշանակէտը դարձնել, որ շփոթութեան ու անակնկալի բերեց թշնամուն:

Չգիտէին որին պատասխանէին, որն է աւելի կարեւոր, նորեկ ուժը անյայտ էր թշնամուն՝ իր քանակով եւ ռազմունակութեամբ: Տաճիկները եւ զօրավար Մաղալովը յառաջխաղացման որեւէ նշան չէին ցուցաբերում տակաւին: Իրենց աջ թեւը, որտեղ համախմբուած էր զինուած խուժանը, շատ էր վրդովեցրել առաջին եւ երկրորդ վաշտերի մեր քաջարի հայորդիներին, որոնց ինքնասիրութիւնը նախապէս շոյուած էր, որ այժմ գործ պիտի ունենան խուժանի հետ, եւ իրաւացի էր նրանց դժգոհութիւնը. յետագայում նրանց ծաղրում եւ ձեռք էին առնում միւսները, որովհետեւ նրանց վիճակուած էր կռուել խուժանի դէմ, այլ ոչ թէ կանոնաւոր գնդի եւ վրացի դաշնակիցների դէմ:

Վանեան, չորս գնդացիրները ստանալով եւ երկու բլուրների վրայ յար-



մարաւոր կէտերում դասաւորուելով, հրահանգը տրուելուն պէս խուժանին առնում է գնդացիրային եւ վաշտերի համազարկերի կրակի տակ: Պատմում էին տղաները, թէ ինչպէս հարիւրներով ջարդում էին, մինչեւ որ կարողացել էին դուրս թափուել ու խառնիխուռն փախչել եւ լքում առաջացնել կանոնաւոր շարքերի մէջ: Վանեան այնքան էլ դժվարութիւն չէր ունեցել առաջին գիւղը գրաւելու դեռ մութը չընկած՝ միշտ գիւղը պահելով գնդացիրների անդադար կափկափոցի տակ:

Թշնամու թնդանօթները ծուլութեան նշաններ ցոյց տուեցին: Պարզ էր մեզ համար. կամ այնտեղ մեր հրետանու շեշտակի եւ դիպուկ ռումբերը մի քանիսին անգործութեան էին մատնել, կամ թէ ռումբերի պակաս էին զգում: Երկու անգործածելի թնդանօթները յետագայում մեր ձեռքն անցան:

Երբ մեր բոլոր զէնքերն սկսեցին գործել, մեր սքանչելի հեծելազօրը այս անգամ եւս կատարեց իր այնքան գեղեցիկ ռազմախաղը: Նկատելով մեր հրետանու գործած աւերը, վաշտերի՝ մէկը միւսին յաջորդող գրոհները թշնամու դիրքերի վրա, երկաթուղուն զուգահեռ գրոհող թշնամու ձախ թեւի վրա, սոսկալի գոռում-գոչումով, մէկը միւսի յետեւից երկաթուղու գիծն անցնելով, դարձեալ սուսերամերկ, երրորդ եւ չորրորդ վաշտերի անընդհատ համազարկերի պաշտպանութեան տակ սլացաւ դէպի թշնամին: Թնդանօթների կողքին կանգնած դիտում էի, երբ վրաց հեծելազօրը գրոհն ընդունելու տրամադրութիւն ուզեց ցոյց տալ, սակայն թնդանօթի երկու ռումբերի պայթիւնը եւ նրանց շարքերի շփոթը մերոնց աւելի ոգեւորեց կարծէք, մանաւանդ երբ առաջին երկուսին յաջորդեցին այս անգամ չորսը միմեանց յետեւից: Այդ պայթիւնները մեծ վնաս եւ իրարանցում էին առաջացրել. մերոնք ամեն կողմից վրայ ընկան, որոնց համարձակ եւ վստահ գրոհը, թնդանօթների արագ ու դիպուկ պայթիւնները մեծ աւերածութիւն առաջացրին թշնամու շարքերում, եւ արհամարհանքը վրաց հեծելազօրի նկատմամբ մերոնց այնքան էր մօտեցրել նրանց, որ վերջին տարածութիւնն անցնելու համար նախ դադարեցրին իրենց հրացանների գործածութիւնը, ուսերին անցկացնելով: Մերկացնելով սուրերը՝ գոռում-գոչումով ընկան թշնամու վրայ: Մենք թնդանօթներն ուղղեցինք դէպի կենտրոնական դիրքերը՝ արգելելու նրանց օգնութիւնը իրենց հեծելազօրին: Դիմադրութիւնը երկար չտեւեց, եւ զօրավար Մաղալովը այս անգամ վերջնականապէս լքեց դաշնակիցներին եւ, հետապնդուելով մեր աննման հեծելագնդի ուռռաներով, գրոհից ու հարուածներից ազատուելու համար լքեց եւ վերջնականապէս իր հայրենիքի՝ Վրաստանի ճամբան բռնեց: Չգիտենք իր հայրենակիցները ինչ-

պիտի ընդունելութիւն ցոյց տուեցին այդ արկածախնդիր քրիստոնեայ զօրավարին իր հայրենիքում, ինչո՞վ պիտի փարատէր այդ արատը եւ ինչպէ՞ս պիտի արդարանար իր հայրենակից համախոհների դատաստանի առաջ:

Մեր բոլոր ուժերը կենտրոնացրել էինք թշնամու ամրութիւնների վրայ. վեց թնդանօթների, 16 գնդացիրների եւ հազարաւոր հրացանների անդադար համազարկերի առաջացրած աւերը թշնամուն շշմեցրեց, որը երկար չկարողացաւ տոկալ մեր ուղարկած այն ժամանակուայ բոլոր տեսակի զէնքերի գործած աւերածութեանը եւ զինուորների անդադար յառաջանալու վտանգին: Նախ խուժանը սկսեց անկանոն փախուստի դիմել, որը եւ լքում առաջացրեց կանոնաւոր գնդերում: Ընդհանուր յարձակումը բոլոր կէտերից՝ թշնամին անկարող եղաւ դիմադրել եւ մեր ներդաշնակ, մէկը միւսին օգնութեան փութացող զինուորները թափուեցին թշնամու դիրքերի վրայ: Փախուստն անկանոն էր եւ ամեն ուղղութեամբ: Մերոնք հալածում էին եւ անխնայ կոտորում: Դաշտը ծածկուած էր հարիւրաւոր դիակներով ու ծանր վիրաւորներով, յոգնածները անձնատուր էին լինում իրենց զէնքերով: Գիւղերը նախօրօք դատարկուած եւ քոչեցուած էին հեռուները՝ իրենց հետ տանելով ինչ կարողացել էին: Խստիւ կարգադրուած էր թալանով չզբաղուել, որը կատարուեց ճշտութեամբ: Հալածանքը եւ հետապնդումը շարունակուեց մինչեւ երեկոյ: Մեզ էին թողել երկու թնդանօթներ եւ 5 գնդացիրներ: Առաջին երկուսը՝ անգործածելի վիճակում, մինչ գնդացիրները՝ անթերի եւ գործածելի:

Ուշ վերադարձաւ մեր հեծելագունդը՝ երեք տասնեակ գերիներով եւ թշնամուց խլուած քառասուն ընտիր ձիերով, խոշոր աւարով, կենսամթերքով եւ ռազմամթերքով: Մենք նախ՝ Բարգիւշատ, ապա՝ Քիւրդամիր հանգիստ տուեցինք մեր յաղթական զօրաբաժնին՝ ամենուրեք նշանակելով ապահովութեան համար գիշերային պահակներ:

29ի առաւօտեան մենք Ս. Ժգենտիից Շամախուց ստացանք մէկ գրութիւն շտապ, որ Քելւանի եւ իր շրջանի թուրք գիւղերում անհանգստութիւն եւ ինչ-որ շարժում է տիրում:

Մենք, հեծելազօրը թողնելով Քիւրդամիր, շտապով շարժուեցինք Սաղեան՝ Շամախու առաջին հայկական գիւղը: Տեղ հասնելով եւ հանգիստ տալով զօրաբաժնին՝ անմիջապէս Ջարգերանից կանչեցինք Տարաս Բուլբային (Մկրտիչ) եւ Տէր Զաքարին:

Տեղ հասնելով՝ նրանք եւս հաստատեցին մեզ հասած լուրերը: Երեք թուրքեր Մոզնիկի գիւղապետի հետ Քելւան ուղարկեցինք՝ տեղի ազդեցիկներից



5-6 հոգի շտապ Շամախի գալու եւ շրջանին վերաբերող կարեւոր խնդիրների մասին խորհրդակցելու:

Մենք Տէր Զաքարից եւ Տարաս Բուլբայից մանրամասն ծանօթացանք շրջանի մասին, որին երկուսով էլ քաջածանօթ էին: Այս շրջանը լեռնային է եւ անտառապատ: Խորհրդակցութեան հրաւիրուած վերոյիշեալներից բացի, կանչուած էին եւ գաւառին լաւ ծանօթ մի քանի հայ հասակաւոր գիւղացիներ եւս: Լսելով բոլորի տուած մանրամասն տեղեկութիւնները՝ նրանց ազատ արձակեցինք՝ մեզ մօտ պահելով գումարտակապետերին՝ տեղադրում կազմելու համար: Բոլոր զգուշաւոր եւ ռազմական միջոցները նախատեսուեցին եւ դասաւորուեցին, եթէ Քելւանը չնդառաջէր մեր խորհուրդներին եւ առաջարկներին: Քելւան աւանից եկան միայն երեք վաճառականներ: Երբ մեզանից լսեցին ստոյգ աղբիւրներից մեր ստացած լուրերի մասին, սկսեցին արդարանալ. «Մենք դէմ ենք անհնազանդութեան եւ ըմբոստութեան, սակայն անզօր ենք, մեր մէջ ամիսներ է, որ գործում եւ կազմակերպում ու զինում են տաճիկ, պատերազմի ընթացքին գերի ընկածներ, որոնք փոխադրուած էին Նարգեն կղզին (Բագւի դիմաց), այնտեղից փախած եւ անցած զանազան շրջաններ, ինչպէս եւ մեր շրջանը, ուր մարզում եւ զինում ու ըմբոստութեան են մղում օրինական իշխանութեան դէմ: Ո՞վ է մեզ լսողը»: «Գնացէք եւ յայտարարէք ժողովրդին, եթէ չեն ցանկանում իրենց շրջանը եւս Աղսուի եւ Քիւրդամիրի վիճակին հասցնեն, պիտի զինաթափուեն եւ ձեր շրջանից հեռացնեն տաճիկ սպաներին եւ էմիսարներին՝ խաղաղ, անդորր ապրելու համար: Կարիք չկայ զէնք պահելու, մենք եկել ենք ամբողջ գաւառը պաշտպանելու անխտիր, հայ, թուրք եւ մալական: Վաղը երեկոյեան մենք սպասում ենք ձեր դրական պատասխանին»: Հետեւանքը մեզ պարզ էր. անտարակոյս՝ ժխտական:

Ըստ մեր որոշման՝ Տէր Զաքարը եւ Տարաս Բուլբան իրենց գումարտակներով պիտի յառաջանային արեւմուտքից, 20րդ գումարտակը՝ կենտրոնից հարաւ, իսկ Շամախիի գումարտակը՝ արեւելքից:

Բոլոր միաւորներին կարգադրուեց վաղը՝ Ապրիլի 30ի երեկոյեան իրենց նշանակուած կէտերում լինել: Գումարտակները զինուեցին երկուական գնդացիրներով՝ ի բացառեալ 20րդ գումարտակը, որի տրամադրութեան եւ անմիջական հսկողութեանն էր յանձնուած ամբողջ զէնք ու ռազմամթերքը:

Հրետանի մարտկոցը դիրքաւորուեց 20րդ գումարտակի թիկունքում նրա պաշտպանութեան համար: Մեր նախագուշակումը լուսաբացին կատարուեց:

Հազարաւոր սպառազինուած քիլւանցիներ շարժուեցին. մի մասը՝ դէպի Զարգեարան՝ հիւսիս-արեւմուտք, միւսը՝ դէպի Մէյսարի մեկուսի հայկական գիւղի ուղղութեամբ՝ Շամախիից դէպի հիւսիս:

20րդ գումարտակը բռնեց եռանկիւնի գիծը, որի բարձունքները տիրապետող էին շրջապատին: Ժամանակին տեղ հասնելով՝ Մկրտիչը (Տարաս Բուլբան) եւ Տէր Զաքարը կանխել էին թուրքերի յառաջխաղացը:

Նրանք անմիջապէս զինուել եւ գրաւել էին իրենց նախօրօք որոշուած դիրքերը: Մենք որեւէ հնարաւորութիւն չունեցանք թշնամու առաջանալը դէպի Զարգեարան տեսնելու: Խիտ անտառները խանգարում էին. մենք դիմեցինք հրետանու աւերիչ գործողութեան Քելւան աւանի վրայ: Վեց թնդանօթներ շեշտակի իրենց ուղարկած ռումբերով Քիլւանում բոցեր առաջացրին, հրետանին շարունակեց իր անդադար եւ աւերիչ ռմբակոծութիւնը:

Մենք, հեռախօսային կապ չունենալով Զարգեարանի հետ, հեծեալների միջոցաւ կապուեցինք, եւ կարգադրութիւնները կատարւում էին մէկը միւսին յաջորդող ձիաւորներով: Իսկ Շամախիի գումարտակի հետ անմիջապէս հնարաւորութիւն ունեցանք կապուել հեռախօսով:

Երկու վաշտ Քելւանի եւ մէկ վաշտ Մէյսարի վրայ եկողների դէմ շարժելով՝ տեղացի լաւածանօթ ուղեցոյցներով հրահանգեցինք Շամախու գումարտակին անյապաղ առաջանալ եւ կապուել 20րդ գումարտակի երրորդ վաշտի հետ եւ միասնաբար գրոհել թշնամու վրայ:

Երկու թնդանօթների կարգադրուեց աջակցել արեւելքից մերոնց յառաջխաղացմանը: Թշնամին երեւում էր երբեմն բացատներում, երբեմն մացառուտներով այս ու ան կողմ շարժումներ կատարելով:

Մէյսարիի թիկունքի դէպի հիւսիս-արեւմուտք բարձունքի վրայ յարմարեցուած չորս գնդացիրները, նկատելով իրենցից ոչ հեռու բացատով շարժուող թշնամուն, ուժգին եւ անդադար կրակի տակ առան: Հարիւրաւոր ընկածները կասեցրին թափն ու յառաջանալը թշնամու: Դադարեցին գոռում-գոչումը, Ալլա՛հ Մոհամմա՛դ եա Ալի... կանչերը: Հեռախօսով խնդրեցին կրկնապատկել թնդանօթների ռմբակոծութիւնը, որն անմիջապէս ընդառաջուեց:

Զարգեարանի գումարտակները հերոսաբար դիմադրել եւ կասեցրել էին թշնամու գրոհը: Գրել էր Տէր Զաքարը: Հրահանգուեց թնդանօթներին հերթականօրէն ռմբակոծել եւ Քելւանը եւ Մէյսարիի ուղղութեամբ արշաւող թուրքական ուժերին, որին յաջորդեց ընդհանուր գրոհը՝ նախօրօք տեղեկացնելով զարգեարանցիներին: Թնդանօթների գոռոցը, գնդացիրների կափ-



կափոցը եւ հազարաւոր հրացաններից սլացող եւ սուրող գնդակները անտառապատ լեռներում եւ ձորերում ստեղծել էին զարհուրելի դրնդիւն՝ խառնուելով Ալլա՛հ, Մոհամմա՛դ, եա՛ Ալի աղմուկ աղաղակին: Մեր երեք կողմից գրոհը, թնդանօթների եւ գնդացիրների կատարած աւերը, վրէժի ծարաւի Շամախեցի եւ Զարգեարանցիների կատաղի յարձակումները թշնամուն մոլորեցրին, որը դիմեց անկանոն փախուստի, դէպի Լահիջ եւ դէպի լեռնաստան:

Կենտրոնից 20րդ գումարտակը եւ զարգեարանցիները արեւմուտքից մտան Քելւան: Չուշացաւ եւ Շամախու գումարտակը՝ երգելով եւ բեռնաւորուած սպանուածներից վերցուած հրացաններով, փամփուշտակալներով եւ տասնեակներով զանազան ատրճանակներով: Եկան զանազան հայկական գիւղերից ամիսներ առաջ թալանուած գիւղացիները: Սկսուեց քաշքշոց, շատերը, ճանաչելով իրենց կարասիները, անասունները, ականջներից բռնած դունչն ու ճակատը համբուրելով, առանձնացնում էին: Մեր կարգադրութեամբ ամեն ինչ կենտրոնացուեց մէկ յարմարաւոր տեղ: Ընտրել տուեցինք 7 հոգուց կազմուած յանձնախումբ՝ իրերը, անասունները իրենց նախկին տէրերին բաժանելու համար:

Դուրս բերեցին այստեղ եւս 9 հատ դաշնամուրներ, ջութակներ, գիտարներ մանդոլիններ եւ բալալայկաներ՝ բոլորը միասին 65 հատ մանր երաժշտական գործիքներ՝ խանգարուած, լարերը կտրտուած վիճակում: Այդ գործիքներով ժամանակին Շամախու հայ բարեկեցիկ եւ երաժշտասէր ժողովուրդը իր գեղեցիկ քաղաքում իր ուրախ օրերն էր անցկացրել ու ապրել: Այդ բոլորը տեսնելով՝ մարդ մտածում է, թէ ի՞նչ քաղաքակիրթ օազիս է եղել Շամախին՝ իր հայկական գիւղերով, գիւղացիութեամբ, շրջապատի թուրք յետամնաց ազգաբնակչութեան համեմատութեամբ:

Ուշ գիշերով վերադարձան զանազան կողմերից թշնամուն հալածող եւ հետապնդող մեր քաջարի հայորդիները:

Գիշերելով Քելւանի բարձունքներում՝ վաղ առաւօտեան հրաման տրուեց Շամախի վերադառնալու: Վիրաւորներին յանձնեցինք մեր բժկասանիտարական բաժնի խնամքին, որտեղ մեր բարեխիղճ եւ հոգատար բժիշկները՝ Մելիք Փարսադանեանի գլխաւորութեամբ, որին աշխատակցում էին Շէկ-Յոսէփեանը եւ Ա. Գեօդակեանը, վեց գթութեան քոյրեր եւ չորս հմուտ բուժակներ, օր ու գիշեր զբաղուած էին իրենց յանձնուած վիրաւոր եւ հիւանդ զինուորների խնամքով:

Շամախիում երկու օր հանգստից յետոյ կարգադրեցինք ընդհանուր ճաշ-

կերոյթ: Լալայեանների ընդարձակ զովասուն այգու ծառուղիներում պատրաստուած էր մաքուր սպիտակ սփռոցներով, նոխ խորտիկներով լցուած սեղաններ, որոնց շրջապատել էին մեր հայորդիները: Ամենուրեք տիրում էր ուրախ տրամադրութիւն: Ժողովրդական երգի քաղցրալուր հնչիւնները տարածւում էին եւ լցնում բարձրադիր Շամախուց դէպի շրջապատող լեռները, հովիտները: Լալայեանների հնամենի շէնքի, որը կառուցւած է արեւմտեան կողմից անհելի ապառաժի վրայ, լայն ու ընդարձակ պատշգամբում նոյնպէս պատրաստուած էր նոխ սեղան: Պատշգամբի դիմաց՝ հրապարակում, մի շարք օջախներում ճարճատում էր կրակը խորովածի համար, եւ նոր էին պատրաստւում շամփուրները կրակի վրայ շարելու, լսեցին մեքենաների ձայներ, եւ երկար չտեւեց՝ կանգ առան երկու մարդատար մեքենաներ՝ 10ը ճամբորդներով: Մեքենավարները մնացին իրենց տեղում 8ը, հոգի ցած իջան եւ մօտեցան մեզ, առանց ընկալեալ բարեւի սովորութեան. առաջնորդը, մօտ գալով, ասաց.

– Ո՞ւր է հոնների առաջնորդը,– եղաւ նրայ առաջին հարցը:

Ես նրան շատ սիրալիր պատասխանեցի.

– Ընկեր, ճաշը պատրաստ է, Դուք էլ երկար ճանապարհից էք գալիս, յոգնած եւ սոված կլինէք. ճաշից վերջ ես Ձեզ կծանօթացնեմ այդ հոնների առաջնորդի հետ:

– Լռի՛ր,– հետեւեց ռուսական եռայարկ, քառայարկ հայհոյանքների մի շարան:– Ցոյց տուր այդ ստահակին ինձ:

Զուշացաւ ծանօթութիւնը. վեր թռայ նստած տեղից եւ մէկ երկու ուժգին բռունցքներ՝ այտոսկրին եւ աչքի տակին, նա գետին տապալւեց իր կիսահան ատրճանակով: Դրանով չբաւականացայ, խլեցի մտրակը Ամիրջանի ձեռքից սկսեցի մտրակել՝ առանց նայելու որտեղ է դիպչում: Երեսի երեք պայթած տեղերից եւ գլխից սկսեց յորդառատ արիւն հոսել: Տղաները մեր արդէն բոլորին զինաթափ էին արել: Ընկածը ուշ ուշքի եկաւ, երբ բժ. Ծէկ-Ցովսէփեանը մօտեցաւ իր պարտականութիւնը կատարելու, նա հրաժարւեց. «Ես այսպէս պիտի Բագու գնամ»: Բժշկին կարգադրեցի որեւէ փորձ չկատարել օգնութեան: Իր հետ եկածներից իմացանք այդ ռուսի ով լինելը եւ իր հանգամանքը: Ռիբակին ազգանունով եւ ամենազոր Չեկայի ընդհանուր պետը, որը յետագայում պարզւեց, որ չէր լսել Ջափարիձէի, Վարեա Գասպարեանի եւ մի շարք ուրիշ ընկերների խորհուրդներին. «Մի գնա Շամախի, գնալդ լաւ հետեւանք չի կարող ունենալ»,– ասել էին նրանք:

Այդ Ռիբակինի Շամախի գալու դրդապատճառ էին ծառայել Խիլմիլիի



մալականների գիւղի աւերումը եւ Ամիրով Թաթոսի գումարտակի 500 ռուս զինւորների զինաթափումը ու 5 հոգու գնդակահարումը: Վերոյիշեալ դէպքերը ըստ երեւոյթին շարժել էին նրա ռուսական ազգային զգացումները, եւ նա վճռել էր գալ պատժելու այդ արարքների համար: Չկարողանալով նրան տարհամոզել յետ կանգնելու մտադրութիւնից՝ խորհուրդ էին տուել կորեկտ լինել գոնէ: Իսկ ամենազօր Չեկայի պետը չէր գործադրել նրանց բարի խորհուրդները, որի արդիւնքը վայելեց եւ վերադարձաւ Բագու:

Ուշ Բագու հասնելով՝ նա ուղիղ գնում է գործադիր խորհուրդ, որտեղ համախմբուած զբաղուած էին զանազան խնդիրների քննութեամբ: Երբ Ռիբակինը մտնում է սրահ, իրար են անցնում բոլորը, եւ ամեն մէկը աշխատում է առաջինը ինքը տեղեկանալ կատարվածին: Երբ մոտենում է Ջափարիձէն, շնորհաւորում է, որ ողջ է վերադարձել: «Մենք պատրաստւում էինք հոգեհանգստի համար: Ես գոնէ զարմանում եմ, որ դու կենդանի ես մնացել»,– ասել էր նա: Յաջորդ օրը նա հեռացւում է իր պաշտօնից, եւ նշանակւում է մէկ ուրիշը, նոյնպէս ռուս:

Մենք ժամանակին օրէօր տեղեակ էինք պահում թէ մեր ղեկավար աւագ ընկերներին Ռոստոմին եւ Աբրահամին եւ թէ կառավարութեան ղեկավար Շահումեանին, Ջափարիձէին եւ Ղորղանեանին:

Երկու օր անց վերոյիշեալ դէպքից մեզ մօտ եկաւ Ջափարիձէն Ալ. Առաքելեանի ընկերակցութեամբ: Նոյն պատշգամբում մենք նստած էինք ճաշի: Խորովածի առաջին պատառները էինք վերցրել, երբ կանգնեց մեքենան, եւ դուրս թռան Ջափարիձէն եւ Ալեքսանը մեքենայից եւ քահ-քահ ծիծաղելով մօտեցան: Գրկախառնւեցինք.

– Յոյս ունենք, որ մեզ էլ նոյն պատւին չես արժանացնի, մենք եկել ենք գառան խորոված ուտելու եւ Շամախու հռչակաւոր հին եւ ընտիր գինի խմելու, մեր ուրախութիւնը ձերին միացնելու: Մենք բոլոր մեր ընկերների կողմից յանձնարարութիւն ունենք շնորհաւորելու ձեր տարած յաղթանակների համար՝ այդքան կարճ ժամանակաընթացքում:

– Դրանց մասին ժամանակ կունենանք խօսելու:

Մէկը միւսին յաջորդող խորովածի շամփուրները բերւում էին անընդհատ: Լալայեան Ստեօպան, տղաներ իր հետ վերցրած, իջաւ մառանը: Տղաներից մէկը գինու մէկ մեծ անօթ՝ զմուռսով բերանը ամուր փակած, տնքալով դրեց մեզնից ոչ հեռու: Դժւարութեամբ բերանը բաց արեցինք, որն, ըստ Ստեօպայի՝ առնւազն երկու տասնեակ տարիներ թաղուած էր հողի տակ, եւ ոչ սովորական խմելու հեղուկ էր պարունակութիւնը: Հիւրերը գերադաս-

ցին համեմատաբար նոր՝ 5-6 տարուան գինիներ խմել: Իսկ այդ թանձրացած գինին երկրորդ նոյն հնութեամբ անօթով իրենց հետ տարան քաղաք, մէկը՝ իրենց, իսկ միւսը՝ Գիլխանդանեանի կարգադրութեան: Փառաւոր ճաշից յետոյ մեր հիւրերը մերժեցին հանգստանալ: Խնդրեցին տեսնել մեր խորացրած յեղափոխութեան արդիւնքները: Մեզ հետ վերցնելով երեք զինուած ընտիր տղաներ՝ մենք մեկնեցինք դէպի Աղսու: Կարգադրելով մէկ հարիւրեակ հնծեալներ մեզ հետեւելու:

Երբ մօտեցանք Սաղեանին եւ շուռ եկանք առաջին ոլորը, մեր առջեւ բացուեց Աղսուի լայնատարած դաշտը՝ տակաւին մխացող գիւղերով: Երկուսն էլ, հեռադիտակը աչքերին, դիտում էին աջ ու ձախ եւ գլուխները շարժում... «Կարո՞ղ ենք առաջ անցնել»: «Մինչեւ Քիւրդամիր երաշխաւորում եմ», «Կը բաւէ: Անցնենք»: Մեզ հետեւեց արդէն հասած հարիւրեակը, եւ մենք դիտելով տարածութիւնը հասանք Քիւրդամիր: Մեքենան թողնելով խճուղու վրայ՝ անցանք աջ, բարձրացանք բլրակի վրայ, եւ ես Ջափարիձէին ցոյց տուեցի զօրավար Մաղալովի հեծելագնդի գրաւած վայրը եւ մերոնց թաքստոցը, որտեղից նրանք, աննկատ առաջացել էին երկաթուղու բարձր լիցքի պաշտպանութեամբ անցնելով հեղեղատի լայն ու բարձր կամուրջի տակից, եւ գրոհել Ջափարիձէի հայրենակիցների կամաւոր մեր դէմ եկող գնդի վրայ եւ հողմացրիւ արել նրանց: Այդ ակնարկով ես նրան նշեցի թէ՝ «Այս ասելով՝ ես չուզեցի քո ազգային զգացումներդ վիրաւորել, սակայն այս պարագաներում չէինք սպասի, որ Մաղալովի պէս բախտախնդիր մէկը նման աններելի արկածախնդրութեան կմղէր, թերեւս հակառակ իրենց կամքի, այդ ութ հարիւր երիտասարդ վրացիներին, որոնք երկու հանդիպումներում ոչնչացան. միայն նրանց ծնողների անէծքները վաստակեցին նրանց այդ արկածախնդրութեան մղողները»:

-Իզուր ես կարծում, որ վիրաւորում ես ինձ: Ցաւում եմ, որ այդ գերիներին կենդանի էիք թողել եւ Բագու ուղարկել: Չպիտի խնայէիք մասնաւորապէս Մաղալովականներին: Եւ ինչպէ՞ս նա կարողացաւ ճողոպրել: «Որովհետեւ տմարդի եղաւ եւ առաջին փախչողներից: Երկար հետապնդեցին, բայց իզուր: Մեր նպատակն էր նրան կենդանի բռնել: Սակայն նրա փոխարէն վեցը սպաներից երեքը սպանուած են, իսկ երեքը՝ գերի, որոնք դատուեցին ռազմադաշտային դատարանով, որը նախագահում էր Ս. Ժգենտին, եւ մահուան դատապարտուեցին ու մեր ստորագրութեամբ գնդակահարուեցին»:

-Ի՞նչ կորուստ ունեցար այս յաղթանակում:

-Գործողութեան սկզբից մինչեւ այսօր երեսուն չորս սպանուած, երկու



խեղդուած՝ ալկոհոլի գազից, եւ քսանինը վիրաւոր, որոնք խնամւում են մեր հիւանդանոցում:

-Ի՞նչ պարագաներում են խեղդուել այդ երկուսը, հետաքրքիր է:

-Քիւրդամիրը գրաւելուց, զինուորներից մի մասը մտել էր Ջանումովների (Ջանումեան) հսկայ ալկոհոլի գործարանը՝ դիրքեր ընտրելու: Նկատելով գործարանում ալկոհոլի՝ օղու եւ գինու խոշոր տակառների շարքերը, մօտեցել եւ կամեցել էին իրենց ջրամանները օղիով լցնել, սակայն օղու փոխարէն անգիտակցաբար, շատ հաւանականօրէն, դուրս է եկել ալկոհոլ, որի կափարիչը բարձրացնելով՝ մէկը՝ պահել, իսկ երկուսը կռացել են ջրամանները լցնելու: Տակառը կիսով չափ է լինում, ու կռացած ժամանակ գազը ուշաթափ է արել, եւ գլխիվայր ընկել են տակառի մէջ եւ խեղդուել:

-Ուրեմն ալկոհոլն է նրանց խմել...

-Այո, զաւեշտական է, սակայն ցաւալի...

-Ի՞նչ ես կարծում, թշնամին որքան կորուստ ունեցած կլինի:

-Դժուարանում եմ ճիշտ թիւը ասելու, եւ անկարելի է, որը պահանջում էր ժամանակ եւ հնարաւորութիւն, որից մենք զուրկ էինք, եւ կարեւոր էլ չէ: Մեր ձեռքն է անցել երկու անգործածելի թնդանօթ, հինգ անթերի գնդացիր, հազար երկու հարիւր գերմանական եւ ռուսական հրացաններ եւ բաւականին ռազմամթերք. փամփուշտ եւ ռումբ թնդանօթի: Թուրքերից գերի չկա, իսկ վրացիներից՝ գերի եօթանասուն երկու: Սպանուածներ՝ մօտաւորապէս հարիւր ութսուն, որոնց թւում վեցը՝ սպա:

Մաղալովից վերցուած են եօթանասունի մօտ լաւ նժոյգներ, որոնք գործածւում են թշնամու դէմ:

Մեր հիւրերը գիշերեցին մեզ մօտ: Աւելորդ է ասել, թէ ինչ հաճելի ժամանակ անցկացրինք:

Միջանկեալ պէտք է ասեմ, որ Ջափարիձէի հետ մեր բարեկամութիւնը եւ մօտիկութիւնը սկսուել էր 1909 թւից, Բագւի բանտից, որտեղ բանտարկուած էինք: Միաժամանակ բանտարկուած էին Շահումեանը, Ստալինը, Վիշինսկին՝ բոլշեւիկներ, բժ. Լ. Աթարբէկեանը, Վահան Մինախորեանը եւ մի քանի ուրիշ անջատականներ, մերոնք՝ Ս. Մանասեանը, Վանփուշը, տողերիս գրողը եւ մի շարք ուրիշներ: Մենշեւիկներից Իսիդոր Ռամիշւիլի, Կանդելակի՝ յետագայում երկուսն էլ նախարարներ Վրաստանի Հանրապետութեան կառավարութեան: Հնչակեան Ղուկաս Մալենցեանը (Ազիրեան), որը Թուրքեստանի (Միջին Ասիա) բասմաչների ապստամբութեան ընթացքում՝ Էնւէր փաշայի ղեկավարութեամբ, Աղաբէկեանի (Աղաբեկով) հետ «Մերկացում-

ներ» յայտնի գրքի հեղինակը, ակտիւ եւ շատ կարեւոր դեր են խաղացել: Ազիրեանը «Էկօսօ»ի (Էկօնոմիչեսկի Սովետ) նախագահ, իսկ Աղաբէկեանը՝ չեկայի գծով: Ազիրեանի մօտ էին Էնւէրի կնոջ վերջին նամակը եւ աղջկա հետ նկարուած կնոջ լուսանկարը 12x16 սմ. մեծութեամբ: Այդ նամակը եւ լուսանկարը ես խնդրեցի նրանից, երբ նրա մօտ ապրում էի 1923թ.՝ ուրիշ ազգանուան տակ: Մալենցեանի աղջիկը իմ կինն է: Նա խոստացաւ ինձ տալ այդ փաստաթուղթը, սակայն իմ անակնկալ ձերբակալութիւնը 1924թ. Յունւար 12ին եւ փախուստս Տաշկենտից, հնարաւորութիւն չտուեցին հետս ունենալ այդ կարեւոր դոկումենտները՝ վերոյիշեալ նամակը, նկարը եւ իր գրի առած Էնւէրի սպանութեան մանրամասնութիւնները:

Յաջորդ օրը մեր հիւրերը մեկնեցին Բագու: Մեզ կարգադրելով շարունակել «յեղափոխութեան խորացումը»:

Աւերուած շրջանների թուրքերից ոմանք դէպի Գանձակ էին գաղթել, մի մասն էլ կենտրոնացել էին Լաճիջի ինը գիւղերում: Լաճիջը մի լեռնոտ, խոր ձորերով եւ խիտ անտառապատ շրջան է՝ սահմանակից Դաղստանին, Շամախուց հիւսիս- արեւմուտք՝ Զարգեարանին, իսկ արեւելքից՝ Մարիեւկա մալականների մեծ գիւղին՝ Քելւանից ուղիղ հիւսիս: Այդ շրջանը անցեալում էլ շարունակ անհանգիստ էր, աւազակաբարոյ թալաններով են զբաղուած եղել՝ շնորհիւ իրենց աշխարհագրական դիրքի: Քչերն են պարապած եղել հողագործութեամբ ազատ հողի պակասութեան պատճառով:

Զարգեարանից մեզ տեղեկացրին, որ «Լաճիջը եռուզեռի մէջ է, շարունակ կրակոցների ձայներ ենք լսում: Մեր յաճախակի ուղարկած հետախոյզները մեզ տեղեկացնում են, որ անտառների բացատներում կատարւում են զինավարժութիւններ եւ զանազան ռազմախաղեր»:

Տարաս Բուլբային (Մկրտիչ) եւ Լաճիջի շրջանին լաւատեղեակ մի քանի անձանց մեզ մօտ կանչեցինք՝ հանգամանօրէն ծանօթանալու տեղագրական պայմաններին:

Յաջորդ օրը եկան, եւ մենք զբաղուեցինք այդ չարաբաստիկ Լաճիջի խնդրով: Առանց յապաղման կարգադրեցինք անմիջապէս շրջանին լաւածանօթ, փոքր խմբերով, 5-7 հոգուց բաղկացած, խուզարկուներ ուղարկել զանազան գիւղերի ուղղութեամբ՝ ճիշտ տեղեկութիւններ բերելու: Թող աշխատեն խմբերը անպատճառ «լեզուներ» բերեն իրենց շրջաններից:

Երեք օր անց Լաճիջի շրջանի չորս գիւղերի ուղղութեամբ գնացող խուզարկուները հինգ հոգի տեղացիներ էին բերել: Նրանցից մէկը ուսուցիչ էր: Մեզ տեղեկացրին, որ «ձեր ստացած տեղեկութիւնները ճիշտ են: Մենք մեղք



չունենք, մեզ ստիպում են, որ պիտի զինւէք եւ վարժւէք: Տեսնում էք՝ մեր ազատութեան համար մեր դաղստանցի եղբայրները եւս եկել են օգնութեան»:

-Որքա՞ն է Դաղստանից օգնութեան եկողների թիւը:

-Շուրջ հազար՝ իրենց սպա ղեկավարներով, եւ լաւ զինուած:

-Եթէ ձեր հաղորդած տեղեկութիւնները ճիշտ լինեն, մենք ձեզ ազատ կարձակենք: Իսկ եթէ իմանանք, որ դուք ամեն ինչ չէք պատմել եւ ծածկել էք, բոլորիդ գնդակահարելու ենք:

-Մեր ասածները ճշտելու համար անհրաժեշտ է, որ դուք շփում ունենաք գիւղերի կամ կենտրոնի հետ, որ անկարելի է ձեզ համար: Մենք ասացինք այն, ինչ որ մեզ յայտնի է: Հարկաւ շատ բաներ էլ կարող են լինել, սակայն, մենք փոքր մարդ լինելով, մեզ տեղեակ չեն պահել:

-Դու ուսուցիչ ես, ինչպէ՞ս է, որ մանրամասնութիւններին ծանօթ չես: Չէ որ ձեր մէջ գրագէտներ եւ քեզ պէս պատրաստուածներ հազւագիւտ են, եւ դու ակտիւ աշխատանքների չե՞ս մասնակցում:

-Ես որովհետեւ պետական (ռուսական) դպրոցի ուսուցիչ էի՝ ռուսական կրթութեամբ, եւ յաճախ լինում էի ռուսական շրջաններում, ուստի ինձ անվստահելի են համարում եւ կարեւոր գործունէութիւնից հեռու պահում: Ես աշխատում էի պարենաւորման գծով եւ աշխատանքիս բերումով կենտրոնից գիւղ էի գնում, որ անտառում դարան մտած ձեր խուզարկուները ինձ գերեցին ընկերոջս հետ:

-Ի՞նչ ես կարծում, որքան կարող են լինել զինուած եւ կազմակերպուած ձեր ուժերը…

-Հաւանօրէն շուրջ տասը հազար՝ ներառեալ լեռնականները եւս:

-Չափազանցութիւն չէ՞ այդ թիւը:

-Աղդարայից, Քելւանից շատ զինուած փախստականներ են եկել: Մասամբ էլ Աղսուի շրջանից:

-Ի՞նչ էին պատմում այդ փախստականները իրենց քաջագործութիւններից, իրենց շրջաններից:

-Քաջագործութիւններից չէին խօսում, որովհետեւ փախչողը քաջ լինել չէր կարող: Խօսում էին իրենց շրջանների աւերածութեան՝ կոտորածների եւ անգթութիւնների մասին ու ժողովրդին գրգռում, վրէժի հրաւիրում:

-Լաւ. եթէ մենք ձեզ ազատ արձակենք, եւ դուք վերադառնաք, արդեօք ձեզ վտանգ չի՞ սպառնում, որ դուք անպատճառ ձեր ազատութեան համար գաղտնիքներ հաղորդած կլինէք:

-Մենք խօսել ենք ռուսերէն, իսկ այս չորս գիւղացիները մէկ բառ ռուսերէն չգիտեն: Իսկ այնտեղ մենք կարող ենք արդարանալ:

-Իր հերթին, իհարկէ, այստեղից լուրեր հաղորդելով ձերոնց: Սակայն, վերադառնալով, դուք աշխատէք համոզել, որքան հնարաւոր է, որ աննպատակ է ըմբոստութիւնը եւ անհնազանդութիւնը: Ինչպէս նախորդները, նոյնպէս Լահիջը կպատժւի, եթէ չենթարկւի եւ շարունակի ժողովրդին գրգռել Բագւի կառավարութեան դէմ: Լահիջի պատիժը աւելի ծանր է լինելու, որովհետեւ նա դաշնակիցներով է պատրաստւում մեզ վրայ յարձակւելու: Ասա՛ իրենց, որ մենք նրանց գրկաբաց կընդունենք երկու պարագաների մէջ: Թէ՛ զինւած ուժերով մեզ վրայ գան եւ թէ՛ որպէս հպատակւած եւ խաղաղ քաղաքացիներ, զէնքերը յանձնեն եւ վայելեն մեր անաչառ պաշտպանութիւնը:

-Այժմ ուշ է մեկնելու: Լաւ կընթրէք, հանգիստ քուն կառնէք եւ վաղ առաւօտեան կմեկնէք: Որեւէ երկիւղ եւ կասկած չունենաք: Բարի գիշեր:

Կերակրէք սրանց եւ հսկէք՝ ոչ ոք չվնասի սրանց:

Առաւօտեան մեկնելուն ուսուցիչը մօտեցաւ եւ յուզւած շնորհակալութիւն յայտնեց: Նա չէր սպասում, որ կենդանի տուն էր վերադառնալու… Նրանք մեկնեցին հինգ զինւած տղաների պաշտպանութեամբ մինչեւ իրենց սահմանները եւ ազատ արձակւեցին:

Կարգադրեցինք անմիջապէս պատրաստի վիճակի մէջ դնել համապատասխան ուժերը՝ Լահիջը խելքի բերելու համար: Մկրտչին տրամադրւեց չորս գնդացիր, համապատասխան ռազմամթերք եւ յանձնարարւեց տեղ հասնելուն պէս երկու գումարտակները պատրաստ վիճակում պահել, սպասել ազդանշանի յարձակման ըստ իր գիտցած կէտերում: Երկու գումարտակների ներդաշնակ գործունէութեան համար նշանակեցինք աւագ գլխապետ Յովհաննէս Մելիքեանին, որը, իր հետ վերցնելով գնդացիրների ութը մասնագէտներ, մեկնեց:

Հեծելագունդին յանձնարարեցինք քաղաքի եւ շրջանների պաշտպանութեան գործը, որովհետեւ նրանք լեռնոտ եւ անտառապատ Լահիջում անելիք չունէին: 20րդ եւ Շամախիի գումարտակները լրիւ կազմով հրահանգ ստացան անյապաղ շարժւելու Լահիջի վրայ: Մէյսարի, Ղոնաղքեանդ եւ Մարիեւկա շարժւեց Շամախիի գումարտակը՝ փոխգլխապետ Ռուբէն Աւագեանի անմիջական հրամանատարութեամբ, երկու դաշտային եւ երկու լեռնային թնդանօթներով եւ վեցը գնդացիրներով: Նոյն ժամին մեկնեցինք մենք եւս՝ երկու դաշտային եւ չորս լեռնային թնդանօթներով ու վեցը գնդացիրներով: Մինչեւ Քելւան՝ 20րդ եւ Մարիեւկա՝ Շամախիի գումարտակներն



անցան հանգիստ եւ ցերեկով: Այդ երկու կէտերում գիշերեցինք, յաջորդ առաւօտեան վաշտապետների հետ միասին մենք առաջացանք հնարաւորութեան սահմաններում՝ դիտելու եւ ծանօթանալու շրջապատի եւ Լահիջի սահմաններին: Տեղի վրայ մենք կազմեցինք տեղադրութիւն մեր սպաների համագործակցութեամբ: Քելւան վերադարձին մեր ծրագրի մասին անմիջապէս հաղորդակից դարձրինք եւ Շամախիի գումարտակին եւ Զարգեարանցիներին: Կարգադրեցինք յառաջխաղացումը եւ մօտեցումը Լահիջին կատարել միայն գիշերով, արագ, առանց թոհուբոհի, առանց կրակներ վառելու եւ ծխելու թէ երթի եւ թէ հանգստի ժամանակ: Իսկ Քելւանում եւ Մարիեւկայում նշանակել մարդիկ, որոնք գիշեր ու ցերեկ կրակներ վառեն այնպիսի կէտերում, որ հեռուներից, մասնաւորապէս Լահիջից տեսնւեն: Երկու գումարտակների միջեւ կապը պահւում էր շղթաների միջոցով եւ արագ:

Գիշերւան ժամը 9ին կարգադրեցինք առաջանալ, եւ երկու գումարտակները միաժամանակ շարժւեցին դէպի Լահիջ, որի ուղղութեամբ առաջանալը հնարաւորութիւն տւեց նոյն ձեւով կապ պահպանել եւ զարգեարանցիների հետ. նման յարմարութիւնը մեզ հնարաւորութիւն տւեց ներդաշնակ միակերպ գործողութիւնների:

Մենք մեր նպատակին հասել էինք: Կասկած չկար, որ ուսուցիչը, տեղ հասնելով, մեր պատուէրները նրանց հաղորդել էր՝ որ մեր կողմից որեւէ շարժման տրամադրութիւն չէր նկատել, որ մենք սպասում ենք լահիջցիներից դրական պատասխանի, որ մենք մտադիր չենք նախայարձակ լինելու. դա, անտարակոյս, որոշ չափով լահիջցիներին թմրեցրել էր, եւ մեր անակնկալ հարձակումը նրանց համար անսպասելի էր:

Նշանակւած կէտերը մենք գիշերով գրաւեցինք աննկատելի: Միայն լուսաբացին յարմարաւոր բացատ փնտռեցինք դաշտային թնդանօթների յարմարեցման համար: Լեռնային թնդանօթները եւ գնդացիրներն արագ կերպով իրենց համար յարմար կէտեր արդէն ընտրած եւ դասաւորած էին: Շղթաների միջոցաւ արագօրէն մեր հարցերի դրական պատասխան ստանալով՝ տւեց ազդանշանը ընդհանուր յարձակման. արեւելքից՝ Շամախիի, հարաւից 20րդը եւ արեւմուտքից՝ Զարգեարեանի գումարտակները: Այդ անակնկալ յարձակումը, այդքան մօտիկից, լահիջցիներին շշմեցրել էր: Բոլոր մասերին պատւիրւած էր գտնել դաղստանցիների կենտրոնավայրը եւ հնարաւորութիւն չտալ նրանց որեւէ շարժում կատարելու: Միաժամանակ արեւելքից եւ հարաւից սկսեցին գոռալ 10 թնդանօթները, որոնց արձագանքը, տարածւելով անտառապատ լեռներն ու խոր ձորերը, մի զարհուրելի, աններ-

դաշնակ երաժշտութիւն էր ստեղծել, մանաւանդ երբ ամեն կողմից սկսեցին գնդացիրների կափկափոցը եւ հրացանների համազարկերը եւս միանալ թնդանօթների գոռոցներին: Լահիջից սկսեցին ծուխ ու բոցեր բարձրանալ: Զանազան ուղղութեամբ շտապ, զինուած եւ անզէն մարդիկ վազվզում էին, սակայն մեր դիպուկ գնդացիրները շատերին հնարաւորութիւն չէին տալիս հեռուները վազելու, եւ գլորւում էին վիրաւոր կամ սպանուած:

20րդ գումարտակի առաջին վաշտում, որը կապուած էր Զարգեարեանի գումարտակների հետ, նկատում են չէրկեսկա հագած խմբեր, որ արագօրէն աշխատում են յարմարաւոր դիրքեր մտնել եւ դիմադրել: Սակայն շատ ուշացած էին: Առաջին վաշտի գնդացիրները եւ համազարկերը շատերին զրկեցին իրենց նպատակներից: Վաշտը, ըստ տրուած հրամանի, այդ լեռնեցիներից ձեռք չվերցրեց եւ նրանց անընդհատ պահեց անդադար կրակի տակ: Շղթաները սղմւում եւ առաջանում էին ճնշումը ուժեղացնելով: Լահիջը ազատ էր միայն հիւսիսից դէպի Դաղստան, որի ուղղութեամբ սկսեցին դժոխային կրակից պաշտպանութիւն փնտռել: Նկատելով այդ՝ անմիջապէս թնդանօթները կարգադրութիւն ստացան այդ ուղղութիւնը նշանակէտ դարձնել: Դատարկւող գիւղերը անմիջապէս գրաււում էին վաշտերի կողմից: Եւ ուշացածները աւինահար էին արւում, բացառութեամբ կանանց եւ երեխաների, որոնց վերաբերմամբ նախօրօք խիստ կարգադրութիւն էր արուած: Վերջինները խմբերով տեղաւորւում էին ապահով կացարաններում եւ հսկողութեան տակ առնւում, մասնաւորապէս տեղացի զինւորների վրէժխնդրութիւնից: Անարգ թաթարը այդպէս չէր վարւել տեղացի հայ կանանց եւ երեխաների նկատմամբ:

Լահիջը եօթը գիւղերով գրաւուեց ոմանք՝ ծուխ ու բոցերի մէջ: Հարիւրաւոր զինուած եւ անզէն գերիներ բերւեցին: Զինուած էին շատերը տասնութերորդ դարու զանազան զէնքերով եւ որսորդական հրացաններով, որոնցից գեղեցիկները թանգարանների զարդ կարող էին լինել, մինչդեռ այդ զէնքերով նորագոյն զէնքերի դէմ էին պատրաստուել պայքարելու…

Գերիների մէջ նկատեցինք մեր նախածանօթ ուսուցչին՝ Շիրւանսկուն՝ իր ընտանիքով: Կարգադրուեց առանձնացնել եւ խնամել: Գիշերուան ապահովութեան մասին կարգադրութիւններն անելուց վերջ, կանչեցինք Շիրւանսկուն, որը ներկայացաւ իր ռուս կնոջ եւ երկու աղջիկ երեխաների հետ: Նրան կարգադրուեց տեղացի քիչ շատ բարեմիտներից կազմել ժամանակաւոր խորհուրդ եւ անմիջապէս անցնել աշխատանքի: Հիւսիսում գտնուած երկու գիւղերը, որոնք համեմատաբար քիչ էին տուժել եւ տակաւին գրաւուած չէին,



ուսուցիչ Շիրւանսկին խոստացաւ եւ երաշխաւորեց նրանց հնազանդութիւնն ապահովել: Կազմուեց խորհուրդ 17 հոգուց բաղկացած՝ ուսուցիչ Շիրւանսկու նախագահութեամբ: Սիմիօն Ժգենտին մէկ վաշտ զինւորներով, երկու գնդացիրով եւ երկու լեռնային թնդանօթներով մնաց՝ շրջանը կարգի բերելու եւ խորհուրդներ կազմելու:

Մենք, վերադառնալով Շամախի, շրջանների կազմակերպութեան մասին սկսեցինք մտածել: Գաւառի բոլոր մասերը խաղաղուած եւ իրենց առօրեայ աշխատանքներին էին լծուած, որոնք տեղից տեղ չէին շարժւել: Եղան վերադարձողներ եւ լծւեցին աշխատանքի: Լքուած գիւղերի բոլոր ցորենի, գարու հասունացած արտերն արագօրէն հնձւեցին եւ կալւեցին իրար օգնութեամբ: Անմասն չմնացին եւ վերադարձող թուրքերից ոմանք: Տարօրինակ է իր ներողամտութեամբ հայ ժողովուրդը: Կարծէք թէ նախընթացը մոռացած՝ նա տեղ-տեղ նոյնիսկ օգնութեան ձեռք երկարեց իր երեկի հայասպան եւ թալանչի հարեւան թուրքին:

Գաւառի բոլոր ծայրամասերն ապահովեցինք ըստ կարեւորութեան եւ պահանջի՝ զինւորական ուժերով: Բոլոր շրջանները կապւեցին դաշտային հեռախօսային կապերով: Կեանքը իր բնականոն ընթացքի մէջ մտաւ: Կարամարեանի կռիւները սկզբնական շրջանում ընթանում էին ի նպաստ մերոնց, սակայն շնորհիւ երկպառակութիւնների եւ աններդաշնակ գործակցութեան, դրութիւնը փոխւում է ի նպաստ թշնամու:

Յուլիսի կէսերին մենք կենտրոնից ստացանք շտապ հրահանգ՝ «Անյապաղ շարժւել Կարամարեան եւ ստանձնել ճակատի հրամանատարութիւնը, խաղաղեցնել ըմբոստացած 18րդ գումարտակը եւ ժամանակաւորապէս պահել Ձեր հրամանատարութեան ներքոյ»: Մենք խճուղիով կանոնաւոր շարքերով տեղ հասանք եւ անմիջապէս անցանք դասաւորման գործին: Շամախիի ապահովութեան համար մենք թողել էինք Զարգեարանի երկու գումարտակները Մկրտչին՝ Տարաս Բուլբային, եւ Տէր Զաքարին՝ ընդհանուր հրամանատարութեամբ Վանեա Մելիքեանի (տեղակալ): Մենք գրաւեցինք Կարամարեան գիւղի դիմաց բոլոր բարձունքները: Հեծելագունդը միայն դասաւորելով լեռնալանջում դէպի հարաւ՝ դաշտավայրին հսկելու համար:

Երբ կանչեցի 18րդ գումարտակի գումարտակապետ, գլխապետ Ռ.Խոսրովեանին, եւ յայտնեցի կենտրոնից ստացուած հեռագրի բովանդակութեան մասին, նա ինձ պատասխանեց, որ գումարտակը մի քանի բախտախնդիր անհատների պատճառով ըմբոստացել եւ ոչ ոքի չի ճանաչում, որոնք գործում են ինքնագլուխ եւ ըստ իրենց տրամադրութեան… Ոչ գնդ. Ղազա-

րեանի, ոչ Համազասպի յորդորները ոչ մի ազդեցութիւն չունեցան, այժմ էլ նստած չեն ենթարկւում ոչ մի կարգադրութեան եւ խորհրդի: Բացատրելով 20րդ գումարտակին վերեւ յիշւած ըմբոստութեան մասին՝ կարգադրեցինք կազմ ու պատրաստ դրութեան մէջ լինել եւ սպասել հետեւանքին ու հրահանգի: Վերցնելով 25 ընտիր տղաներ՝ մենք մօտեցանք 18րդ գումարտակին, այնտեղ, որտեղ ըմբոստների կենտրոնն էր: Մեզ նկատելով՝ նրանք որեւէ շարժում չկատարեցին եւ նստած ծխում եւ շաղակրատում էին: «Այսպէ՞ս են ձեզ դաստիարակել, որ երբ ձեր հրամանատարները մօտենում են, դուք, անպատկառօրէն փռւած, որեւէ յարգանքի նշան չէք ցոյց տալիս»: «Մենք հրամանատարներ չունենք. մենք ենք մեր հրամանատարը եւ ոչ ոքի չենք ճանաչում»: Խօսողները Շնհերցի Համբօն եւ Թունին էին, երկուսն էլ՝ կրտսեր ենթասպա ռուսական ցարական բանակի: «Միթէ ձեզ չեն ծանօթացրել ռազմադաշտային օրէնքներին, թէ ձեզպէսներին ի՞նչ պատիժ է սպասւում նման անթոյլատրելի ըմբոստութեան համար պատերազմի դաշտում կռւի ընթացքում: «Անցան էն օրերը եւ ձեզպէսների տիրապետութեան ժամանակները»: Մենք հրամայեցինք կանգնել ոտքի եւ լսել ինչ որ կհրամայւի, առանց աւելորդ սակարկութիւնների… մեր հրամայողական տոնը նրանց մղեց մի յանդուգն քայլի եւ երկուսով միաժամանակ խլեցին հրացանները եւ դեռ հրացանները մեզ չուղղած՝ երկուսով էլ գետին տապալւեցին Ղալաչոնց Գեւոյի երկու գնդակներից: Իսկ 25 տղաները տասնոցները ուղղած միւսներին ստիպեցին զինաթափւել: Գնդակների ձայնից արդէն շարժւել եւ մեզ էին մօտեցել 20րդ գումարտակի երկու վաշտերը՝ հրացանները պատրաստ վիճակում առաջանալով: Վերոյիշեալ երկուսի մահով վերջացաւ ամեն ինչ, եւ գումարտակը, ներողութիւն խնդրելով իրենց գումարտակապետ Ռ.Խոսրովեանից, իր պատրաստակամութիւնը յայտնեց անշեղօրէն կատարելու թելադրւած կարգադրութիւնները:

Ապագայ անակնկալներից խուսափելու համար մեր կարգադրութեամբ 18րդ գումարտակը վաշտերով բաժանւեց 20րդ գումարտակի շղթայի մէջ ընդ մէջ: Խնդիրը վերջացնելով՝ իջանք կենտրոն, որտեղ Ռոստոմը, Համազասպը, գնդապետ Ղազարեանը, անտրամադիր նստած, շրջապատւած մի շարք սպաներով, խօսում էին օրւայ անցուդարձի մասին, լսել էին եւ մեր կատարածի մասին, որ ոմանց մտահոգութիւն էր պատճառել: Բացատրութիւնները միանգամայն փարատեցին նրանց կասկածանքները գալիք անախորժութիւնների մասին:

Վերադառնալով՝ մենք սկսեցինք շօշափել թշնամու դիրքերը: Մեզ պա-



տասխանում էին թնդանօթի եւ գնդացիրների կրակներով երբեմն: Նկատւում էր շարժում Գէօգչայի ուղղութեամբ: Մեր մարտկոցներին պատւիրեցինք դէպի Գէօգչայ շարժւող թշնամուն առնել խիստ ռմբակօծութեան տակ, որ դեռ հնարաւոր էր լուսով կատարել, թշնամին ցրիւ էր գալիս, սակայն ուղղութիւնը շարունակում էր:

Մեզ համար միանգամայն անսպասելի, դեռ կէսգիշերից քիչ անց, լուր ստացանք, որ գնդ. Ղազարեանը, Համազասպը իրենց երեք գումարտակներով նահանջել են դէպի Աղսու: Լուրը խստիւ արգելեցի տարածել: Կարգադրեցի Ս. Նաւասարդեանին վերցնել երկու-երեք հոգի, անմիջապէս իջնել կենտրոն եւ ստոյգ տեղեկութիւն բերել: Իսկ մենք հրահանգեցինք մարտկոցներին ռմբակոծել գիւղն ամեն ուղղութեամբ: Շատ չանցած՝ իրարանցում ու խուճապ ստեղծւեց գիւղում եւ գնդացիրների ու համազարկերի անդադար կրակի տակ մէկ վաշտ առաջացաւ եւ գիւղ մտաւ առանց կորուստի: Ստացանք երկտող Ռոստոմից՝ Պալի բէկի միջոցաւ (Դումանի կրտսեր եղբայրը). «Սիրելի Եղիշէ, խնդրում եմ հեծելագունդը ամբողջ կազմով տրամադրես Պալիին, որը պիտի շտապի փրկելու պաշարումից Ամիրեան Թաթոսին»: Գրողը Ռոստոմն էր, որին մերժել չէր կարելի, սակայն Թաթոսի համար զինւորներ զոհել մեղք էր… Հեծելազօրը արագութեամբ սլացաւ կատարելու Ռոստոմի կարգադրութիւնը: Հասնում են ժամանակին, քիչ էլ եթէ ուշանային՝ թերեւս անհնար լինէր նրան փրկել: Ամիրջանը, Սամսոնը եւ Յարութիւնը իրենց հարիւրեակներով հրաշք են կատարում եւ, փշրելով թշնամու շղթան, հարւածում: Պատմում էր Պալին Աղսուում, երբ հանդիպեցինք: Դուրս են բերում ե՛ւ ժողովրդին, ե՛ւ Թաթոսին՝ իր 120 տղաներով, եւ անցնում խճուղի՝ երկար ժամանակ հեծելագնդի պաշտպանութեան տակ: Երբ արդէն ժողովուրդն անցել էր վտանգի սահմաններից, եւ մանաւանդ Ամիրեանը իր 120 տղաներով էլ նրանց հետ էր, ուստի յայտնում են Պալիին, որ «մենք պիտի վերադառնանք մեր հրամանատարի մօտ», փոխանակ Պալին պատասխանելու պատասխանում է Թաթոսը. «Այժմ ես եմ ձեր հրամանատարը, պիտի մնաք ինձ մօտ»: Ամիրջանը պատասխանում է նրան. «Դու քեզ չես կարողանում կառավարել, ինչպէ՞ս կարող ես մեզ կառավարել»: Թաթոսը բարեբախտաբար, հակառակ իր յախուռն բնաւորութեան, լռում է՝ զգալով, թէ որոնց հետ գործ ունի, եւ շնորհիւ Պալիի, որին գիտէին իմ մօտիկ ընկեր լինելը, տղաները շուռ են տալիս ձիերի գլուխները եւ խճուղու ձախ կողմի լեռնոտ մասերով մեզ մօտ գալիս:

Ստ. Նաւասարդեանը վերադարձաւ եւ յայտնեց մեզ, որ Կենտրոնը դա-

տարկ է, որեւէ միաւոր այնտեղ գոյութիւն չունի, շտաբի դռան քարի վրա Ռոստոմը նստած է՝ ձեռքը ծնօտին յենած, իսկ բժ. Բագրատ Այւազեանը, կողքին կանգնած, խնդրում է, պաղատում Ռոստոմին շարժուել, սակայն Ռոստոմը չի շարժւում տեղից եւ պատասխանում է, թէ Եղիշէն վերեւում է, ես նրան չեմ կարող թողնել եւ հեռանալ: Իսկ ներսում մեր կառքն է, կառապանը եւ զինուած չորս տղաներ: Առանց ժամանակ կորցնելու ձին նստած ցած իջա եւ իրօք տեսայ նոյն դիրքով Ռոստոմը նստած, բժիշկն էլ՝ կողքին: Ինձ նկատելով՝ բարձրացրեց գլուխը եւ յուզուած տոնով ասաց. «Եկա՛ր»: Նոյնպէս յուզուած, Ռոստոմին այդ դրութեան մէջ այս զարհուրելի պայմաններում տեսնելով, կանչեցի կառապանին, խիստ կարգադրեցի, որ անմիջապէս կառքը լծի եւ ճանապարհին առանց կանգ առնելու, որքան կարող է արագ Ռոստոմին բանակին հասցնի: «Իսկ դո՞ւ»: «Իմ մասին բնաւ չմտածէք: Թշնամին մեզ գերել չի կարող»: Նստեցնելով կառքը՝ չորսը հեծեալներին էլ պատուիրեցի անբաժան հետեւել պ. Ռոստոմին, «որի համար պատասխանատու էք», եւ մեկնեցին: Մենք վերադարձանք մտածելու գալիքի մասին: Ի՞նչը ստիպեց եւ ինչո՞ւ կատարուեց այդ անակնկալ նահանջը: Եւ ինչո՞ւ մեզ իմաց չտուեցին գաղտագողի նահանջի դիմեցին: Ուշ ժամին, արեգակը մայր մտած, ստացայ գնդ. Ղազարեանից ռուսերէն գրուած երկտող. «Մենք նահանջեցինք, աշխատէք դուք եւս, ըստ ձեր յարմարութեան, նահանջել Աղսու: Ստորագրութիւն»:

Լոյսով մենք չէինք կարող աննկատելի նահանջել: Սպասեցինք մինչեւ մութն ընկնելը եւ կարգադրեցինք անաղմուկ, հանդարտ եւ առանց շարքերը խանգարելու, առանց խուճապի նահանջել հարաւային լեռնալանջով, որ ամեն ինչ տեսանելի լինի մեզ համար: Նախ մէկ վաշտ Շամախիի գումարտակից նշանակեցինք առաջապահ, ապա 18րդ գումարտակը: Նրանց հետեւում էին Շամախիի երեք վաշտերը եւ ապա 20րդ գումարտակը, որին խստիւ պատուիրեցինք՝ եթէ թափուած զէնքեր լինեն, հաւաքեն եւ ոչինչ չթողնեն: Իսկ հեծելագունդը հրահանգ ստացաւ հետեւելու լեռնային մասով՝ թշնամին մեզ ձախից յանկարծակիի չբերելու համար: Մենք ամբողջ գիշեր դժուարին պայմաններում անցանք այդ լեռնաթղթան՝ անջրդի, օձերով լի, կարիճներ՝ ամեն քարի տակ, յոգնած, ծարաւ, սակայն ուտելիքը առատ էր, մանաւանդ գիւղը մտած վաշտը ահագին քանակութեամբ խակ ու հասած առատ պտուղ է բերել, որ բոլորին էլ բաժին հանեցին, հաց եւ պանիր բոլորն ունէին, բացի 18րդ գումարտակից, որին 20րդ գումարտակը իրեն բաժնեկից դարձրեց իր ունեցածից: 18րդ գումարտակը իր ունեցած չորս գնդա-



ցիրները թողել էր խոտերի մէջ՝ որոնք խոնաւութեան պատճառով դարձել էին անգործածելի: Նրանց հետեւող Շամախիի եւ 20րդ գումարտակները, գնդացիրները եւ մի քանի տասնեակ հրացաններ, փամփշտակալներ հաւաքելով, առաջանում են: Այդ անջրդի լեռնաշղթան մենք անցանք զարհուրելի պայմաններում եւ լուսաբացին իջանք Քալալիի դաշտավայրը եւ կանգ առանք Քալալիի արեւելեան կողմից անցնող Գեարդանչայի աջ ափին: Ջուրը պղտոր էր ըստ երեւոյթին վերին լեռնամասերում տեղացող անձրեւների պատճառով: Սակայն դա արգելք չեղաւ, որ զինուորները հանուէին եւ ջուրը թափուէին անմիջապէս՝ տօթի, փոշու եւ ծարաւի հարկադրանքի պատճառով:

Բոլոր տղաները լողացան, եւ հանգիստ առնելուց յետոյ մենք շարունակեցինք երթը դէպի Աղսու, որտեղ բանակել էին նախորդ օրը նահանջողները՝ զօրք եւ ժողովուրդ: Նոր էինք անցել Գեարդանչայի կամուրջը, հետեւակը առաջ էր անցել, իսկ մենք հեծելագնդի հետ հետեւում էինք նրանց՝ միաժամանակ ապահովելով կանոնաւոր նահանջը թշնամու անակնկալ յարձակումներից: Հեռւում՝ խճուղու ձախ կողքով քարքարուտներով քայլող վեց անձեր նկատուեցին: Երբ մօտեցանք, անճանաչելի էին՝ ոտքից գլուխ ծածկուած փոշով: Զարհուրեցի, երբ նկատեցի Ռոստոմին, բժ. Բագրատին առջեւից եւ նրանց հետեւող չորս զինուած տղաներին: Մենք կանգ առանք: Երբ այդ իգդիրցի չորս տղաները նկատեցին իմ՝ զայրոյթով մօտենալը իրենց, Տիգրանը, որ գլխաւորում էր նրանց, սարսափած մօտեցաւ. «Եղբայր, Եղիշէ, մենք մեղք չունենք, մենք անզօր էինք»: Ռոստոմը մեղմ եւ հայրական համոզիչ տոնով զինաթափ արեց եւ իր քաղցր ժպիտը շուրթերին՝ ասաց. «Սրանց ոչինչ չասես եւ երբէք չմտածես որեւէ պատժի մասին»: «Ո՞ւր է կառքը, եւ ո՞ւր են ձիերը»,- դարձա տղաներին: Նրանք ոչինչ չպատասխանեցին: «Դու դարձեալ նրանց ես հարցնում, կառքը ես տուեցի քահանային, իր կնոջը եւ հարսին՝ երկու փոքրիկ երեխաներով»: «Մի՞թէ Ձեզ համար տեղ չմնաց կառքում: Իսկ ձիե՞րը»: «Նրանց էլ չորս կանանց՝ իրենց գրկի երեխաների հետ միասին»: Ի՞նչ կարելի էր ասել. իմ դիմաց անզուգական քրիստոսատիպ Ռոստոմն էր:

Երթային խոհանոցի հետ քայլող անբեռն ձիերից վեցը հատ յարմարեցուեց եւ տրամադրուեց Ռոստոմին, բժ. Բագրատին եւ չորս տղաներին՝ նրանց խստիւ պատուիրելով՝ առանց կանգ առնելու եւ որեւէ դէպքում ու պայմաններում թոյլ չտալու պ. Ռոստոմին վար իջնելու ձիուց եւ որեւէ մէկին տրամադրելու ձին: «Ձեր կեանքով պատասխանատու էք»... Ռոստոմը նայեց ինձ:

Գլուխը շարժեց, թուաց ինձ՝ շատ անբաւական իմ կարգադրութիւնից։ Սակայն ցտեսութիւն ասելով՝ առաջ անցան։ Մենք, շրջապատը մանրազնին դիտելուց եւ թշնամու որեւէ շարժում ու հետապնդում չնկատելով, կարգադրեցինք նստել եւ ապա շարունակել երթը։

Ռոստոմը մեզանից շատ առաջ էր տեղ հասել։ Մօտ էր արեւամուտը, երբ մենք մօտեցանք Աղսուին։ Մեզանից մէկ ժամ առաջ հասել էր մեր զօրաբաժինը, եւ մէկ մասը արդէն լողացել Աղսու գետում եւ մէկ մասը նոր էր գետ մտնում։

Նախօրօք մեր կողմից ուղարկուած ուսանողական ջոկատը Ստեօպա Նաւասարդեանի եւ Վարդգէս Յակոբեանի գլխաւորութեամբ, ճաշի պատրաստութեան համար ժամանակին հասել եւ պէտք եղած կարգադրութիւնները կատարել էին անթերի Աղսուի Մոզիկ կենտրոնական գիւղում, որտեղ եւ հանգստանում էին միւս զօրաբաժինները ու գաղթականութեան մի մասը, իսկ մեծ մասը բարձրացել եւ հանգստանում էր Սաղեան հայկական գիւղում։

Աղսուում լուր էր ստացել, որ թշնամին շրջանց կատարում է լեռնային մասով հիւսիսից եւ նրա նպատակն է կտրել մեր նահանջի ճանապարհը ու մեզնից առաջ մտնել Շամախի։ Մենք չգիտէինք ի՞նչ աղբիւրից էր ստացուած վերոյիշեալ տեղեկութիւնը, եւ ինչո՞ւ չէին դիմել միջոցառումի մեզանից քանութ ժամ առաջ տեղ հասած հրամանատարները՝ իրենց հանգստացած զօրաբաժիններով։

Մեզ համար յետագայում միայն պարզուեց, որ Ռոստոմի դիմումը հրամանատարութեան՝ բռնելու Գարդմանի (Գերտմնաւ) բարձունքները՝ կանխելու թեւանցք կատարող թշնամու ծրագիրը, չէին կատարել՝ պատճառաբանելով արագ նահանջը, եւ անիմաստ էին համարել նման միջոցառումները։

Երբ մենք մօտեցանք Աղսուի կամուրջին, Ռոստոմը, Վարդգէս Յակոբեանի եւ մի քանի ուսանող տղաներով շրջապատուած, մեզ էին սպասում։ Մենք կանգ առանք։ Տղաները իջան ձիերից, ես մօտեցայ Ռոստոմին՝ զինւորական պատշաճ կարգապահութեամբ։ Նա թոյլ տուեց զեկուցելու։ Կարգադրեց անմիջապէս բռնելու Գերտմնաւի բարձունքները, որտեղից սպասւում է թշնամու շրջանցքը։ Ես խնդրեցի Ռոստոմից մէկ ժամ ժամանակ տղաների հանգստի եւ ճաշի համար։ Նա ծայր աստիճանի յուզուած եւ երկու կաթիլ արցունքներ աչքերից սողալով ասաց. «Դո՞ւ էլ, Եղիշէ…»։ Չգիտեմ՝ ինչ նախընթաց էր տեղի ունեցել… Շատ խորհրդաւոր էր «Դո՞ւ էլ» արտայայտութիւնը։ Նկատելով Ռոստոմի երկու կաթիլ արցունքները՝ ես անկարող եղա ինձ զսպելու եւ իզուր էի աշխատում թաքցնել իմ յուզմունքը, հազիւ



շուռ եկայ եւ կերկերուն ձայնով կարգադրեցի շեփորել… արցունքն աչքերիս… Տասը րոպէ հազիւ լրացած՝ 20րդ գումարտակը զինուած պատրաստ վիճակում շարուեց կամուրջի երկու կողմը։ Կարգադրեցի հեծելազնդին անմիջապէս արագօրէն անցնել Գարդմանի արեւմտեան մասը ու բարձրանալ աւերուած ամրոցը եւ տարածուել դէպի հիւսիս՝ մինչեւ հետեւակի բարձրանալը իրեն փոխարինելու համար։ Կարգադրուեց Ստեօպա Նաւասարդեանին եւ Վարդգէս Յակոբեանին (Օհանջանեան) միջոցներ մտածել ճաշն ուղարկելու ամրոց հետեւակների համար։

20րդ գումարտակը կարգադրութիւն ստացաւ կարճ, սակայն դժուարին վերելքով հարաւից բարձրանալ ամրոց։ Մենք հեծելազնդի հետ շտապեցինք դէպի արեւմուտք՝ ժամանակին գրաւելու։ «Դու մի՛ գնա, սպասիր»… Սակայն ցտեսութիւն ասելով Ռոստոմին՝ մենք սրընթաց քառատրոփ շուռ եկանք դիմացի բլուրի թիկունքը, նոյն արագութեամբ շատ կարճ ընթացքում կանգ առանք Գարդմանայ պատմական ամրոցի արեւմտեան մուտքի առաջ եւ դանդաղօրէն սկսեցինք վերելք դէպի ամրոց։ Յղկուած եւ անհամար անտաշ թափուած քարերի միջով մեր ձիերը դժվարութեամբ էին քայլում։ Այդ դանդաղ ընթացքը ինձ յիշեցրեց մեր անցեալը, երբեմնի հզօր Գարդմանայ շրջանը եւ իր հզօր կոյր Սեւադա իշխանը. շտապում էի ժամ առաջ տեսնելու նրա ապարանքի աւերակները։ Գուցէ եւ այն վայրը, որտեղ Սահակ Սեւադա իշխանը, խարխափելով առաջացած, ընդունել էր մեր պատմութեան բացառիկ մէկ անձնաւորութեան՝ Գէորգ Մարզպետունի դիւցազնական հերոսին։ Անհնար էր չյուզուել, չարտասուել՝ դիտելով այդ ահռելի անառիկ ամրոցի մէկը միւսի վրա կուտակուած զանազան մեծութեամբ տաշուած, յղկուած քարերը։ Մենք, տեղ հասնելով, իջանք ձիերից։ Քիչ հանգստից յետոյ դասաւորելով տղաներին տիրող բարձունքների վրայ՝ ես սկսեցի շրջել աւերակների մէջ՝ ինքս էլ չգիտնալով ինչ էի փնտրում։ Անցնելով հիւսիսակողմը՝ ես ինձ գտայ ահռելի գահաւէժի վերնամասում։ Հիւսիսային մասում որեւէ արհեստական ամրութեան հետք գոյութիւն չունէր. երեւում էր, արեւմուտքից արեւելք լայն ու խոր անտառապատ, ժայռոտ ձորը, որը վերջանում էր արեւելքում մէկ մարտկոցով ամրոցի ծայրամասում հսկայական եւ լայն ու ամուր պարիսպով։ Արեւելքից բարձրանում էր եւ շրջափակում անտառապատ եւ ժայռոտ մի զանգուած, որ անհնար էր դարձնում որեւէ թշնամու մօտեցում արեւելքից։ Այդ անտառապատ ժայռի կրծքից բխում էր սքանչելի սառնորակ մէկ աղբիւր, որի դիմաց հետքերն էին մնացել մէկ աւազանի, որն ըստ երեւոյթին ժամանակին ծառայելիս է եղել որպէս ջրբա-

ժան: Քարուքանդ եղած աւազանի շրջակայքում գտնեցին մի քանի թրծուած կաւաշէն խողովակի կտորտանքներ: Կանչելով մի քանի զինուորների՝ կարգադրեցի աւազանի մէջը եւ շուրջը հնարաւորին չափ մաքրել. պարզուեց, որ, իրօք, ժամանակին դա եղել է ջրբաժան: Բացուեց խողովակի մէկ անցք աւազանից դէպի արեւմուտք, իսկ միւսը՝ դէպի հարաւ: Մենք անցանք հարաւ: Այս կողմում նոյնպէս արհեստական ամրութեան որեւէ հետք չնկատուեց: Ամրոցի կողքից բացւում էր նոյնպէս խոր ձոր, որտեղ նկատւում էին խաղողի որթատունկերի մնացորդներ վայրենացած վիճակում: Երեւում էին խոշոր կաղնու չորացած կոճղեր: Մացառապատ էր ձորը: Ջորով արդէն բարձրանում էին դժուարութեամբ մեր գումարտակները: Արեգակի ճառագայթների վերջին հրաժեշտին զօրաբաժինը տեղ հասաւ ու մեկնուեց հանգստանալու: Հեծելագունդը կարգադրութիւն ստացաւ ցած իջնելու եւ հանգստանալու՝ սպասելով նոր կարգադրութեան: Տղաները հանգիստ առնելուց յետոյ գրաւեցին իրենց՝ մեր կողմից նախօրօք նշանակուած դիրքերը:

Լուսաբացին ես սկսեցի մի քանի տղաներով շրջել արեւմտեան մասը: Ամրոցի վերից մինչեւ մուտքից քիչ վերեւ երեւում էին զանազան մեծութեամբ շէնքերի հետքեր-երկշարք, տեղ-տեղ դեռ գոյութիւն ունէին աստիճանների կիսաւեր մնացորդներ՝ շէնքերից թափուած եւ ծածկուած մամռապատ քարերով: Ըստ երեւոյթին այդ շէնքերը ժամանակին ծառայելիս են եղել որպէս զօրանոցներ: Մուտքի երկու կողմերում տակաւին չէին կորցրել իրենց ինչ լինելու տւեալները, որոնք աշտարակների մնացորդներ էին: Դրսից՝ կլոր, իսկ ներսից՝ անկիւնաւոր եւ բաւականին ընդարձակ: Դեռ մնացել էին մի քանի հրակնատներ՝ մուտքի դարպասը պաշտպանելու նպատակով: Աշտարակների եւ պարիսպների լայնութիւնը երեք ու կէս մետր հաստութիւն ունէր: Աշտարակների երկու կողմերից շարունակւում էին լայնանիստ տաշուած քարերից եւ շաղախով բարձրացող աւերակ պարիսպները: Արեւմուտքից էր միայն պարսպապատ Գարդմանի այդ հսկա, իր ժամանակին անառիկ բերդը: Արեւմուտքում եւ հարաւ-արեւմուտքում փռուած լայնատարած դաշտավայրում էին Աղսուի բազմաթիւ թաթարական գիւղերը: Ժամանակին, անտարակոյս, այդ բազմաթիւ գիւղերը պատկանելիս են եղել եւ բնակեցուած հայ գիւղացիութեամբ՝ Գարդմանայ հզօր իշխանութեան ենթակայ: Քիչ չէին եւ հիւսիսակողմի գիւղերը դէպի Լահիջ հասնող, որոնց թւում Ջարգեարանը եւ մի շարք այլ հայկական գիւղեր:

Ամրոցը շինուած էր եռանկիւնի միակտոր սարահարթի վրայ՝ հաւանօրէն տեղ-տեղ արհեստականօրէն հարթուած: Ամենալայն մասն է արեւելեան կողմը, որից յետոյ հարաւայինը, ապա հիւսիսը եւ ամենանեղը՝ արեւմտեանը, որտեղից եւ մուտքն էր պարսպապատ: Ամբողջ այդ սարահարթը 130-140 հազար քառակուսի մետր հազիւ լինէր: Հարաւային ձորում տեղ-տեղ տակաւին հետքեր էին նշմարւում շէնքերի, աւերակոյտեր, ցրիւ եկած տաշուած քարեր:

Բոլոր նշաններից երեւում էր, որ իշխանական դղեակը շինուած էր եղել հիւսիս-արեւելեան մասում: Այնտեղ մնացել էին եւ երեւում էին երեք մէկը միւսից մեծ դահլիճների հետքերը՝ մի շարք յարակից շէնքերով, եւ սալայատակ բաղնիք՝ մի քանի բաժանմունքներով:

Տակաւին տեղ-տեղ երեւում էին աղբիւրից դէպի բաղնիք հոսող ջրի խողովակներ՝ կաւից շինուած եւ թրծուած:

Գումարտակները դասաւորելուց եւ պատուէրներ տալուց յետոյ ես եւ ինձ հետ եղած հեծելազօրի տղաները վերադարձանք Աղսու՝ հանգստանալու:

Հեծելագնդի տղաները իրենց ձիերով գետը գնացին լողանալու եւ ձիերին լողացնելու: Մեր ուշադիր տղաները, որոնք մնացել էին Աղսու, ժամանակին ճաշի պատրաստութիւն էին տեսել եւ սպասում էին մեզ: Ես եւս լողացած, Լալայեանների այգին էի վերադառնում Ստ. Լալայեանի հետ, մեզ դիմաւորեցին մեր ուսանող տղաներից մի քանիսը՝ Արամ Ալչուջեանի գլխաւորութեամբ, որ, մօտենալով եւ ողջագուրւելուց յետոյ, յայտնեց բանաւոր Ռոստոմի կարգադրութիւնը: Այն է, որ ես Ռոստոմի կարգադրութեամբ պիտի բռնեմ Աղսուի բարձունքները՝ ապահովելու նահանջող թէ գաղթականութեան եւ թէ զօրաբաժինների նահանջը: Երբ ես հարցրի. «Ինչո՞ւ գրաւոր չես բերել սոյն կարգադրութիւնը»,- նա պատասխանեց, որ Ռոստոմն ասել է, թէ կարիք չկայ, յայտնիր իմ անունից, որ իմ կարգադրութիւնն է... «Իսկ ո՞ւր են իրենք»: «Նրանք ձեզ կսպասեն Սաղեանում կամ Շամախիում»: Հրաժեշտ առնելով՝ այդ վառվռուն տղաները բարձրացան դէպի Շամախի՝ կազմակերպելու գաղթականութեան նահանջը: Որպէսզի թշնամուց չնկատուի մեր հեռացումը դիրքերից, սպասեցինք մինչեւ մութն ընկնելը, ապա կարգադրութիւն ուղարկեցի գումարտակներին՝ կանոնաւոր եւ առանց շտապելու անաղմուկ վերադառնան Աղսու, որտեղ մենք սպասում ենք: Կէս գիշեր էր, երբ զօրաբաժինը տեղ հասաւ, որի համար սպասւում էր ճոխ եւ տաք ընթրիք:

Երկու ժամ հազիւ կարողացան հանգստանալ տղաները, երբ Քիլալի եւ Արարի ուղղութեամբ դրուած պահակները տեղեկացրին, որ թշնամին առաջանում է դէպի Աղսու ուղղութեամբ: Հեծելագունդը՝ 12 գնդացիրներով եւ

չորս լեռնային թնդանօթներով, կարգադրութիւն ստացաւ անմիջապէս գրաւելու Մոզիկի դիմացի բարձունքները մինչեւ գումարտակի հասնելը:

Մենք նախ կարգադրեցինք՝ անմիջապէս պարենաւորման վաշտը, երթային խոհանոցը եւ բժշկա-սանիտարային միաւորները պատրաստուեն առանց խուճապի եւ մեկնեն դէպի Սաղեան, առանց մէկ չնչին իր իսկ թողնելու ճամբարում, որպէսզի թշնամին չմտածի, որ մենք եւս փախուստ ենք տուել: Իսկ գումարտակները, բաւականին կազդուրուած, զինուեցին եւ գրաւեցին նշանակուած դիրքերը՝ իրենց թիկունքում ունենալով երկու դաշտային մարտկոցներ՝ կազմ եւ պատրաստ դիմաւորելու արշաւող թշնամուն: Ամեն ուղղութեամբ շտապ ուղարկուեցին հեծեալ եւ հետիոտն խուզարկուներ, որոնք, թշնամու բոլոր ուղղութեամբ շարժումները լաւ հետազօտելով, մեզ բերեցին ճիշտ ժամանակին տեղեկութիւններ: Ստանալով եւ համոզուած վերոյիշեալ տեղեկութիւնների կատարեալ ճշտութեանը՝ մենք մեր ուժերը դասաւորեցինք եւ սպասեցինք լուսաբացին, որն այնքան էլ հեռու չէր:

Նոր էր արշալոյսը շառագունել եւ արեգակի շողերը դեռ չէին արձակել իրենց առաջին ճառագայթները, երբ մենք նկատեցինք Քիլալի եւ Արար գիւղերի աւերակներից սկսեցին առաջանալ թշնամու շարքերը շղթաներով: Ութը դաշտային, չորս լեռնային թնդանօթների եւ երկու տասնեակ գնդացիրների անսպասելի որոտը, համազարկերի ներդաշնակ կրակը թշնամուն անակնկալի բերեցին, եւ թշնամին հազիւ, 150 քայլ առաջացած բաց դաշտով, թաղւեց մեր անսպասելի եւ տարերային կրակի անդադար հարուածների տակ: Առաջին անգամն էր, որ գումարտակներն առանց հրահանգի դուրս թափուեցին իրենց դիրքերից եւ ընկան ընկրկող թշնամու յետեւից: Գեղեցիկ էր տեսարանը, երբ գումարտակներն առանց խռնուելու եւ դադարի, կանոնաւոր տարածուած շղթաներով, թշնամու թողած սպանուած դիակները կոխկրտելով գրաւեցին Քիլալի, Արար եւ Դադալի աւերակ գիւղերը: Իսկ մեր քաջարի հեծելագունդը շատ հեռու հալածեց թշնամուն: Չգիտենք՝ որքան էր արշաւող եւ սպանուած թշնամու թիւը: Մենք խորը եւ հեռու չէինք կարող առաջանալ: Մեր հոգում ողբերգութիւն էր կատարւում: Մինչ մենք թշնամուն յետ էինք քշում, միւս կողմում մեր կանոնաւոր զօրաբաժինները գաղթականութեան հետ նահանջում էին: Ո՞րն էր արդեօք իրական: Մեր զօրքերի անպատիւ նահանջը գաղթականութեան հետ, թէ՞ թշնամու գլխիկոր փախուստը. ինչպիսի՞ նպաստաւոր առիթներ էինք մենք բաց թողել եւ ձեռքից տուել, պատճա՞ռը՝ որովհետեւ մենք չունէինք սրտցաւ զինուորական ընդհանուր հեղինակաւոր մէկ ղեկավարութիւն: Մենք գործում էինք զատ-



զատ եւ անկախ մէկս միւսից: Միակ հեղինակութիւնն էր Ռոստոմը: Սակայն, դժբախտաբար միւսները չլսեցին մեր աննման, անզուգական Ռոստոմին՝ խոր վիշտ պատճառելով նրան իրենց անտեղի եւ անժամանակ նահանջով՝ հակառակ այդ առաքելատիպ մարդու թախանձանքներին եւ երբեմն էլ պոռթկումներին...

Գարդմանի ամրութիւնները թողնելով, Զարգեարանի գումարտակից երկու վաշտ միացնելով Տէր Զաքարի գումարտակին՝ շտապ ուղարկեցինք Զարգեարանի եւ շրջանի հայ գաղթականութեան նահանջի ապահովութեան եւ օգնութեան համար: Այդ արի, նախկին ռուսական կայսերական բանակի աւագ ենթասպա քահանան պատւով կատարեց իր պարտականութիւնները եւ այդ շրջանի ամբողջ գաղթականութեանը ապահով հասցրեց եւ միացրեց ընդհանուր գաղթին Շամախիում:

Վերոյիշեալ՝ թշնամու հալածանքից եւ Զարգեարեան ուղարկուած ուժերի մասին մենք մանրամասնօրէն տեղեկացրինք Ռոստոմին ժամանակին: Յաջորդ օրը ստացա Ռոստոմից երկտող: «Գաղթականութիւնը ապահով եւ անկորուստ հասել է Շամախի: Համազասպի զօրաբաժնից երեք գումարտակներ պահել ենք Սաղեան: Սպասում եմ քեզ: Ստացել եմ բոլոր զեկուցագրերդ: Շնորհակալ եմ: Քո՝ Ռ.»:

Երեկոյեան մենք առանց աճապարանքի յետ քաշուեցինք եւ գիշերով Աղսու Սաղեան ոլորներով բարձրացանք ու լուսաբացին հասանք Սաղեան, որտեղ Ռոստոմը, Համազասպը, գնդապետ Ղազարեանը մեզ էին սպասում:

Մեզանից շատ վաղ տեղ էին հասել մեր երթային խոհանոցները եւ մտածել ճաշի մասին:

Սաղեանում Համազասպը եւ Թաթեւոս Ամիրեանը կրկին ընդհարուել էին. միայն շնորհիւ Ռոստոմի հեղինակաւոր միջամտութեան, տեղի չէր ունեցել անխուսափելին, եւ նրանք նստած էին զատ-զատ: Ես, հետս ունենալով 25 տղաներ, շտապեցի Ռոստոմի մօտ: Ձիերից իջնելով՝ մօտեցա Ռոստոմին: Ողջագուրուեցինք, նոյնը եւ Համազասպի ու գնդապետ Ղազարեանի հետ:

Թեւս անցնելով՝ Ռոստոմը քիչ հեռացրեց ու կարճ պատմեց Համազասպի եւ Թաթեւոսի միջադէպի մասին ու ինձ զգուշացրեց մենակ չլինել երբեք:

Բաժանուելով Ռոստոմից՝ ես մօտս կանչեցի Ղալաչոնց Գեւորգին եւ Բէյբութովենց Տիգրանին, որոնք իգդիրցիների ղեկավարներն էին, եւ յայտնեցի իրենց ստացածս խորհուրդի մասին: Տիգրանն անմիջապէս շտապեց 20րդ գումարտակի ճամբար եւ տեղեկացրեց գլխապետ Ռուբէն Աւագեանին սպասուելիքի մասին:

Քիչ հեռանալով դէմս կանգնեց Թաթեւոսը իր մի քանի համախոհներով: Ինձ դառնալով. «Դո՞ւ ես կարգադրել գիւղացիներին, որ ոչ ոքի առանց քո թոյլտուութեան զինի չտան»:

-Այո: Իմ կարգադրութիւնն է:

-Ով ես դու,- եւ ձեռքը դէպի իր ատրճանակը տարաւ, սակայն ձեռքը միայն կարողացաւ հասցնել, երբ իր արբանեակների հետ անմիջապէս զինաթափուեց, եւ Թաթեւոսը երկու բռունցք ստացաւ Գեւոյից, որը իմ սաստից միայն չշարունակեց:

Մինչ մի կողմից Ռոստոմն էր մօտենում, միւս կողմից Ռ. Աւագեանը (իմ օգնականը) մէկ վաշտի առաջն անցած լայն շղթայով եւ վազելով, շրջապատեցին բոլորին՝ հրացաններր պատրաստ եւ ուղղած ճամբարին, որտեղ տարածուած էին միմեանցից հեռու թէ Համազասպի եւ թէ Ամիրեան Թաթոսի զինուորները: Ռոստոմը, տեսնելով այդ տեսարանը, մօտեցաւ այն ժամանակ, երբ քարշ էին տալիս Թաթեւոսին եւ իր տղաներին՝ հեռացնելու ճամբարից: Ռոստոմը կռահեց՝ ինչ էր կատարուելու, եւ իր տիրական շեշտով՝ կարգադրեց բաց թողնել... զինաթափ էին եղել եւ միւսները Ռուբէնի հրամանով, ու շրջապատուել պահակներով: Ռոստոմն իր հովանաւորութեան տակ առաւ Ամիրեանին, եւ միասին գնացին դէպի Ամիրեանի իջավայրը. լուտանքներ թափելով Թաթեւոսի գլխին եւ զգուշացնելով, որ կրկնուելու դէպքում որեւէ միջամտութիւն չպասի, ասաց. «Դու լաւ հաշիւ չես արել, թէ ում դէմ ես դուրս եկել: Պատրաստուիր եւ անմիջապէս հեռացիր դէպի Բագու»: Կէս ժամ յետոյ Թաթեւոսը, զէնքերը ստանալով, մեկնեց: Ճաշի ժամանակ Ռոստոմը արգելեց միջադէպի մասին խօսել: Մեր կարգադրութեամբ սաղեանցիները բերել էին իրենց ամենաընտիր եւ հին գինիները, որից առատ բաժին տրուեց ամբողջ զինուորութեան: Ռոստոմը կարգադրեց գաղթից մնացած Սաղեանի մի քանի տասնեակ գիւղացիներին անմիջապէս մեկնել՝ հետները վերցնելով ամեն ինչ՝ ինչ որ հնարաւոր է: Մի քանի ժամ յետոյ Սաղեանը եւս դատարկուեց ազգաբնակչութիւնից: Ուշ գիշերին մեկնեցին Ռոստոմը, Համազասպը՝ իր զօրաբաժինով:

Մենք գրաւեցինք Սաղեանի բարձունքները՝ Աղսուի դաշտավայրին հսկող, սպասելով Ռոստոմի նոր կարգադրութեան Շամախիից:

Յաջորդ օրը երեկոյեան ստացանք սպասուող կարգադրութիւնը:

«Գաղթականութիւնը ապահով հասել է Ռեազան՝ մալականների մեծ գիւղը՝ Բագու տանող խճուղու վրայ: Մենք պէտք է անապարենք Բագու հասնելու որքան հնարաւոր է արագ, որովհետեւ համաճարակ է սկսուել եւ մի



քանի զոհեր տարել, որոնց թւում եւ մեր Ա. Արամեանին: Աշխատիր միանալու մեզ Շամախիում»:

Տէր Զաքարին կարգադրեցինք վերջին օրհնանքը կատարելու մեր կռիւներում ընկած զինուորների շիրիմներին, որոնք ամփոփուած էին Սաղեանի եկեղեցու բակում: Մեզ հետ եղած զինուորներով, համբուրելով ընկած ընկերների հողաթումբերը, հեռացանք: Թշնամին այդ բարձունքներում մեզ չանհանգստացրեց: Ամեն ինչ նախօրօք ուղարկած լինելով՝ մենք մայրամուտից մէկ ժամ անց կանոնաւոր եւ կարգապահ շարքերով թողեցինք Սաղեանը:

Երկու կիլոմետր չհասած Շամախի՝ բանակեցինք կանաչապատ բլուրներում: Պահակներ կարգւեցին ապահովութեան եւ հետախուզութեան: Ես շտապեցի Շամախի: Կէս կիլոմետր չանցած՝ երկու հեծեալներ քառատրոփ դէպի մեզ էին սլանում: Վատոն եւ Ալեքսանը իգդիրցի, շտապել էին ինձ տեղեկացնելու Ռոստոմի վարակման մասին: Առանց երկար լսելու մենք քառատրոփ հասանք Շամախի: Հիւանդանոցում ինձ դիմաւորեց բժիշկ Ա. Շէկ-Յովսէփեանը՝ յայտնելով, որ Ռոստոմի դրութիւնը լուրջ է: Վայրկեանապէս ներս գցեցի ինձ. չորս բժիշկներ մի քանի բուժակներ եւ գթութեան քոյրեր շրջապատել էին Ռոստոմին, եւ ամեն մէկը կատարում էր իրեն յանձնուած պարտականութիւնը: Ես Ռոստոմին գտայ թմրած վիճակում: Ամաններով ջուր էր դրուած օջախներում: Պահանջեցի ուժեղացնել կրակները եւ հականեխել հիւանդանոցի վաննաները, որոնք մնացել էին հնուց քաղաքային հիւանդանոցում: Բոլոր միջոցառումները կատարուեցին արտակարգ արագութեամբ: Ռոստոմին վաննա դրեցինք եւ սկսեցինք անդադար մերսում կատարել: Կոնեակ պահանջեցի, եւ դժուարութեամբ բացելով Ռոստոմի բերանը, մէկ գաւաթ լցրեցի, որը դժուարութեամբ կուլ գնաց: Բարձրաստիճան տաք ջուրը, անընդհատ մերսումը եւ կոնեակը ուշքի բերեցին մեր թանկագին հիւանդին: Հազիւ էի պահում արցունքներս, երբ մեր անզուգական Ռոստոմը աչքերը բացեց եւ շատ խորը շնչեց: Այդ գործողութիւնները շարունակեցինք առանց դադարելու: Մէկ գաւաթ եւս կոնեակ մօտեցրինք շրթունքներին: «Ինչպէ՞ս խմեմ այսքանը»: «Աւելորդ է սակարկութիւնը, պէտք է խմես»: Բժիշկները եւ բուժակները հերթով մերսումը շարունակում էին:

«Խոշտանգում էք ինձ,- նկատելով իմ յուզմունքը,- ե՞րբ եկար, վատ է տրամադրութիւնդ»: «Ինչո՞ւ պիտի լաւ լինի, քանի դու այդ վիճակում ես»: «Լաւ եմ զգում ինձ, անցաւ կարծում եմ»:

-Եթէ ենթարկուես ամեն ինչ կանցնի:

-Բռնութիւն է ձեր արածները:

-Ինչ ուզում ես անուանիր, էս բաժակն էլ խմիր:

Մենք նորոգեցինք բարձրաստիճան տաք ջուրը:

-Չեմ դիմանում շատ տաք է:

Բժիշկները ինձ նայեցին հարցական: «Ուշադրութիւն մի դարձրէք, շարունակէք ձեր գործը»: Ես մաքուր սպիտակեղէն բերել տուեցի իմ ունեցածից: Ռոստոմին դուրս բերինք վաննայից ու պառկեցրինք մաքուր հականեխուած անկողնում եւ արդէն ժամանակին պատրաստած ծեծուած սխտոր ու մի ափսէ մածուն դրեցինք սեղանի վրայ: Ռոստոմը մեծ ախորժակով կերաւ ամբողջը եւ մէկ բաժակ էլ առաջարկուած կոնեակը հաճոյքով խմեց առանց բողոքի: Նա փրկուած էր...

Սխտորով մածունը եւ կոնեակը շարունակուեց օրուայ ընթացքում:

Ռոստոմի բոլոր սպիտակեղէնները այրել տուեցի՝ իմ ունեցածներով փոխարինելով: Երեկոյան նա նստած էր անկողնում եւ շաղակրատում էր: «Լաւ խոշտանգեցիք ինձ... շնորհակալ եմ բոլորիցդ: Ո՞վ քեզ իմացրեց»: «Վատօն եւ Ալեքսանը»: «Ո՞ւր են նրանք»: «Բակում»:

-Կանչել տուր այդ ազնիւ տղաներին:

Վատօն ու Ալեքսանը ներս մտան զինուորական խրոխտ բարեւով եւ մօտեցան Ռոստոմին, նա գրկեց երկուսին էլ, համբուրեց ճակատներից եւ հարց տուեց, ո՞վ ձեզ ուղարկեց՝ Եղիշէին իմաց տալու: «Ոչ ոք, մենք շտապեցինք, որովհետեւ Աստուած մի արասցէ, եթէ Ձեր դրութիւնը վատանար, մենք նրա ձեռքից չէինք ազատուելու»:

-Բռնակա՛լ,-ասաց՝ գլուխը երկու անգամ վեր ու վար դարձնելով:

-Ձեր բոլոր բռնութիւնների պատասխան վրէժն էր,- ասացի,- մեր նկատմամբ, որ մենք առանք այդ դժբախտ պատահարով:

Մթնոլորտը փոխւում էր, բոլորի դէմքերին՝ խնդում եւ ծիծաղ: Ռոստոմի ապաքինման լուրը կայծակի արագութեամբ տարածուեց ճամբարում: Խումբ-խումբ գալիս եւ իրենց անսահման հրճուանքն ու ուրախութիւնն էին յայտնում մեր թանկագին հիւանդին, որն արդէն ոտքի վրայ էր ընդունում ուրախութեան եկողներին:

20րդ գումարտակը, ուր անխտիր սիրում էին Ռոստոմին եւ որից սիրուած էին եւ արժանացած նրա յատուկ գուրգուրանքին, խնդրեցին թոյլտուութիւն ոչխարներ մորթել որպէս մատաղ եւ ընդհանուր ճաշկերոյթ կազմակերպել, որը հաճոյքով կատարուեց:

Ճաշկերոյթի ընթացքին գումարտակն արձակեց երեք համազարկեր՝ ի նշան խնդակցութեան եւ ուրախութեան: Յետ չմնացին հրետանու մարտ-



կոցները եւ իրենց հերթին երեքական ռումբեր ուղարկեցին դէպի արեւմուտք՝ թշնամու կողմը 12 թնդանօթներից:

-Ճիշտ է, ճաշկերոյթը ընդհանուր էր, սակայն մենք՝ սպաներ, բժիշկներ, Համազասպը եւ գնդապետ Ղազարեանը, Ռոստոմի գլխաւորութեամբ, առանձին համախմբուած էինք մէկ կողմ: Նրանք անակնկալի եկան:

-Ի՞նչ է պատահել:

-Խրախճանք,- պատասխանեցի,- հանգիստ ճաշէք, տղաները այդ ձեւով են արտայայտում իրենց ուրախութիւնը Ռոստոմի ապաքինման առթիւ: Ռոստոմի աչքերում երեւացին երկու կաթիլ բիւրեղներ: Նա բաժակը վերցրեց, սակայն ոչ մի խօսք չասաց... Նայեց մեզ, նայեց տղաների կողմը մօտեցրեց շրթունքներին: Վաշտերի ներկայացուցիչները յաջորդաբար մօտեցան Ռոստոմին եւ վաշտերի կողմից խմեցին նրա կենացը:

Այս ճաշկերոյթով մենք վերջացրինք մեր լաւ սկսած գործը Շամախիի ընդարձակ գաւառում եւ միւս շրջաններում, սակայն տխուր վախճանականով (ֆինալով) փակեցինք՝ շնորհիւ նախանձի, պառակտման, դաւադրութեան եւ զինուորական հեղինակութեան ընդհանուր հրամանատարի չգոյութեան: Երեւակայում եմ՝ ինչեր պիտի կատարուէին, եթէ Ռոստոմը այդ շրջանում չլինէր... Ամիրեանը Ռոստոմի հիւանդութիւնից մէկ ժամ անց իւրայիններով թողնում է Շամախին եւ շտապում միանալու գաղթականութեան: Անեղծուածային էր նրա կողմից Ռոստոմին այդ դրութեան մէջ թողնել եւ հեռանալը:

Իմ հարցումին Ռոստոմը պատասխանեց. «Աւելի լաւ կլինէր, եթէ նա բնաւ այս կողմերը եղած չլինէր: Մի խօսիր նրա մասին բնաւ...»:

Կառքն արդէն պատրաստ էր: Ռոստոմը եւ բժիշկ Բ. Այլազեանը, երկու իգդիրցի զինուորներով՝ Վատօ եւ Ալեքսան, դիմացը նստելով, մեկնեցին: Նրանցից երկու ժամ առաջ մեկնել էր Համազասպը՝ իր մնացած զօրաբաժնի երկու գումարտակներով: Մութ էր արդէն, երբ շարժման հրահանգը տուեցինք. անցան Զարգեարանի գումարտակները՝ Մկրտչի եւ Տէր Զաքարի գլխաւորութեամբ, նրանց հետեւեց Շամախիի գումարտակը Յով. Զանումեանի, որին յաջորդեց 20րդ գումարտակը, եւ վերջում մենք՝ հեծելագունդով: Հրետանին հետեւում էր Զարգեարանի գումարտակներին, իսկ լեռնային մարտկոցները մեր առաջից հետեւում էին 20րդ գումարտակին:

Ռոստոմը, ժամանակին հասնելով Ռեազի, կարգադրում է գաղթականութեան շարժուելու առաջ, որը եւ կատարւում է: Բարեբախտաբար ճանապարհին մենք մարդկային կորուստ չէինք ունեցել: Չնայած ֆուրգոնները լց-

ւած էին հիւանդներով: Բժշկասանիտարական կազմը, պատիւ իրենց, արթուն հետեւում էին եւ հասնում բոլորին, ամեն անհրաժեշտ դեղորայք ունէինք, որ առատօրէն գործածւում էր: Նրանց օգնում էին եւ մեր ազնիւ երիտասարդ ուսանողները, որոնք եկել էին Բագւից:

Մենք Մարաղի հասանք ուշ, սաստիկ անձրեւի եւ հեղեղի դադարումից յետոյ, մինչեւ ոսկորներս թրջւած, ինչպէս մեզանում ասում էր: Մարաղիում հանգիստ տւեցինք զօրքին՝ չորացնելու հագուստները՝ օգտւելով կիզիչ արեւից: Մի քանի ժամ անց, բոլոր տղաները հագնւած, զէնքերը մաքրած, պատրաստւում էինք մեկնումի, երբ թիկունքում գտնւող խուզարկու հեծեալները մեզ հասնելով յայտնեցին, որ թշնամին երկու թեւերով առաջանում է դէպի Մարաղի: Երկու կողմերում գտնւող մեզ շրջապատող բլրակները գրաւեցինք երկու գումարտակներով եւ լեռնային թնդանօթներով: Իսկ հեծելագունդը ուղարկւեց հարաւ՝ դէպի երկաթուղագծի կողմը: Բլրակների գրաւումով ապահովելով մեր ճամբարը՝ 20րդ գումարտակը առաջացաւ դիմաւորելու թշնամուն՝ մեր օգնական Ռուբէն Աւագեանի գլխաւորութեամբ: Զարմանալի էր 20րդ գումարտակի բոլոր տղաների հոգեկան բարձր տրամադրութիւնը, երբ կռւի էին պատրաստւում: Ժամեր առաջ տեղացող հեղեղային անձրեւից մինչեւ ոսկորները թրջւած, ընկճւած եւ յոգնած տղաները միանգամայն կերպարանափոխւեցին, երբ լսւեց շեփորի տարածուն ձայնը զգաստութեան եւ ահազանգի: Վարակիչ էր 20րդ գումարտակի այս ձեւով կռւի գնալը: Չուխուրլիի կողմից առաջացող թշնամու շարքերը բաւական մօտեցել էին, երբ 20րդ գումարտակը, իր բարձունքներից իջնելով, ընկաւ թշնամու վրայ՝ 8 լեռնային թնդանօթների սաստիկ կրակի պաշտպանութեան տակ: Նրան անմիջապէս հետեւեց Շամախիի գումարտակը հիւսիսից: Թշնամին երկար չդիմադրեց նման կատաղի եւ համարձակ գրոհող գումարտակների տարերային առաջացման, նա, խուճապի մատնւած, բռնեց փախուստի ճանապարհը՝ անկանոն եւ ցրւած խառնիխուռն ամբողջ տարածքով, դէպի Չուխուրի Սունգահ ուղղութեամբ: Նախքան մեր յարձակման անցնելը, հեծեալներ ուղարկեցի՝ կանգնեցնելու Տէր Զաքարի գումարտակը եւ դաշտային հրետանին, որոնց երկու ժամ առաջ կարգադրւած էր մեկնելու դէպի Բագու, կազմ ու պատրաստ վիճակի դնելու հրետանին ամեն պատահական անակնկալ կանխելու համար: Բարեբախտաբար մեր վերջին երթի ընթացքում կռիւը երկար չտեւեց: Մինչեւ մութն ընկնելը ջախջախւած թշնամին փախուստի էր դիմել, եւ մենք, մինչեւ լոյս ապահովելով շրջապատը, լուսաբացին շարունակեցինք մեր երթը առանց կորուստի:



Յաջորդ օրը մենք հասանք ջրհան կայանը, որտեղ ճամբարել էին Համազասպը եւ միւսները: Իսկ գաղթականութիւնը շարունակել էր առաջանալ դէպի Բագու:

Այդտեղ պատահել էր մէկ շատ անտեղի, չկատարւելիք դէպք:

Միքոյեանին խոշտանգել էին, եւ որը մասամբ պատճառ էր դարձել, որ Բագւից մեզ օգնութեան եկող մէկ ռուսական գունդ՝ գնդապետ Պետրովի հրամանատարութեամբ, թոյլ չտար նահանջող զօրքին շարունակելու նահանջը գաղթականութեան հետ եւ Ռոստոմին, Համազասպին, գնդապետ Ղազարեանին եւ Ամիրեանին առել էր հսկողութեան տակ եւ ջրմուղ մեքենաների շէնքի վերնայարկում պահել:

Երբ մենք տեղ հասանք, ամեն կողմ վխտում էին Պետրովի զինւած զինւորները եւ խուզարկում պարենաւորման գրաստներն ու ֆուրգոնները: Ինձ մօտեցաւ 16րդ գումարտակի հրամանատար գլխապետ Արամ Դովլաթեանը եւ համառօտ հաղորդեց տեղի ունեցած տխուր անցուդարձի մասին: Ես կռահելով, որ վատ հետեւանք է սպասւում, առանց ժամանակ կորցնելու կանչեցի մեր բոլոր հրամանատարական կազմը, բացատրեցի հանգամանօրէն եւ խիստ պատւիրեցի ամբողջապէս կազմ եւ պատրաստ վիճակում լինել առանց հանգստանալու եւ շրջափակել ճամբարը: Ինձ հետ 25 տղաներ վերցնելով՝ Արամի հետ շտապեցի ջրմուղ: Շէնքի վերեւ տանող աստիճանների-կողքին դրւած էին երկու զինւած պահակներ, որոնք անմիջապէս զինաթափւեցին, եւ մենք վերեւ բարձրացանք: Սենեակի երկու կողմում նստած էին Ռոստոմը, Համազասպը, Ղազարեանը, բժ. Բագրատ Այւազեանը եւ Ամիրեանը: Իսկ գնդապետ Պետրովը ռուսական քառայարկ հայհոյանքներով քայլում էր սենեակի մէկ կողմից միւսը՝ յետ ու առաջ: Մեզ նկատելով՝ մօտեցաւ ու շատ կոպիտ եւ կատաղի հարց տւեց. «Ա, տըի կօ բուդեշ (իսկ դո՞ւ ով ես)»: Պատասխանի փոխարէն երկու ուժգին հարւած ստացաւ քիթ ու բերնին, իսկ Արամն արդէն ատրճանակն ուղղել էր նրա երեսին. զինաթափեցինք, իսկ Ռոստոմի միջամտութիւնը թոյլ չտւեց այդ ամբարտաւան, լկտի, ռուս թէ ինչ ազգից լինելն անյայտ մարդու հաշիւը փակել՝ իր ծայրայեղ յանդգնութեան եւ համարձակութեան համար: Ցած իջնելով եւ Պետրովին խիստ հսկողութեան տակ առած՝ ճամբար մտանք, որտեղ հրահանգեցինք Պետրովի բոլոր մարդկանց զինաթափել եւ խիստ խուզարկել: Նրանք, ովքեր փորձեցին դիմադրութեան դիմել, ստացան իրենց արժանի պատիժը:

Թալանել էին ամեն ինչ, ինչ որ գտնւում էր զօրաբաժինների պահեստ-

ներում: Թալանել էին անգամ իմ ճամպրուկը եւ տարել սպիտակեղէններս եւ վերնահագուստներս: Ամեն ինչ գտնուեց, վերադարձուեց իրենց տէրերին:

Տղաները երբ իմ վերնահագուստը նկատել էին մէկ ռուս զինուորի վրայ այդ զինուորից ոչինչ չէր մնացել մինչեւ մեր նրան մօտենալը: Նա արդէն անշնչացած էր, եւ հագուստը արեան մէջ սեւացած անպէտքացած էր: Ռոստոմը կարգադրեց դադարեցնել այդ լինչեան դատաստանները:

Ես մօտեցայ Պետրովին, հարց տուեցի. «Դուք օգնութեան էիք եկել մեզ, թէ՞ ամիսներ շարունակ կռիւներում կեանք մաշող զինուորների վերջին շապիկը թալանելու»: Նա լուռ նայեց եւ գլուխը կախեց: «Արժանի չե՞ն այդ քո հերոսները այս անապատում շանսատակ լինելու, դու էլ նրանց հետ քո համարձակութեան եւ յանդգնութեան ու կատարած անպատասխանատու արարքիդ համար: Դու գիտե՞ս՝ ում էիր կալանքի տակ առել, թշւառական: Քո փոխարքաներն էին նրանից դողում»: «Ես չգիտեմ՝ ով է նա, սակայն պարտական եմ նրան»:

Ռոստոմի կարգադրութեամբ վերադարձուեցին զէնքերը, Պետրովի ատրճանակը եւս, եւ նա իրայիններով բռնեց Բագւի ճանապարհը մեզնից երկու ժամ առաջ:

Մենք, ամեն պատահականութիւն աչքի առաջ ունենալով, որ այդ ռուս ամբոխը ճանապարհին կարող է համարձակութիւն ունենալ խաղալու, ընթանում էինք կազմ ու պատրաստ վիճակում՝ անմիջապէս հակահարուած իջեցնելու նրանց գլխին: Սակայն, բարեբախտաբար, ոչինչ տեղի չունեցաւ, եւ մինչեւ Բագու մենք անցանք խաղաղ ու առանց փոքր միջադէպի:

Բագւում, երբ Շահումեանը եւ կառավարական կազմը տեղեկացել էին մանրամասնութեանը, իրենց զարմանքն էին յայտնել Պետրովին, որ «դու կենդանի ես մնացել»: Նա պատասխանել էր. «Հենց այդ անձնաւորութեանը պարտական եմ իմ կենդանութեան համար ու հենց այժմ պիտի շտապեմ նրանից ներողութիւն խնդրելու իմ անխոհեմ եւ անպատասխանատու վարմունքիս համար»: Եվ նա Ջափարիդձէի ընկերակցութեամբ Բիւրօ էր եկել եւ ներողութիւն խնդրել Ռոստոմից: Նոյն օրը մենք կառավարական շէնքում դէմ դիմաց կանգնեցինք, երբ ես գնացել էի զեկուցման՝ մեր ամիսներ կատարած աշխատանքների մասին: Շահումեանը ժպտալով դիմեց Պետրովին՝ ինձ ակնարկելով. «Դա՞ էր»: «Այո՛»: «Յոյս ունեմ, որ յանուն մեր ընդհանուր գործի յաջողութեան մոռացութեան կտաք անցեալը»:

Պետրովը մօտեցաւ, եւ մենք համբուրուեցինք: Այդ օրւանից մենք բարեկամներ դարձանք:



# ՃՇՏՈՒՄՆԵՐ ԲԱԳՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ Ս. ՄԵԼԻՔ ԵՕԼՉԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԻ

ԵՂԻՇԷ ՊԱԼԱՒՈՒՆԻ

## «Հայրենիք» ամսագիր, Գ. տարի թիւ 8, Յունիս, էջ 111

Մելիք Եօլչեանին, մարտեան կռիւների ընթացքում, իմ եւ իր մէջ Ալի Մարդան Թոփչիբաշեւի պատճառաւ ծագած վէճի ընթացքում, իր մէկ շատ տգեղ արտայայտութեան համար ինձնից ստացած շռնդալից ապտակները, հանգիստ չտւեցին մինչեւ իր անփառունակ մահն ու թաղումը տասնեօթ հոգու յուղարկաւորութեամբ Թեհրանում: Այդ տասնեօթ յուղարկաւորներն էլ շնորհիւ ընկ. Վահան Աֆրիկեանի թափած ջանքերի մասնակցեցին, որպէսզի վարձու բեռնակիրներով չտանէին դիակը գերեզմանատուն: Նա իր չարայուշութեան, չարակամութեան եւ կեղեքիչ հակումներով իր կապալառուի հանգամանքի բերումով երեք-չորս միլիօն թուման դիզեց՝ իր մի շարք տարագիր ընկերներին չարաչար շահագործելով եւ զրկելով, որը տեղի տւեց մի չափազանց տգեղ եւ աննախընթաց երեւոյթի: Կեղեքւածներից երեք տարագիրներ անպատւեցին նրա թարմ հողաթումբը՝ իրենց կուտակւած մաղձը թափելով տգեղ եւ անթոյլատրելի արտայայտութեամբ: Ակամայից գրւեցին վերոյիշեալ տողերը:

Աննախընթաց անշուք թաղում մէկ կուսակցականի՝ մեր կուսակցութեան բովանդակ պատմութեան ընթացքում:

Նրա Բագւի յուշերը լի են բազմաթիւ անհիշտ տեղեկութիւններով՝ մէկի գործունէութիւնը մէկ ուրիշի վերագրելով՝ նայած տրամադրութեան եւ սիմպատիայի: «Հայրենիքի» խմբագրութիւնը եւս երբեմն իւր կողմից չափազանց կոբեկտ նկատողութիւններ է արել այդ ուղղութեամբ: Հետեւաբար վասն պատմական իրողութեան, թղթին եմ յանձնում եղելութիւնների իրական պատկերը:

Նա գրում է, թէ Թիֆլիսում գտնւող Անդրկովկասեան կոմիսարիատի Ադրբէյջանի ներկայացուցիչներ Ջափարովը, Մէլիք Ասլանովը եւ Թոփչիբաշեւը պայմանաւորւում են նոյն կոմիսարիատի վրացի ներկայացուցիչների հետ միացած ուժերով շարժւելու Բագւի վրայ: Այդ համաձայնութեան հետեւանքով արշաւող զօրքերի ընդհանուր հրամանատար է նշանակւում զօրավար Լեւան Մաղալովը (վրացի), որին տրւում է նաեւ մի դիւիզիօն

մօտ 500 հոգի վրացական հեծելազօր: (Ճիշտ չէ, մէկ հեծեալ գունդ էր՝ ութ հարիւր հոգուց բաղկացած), ապա տաճկական եւ թաթարական կազմակերպուած երկու գունդ եւ հազարաւոր զինուած խուժան, որոնց ղեկավար է նշանակւում տաճկական բանակի գնդապետ Նազմի Բէյը, դրանց հետ եւ վրացական հեծելագունդը՝ զօրավար Լ. Մաղալովի հրամանատարութեամբ: Մելիք Եօլչեանը միտումնաւոր չի յիշատակում այդ ուժերի դէմ ուղարկուած զօրաբաժնի հրամանատարի անուն ազգանունը, ով լինելը, եւ շարունակում է... Իմանալով այդ մասին՝ Բագւի կառավարութիւնը ուղարկում է դրանց դէմ մի բրիգադա (զօրաբաժին)՝ երեք հազար հայ զինուորներից բաղկացած, համապատասխան հրետանիներով: Երկու հակառակորդ կողմերի միջեւ տեղի ունեցած ուժեղ կռիւները տեւեցին մի շաբաթ (ճիշտ չէ. ընդամենը երեք օր միայն), վերջացան թուրքերի եւ վրացիների կատարեալ պարտութեամբ ու փախուստով: Վրացի հեծելազօրը երկու օր կռուին մասնակցելուց յետո, լքել էր դիրքերը եւ վերադարձել Վրաստան: Իսկ թուրքերը յամառօրէն դիմադրելուց յետոյ եօթերորդ օրը փախել էին՝ ցրուելով շրջակայ գիւղերը, մի մասն էլ Մաղալովի հետ վերադարձել էր Գանձակ:

Ճիշտ չէ, նրանք փախան միասին՝ երեք օր միայն կռուելով մեր դէմ:

Ինչ վերաբերում է Ս. Մելիք Եօլչեանի կողմից Ամիրեան Թաթոսի մասին գրուած տողերին, ճշմարտութիւնը հետեւեալն է.

Ամիրեան Թաթոսը իր շուրջը համախմբեց իր համախոհներից 120 հոգի: Միաժամանակ կազմակերպուեց հայերից եւ ռուսներից բաղկացած միջազգային 19րդ գումարտակը՝ գլխապետ Չիլինգարեանի հրամանատարութեամբ: Վերոյիշեալ բոլոր միաւորները սկսեցին կանոնաւոր զինուորական մարզումները մինչեւ մարտ 17ը:

Ուժերի 90%-ը կազմուած էր դաշնակցական եւ համակիր առողջ տարրերից: Այդ հանգամանքն ի նկատի առնելով՝ Բագւի բոլշեւիկեան կառավարութիւնը՝ ղեկավարութեամբ Ս.Շահումեանի, Ալ. Ջափարիձէի եւ Ղորղանեանի, հաշւի էր առնում Հ.Յ. Դաշնակցութեանը եւ առանց նախօրօք ապահովելու Ռոստոմի եւ դաշնակցութեան ղեկավարների համաձայնութիւնը որեւէ աշխատանք չէր ձեռնարկում եւ կարգադրութիւն չէր անում, եթէ դէմ էր հայ ժողովրդի շահերին:

Այդ ժամանակ Բագւում էին աշխատում Ռոստոմը (Ստեփան Զօրեան), Աբրահամ Գիւլխանդանեանը, Արտաշէս Դարբինեանը (Ռուբէն Չիլինգարեան), Պապաշան (Լեւոն Թադէոսեան) եւ Ս. Արարատեանը:



Բագւի բոլշեւիկեան կառավարութիւնը իր գոյութիւնը պահեց այնքան ժամանակ, քանի նա հաշւի էր առնում Դաշնակցութեանը եւ համագործակցում էր Հ.Յ.Դ.-ի ղեկավարների հետ եւ գործում էր խորհրդակցաբար: Այն օրւանից, երբ Ս. Շահումեանը եւ իր կառավարութիւնը սկսեցին կիրառել տխրահռչակ լենինեան ախտաւոր ծրագրերը եւ անտեսել հայ ժողովրդի կենսական շահերը, թաւալգլոր գնացին դէպի անկում, մինչեւ իրենց վերջնական տապալումը: Սխալւում են Մելիք Եօլչեանները եւ նմանները, որոնք այլ կերպ են բացատրում: Ս. Շահումեանը ոչ մի ներելի ու աններելի միջոցի առաջ կանգ չառաւ որոշ ռազմամիաւորներ իրեն անմիջական ազդեցութեան տակ առնելու համար: Ոչ նիւթական եւ ոչ էլ զանազան աստիճանների առատ բաշխումը չշլացրեց թէ՛ գաղափարական եւ թէ՛ բարեմիտ տարրերին՝ դաւաճանելու իրենց ազգային մաքուր սկզբունքներին: Բոլշեւիկները կարողացան միայն ոչ բարի համբաւ ունեցող Թաթեւոս Ամիրովին (Ամիրեան) գցել իրենց ախտաւոր փարախը զանազան նիւթական առատ խոստումներով: Երբ բոլոր բանակցութիւններն անցան ապարդիւն եւ անհետեւանք, կողմերը սկսեցին անցնել տենդագին աշխատանքի: Մթնոլորտը այն աստիճան ջղային ու լարուած դարձաւ, որ քաղաքը բաժանուեց երկու ազդեցութիւնների: Հիւսիս-արեւմտեան մասում՝ Ղարա-Մէյդան, Շամախինկա-Փոփլու թափա, Ղանլի թափա եւ այլն շրջաններում թուրքական զինուած ուժերն սկսել էին դիրքեր գրաւել եւ ամրութիւններ կառուցել: Հայկական մասը՝ Արմեանսկայա (Հայկական) փողոցը, որի վրայ է գտնւում Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ վերջանում է Պարապետի հրապարակով, ու սկսւում էր Օլգինսկ պողոտան՝ զուգահեռ Նազարովսկայա փողոցով մինչեւ ծովափ նոյն ուղղութեամբ, եւ Վելիկոկնեաժեսկ պողոտան իր բարձր շէնքերով, որ ծովափ էր տանում, 90% հայերով էր բնակեցուած եւ մեր ազդեցութեան տակ էին գտնւում:

Մարտի 12ին թաթարներն սկսեցին ակտիւութիւն ցուցաբերել, որին մենք անմիջապէս հակազդեցինք համապատասխան ուժերով, զանազան փողոցներում: Ինձ կարգադրուեց ապահովել հայկական փողոցի «Ֆանտազիա» բաղնիսից սկսած մինչեւ ծովափ երկարող տարածքը:

Մենք եւ թուրքերը սպասում էինք, թէ որ կողմից էր պայթելու առաջին գնդակը, եւ ո՞վ էր լինելու նախայարձակը: Մարտ 17ի երեկոյեան ժ. 8ին մեր եւ թուրքերի գիշերաշրջիկ ապահովութեան (պատրոլ) պարեկող խմբերից երկուսը դէմ դիմաց են գալիս Նիկոլաեւսկայա պողոտայի եւ Օլգինկայա փողոցի անկիւնում: Վէճի են բռնւում, եւ թուրք գիշերաշրջիկներից

մէկը կրակ է բացում մերոնց վրայ ու վիրաւորում Վատօ (Վրթանէս) անունով իգդիրցի զինւորին թեւից՝ արմունկից վեր: Մերոնք, հինգ հոգի, իրենց ընկերոջ վրէժն առնելու համար կրակ են բացում եւ երեք թուրք զինւորներ սպանում:

Կայծակի արագութեամբ լուրը տարածւում է ամբողջ քաղաքում: Այդ պահին մենք, համախմբուած Բիւրոյում, Ռոստոմի գլխաւորութեամբ զբաղուած էինք զանազան խնդիրների քննարկմամբ, երբ ներս բերեցին Վատոյին եւ զեկուցեցին տեղի ունեցած դէպքի մասին:

Ռոստոմը կարգադրեց անմիջապէս փութալ դէպքի վայրը եւ քննութիւն կատարել եւ անհրաժեշտ տնօրինութիւնն անել:

Մելիք Եօլչեանը «Կասպի» թերթի խմբագրատան եւ Իսմայիլէ քարաշէնքի քարուքանդ լինելն ու մոխրակոյտի վերածումը համարում է պատահական թէ նպատակով ծովից, ռազմանաւերից արձակուած ռումբերի հետեւանք, առանց հաշւի առնելու «Կասպիի» խմբագրատան վայրը, դիրքը եւ շրջապատը:

Նախ՝ մարտեան կռիւների ամբողջ տեւողութեան ընթացքում որեւէ ռազմանաւ չի մասնակցել կռիւներին եւ եթէ նոյնիսկ ցանկանար էլ, բնաւ չպիտի կարողանար մէկ ռումբ անգամ ուղարկել քաղաքի որեւէ մասի վրայ: Ինչո՞ւ: Մելիք Եօլչեանը այն հաշւարկը չի արել, որ այդ ժամանակ ազգաբնակչութիւնը ապրում էր խառը քաղաքի բոլոր մասերում, մասնաւորապէս այդ քաղաքամասում, ուր գտնւում էր «Կասպիի» խմբագրատունը եւ Իսմայիլէն, այն է Նիկօլայեւսկ ամենայայտնի պողոտայում, որտեղ բնակւում էր հայ, ռուս եւ եւրոպացի ընտրանին, այնտեղ էին գտնւում առաջնակարգ հիւրանոցները՝ «Մետրօպօլ», «Գրանդ Հօթէլ» եւ «Եւրոպա», այդ պողոտայի վրայ էր եւ նահանգապետարանը, նահանգապետի բնակարանը, քաղաքային ինքնավարութեան հսկայ շէնքը եւ բազմաթիւ հայ մեծահարուստ ընտանիքների բնակարաններն ու վաճառատները եւ հիւպատոսարաններ: Այդ կարեւոր կէտերը եւ բնակչութեան բազմազանութիւնն անտեսել է Մելիք Եօլչեանը եւ «զօռ» տուել չարայուշութեանը՝ նւաստացնելու համար մարտեան կռիւների՝ այդ շրջանի ղեկավարի դերը, որից նա այդ կռիւների ընթացքում ստացել էր երկու շնորհալից ապտակ՝ իր մէկ անվայել արտայայտութեան համար: Այդ է պատճառը, որ Մելիք Եօլչեանը չի յիշել Շամախի գաւառի, Քիւրդամիրի շրջանի մի քանի օր տեւած սաստիկ կռիւներ մղող զօրաբաժնի եւ իր հրամանատարի անունը: Կարամարեանը եւ նահանջողների երթի ապահովութիւնը լքող իր «հերոսի»՝ Ամիրով



Թաթոսի Գեօկչայի շրջանում շրջապատումը իր 120 համախոհ ձիաւորների հետ եւ մեր հեծելազնդի օգնութեամբ նրանց շրջափակումից դուրս բերելն ու փրկութիւնը շատ հասկանալի է, որ Մելիք Եօլչեանը իր չարամիտ բնաւորութեանը յարած միտումով մոռացութեան է տալիս եւ չի յիշատակում տողերիս գրողի վերոյիշեալ գործունէութեան մասին՝ չմոռանալով մարտեան կռիւների ընթացքում ինձնից ստացած յիշեալ ապտակները: Այդքան վրան բաց անտեսում եւ այդ աստիճանի իբրեւ թէ «ստուգւած» յուշերի աղաւաղում կատարել միայն նա կարող էր ընդունակ լինել եւ մէկի աշխատանքը, չարչարանքը չարամտօրէն իր ցանկութեամբ մէկ ուրիշին վերագրել: Գոնէ արժանիքներ ունեցող մէկը լինէր»:

## «Հայրենիք», թիւ 9, Յուլիս 1925թ., էջ 68-69

«Մելիք Եօլչեանի բացարձակ անտեղեակութիւնը մի շարք խնդիրներում եւ նրա «ճշմարտութիւնն ու ստուգութիւնը» անցնում են պարկեշտութեան սահմանները: Նա մոռանում է, որ այդ շրջանի բոլոր անցուդարձերի, կռիւների ու նահանջի անմիջական ակտիւ մասնակցողներից եւ ղեկավարներից շատերը՝ տակաւին կենդանի, պիտի մի օր այդ վրան բաց, սուտ ու մտացածին, սեւով սպիտակի վրայ մրոտած յայտարարութիւնները լուսաբանեն եւ իսկական ճշմարտութիւնը ընթերցող հայրենակիցների ուշադրութեանը յանձնեն:

Համազասպը նահանջել էր ե՛ւ Գէօգչայից, ե՛ւ Կարամարեանից: Իսկ Ամիրով Թաթոսը իր 120 զինւորներով ժամանակին չէր կարողացել ճեղքել պաշարման շղթան եւ նահանջել: Մենք վերեւում յիշել ենք այդ մասին եւ այժմ էլ յիշում ենք թարմացնելու համար ընթերցողների յիշողութիւնը: Մեր անձամբ Ռոստոմի կարգադրութեամբ՝ Պալի բէգի միջոցաւ Ամիրեանին օգնութեան եմ ուղարկել մեր հեծելագունդը՝ հինգ հարիւր հոգուց բաղկացած, որոնք պատռել են պաշարման շղթան եւ այդ ապերախտ, արկածախնդիր մարդուն՝ իր 120 զինւորներով, ազատել ու մինչեւ Կարամարեան-Աղսու խճուղին առաջնորդել, որտեղից նրանք ապահով Աղսու են հասնել: Այդտեղ էին կենտրոնացած նահանջող թէ՛ ժողովուրդը եւ թէ՛ Համազասպի զօրաբաժնի երեք գումարտակները, սակրաւորների գումարտակը՝ 600 հոգուց բաղկացած, որոնց վրայ աւելանում է եւ Ամիրեանի 120 հոգին: Ժողովրդի պաշտպանութեանը եւ իրենց իսկ պաշտպանութեանը

նահանջող զօրքը որեւէ ձեւով ոչ մի մասնակցութիւն չի ունեցել: Նրանք, դժբախտաբար, երբեք յետ չնայեցին, նոյնիսկ այն ժամանակ, երբ մենք տանկների բոլոր յարձակումները մեր հակայարձակումներով յետ էինք մղում՝ մեծ կորուստ պատճառելով թշնամուն՝ ամբողջ նահանջի ընթացքում, Կարամարեանից մինչեւ Բագու (տես Արամ Ալչուջեանի յուշերը, Ռոստոմը Բագւում):

Մեր նահանջի ժամանակ մէկ հատ ռուս մալական տեղից չի շարժել եւ, երբեք էլ չշարժեցին:

Թշնամին Թաթոսին չէր կարող հետապնդել, որովհետեւ մենք կայինք Թաթոսի եւ թշնամու արանքում. մեր հեծելազունդը, նրան ազատելով, խճուղի է հասցնում, եւ նրանք ապահով Աղսու են հասնում:

Մելիք Եօլչեանը, իրեն ներկայացնելով մասնակից բոլոր անցուդարձերին, բացարձակապէս անտեղեակ է ռազմական ղեկավարութեան կազմին: Նա Բիչերախովին ներկայացնում է որպէս Բագւի կռիւների երբեմնի ընդհանուր հրամանատար: Բիչերախովը երբեք այդ պատասխանատու պաշտօնին չի եղել: Նա միայն նշանակուած էր հիւսիս-արեւելեան մասի հրամանատար: Այդ ժամանակ ընդհանուր հրամանատար էր գեներալ Պրժեւալսկին, նրա հրաժարուելուց յետոյ նշանակուեց գեներալ Դոկուչաեւը: Իսկ գնդապետ Աւետիսեանը բոլոր հրամանատարների ժամանակաշրջանում եղել էր գլխաւոր սպայակոյտի պետ մինչեւ իր եղերական մահը բոլշեւիկացած, ռուս չարագործ ամբոխի վերածուած զինուորների խոշտանգումներից Լենքեօրանում»:

### «Հայրենիք», թիւ 8, Յունիս, 1925թ., էջ 113-114

«Մելիք Եօլչեանը գրում է՝ միեւնոյն ժամանակ շտաբը (սպայակոյտ) հրահանգեց Շամախիում գտնուող Ամիրեանին շարժել լեռներով դէպի Գէօգչայ եւ սպասել Համազասպին: Այդ հրահանգը նա յաջողել էր կատարել՝ անցնելով հարիւր վերստ ճանապարհ եւ ունենալով բաւականաչափ ընդհարումներ տեղացի թուրքերի հետ: Բացարձակապէս անտեղեակ Մելիք Եօլչեանը՝ Գէօգչայում սկզբից մինչեւ նահանջելը անշարժ նստած եւ զինարբուքով ժամանակը վատնող Թ. Ամիրեանին մի գրչով Գէօգչայից փոխադրում է Շամախի եւ այդ տեղից կռիւներով շարժում է իր նստած



տեղը՝ Գէօգչայ՝ իր գոյութիւն չունեցող զօրամասով (դիւիզիա), որն ընդամենը 120 հոգուց էր բաղկացած:

Համազասպը, գրաւելով Կարամարեանը, առաջանում է դէպի Գէօգչայ, որը թուրք-թաթարների յարձակման ժամանակ իր փոքրաթիւ զինուորներով Ամիրեանը թողել էր: Իմանալով Համազասպի առաջխաղացման եւ Գէօգչայի գրաւման մասին՝ Գէօգչայից ոչ հեռու բարձունքներում ապաստանած Ամիրեանը շտապում է Գէօգչայ, որտեղ հանդիպում է Համազասպին. ունենում են մէկ անախորժ խօսակցութիւն եւ վէճ, որը պատճառ է դառնում Համազասպի Գէօգչայից հեռանալուն եւ Կարամարեան վերադառնալուն: Ամիրեանը, իր փոքրաթիւ ուժերով՝ անկարող պահելու Համազասպի գրաւած դիրքերը, եւս թողնում է Գէօգչան եւ կրկին ապաստանում բարձունքներում:

Իզուր եւ անտեղի է Մելիք Եօլչեանը Թաթոս Ամիրեանին վերագրում չկատարած գործեր: Համազասպը եւ ոչ էլ որեւէ ռազմական միաւոր Քիւրդամիր չեն նահանջել, այլ ամբողջ զօրքը եւ ժողովուրդը նահանջել է Շամախիի վրայով դէպի Բագու»:

### «Հայրենիք», թիւ 10, Օգոստոս, 1925թ., էջ 108

Բացարձակ բոբիկ ռազմագիտութիւնից Մելիք Եօլչեանը գրում է՝ Եղիշէ Պահլաւունու ղեկավարութեամբ Մաշտաղան գրաւելը չիրագործուեց շնորհիւ նրա երիտասարդ լինելու ու անփորձութեան եւ շարադրում է իր դատողութիւններն ու ցուցմունքները...

«Նկատի ունենալով թշնամու մտադրութիւնը եւ նաւթահանքերի խոշոր նշանակութիւնը օգոստոսի կէսերին ուղարկեց քսաներորդ գումարտակը հազար հոգուց բաղկացած Ե. Պահլաւունու ղեկավարութեամբ: Գրաւելու Մաշտաղա եւ ուրիշ գիւղեր եւ ապահովելու նաւթահանքերը թիկունքից: Դժբախտաբար այդ ծրագիրը չիրագործուեց: Երիտասարդ եւ անփորձ հրամանատարը, փոխանակ յանկարծակի հարուած տալու, խուճապի ենթարկուած գիւղացիութեան դիրքեր է փորում եւ սկսում դիրքային կռիւ: Թշնամին կամաց-կամաց ոգեւորւում է, ստանում է օգնութիւն հարեւան գիւղերից եւ կապ է հաստատում տանկական բանակի հետ, իսկ մերոնք յոգնում, ուժասպառ լինում եւ լքում են»:

Նախ՝ Մելիք Եօլչեանը անտեղեակ է, թէ երբ եւ ի՞նչ պայմաններում

մեզ հրահանգւեց Խրդալանի եւ Պատամ դաղի ճակատից փոխադրուել Մաշտաղայի շրջանը եւ ինչ ուժերով:

Մենք, երբ Պատամ դաղի ուղղութեամբ թշնամու գերազանց ուժերը ջախջախելով մեր հակայարձակումներով, գրաւեցինք Պատամ դաղը եւ մի շարք բարձունքներ Խրդալանի ուղղութեամբ, ստիպուած կանգ առանք գրաւած բարձունքներում, եւ աւելի խորանալ չէինք կարող, որովհետեւ մեր աջ եւ ձախ թեւերը յառաջխաղացում չէին ունեցել, եւ մեր հրետանին անտեղեակ էր մեր արագ շարժման ու այդքան կարճ ժամանակամիջոցում այդ առաջացմանը եւ ռազմասիւների երեւալուն Պատամ դաղի բարձունքներում: Մեր հրետանին ենթադրելով, որ այդ զօրասիւները թշնամունն են, իրենց շեշտակի մրրկային հրետանային կրակով սկսեցին մեր շարքերը ռմբակոծել մինչեւ որ ես կարողացայ իմ ձին տրամադրել Ցաբէթ Խաչատրեանին (մեր լաւագոյն մտաւորականներից) եւ կտրուկ պատուիրել շտապ հասնել 5րդ հրետանու հրամանատար Ռուբէն Ստեփանեանին՝ այդ հրետանային մարտկոցի բացառիկ հրամանատարին, եւ բացատրել իրականութիւնը: Մինչ Ցաբէթի տեղ հասնելը մեր շարքերից 40 ռազմիկներ ընկել էին սպանուած եւ վիրաւոր՝ մեր իսկ թնդանօթների ռումբերի պայթիւնից: Մենք թշնամուց վերցրել էինք չորս վինկերս եւ երկու կոլտ գնդացիրներ, շուրջ չորս հարիւր հրացաններ սպանուածներից: Օրը մթնեց, եւ մենք բարձունքներում հետեւում էինք թշնամու շարժումներին մեր հետախոյզների միջոցաւ, որոնք անդադար հսկում եւ հետազօտում էին շրջապատը:

Առաւօտեան մեզ յայտնեցին մեր հետախոյզներից ոմանք, որ թշնամին շարժւում է դէպի Մաշտաղայի ուղղութեամբ մեծ ուժերով: Դէպքերի այս զարգացումով էր, որ անհնար եղաւ Մաշտաղան գրաւել»:

## «Հայրենիք», թիւ 8, Յունիս, 1925թ.

Մելիք Եօլչեանը իր «Ստուգւած եւ երաշխաւորուած» յուշերում բացարձակապէս ամբողջութեամբ ճշմարտութիւնից եւ «ստուգութիւնից» հեռու է եւ անտեղեակ: Շամախի ուղարկւած Ստեփան Լալայեանի (տեղակալ սպա) հինգ հարիւր հայ զինուորներից կազմւած գումարտակի փոխարէն Շամախի է ուղարկում Թաթեւոս Ամիրեանին, որը բնաւ Շամախիում չի աշխատել, այլ գրեթէ միաժամանակ Ս. Լալայեանի հետ մեկնում է Շամախի, որտեղ, Թաթեւոս Ամիրեանը, մի գիշեր միայն քաղաքից դուրս գիշերելով, շարունակում է իր երթը մինչեւ Գէօգչայ, որի շրջանի համար էլ նա նշանակւած էր կառավարութեան կողմից, իսկ տեղակալ Ս. Լալայեանը իր գումարտակով մնում է Շամախի, եւ այստեղ է, որ նա լուծեց թաթարների կողմից իր հրկիզւած ծնողների վրէժը՝ կոտորելով քաղաքի թաթարական մասը, ինչպէս վարուել էին թաթարները հայկական մասի հետ: Ռուս մալականները երբեք Շամախիի գաւառում կռիւներին չեն մասնակցել, ինչպէս գրում է իր «ստուգւած եւ երաշխաւորուած» յուշերում Մելիք Եօլչեանը: Ի՞նչ աղբիւրից է նա վերցրել այդ «ստուգւած յուշերը. չի յիշում իր անստոյգ աղբիւրը, նրա նոյնիսկ մալականների բացարձակապէս անբարեացակամ տրամադրութիւնները անտեսելը բաւական չէ՝ այլ դուրս է բերել նոյնիսկ կուի դաշտ մեր այնտեղ գործող գումարտակների կողքին համագործակից: Մելիք Եօլչեանը բնաւ չի յիշել իր «ստուգւած» յուշերում տեղակալ Ս. Լալայեանի գործունէութեան մասին սկզբնական շրջանում, նախքան մեր այդ գաւառ գնալը: Կատարւած բոլոր կռիւները, մաքրագործումները վերագրում է մի անձնաւորութեան, որը միայն անցել է, առանց որեւէ ընդհարումի, իր նշանակւած տեղը՝ Գէօգչայի շրջանը, որտեղ նա մինչեւ նահանջ որեւէ դրական շարժում եւ աշխատանք չկատարեց, բացի ինտրիգներ եւ գինարբուք:

Մարտեան կռիւների դադարից յետոյ, երբ ցաք ու ցրիւ էին եկել թաթար ռազմուժերը, Մուսաւաթի գլխաւորութեամբ ցրւել էին թաթարական զանազան շրջաններ՝ կազմակերպելու եւ շարունակելու իրենց սկսած պայքարը: Այդ իսկ պատճառով Բագւի կառավարութիւնը կազմակերպեց յատուկ հարւածող միաւորներ եւ ուղարկեց զանազան շրջաններ՝ կանխելու Մուսաւաթականների ապստամբական շարժումները եւ ճնշելու: Ուղարկւեցին երկու պատժիչ գումարտակներ՝ հինգ հարիւրական՝ լաւ սպառազէն. Թաթեւոս Ամիրեանը՝ հինգ հարիւր ռուս զինուորներով եւ 120 հեծեալ իր համախոհներով՝ Գէօգչայի շրջանը, իսկ աւագ տեղակալ սպա Ստեփան Լալայեանը՝ հինգ հարիւր հայ զինուորներով՝ իր ծննդավայր Շամախի: Ստեփանը (Ստեօպա) զաւակն էր մեծահարուստ միլիօնատէր Բալաբէգ Լալայեանի, որն իր կնոջ, աղախնի եւ տան ծառայի հետ միասին այրւեցին իրենց սեփական տան մէջ թաթարական Շամախինկա մասում՝ 1905թ. հայ-թաթարական կռիւների ընթացքում, ինքնապաշտպանութեան ժամանակ: Ինքը՝ լաւ որսորդ եւ նշանառու, մի քանի տասնեակ թաթարների կեանքը խլեց մինչեւ իր տան հրկիզումը եւ մահը, բոլոր փամփուշտները սպառելուց յետոյ միայն: Բալաբէգի արժանաւոր տղան լուծեց իր հօր

եղերական մահուան վրէժը, երբ նշանակւեց Շամախի քաղաքի ապահովութեան վարիչ: Նա՝ հայկական մասի աւերման որպէս փոխվրէժ, որը կատարւել էր մարտեան կռիւների ընթացքում թալանելուց յետոյ, նոյն վիճակին ենթարկեց եւ թաթարական մասը՝ կոտորելով ու կրակի տալով ամեն ինչ»:

## «Հայրենիք», թիւ 8, Յունիս, 1925թ., էջ 117

Մելիք Եօլչեանը, նկարագրելով ներքին եւ արտաքին դիրքերի գրաւումը բոլշեւիկների կողմից, չի մոռանում եւ «քսան հազարի» հասնող ժողովրդի մասին եւս: Սակայն միտումնաւոր չի յիշատակում երկուհազարանոց 20րդ գումարտակի մասին, որը մեր կարգադրութեամբ իր հերթին շրջապատել էր թէ շէնքը, որտեղ գումարւել էր այդ պատմական վճռական ժողովը, եւ թէ յարակից բոլոր պողոտաներն ու փողոցները: Շահումեանը եւ իր ընկերները քաջ գիտէին, որ իրենց ունեցած ուժերը շատ կարճ միջոցում պիտի բնաջնջւէին, եթէ փորձ կատարէին դիմելու զինւած ուժերի օգնութեան՝ ճնշման տակ պարտադրելու իրենց սկզբունքային խնդիրները: Մեր կողմից խստիւ կարգադրւած էր՝ հակահարւածը թէ դրսում եւ թէ ներսում անմիջապէս իջեցնել: Այդ կարգադրութիւնները եւ դասաւորումները վերջացնելուց յետոյ մենք բարձրացանք՝ մտնելու համար սրահ:

Քաղաքի պարէտը, որը ստուգում էր մուտքի մօտ յանձնարարագրերը (մանդատ), մեր զօրաբաժնի ներկայացուցիչներից չորս հոգու թոյլ չէր տալիս ներս մտնելու՝ պատճառաբանելով, որ յանձնարարագրերը անվաւեր են: Մենք մօտենալով բացատրեցինք, որ վերոյիշեալները ընտրւած են չորրորդ զօրաբաժնի զինւորների կողմից, ուստի անվաւեր չեն, թոյլ տւէք ներս անցնելու: Նա՝ պարէտը, նախկին զինւորական, շատ անվայել մէկ արտայայտութիւն թոյլ տւեց իմ հասցէին, որի համար ստացաւ մի շարք բռունցքներ քթին-բերնին, եւ իրեն ազատելու համար, իր «չերկեսկայի» մէկ բաժինը իմ ձեռքում թողնելով, արիւնլւայ ներս գցեց իրեն: Ջափարիձէն, դուրս գալով սրահից եւ տեղեկանալով դէպքի մանրամասնութեանը, նախ վերոյիշեալ չորս պատգամաւորներին ներս հրաւիրեց եւ ինձ թեւանցուկ ամբիօն բարձրացրեց՝ աթոռ առաջարկելով իր կողքին: Ժողովը շարունակւեց եւ վերջացաւ բոլշեւիկների ջախջախիչ պարտութեամբ:



## Ճշտումներ Վ. Իսկէնտերեանի «Հայրենիք» 1958թ. Մայիս 5-ում լոյս տեսած «Հայ կամաւորի մը յուշերի» վերաբերեալ

### Ե. Պահլաւունի

Կարդացի «Հայ կամաւորի մը յուշերը» Վ. Իսկէնտերեանի:

Յուշագիրը ըստ երեւոյթին խորապէս համոզւած է, որ անցել են 44 տարիներ, եւ դժւար թէ, իրենից բացի, ուրիշ որեւէ վերապրող գտնւի՝ իր գրի առած անճիշտ յերիւրածոյ, իրականութիւնից շատ հեռու շինծու մրոտածները ճշտելու համար:

Նախ մասերով եւ թւերով ճշտենք Ռեւանդուզի զօրոյժի քանակը՝ ղեկավարութիւնը յականէ յանւանէ, որպէսզի ընթերցողը գաղափար կազմի որքան է աղաւաղել Ռեւանդուզի անցուդարձը:

Ռեւանդուզի զօրաբաժնի հրամանատարն էր ոչ թէ Չեռնոզուբովը, այլ տխրահռչակ Ռիբալչենկօն (գեներալ մայոր)՝ մէկ զօրաբաժինով. բրիգադա, իսկ Չեռնոզուբովը հրամանատար էր յատուկ հեծելազօրի զօրամասերի եւ գտնւում էր իր սպայակոյտով ու գլխաւոր ոյժերով Ուշնիում, որը բնաւ Ռեւանդուզ չեկաւ եւ չտեսաւ:

Այդ զօրամարմնի թիւն էր 11.000 հետեւակ եւ հեծեալ: 3րդ սահմանապահ (պոգրանիչնի) գունդը՝ չորս գումարտակներով.

1ին գումարտակ, գլխապետ՝ Իլին, 900 սւին,

2րդ գումարտակ, փոխգնդապետ՝ Սակին 1000 սւին,

3րդ գումարտակ, փոխգնդապետ՝ Կոլեսնիկով 1000 սւին,

4րդ գումարտակ, գլխապետ՝ ֆօն Պալէն, 1000 սւին, հրամանատար՝ գնդապետ Պօպով գումարը 3900 սւին:

2րդ կոզաչի հերթական պօլտաւեան գունդը, հրամանատար՝ գնդապետ Ջախարով, 800 սուր:

3րդ կոզաչի հերթական գունդը, 800 սուր,

երկու գումարտակ պահեստի գնդից 2000 սակրաւորներ (սօպեօn), եւ մէկ գումարտակ՝ 750 շունչ, հրամանատար՝ գնդապետ Եակովլեւ,

թնդանօթաձիգներ՝ 250, 4 մարտկոց, գնդացիրային վաշտ՝ 200,

սանիտարաբժշկական՝ 80,

պարենաւոր (օբոզ)՝ 200 հոգի,

4րդ՝ դրուժինա՝ 1000 հրամանատար՝ Քեռի

7րդ՝ դրուժինա 1200 հրամանատար՝ իշխան Արղութեան
ընդանուր գումար՝ 11.180:

Իսկ պահեստի գնդի երկու գումարտակները գտնւում էին Խանէում Ծէյխին գերուսի պարսկական սահմանագլխում, որոնցից մէկ վաշտ գտնւում էր Դարաղալա միայն:

Այս էր Ռեւանդուզում եղած եւ նոյն ուղղութեամբ գտնւած զօրոյժի ճշգրիտ թիւը:

Մեր յուշագիր պ. Վարդան Իսկէնտերեանը որտեղից եւ ի՞նչ աղբիւրից է վերցրել այդ առասպելական 60.000ի հասցրած թիւը: Հարցնում ենք՝ որոնք էին մնացած վերոյիշեալ մեր բերած թիւերից դուրս զօրամասերը եւ ո՞ր ձեւին պատկանող:

Պ. Վ. Իսկէնտերեան հարցնում եմ, առաջին վաշտի վաշտապետն էր գլխապետ Սուրէն Տէր Զօրեանը՝ ունենալով իրեն օգնական անձմամբ Անանիկեանը (տրապիզոնցի, որը մեր գրոհի ժամանակ ընկաւ հերոսաբար կրծքից եւ թեւից գնդակներ ստանալով): Ինչպէ՞ս պատահեց, որ կիսավաշտը փոխանակ Անանիկեանին՝ այդ հերոս տղային, վստահելու, Ձեզ էր յանձնել: Որքան որ մենք ճանաչել եւ ականատես ենք եղել գլխ. Սուրէնի ռազմունակութեան աշխատանքներին, շատ հեռու է ձեր ներկայացրած Սուրէնից:

Մէկը կրծքից գնդակ ստանայ որը թիկունքից խոշոր բացւածքով դուրս գայ. այդ մահացու վերքից բուժւելու եւ գոնէ մէկ ամիս հանգիստ չունենալու, կազդուրւելու, ապա ռազմաճակատ մեկնելու, այդ արդեօ՞ք նման է ձեր նկարագրած Սուրէնին, որը կրկին վերադարձաւ Ռեւանդուզի ճակատը, սակայն, որովհետեւ Ռեւանդուզը պաշարւած էր, նա մնում է Դարաղալա՝ Բէկ Փիրումեանի, Միշա Արզումանեանի, Արշակ Նալբանդեանի մօտ, որոնք իրենց հետ բերած կամաւորների վաշտի ժամանակաւոր ղեկավար կարգեցին, որովհետեւ այդ կամաւորներն ուղարկւած էին մեր երկու կամաւորական գումարտակների համալրման համար:



# ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

## ԵՂԻՇԷ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ



* * *

Կարսի անկումը տեղի ունեցաւ 1920 թւի Հոկտեմբերի 30ին, շաբաթ օրը: Կարսի անկման ողբերգութեան մասին, որն առանձին նիւթ է, ես լռութեամբ եմ անցնում, որի վերաբերեալ թերեւս շուտով սկսեմ գրի առնել:[6] Առայժմ անդրադառնում եմ մեր գերութեանը եւ Հայաստան վերադարձին:

Կարսի անկումից յետոյ Հոկտեմբերի 30ին գերի մնալով՝ Էրզրում փոխադրեցին մեզ եւ 11 ամիս 20 օր գերութեան օրերին տանկական բոլոր «քարիքները» վայելելուց յետոյ, համաձայն թուրք-խորհրդային Կարսի «եղբայրական» դաշնադրութեան, մեզ ազատութիւն շնորհւեց. հինգ-վեց հազար զինւորներից կենդանի վերադարձան միայն 464 հոգի: Սպաներից մահացան երեք հոգի: 105 հոգուց մնացին 102 հոգի: Փոխգնդապետ Թումանեանը (Տումանով)՝ իր կնոջ հետ Տրապիզոն գնացին, Համբարձում Մելիքեանը Պոլիս անցաւ, իսկ Ռուբէն Ծիրւանեանը, որը տանկական բանակի սպա էր նախապէս եւ փախած Կովկաս, իմացւեց եւ գնդակահարւեց, իսկ երեք սպաներ եւ 11 զինւորներ ամիսներ առաջ փոխանակւել էին տանիկ սպաների եւ զինւորների հետ: Ինչպէս ասւեց, մեր գերութիւնից վերադարձը պայմանաւորւած էր Մոսկւայի եւ Կարսի դաշինքներով: Եւ մեզ տանիկ զինւորական իշխանութիւնը հաւաստիացրել էր, որ մեր նկատմամբ հետապնդում չի լինելու ըստ պայմանագրի: Վստահելով զինւորական իշխանութեան այդ յայտարարութեանը՝ մենք համաձայնեցինք Էրզրումից Հայաստան վերադառնալ: Սակայն ե՞րբ են Լենինի լամուկները յարգել իրենց բազում խոստումները, որ այս դէպքում էլ յարգէին: Դեռ նոր էինք հասել Ալեքսանդրապոլ, երբ վագոնները լցւեց ծանօթ-բարեկամների մի ամբողջ բանակ, եւ իւրաքանչիւրն աշխատում էր իր հարազատին, բարեկամին կամ ծանօթին տեսնել ու տուն տանել: Ծատերը մօտեցան, ողջագուրւեցին, եւ սակայն իմ զարմուհի օր. Ծ. Հ.-ն մօտենալով շտապեցրեց,

---

6 Դժբախտաբար չիրագործւեց հանգուցեալ հօրս այս ցանկութիւնը ինչպէս նաև այլ ռազմաճակատների իր յուշագրութիւնները, որոնցից միայն կցկտուր նօթեր են մնացել: (*Խմբ.*).

որ անմիջապէս դուրս գամ վագոնից, որովհետեւ Երեւանից հեռագրային կարգադրութիւն կայ վեց հոգու անմիջապէս ձերբակալել: 1. Ե. Պահլաւունի, 2. Դոկտ. Ա. Բաբալեան[7], 3. Զօր. Դ. Բէկ Փիրումեան, 4. Վահան Տէր Առաքելեան, 5. Համբարձում Մելքոնեան եւ 6. Միշա Արզումանեան: Ես այդ լուրն անմիջապէս յայտնեցի վերոյիշեալներին եւ զգուշացրի, իսկ ինքս օր. Ծ. Հ.-ի հետ շտապեցի իրենց բնակարանը, որտեղ Ծ. Հ.-ի մայրն անմիջապէս կարգադրեց սպիտակեղէնի եւ անհրաժեշտ վերնահագուստի խնդիրը: Օր. Ծ. Հ.-ն, ինձ իրենց տանը թողնելով, շտապեց չեկա՝ տեղեկութիւններ բերելու, վերադարձաւ եւ հաղորդեց, որ ստացել է երկրորդ հեռագիր-կարգադրութիւնը՝ բոլորին ճանապարհելու Երեւան:

Իմ այդ ազնիւ զարմուհուց, որը պատասխանատու պաշտօն ունէր, իմացայ մեզ ուղեկցող տաճիկ գնդապետի միջամտութեան ու պահանջի մասին, որ «Ոչ մէկին ձերբակալելու իրաւունք չունէք համաձայն մեր պայմանի եւ Լենինի հրովարտակի, ուր ասուած է, թէ նախկին յանցանքները ներւում են անխտիր բոլորի նկատմամբ»: Ուստի ինձ վստահուած այդ 100 սպաներին ես մեր ներկայացուցչի ներկայութեամբ պիտի յանձնեմ Երեւանի կառավարութեանը: Այդ արարողութիւնը կատարուեց Երեւանի կայարանում, ուր հազարաւոր դիմաւորողներ էին եկել՝ չնայած լոյսը դեռ նոր էր բացւում: Յուզիչ էր տեսարանը, եւ մթնոլորտը՝ ճնշող: Չկային շատերի հարազատները: Ոմանք մահացած էին՝ չկարողանալով տոկալ հրէշածին վարչակարգի անսահման կամայականութիւններին, հալածանքներին ու տանջանքներին: Ոմանք խողխողուած նախընթացը չունեցող Լենին-Ստալինեան հրէշային ծնունդ չեկաների զնդաններում, հարազատները քշուած հեռու հիւսիս՝ Սիբիրի տունդրաները կամ Սոլովկի: Շատերը դեռ տաժանքի ճանապարհին էին կամ Հայաստանի ու միւս խորհրդային հանրապետութիւնների բանտերում: Ոմանք էլ ճողոպրած, տարագրուած օտար երկրներ. Պարսկաստան եւ այլն... Սպասուած ուրախ հանդիպման, գրկախառնումի եւ ժպիտի փոխարէն՝ հեկեկանք, փղձկում, ուշաթափութիւն եւ ողբ միայն: Ծով արցունքների յորդումով դիմաւորեցին մեզ... մոռանալ այդ օրը, չյիշել անկարելի է: Այն մեղմ փսփսոցով անէծքները տարեցների գրկախառնումի ժամին, երիտասարդների սպառնական դէմքերը՝ շանթ ու կրակ արտայայտող աչքերով, որոնց մէջ այդ վայրկեանին տեսնում էինք կատաղի վրէժխնդրութեան կուտակուած ցասումը: Չգիտեմ՝ ինչ էր կատարւում այդ

[7] Դոկտ. Ա. Բաբալեանը նախապէս անցել էր Պարսկաստան: (*Ե. Պ.*)





Կարսի ընդհանուր տեսարան:



Կարսի ընդհանուր տեսարան:

վայրկեանին կայարանում հաւաքւած բազմահազար ճնշւած, ահաբեկւած, տառապած ժողովրդի ներաշխարհում: Արդեօ՞ք գերութիւնից վերադարձող, տաճկական եաթաղանից հրաշքով ազատւած այդ 100 հոգուց փրկութիւն եւ ազատութիւն էին սպասում: Մէկ վայրկեան ես չկարողացա ըմբռնել իմաստը իմ մտերիմներից 3 հոգու ինձ տւած հարցի. «ինչո՞ւ վերադարձաք այս դժոխքը»…

Ի՞նչ պիտի պատասխանէի. Խե՞նթ էք դուք… ինչպէս թէ ինչո՞ւ վերադարձաք: «Ոչինչ, ապրիր միառժամանակ, ուրիշն էլ քեզ պիտի նման հարցին պատասխանի նոյնը, խե՞նթ ես»: Այո, սիրելիս, պայմանները, քեզ եւս կը խենթացնեն, ապրիր մի քանի օր միայն:

Այսպէս դիմաւորեցին մեզ: Դեռ շատերն էին մօտենում գրկախառնւում, արտասւում, հեկեկում, անիծում տիրող իրաւակարգը… Այդ ծանր րոպէներին էր, որ կայարանի ետեւից հեռուից նկատւեցին բեռնատար մեծ մեքենաներ չեկայի զինւորներով… ժողովուրդը խռնւեց, եւ ամեն մէկը աշխատեց որքան կարելի է շուտ հեռանալ կայարանից: Երկար չտեւեց, կայարանը շրջապատւեց չեկիստների մէկ վաշտով, եւ հրահանգւեց ցրւել, ու ամեն ոք իր տունը գնաց: Ես անտեղեակ, թէ ի՞նչ է կատարւել մեր տան հետ, կարծելով, որ գոյութիւն ունի մեր ընդարձակ եւ յարմար բնակարանը, մեզ մօտ հրաւիրեցի Զօր. Դանիէլ բէգ Փիրումեանին, Վ. Տէր Առաքելեանին ու Միշա Արզումանեանին, եւ մերոնց բերած կառքով մեկնեցինք տուն: Երբ տուն հասանք, նկատեցի, որ մեր բազմանդամ ընտանիքը խցկել են երկու սենեակներում, իսկ արժէքաւոր շատ իրեր եւ կարասին անկանոն իրար վրայ թափւած են պատշգամբում եւ միջանցքում…

Ապրում էինք Աբովեան փողոցի N 21 կուլտուրայի (մշակոյթի) տան դիմաց, որտեղ ապրելիս էր եղել ժամանակին վարչապետ Խատիսեանը: Դժւար է նկարագրել հանդիպումը մօրս հետ: 80ին էր մօտեցել: Իր ժամանակին այդ գեղեցիկ, բարձրահասակ կինը՝ երկար տարիներ լաւ նժոյգներ սանձահարած եւ ձիարշաւների մասնակցած, կուչ էր եկել սենեակի վերեւում՝ բազմոցի մէջ շալով փաթաթւած: Ես ժամանակ չտւի նրան տեղից շարժւելու եւ գիրկը նետւեցի, արցունքներով լեցուն աչքերով… Ես մօրիցս սրտապնդիչ ոգեւորող շատ բաներ էի սպասում, որովհետեւ նա ինձ 1914 թւին Էջմիածնի կայարանում դիմաւորած պահին, երբ ես մի քանի հարիւր կամաւորներով Բագւից Թիֆլիսի վրայով Պարսկաստան էի անցնում պատերազմի նախօրեակին, Սամսոն խանի եւ Սմբատի հետ, երբ դիմաւորող շատ մայրեր արցունքով եւ լացով էին ճանապարհ դնում իրենց

զաւակներին, մայրս, իմ աննման մայրս, մի գեղեցիկ հակիրճ ճառով սկսեց պախարակել, կարգի հրաւիրել իգդիրցի մայրերին, որոնք իրենց զաւակներին տեսնելու էին եկել կայարան: Նա իր բարձր հասակով մօտեցաւ ինձ. «Իմ զաւակս, գիտցիր, որ ես լա՛ց կլինեմ ա՛յն օրը, երբ դու մահ կունենաս թիկունքից ստացած գնդակից կամ սւինից: Քթիցդ գայ իմ տուած կաթը, եթէ դու թշնամուց դողաս: Ես կաթ եմ տուել քեզ, օրօրոցիդ մօտ գիշերներ եմ անցկացրել, հասակ ես նետել, ես քեզ հեքիաթներ եմ պատմել, հերոսական դրւագներ մեր անցեալից… Ես քեզ զինւոր եմ պատրաստել այսօրւան համար: Գնա, իմ ազնիւ տղաս, պաշտպանիր հայրենիքդ եւ ցեղակիցներիդ»: Նա ինձ չհամբուրեց, Իգդիրից իր հետ բերած նւէրները իր ձեռքով բաժանելով կամաւորներին՝ նոյնքան բաժին յանձնեց եւ ինձ, ու մենք մեկնեցինք Պարսկաստան:

Ահա այդ կնոջ առաջին խօսքը եղաւ. «Ինչո՞ւ եկար, ինչո՞ւ վերադարձար տաճիկների մօտից այս դժոխքը, բալա, տաճիկներին գերի մնայիր: Նրանք քեզ չսպանեցին, տարիներ կուեցիր տաճիկների դէմ, 4 անգամ վէրք ստացար տաճիկներից, բայց ոչ մահացու: Սրանց հասցրած վէրքից դու չես փրկւի: Գնա մի մնա: Այս դժոխքում, քո էլ գլուխը պիտի ուտեն»: Այդ պահին քրոջս աղջիկը՝ պատասխանատու կուսակցական, Կոմկուսի անդամ, մեր պահած, մեծացրած եւ սիրւած բոլորիս կողմից եւ նոյնպիսի հարազատութեամբ մեզ կապւած, «Մեծ մայրիկ, ինչո՞ւ ես նման բաներ խօսում»,– ասաց: «Դէ, գետինը մտնես դու էլ, քո Լենինն էլ, բոլորդ էլ, կերաք, լափեցիք բոլորը, բոլորին: Կոտորեցիք, Սիբիր քշեցիք, չխնայեցիք հարազատներին անգամ»:

Մայրս մեծ պատրաստութիւն էր տեսել, եւ առաջին անգամ մէկ տարուց յետոյ մենք վայելեցինք հայ շէն սեղանի բարիքները՝ արցունքի հետ կուլ տալով պատառները:

Այդ դրութեան մէջ էինք մեզ մօտ, դեռ նոր սեղանի շուրջը հաւաքւած, երբ երկու իգդիրցի տղաներ շտապ ներս մտան եւ ինձ դիմելով՝ ասացին. «Եղբայր, շուտ փախիր, գալիս են քեզ ձերբակալելու»: Ես հազիւ էի դուրս պրծել, երբ ներս էին մտել չեկիստներ եւ ինձ պահանջել: Մայրս պատասխանել էր, որ նա նորից վերադարձաւ Տաճկաստան՝ այս դժոխքից պրծնելու համար: Նա իր երբեմնի պաշտած հայրենիքը դժոխք էր տեսնում:





Եղիշէ Պահլաւունին Դիլմանի եւ Ռեւանդուզի ճակատներում մղած կռիւների համար պարգեւատրւած Գէորգեւեան շքանշաններով:



Եղիշէ Պահլաւունու մայրը՝ Ծովինար Կամսարական Պահլաւունի։

Տանից հեռանալով եւ ճողոպրելով չեկիստների հետապնդումից, առանց կանգ առնելու եւ հանդիպող ծանօթների բարեւներին պատասխան տալու՝ ես ինձ գտայ իմ ազգականներից մէկի բնակարանում, որը ապրում էր իր սեփական տանը՝ մեծ եւ լաւ մշակուած պարտէզում, նա ընտանիքով պատրաստւում էր մեզ մօտ անցնելու իմ վերադարձի առնչութեամբ:

Տեսնելով ինձ կիսահագնուած դրութեան մէջ, ատրճանակը ձեռքիս, գլխաբաց եւ կապոցը թեւիս տակ, վրայ թափւեցին եւ շփոթուած սկսեցին հետաքրքրւել պատահածի մասին: Ես կարճ կապեցի եւ ուտել ուզեցի: Անմիջապէս սեղան պատրաստւեց հայի՝ այն էլ ժամանակին բարեկեցիկ կեանք տեսած հայի սեղան: Ինչ որ հնարաւոր էր սեղանի վրայ շարւեց, սեփական տան գինին հո առատ էր: Շատ ժամանակ էր անցել, մէկ ամբողջ տարի, որ դանակ-պատառաքաղով սեղան չէի նստել եւ նման մաքուր պատրաստուած կերակուրներ չէի վայելել, սակայն կերա չափաւոր՝ վախենալով գերութեան մէջ միայն չորբայից կուչ եկած աղիքներս չպայթեցնել:

Ճաշից յետոյ ինձ ստիպեցին հանգստանալ, եւ տան երկու փոքրիկները լուր էին տարել մայրիկիս եւ մերոնց, իմ որտեղ լինելուս եւ ապահովութեան մասին: Մայրս լուր էր ուղարկել ինձ. առանց յետաձգելու անցնեմ Պարսկաստան, որտեղ տարագրուած էր իմ եղբայրս՝ Արտաշէսը[8]:

Երեք օր առանց քաղաք դուրս գալու ես հնարաւորութիւն ունեցայ բաւական մանրամասն տեղեկութիւններ հաւաքել ինձ հետաքրքրող անհատների մասին, կուսակցութեան գոյութեան եւ գործողների, որոնցից շատերը չկային, ոմանք աքսորուած կամ չեկայի նկուղներում էին: Ինձ մօտ եկան վերջին գիշերը իգդիրցի երկու հոգի, չեկայի կողմից խիստ հետապնդւողներ, որոնք երկու տասնեակ հայրենակիցների հետ, լաւ զինուած, ապրում էին շրջակայ այգիներում եւ ձորերում:

Ես անմիջապէս իմ համաձայնութիւնս տւեցի միանալ իրենց եւ ղեկավարութիւնը ստանձնել՝ ըստ իրենց պնդումների: Տիգրանը, այդ հին ռազմիկը եւ յանդուգն ահաբեկիչը, որ ահաբեկումը արհեստ էր դարձրել, ան-

---

[8] Արտաշէս Պահլաւունի՝ փետրուարեան ապստամբութեան մասնակից ղեկավարներից: (*Խմբ.*)

միջապէս դուրս գնաց եւ 1 ժամ չանցած՝ մէկ հատ ռուսական կարաբինով եւ երկու հարիւր հատ փամփուշտներով վերադարձաւ, եւ ասաց թէ, որովհետեւ դու տասնոց ունես, քեզ համար միայն փամփուշտներ եմ բերել 60 հատ:

Բուռն ցանկութիւն առաջացաւ մէջս նախքան քաղաքից հեռանալը տեսնել մայրիկիս, եղբայրներիս, հարսներին եւ երեխաներին: Այդ ցանկութիւնն էլ Տիգրանը յանձն առաւ իրականացնել: Նա մեզ առաջարկեց ընթրիքի սեղանը պատրաստել մինչեւ իր վերադարձը: Փ-ի հարսը եւ աղջիկը՝ Ս-ն, սկսեցին ընթրիքի պատրաստութիւնը: Ժամը երեկոյեան 8:30ին Տիգրանը վերադարձաւ: Նա տեսել էր մերոնց բոլորին եւ պատուիրել պատրաստ լինեն երկար չսպասեցնելու եւ պահելու ինձ: Մենք երեքով ընթրիքից յետոյ նախ անցանք մայրիկի մօտ, որտեղ քոյրերս եւ Արտաշէս եղբօրս կինը՝ երեխաներով, սպասում էին: Տեսնուեցի միւս եղբայրներիս, քոյրերիս հետ եւ ժամը 11:40ին երեքով իջանք Զանգուի ձորը, անցանք միւս ափը: Լոյսը չբացուած՝ մենք հասանք Ուչթափալարներ, որտեղ հաւաքուած էին 36 հոգի՝ լաւ զինուած, մարզուած, որոնցից շատերը մէկից ավելի վէրքեր էին ստացել պատերազմներում:

Իմ եւ նրանց ուրախութեանը չափ ու սահման չկար, զէնքով բաժանուել էինք, զէնքը ձեռներիս հանդիպում էինք նորից:

Տղաները մի քանի տասնեակ կաքաւներ եւ տատրակներ էին որսացել: Աշտարակից 3 փոքր տկճոր ընտիր գինի եւ մէկ տասնեակ շիշ Արարատի կոնեակ պատրաստի սպասում էին մեզ: Անմիջապէս կրակներ վառեցին ու մաքրուած կաքաւները շամփրեցին: Մեր ուրախ կերուխումը շարունակուեց մինչեւ լոյս: Տղաները մանրամասնօրէն պատմեցին ինձ բոլշեւիկների մէկ տարուայ ընթացքում կատարած վայրագութիւնների եւ գազանութիւնների մասին: Ես շատ համառօտ տուեցի Կարսի անկման եւ մեր մէկ տարուան գերութեան մասին տեղեկութիւններ: Առաւօտեան ժամը 8ն էր. երկու տասնեակ մեզ հրաժեշտ տուեցին՝ մեկնելով, մէկ տասնեակը՝ դէպի Երեւանի այգիները, միւսը՝ դէպի Աշտարակի կողմը: Ուչթափալարներում զանազան աննկատելի շրջաններում տղաները պատրաստել էին հիւղեր, որոնք լաւ պատսպարաններ էին: Բացի այն, որ ցուրտ օրերին պատսպարում էին իրենց, այդ հիւղերը միաժամանակ ծառայում էին իբրեւ պահեստներ: Ես տեսայ լաւ զէնքեր, ռազմամթերք եւ բաւական պաշար: Հիւղերից մէկում պահւում էին 6 հատ լաւ ձիեր: Ես զարմացած հարց տուի Մեխակին (Նուխեցի)՝ այդ աննման ահաբեկիչին, բոլորի կողմից սիրուած յանդուգն ռազ-



միկին, որը իբրեւ թէ ներուեց, յետագայում դաւաճանօրէն, խաբեբայութեամբ, իմ բանտարկուած ժամանակ, գնդակահարուեց Երեւանի չեկայում (1922 թւին): Ինչի՞ համար են այդ գլխացաւանք ձիերը, որոնք թէ ժամանակ են խլում եւ որ գլխաւորն է, կեր են պահանջում: Նա ասաց, թէ այդ ձիերը մեզ շատ են պէտք գալիս Դիլիջանի եւ Ղարաքիլիսէի «Անտառային եղբայրների» հետ կապ պահելու եւ որեւէ անակնկալ դէպքի համար: Ես տալիս եմ անուններ, որոնց չեկան գնդակահարել է: Մնացածների մասին խուսափում եմ, որովհետեւ նրանց մասին տեղեկութիւնները պակսում են, եւ ինձ յայտնի չէ նրանց ողջ թէ մեռած լինելը:

Հոկտեմբեր, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսները մենք անցկացրինք Երեւանի այգիներում եւ մեծ մասամբ Ուչթափալարներում: Օրըստօրէ ստուարանում էր մեր թիւը: Ամեն կողմից գալիս էին դժգոհները: Եկողները ենթարկւում էին ամենախիստ քննութեան: Գրեթէ բոլորն էլ ճանաչուածներ էին եթէ ոչ մէկիս, միւսի կողմից: Ստուարանում էին եւ Ղարաքիլիսէի ու Դիլիջանի «Անտառային եղբայրները» (այսպէս էին կոչւում անտառայինները): Վերոյիշեալ երկու շրջանները գործում էին անջատ-անջատ: Քանիցս աշխատանքներ էր տարուած եղել միացման եւ միասնական գործունէութեան, ապարդիւն էր անցել՝ մէկը միւսին չի ենթարկուել: Դիլիջանը ղեկավարում էր սպա Xը՝ նախկին էսէռ, Բագւի լաւ սպաներից մէկը: Իսկ Ղարաքիլիսէն՝ Լիւդւիգը եւ Մ-կը: Լիւդւիգը Ղարաքիլիսէի չեկայում գնդակահարուեց 1922 թւին: Իսկ Մ-կը Վրաստանից փախած յայտնի մէկն էր. երկար տարիներ ասպատակելով Վրաստանի զանազան շրջաններ՝ ապաստանեց մեզ մօտ, մեր հանրապետության օրօք, եւ աչքի ընկաւ իր քաջագործութիւններով: Նա եւս գնդակահարուեց չեկայի կողմից 1922ի վերջում: Նոյեմբեր 25-26ին 1921թ. դիլիջանցիների առաջարկութեամբ մենք՝ 3 շրջաններս, ունեցանք համագումար՝ Երեւանի Դալմայի շրջանի այգիներից մէկում: 5ական՝ Դիլիջանից եւ Ղարաքիլիսայից եւ 7 հոգի մենք: Սոյն համագումարին մասնակցում էին 3 սպաներ քաղաքից. գնդապետ Ա.-ը, Ա. Գ.-ն հետեւակ գլխապետ եւ գլխապետ Xը ձիաւոր գնդերից: Սոյն գնդերը այդ ժամանակ կանգնած էին Ջաֆարաբադ գիւղում՝ Երեւանի եւ Վաղարշապատի խճուղու վրա: Սպաները մեր կուսակցական ընկերներից էին եւ վստահելի:

Համագումարում նախ ստուգեցին ցուցակները, որից պարզուեց, որ 2000ի մօտ զէնքի ընդունակ եւ անձնուէր տղաներ պատրաստ են առաջին կանչին կենտրոնանալու նշանակուած շրջաններում: Օրակարգի խնդիրներն էին՝

1. շրջանների միացման, 2. մէկ ղեկավարութեան, 3. ապստամբութեան եւ 4. զեկուցում սպաների զօրքի մասին:

Միացումն անցաւ միաձայնութեամբ: Մէկ ղեկավարութեանը ձայների ճնշող մեծամասնութեամբ, դէմ էին Ղարաքիլիսէի 3 պատգամաւորները: Ապստամբութեան կողմնակից էին 3 ղարաքիլիսէցի եւ երկու դիլիջանցիներ: Նախքան քուէարկելը ես առաջարկեցի յետաձգել ապստամբութեան խնդիրը, գրել Թաւրիզ կամ երկու հոգի ուղարկել՝ մանրամասն զեկուցման համար ու խորհուրդ հարցնելու՝ իմանալու նման պարագայում ինչ տրամադրութիւն կունենան եւ խորհուրդ կտան Թաւրիզում եղած մեր ղեկավար ընկերները: Մեծամասնութիւնն ինձ հետ միացաւ, այդ խնդիրը քուէարկութեան դրուեց, եւ ապստամբութեան խնդիրը չանցաւ:

Սպաների զեկուցումը շատ հետաքրքիր էր. պարզուեց, որ զինուորների մէջ օրըստօրէ անում է զզւանք եւ ատելութիւն օրւայ ղեկավարների եւ զազրելի չեկայի վայրագութիւնների հանդէպ: Ըստ սպաների տեղեկութեան՝ Մոսկւայից վերջերս (Նոյեմբերին) ստացւած է մէկ խիստ հրահանգ եւ կարգադրութիւն: Ամեն մէկ փոքր շարժում որեւէ շրջանում, ճնշել ամենախիստ եւ անողորմ կերպով, չխնայել ամբողջ շրջանը՝ համարելով շրջանը մասնակից շարժման: Կատարուեց ղեկավարի եւ օգնականի ընտրութիւնը: 18 ձայնով ընտրուեցի ընդհանուր ղեկավար, իսկ օգնական՝ գնդ. Ա. Խը: Անտառայինները համբուրուեցին եւ երդուեցին հայրենիքի անունով համերաշխ լինել միմեանց հետ եւ գործել համաձայն ընդհանուր կարգադրութեան: Համագումարը վերջանալուց յետոյ պատգամաւորները մեկնեցին իրենց շրջանները՝ խոստանալով առանց ընդհանուրի համաձայնութեան բանակցութիւններ չսկսել որեւէ վերին կամ ստորին կառավարական պաշտօնեայի հետ՝ որեւէ խնդրի կամ ներման վարչական օրինականացման շուրջ:

Ես ապստամբութիւնը նկատեցի արկածախնդրութիւն, որովհետեւ միայն Հայաստանի ապստամբութեամբ հնարաւոր չէր ազատագրուել: Առաջարկեցի ղարաքիլիսէցիներին կապ ստեղծել Վրաստանի ապստամբ շրջանների հետ հնարաւորութեան սահմաններում: Օզուրգիտի եւ Թելաւի շրջաններում շարժումներ կային այդ ժամանակ: Իսկ դիլիջանցիներին՝ ազերբէջանցիների հետ: Սակայն վերջինների նկատմամբ՝ վերապահօրէն:

Չեկան ծայրայեղ անհանգստութիւն էր ցուցադրում: Նա տեղեակ էր անտառայինների աշխատանքների մասին: Յետոյ իմացուեց դիլիջանցիներից, որ չեկան յատուկ մարդ էր մտցրել անտառայինների մէջ, որը տեղեկութիւններ էր հաղորդում չեկային: Այդ անձնաւորութիւնը՝ ոմն Ռուբէն, իմաց-



ում է եւ անտառից դուրս են բերում ու Դիլիջան-Ղարաքիլիսա խճուղու վրայ սպանում: Նոյն դէպքից յետոյ չեկան սկսեց աւելի տենդագին աշխատանքի՝ զանազան անձնաւորութիւնների միջոցաւ բանակցութիւնների: Բանագնացների միջոցաւ խոստումներ էր տրւում անխտիր բոլորին, որ օրինականացումից յետոյ որեւէ մէկը նորից հակակոմունիստական քայլ չանի: Չեկայի կողմից փորձեր չեղան զէնքով ցրելու շրջանների դժգոհների խմբերը: Իմ հարազատներից մէկի միջոցաւ Մեասնիկեանը ցանկութիւն յայտնեց տեսակցութեան, որի համար տեղեկացրի շրջաններին, եւ հաւանութիւն ստանալուց յետոյ մենք ժամադրուեցինք Երեւանի այգիներից մէկում: Տեսակցութեան ընթացքում Մեասնիկեանը իր գլխով երաշխաւորութեան եւ յեղափոխականի ազնիւ խօսք տուեց, որ «ոչ ոք չի հետապնդուի եւ բանտարկուի, նոյնիսկ շատերիդ կարիքը ունենք զանազան պետական աշխատանքների համար՝ որպէս փորձւած, տեղեակ եւ ծանօթ տեղական պայմաններին, ժողովրդին»:

Երկու շաբաթ ժամանակ պահանջեցի պատասխանի համար ու անմիջապէս մեր ժամադրութեան մանրամասնութիւնների մասին տեղեկացրի շրջաններին եւ լիազօրութիւն պահանջեցի համաձայնութեան դէպքում:

Ժամանակին պատասխան ստացուեց, ու երկրորդ ժամադրութեան ժամանակ ես պահանջ դրեցի, որ ոչ մէկ դժգոհ (չնայած ինքը՝ Մեասնիկեանը յաճախ «ապստամբ» էր գործածում) չպիտի պատժւի կամ պարտադիր աշխատանքի, ծառայութեան չհարկադրուի: Հէք Մեասնիկեան իզուր երաշխաւորեց գլխով եւ կոմունիստի ազնիւ խօսքով: Նախ՝ վերջին «ապրանքից». սկսած Լենինից՝ ոչ մի կոմունիստ չի ունեցել, եւ տարօրինակ կլինէր ունենային: Իսկ իր գլուխը, ամենազօր հրէշի՝ չեկայի համար մէկ սեւ գրոշ չարժեց, ինչպէս ցոյց պիտի տային այն բոլոր խժդժութիւնները, որ տեղի ունեցան օրինականացումից յետոյ:

Մեասնիկեանը ինձ առաջարկեց տեսակցել ժամանակի չեկայի պետ տխրահռչակ Շաւարշ Ամիրխանեանի հետ: Այդ թէ հոգեպէս եւ թէ ֆիզիկապէս հիւանդ դահճապետին ես հանդիպել էի Դիլիջանում՝ մայիս-յունիսեան կռիւների ընթացքում՝ Ջարխեցում: Ինձ ընդունեց վերին աստիճանի ջերմ եւ համբոյրներով՝ յոյս յայտնելով, որ միասին կաշխատենք հայրենիքի վերաշինութեան գործում:

Յունուար 25ին 1922թ. զէնքերի խոշոր մասը բաժանելով վստահելի գիւղացիներին՝ մնացած մասը մենք յանձնեցինք կառավարութեանը: Հա-

մաձայն մեր պայմանի՝ տղաները ցրուեցին զանազան շրջաններ, որտեղ բնակութիւն էին հաստատել իրենց հարազատները: Օրինականացման օրուանից ես նկատեցի, որ իմ ամեն քայլափոխիս հետեւում են՝ ուր եմ գնում, ում հետ եմ լինում եւ տուն վերադարձիս նկատում էի, թէ ինչպէս մէկ կամ երկու հոգի միշտ ինձ աչալրջօրէն հետեւում են: Հետապնդումներն այն աստիճան վրան բաց էին, որ ես ստիպուած շատ ազգականների եւ ծանօթների հրաւէրներին չէի պատասխանում:

1922թ. Յունուարին օրինականացումից (լեգալիզացիայից) յետոյ ապրում էի Երեւանում, յաճախակի հանդիպում էի ղեկավար մեծամասնականների, Ալ. Մեասնիկեանին, Ս. Տէր-Գաբրիէլեանին, որի հետ շատ տարիներ Բագւում մտերմութիւն ունէինք, Ս. Փիրումեանին, որը իմ կաթնեղբայրն էր, Հայկ Բժշկեանին (Գայ) եւ ուրիշների, որոնք սակայն անզօր եղան ինձ հովանաւորելու եւ փետրվարի 18ին ռուսական յատուկ բաժանմունքի (օսոբի օտդել) միջոցաւ ինձ ձերբակալեցին եւ մի քանի օր վերոյիշեալ բաժանմունքում պահելուց եւ նախնական քննութիւն կատարելուց յետոյ յանձնեցին Արմչեկային: Շատ արտառոց մեղադրական էին կազմել իմ մասին:

1) Մեղադրում էին ինձ, որ ես տաճկական գերութիւնից, Էրզրումից Հայաստան եմ եկել եւ ապստամբութեան տրամադրութիւն ստեղծել եւ այդ ապստամբութեան յաջողութեան համար ապահովել տաճկական օժանդակութիւնը թէ նիւթապէս եւ թէ զինուորական միջոցներով, եւ վերադարձել եմ կրկին Էրզրում՝ զեկուցման համար կատարուած աշխատանքների մասին: Ահա մէկ օրինակ բոլշեւիկեան տրամաբանութեան... Տաճկական գերութիւնից ազատուել եւ կրկին վերադառնալ տաճկական գերութեան... դա միայն անբարոյականացած գարշելի բոլշեւիկ ճիւաղը կարող է որպէս մեղադրանք ներկայացնել...

1920թ. մայիսեան բոլշեւիկեան ապստամբութեան եւ իրենց անփառունակ փախուստը քողարկելու համար դիմել էին ներելի եւ աններելի ամեն տեսակ միջոցների: Այդ ապստամբութեան ճնշման նպատակով մենք աշխատում էինք երկու ուղղութեամբ՝ Երեւանից եւ Ղարաքիլիսէից: Վերջինի ղեկավարութիւնը մեզ էր յանձնուած եւ մենք Ջաջուռի բարձունքները գրաւած, թոյլ չէինք տալիս բոլշեւիկեան զրահապատին առաջ շարժուելու դէպի Ղարաքիլիսա: Մայիս 14ին, առաւօտեան ժամը 3.3/4 անց մենք առաջին մտնողը եղանք Ալեքսանդրապօլ. բոլշեւիկները, նկատելով երկու



կողմից գրոհող զօրամասերը, ամենաանպատուաբեր ձեւով փախուստի էին դիմել եւ հողմացրիւ եղել: Կայարանում մեզ դիմաւորեցին աննախընթաց ոգեւորութեամբ: Կին, տղամարդ ողջագուրւում էին ծանօթ թէ անծանօթ: Այդ գրկախառնութեան վայրկեանին մէկ պատահական գնդակ մահացու գետին տապալեց մեր լաւագոյն երիտասարդներից ուսանող Հեպերիկին ԿԿ-ի անդամ, ինձ մեծ վիշտ պատճառելով: Հեպերիկի կինը այդ սպանութիւնը իր ցուցմունքի մէջ, որպէս վկայ, վերագրել էր ինձ, որ իբր ես եմ գնդակահարել նրան: Երբ ես զարմանք յայտնեցի եւ ապացոյց պահանջեցի, նոքա յաջորդ հարցաքննութեանը անձամբ տիկնոջը երես երեսի բերեցին, եւ նա կրկնեց իր այդքան անբարոյական ցուցմունքը. ինձ ոչինչ չէր մնում ասելու, եւ չկարողանալով տիրել ջղերիս՝ միայն պոռնիկ բառը յարմար գտայ ասելու այդ նորաձեւ ճիւաղին... Նա պատիւ պահանջեց: Սակայն քննիչը ընթացք չտուեց նրայ պահանջին: Ահա սուտ ու շինծու դէպքերի նման մեղադրանքների մի շարք էր յօրինուած իմ դէմ:

Երկու ամիս Երեւանի չեկայում պահելուց յետոյ ինձ փոխադրեցին Թիֆլիս՝ Զակչեկայի տրամադրութեան յանձնելով: Այդ ժամանակ տակաւին գոյութիւն ունէր Անդրկովկասեան խորհուրդների միութիւնը. խորհրդային իւրաքանչիւր հանրապետութեան վարչապետը 4 ամիս հերթագայօրէն պիտի նախագահէր միացեալ Անդրկովկասեան կառավարութեանը: Այդ ժամանակաշրջանը զուգադիպեց Մեասնիկեանի հերթագայութեան, իսկ Հայաստանի վարչապետութեան համար Մոսկուայից Հայաստան եկաւ Ս. Տէր-Գաբրիէլեանը: Հինգ ամիս էր անցել արդէն իմ բանտարկութեան օրից, երբ Ս. Տէր-Գաբրիէլեանը իր երաշխաւորութեամբ եւ Մեասնիկեանի աջակցութեամբ ինձ ազատ արձակեցին Զակչեկայից եւ առաջարկեցին անմիջապէս անցնել Երեւան:

Երեւանում յայտարարուեց, որ շուտով սկսուելու է Հ.Յ. Դաշնակցութեան դատավարութիւնը դռնբաց: Համաձայն խորհրդային իշխանութեան յայտարարութեան՝ դատավարութեան օրուայ թուականի մասին՝ ՀՀ Պարլամենտի շէնքի (որտեղ նկատի էր առնուած դատավարութեան վայրը), վաղ առաւօտից դիմացի զբօսայգին, հրապարակը, Աբովեան պողոտան ու մայթերը լցուած էին ժողովրդով: Իսկ շէնքում, սրահում եւ միջանցքներում շարժուելու տեղ չկար: Կազմակերպողները, ի տես այդ աննախընթաց խռնուման, յայտարարեցին, որ դատավարութիւնը յետաձգւում է անորոշ ժամանակով, որի մասին կյայտարարուի շուտով: Երկու օր անց, նշանակուեց օրը՝

հրաւիրատոմսերով: Ես մոռացած չէի: Ինձ ուղարկել էին չորս տոմս: Մեզ առաջնորդեցին առաջին շարքերը համաձայն NN-ների:

Նախորդ օրուայ խռնումից աւելի ժողովուրդ էր լեցուել վերը յիշուած կենտրոնում: Մեզ պատուաւոր տեղ բազմեցրին: Չէ՞ որ դատւում էր Հ.Յ. Դաշնակցութիւնը, իսկ մեզ որպէս մերձաւոր բարեկամներ դատապարտեալի, ամենաաչքի զարնող տեղերից մէկն էին յատկացրել: Թերեւս միտումով՝ չգիտեմ:

Յիշում եմ, որ ինձնից աջ նստած էր Աշխարհբէկ Լոռու Մելիք Քալանթարը, Անուշաւան Տէր Միքայէլեանը, իսկ ձախ կողմից Դաւիթ Անանունը, Թ. Աւդալբէկեանը եւ մի շարք ուրիշ ծանօթ-բարեկամներ: Ես չափազանց անյարմար կացութեան մէջ էի, որովհետեւ ամեն անգամ Դաշնակցութեան անունը յիշելիս բոլորի հայեացքները դառնում էին իմ ուղղութեամբ: Իսկ Աշխարհբէկը զգուշութեամբ կողքիս էր խփում: Դաւիթ Անանունը (յայտնի իր հայհոյանքներով) մարգարիտներ էր մրմնջում խեղկատակութիւնը կազմակերպողների հասցէներին:

Դիւանը կազմուած էր Արամայիս Երզնկեանի նախագահութեամբ: Դատախազի անուն-ազգանունը չեմ յիշում: Գլխաւոր պաշտպանն էր Աշոտ Յովհաննիսեանը, իսկ երկրորդը ճիւաղ տխրահռչակ Աւիս Նուրիջանեանը, որը, սակայն, պաշտպանի դերը անտեսելով, անցաւ տեղի-անտեղի մեղադրականների: Կարեւոր չէ կանգ առնել այդ ճիւաղի անտրամաբան ափեղցփեղութիւնների վրայ: Հանդիսականները վարձատրեցին նրան իրենց ռեպլիկաներով, «լռիր, սուտ է» եւ այլ արտայայտութիւններով:

Աշոտ Յովհաննիսեանը տուեց Հ.Յ. Դ-եան պատմականը բոլոր մանրամասնութեամբ: Պատճառները, ծագումն ու զարգացումը, իննսունական թուականներից սկսած կատարուած կարեւոր դէպքերն ու դէմքերի մասին, յիշեց Վանի ինքնապաշտպանութիւնը, 1896թ. Պետոյի եւ ընկերների նահատակութիւնը, Խանասորի արշաւանքը մանրամասնութեամբ, աննախընթաց համարելով կուսակցութիւնների պատմութեան մէջ, բոլոր ազգերի, բանկ Օտտոմանը՝ այդ շռնդալից ապտակը աշխարհի ղեկավարների արիւնոտ դնչին, Ելդզի աննախընթաց ակտը, Հայ եկեղեցական կալուածների թալանը, հայ-թաթարական կռիւները Կովկասում, Սասունը, Հ. Յ.Դ.-եան կամքն ու անվերջանալի ահաբեկումները, որ ծունկի բերեց կայսերական կառավարութեանը: Նշեց, որ յետ ստացուեցին կալուածները, վերաբացուեցին փակուած հարիւրաւոր դպրոցները: Վերոյիշեալ դէպքերը թուելիս ամբողջ



սրահը դղրդում էր ծափերի եւ ոտքերի դոփիւնից... պաշտպանը ստիպուած էր լինում դադարեցնելու իր պաշտպանողական ճառը:

Նախագահ Ար. Երզնկեանը, դիմելով պաշտպանին, ասաց. «Ընկեր պաշտպան Աշ. Յովհաննիսեան, դուք այնպէս ներկայացրիք եւ շարունակում էք տակաւին պաշտպանել, որ մի բան էլ մենք ենք պարտք մնում եւ պէտք է սովորենք Դաշնակցութիւնից»:

«Հարկաւ մենք այդ կուսակցութիւնից տակաւին սովորելիք շատ բան ունենք: Ամօթ եւ պակասութիւն չէ սովորելը»: Շարունակելով պաշտպանողականը՝ նա նշեց, որ 1911-12թթ. ցարական բռնակալ կառավարութիւնը անհեռատես եւ անմիտ մի նման դատավարութիւն սարքեց: Հարիւրաւոր դաշնակցական ականաւոր գործիչներ լցրեց բանտերը՝ կուսակցութիւնը մեռցնելու եւ ահ ու սարսափ ստեղծելու նպատակով:

Յաջողե՞ց: Իհարկէ ո՛չ: Որեւէ դաշնակցական յուսահատութեան փոքրոգութիւն ցոյց չտուեց: Իսկ դաւաճանութեան մասին խօսք չի կարող լինել:

Դաշնակցութիւնը դիմեց բոլոր հնարաւոր միջոցների իր անդամների փրկութեան համար... Նա ձեռք բերեց բոլոր մեղադրական գրութիւնները՝ արտակարգ քննիչի գրասենեակից, ծանօթացաւ բոլորի մեղադրական տեղեկութիւններին եւ տեղեկատուներին, ջնջեց, փոփոխեց, բովանդակութեան բազմաթիւ մեղադրական ապացոյցներ ու կէտեր, նախադասութիւններ. այդ բոլորը կատարելուց յետոյ, բացառութեամբ մի քանի շատ կարեւոր տեղեկութիւնների, մնացած բոլոր թղթերը վերադարձրեց իր տեղը:

Դատավարութեան ընթացքին նշանակուած մասնագէտները անհամբերութեամբ սպասում էին իրենց տեղեկացրած կարեւոր տեղեկատու ապացոյցներին, որոնց փոխարէն նոյն այդ տեղեկատուութիւնը հակառակն էր ապացուցում: Արտակարգ քննիչ Լըժինը, գլուխը կորցրած, հոգեկան հիւանդի նոպաներ ցուցադրեց ի տես կատարուածի: Եվ նա յետագայում խելագարուեց ու մահացաւ:

«Մեր այսօրուան դատավարութիւնը ինձ ակամայից յիշեցրեց ճիշտ մէկ տասնամեակ առաջ կազմակերպուած այդ խեղկատակութիւնը:

- Նայեցէք սրահին, նեղութիւն կրէք դուրսը, հրապարակը, զբօսայգին, պողոտան ու մայթերը տեսնելու: Այդ դղրդագին ծափահարութիւնները, բացականչութիւնները... ձրի քարոզչութիւն էր, որ մենք կազմակերպեցինք ի շահ Հ. Յ. Դաշնակցութեան:

Միլիոններ եթէ ծախսէր դաշնակցութիւնը, նման նպաստաւոր քարոզչութիւն չէր կարող կազմակերպել... Նման խեղկատակութիւնները

միջոցներ չեն դաշնակցութիւնը մեռցնելու. մտածեցէք լուրջ եւ սպառիչ միջոցների մասին»:

Հարցաքննեցին մի շարք վկաների:

Վկայ Միշա Մելիք Մուրադեան, բժիշկ: Վկայեց Հ.Յ.Դ. կատարած դրական դերի մասին Բաթումում: Նա պատմեց, թէ ինչպէս պատերազմի նախօրեակին Բաթումի մէջ կուսակցական «կոմունան» որոշեց միտինգի դուրս գալ ամբողջ աշխատաւորութեամբ: Բոլոր կուսակցութիւնները եւ իրենց դրօշակակիրները զանազան կարգախօսներով, խումբ առ խումբ դիմեցին ծովափնեայ հրապարակը: Չորս կէտերում բարձրացւած էին ամբիոններ: Բարձրացան օրւան նշանակւած բանախօսները, Ս. դեմոկր. կուսակցութիւնից, վրացական Ս. Դեմոկրատ. կուս. էսէրներ, մեծամասնականներ եւ դաշնակցականներ: Խօսում էին եւ բռունցք թափահարում օդի մէջ բոլոր ճառախօսները, սպառնալիք կարդում բուրժուաների ու ցարական կառավարութեան հասցէներին եւ բազում ամպագորգոռ յայտարարութիւններ:

Ոստիկանութիւնը չէր համարձակւում արգելել, սակայն շատ չանցած՝ երեւացին կոզակների 2 հարիւրեակ եւ սկսեցին երկու ուղղութեամբ մօտենալ: Վար բերեցին ուսերն անցկացրած հրացանները, եւ առաջին հարիւրապետը գոռաց ցրւել, ու շուռ գալով հրամայեց կոզակներին պատրաստ լինել: Նա կրկնեց իր հրամանը. երկրորդ անգամ, եւ երրորդին կոզակները մէկ համազարկ որպէս ազդանշան արձակեցին օդի մէջ: Ամբոխը ահաբեկւած սկսեց փախչել: Դաշնակցական աշխատաւորներից շատերը, որոնք եկել էին՝ զինւած ատրճանակներով, անմիջապէս անցան յարմարաւոր դիրքեր եւ կրակ բացեցին կոզակների վրայ. ոչ մի կերպ կոզակները չէին կարողանում դաշնակցական աշխատաւոր մարտիկներին տեղահան անել: Գիշերը վրայ գալով՝ տղաները անվտանգ եւ առանց մէկ զոհ տալու թողեցին իրենց դիրքերը ու ցրիւ եկան դէպի իրենց բնակարանները: Այդ դէպքից երկու շաբաթ անց կազմակերպւեց երկրորդ միտինգը, եւ միջկուսակցական միութիւնը դիմեց Հ. Յ. Դաշնակցութեան՝ իր վրայ վերցնելու կազմակերպւելիք միտինգի պատասխանատւութիւնը... Դաշնակցութիւնը բացարձակ ժխտական պատասխան տւեց՝ յայտնելով, որ «մենք միասին չենք կարող գործակցել, մենք դուրս կգանք միտինգի առանձին, անջատ եւ նախօրօք խնդրում ենք ձեզ, որ ձեզանից ոչ ոք չանցնի մեր շարքերը եւ լքում առաջացնի»: Այդ օրը Դաշնակցական աշխատաւորութիւնը



իր առաջնորդներով կազմակերպեց միտինգը, խօսւեց, յայտարարւեցին կարգախօսներ, եւ կանոնաւոր շարքերով հեռացան զբօսայգուց:

Վկան պատմեց մի քանի ահաբեկչական դէպքեր Բաթումից եւ Վանի վալիի ահաբեկումը Բաթումում ու մի շարք նպաստաւոր այլ դրուագներ: Հանդիսատեսները մի քանի անգամ իրենց դղրդագին ծափերով վարձատրեցին վկային: Դատական կազմը 3/4 ժամ խորհրդակցելուց յետոյ նոյն հերթականութեամբ բոլորն էլ գրաւեցին իրենց նախկին տեղերը, եւ նախագահի զանգի ձայնը լռութիւն պարտադրեց, ու նա սկսեց կարդալ մեղադրականի գլխաւոր կէտերը, որոնց հիման վրայ Հ. Յ. Դաշնակցութիւնը ճանաչւեց վտանգաւոր, ոճրագործ եւ դատապարտւեց մահուան՝ կախաղանի միջոցաւ (ամենաբարձր պատիժը): Դատավարութեան հեղինակները աւելի խիստ պատիժ ստացան քան դատարանի որոշումը: Ժողովուրդը, որից թերեւս ծափահարութիւններ էին սպասում՝ այդ աւելի քան անբարոյական դատավճռի համար, գլուխը կախ գցած, շատերի աչքերում՝ արցունք, լուռ ու հանդարտ քայլերով դուրս եկաւ դատասրահից...

Դաւիթ Անանունը ինձ մօտենալով Թ. Աւդալբէկեանի հետ՝ ձեռքը ինձ մեկնեց եւ. «Գնացէնք պարծեցէք, որ դա մահուան պատիժ չէր, այլ մի աննախընթաց յաղթանակ ձեր կուսակցութեան...»:

Յաջորդ օրը պողոտայի վրայ կախաղաններից ճօճւում էին խամաճիկները չորս կախւածների՝ Ա. Ահարոնեան, Խատիսեան, Համօ Օհանջանեան եւ Ա. Գիւլխանդանեան... Անհուն նողկանքով էին անցնում անցորդները ի տես այդ անբարոյականութեան...

* * *

Երբ ես Երեւան եկայ, ինձ զանազան պաշտօններ առաջարկւեցին: Բայց այդ պաշտօնների ճանապարհներն սկսւում էին չեկայից եւ վերջանում չեկաներում: Ես առաջարկւած բոլոր պաշտօններից հրաժարւեցի, որովհետեւ բարեկամ ականաւոր բոլշեւիկներից ոմանք ինձ նախազգուշացրել էին, որ որեւէ առաջարկւելիք պաշտօնի դրական որոշում չտամ...

Այդ շրջանում Հայաստանում գործում էր ամերկոմը: Զանազան շրջաններում այդ ամերկոմը ագարակների ստեղծման գործով էր զբաղւած եւ ագարակներին կառավարողներ էին նշանակում: Ամերկոմը ունէր իր ամերիկացի լիազօր ներկայացուցիչը: Իսկ նա իրեն օգնական էր ընտրել հմուտ, բարձրագոյն կրթութեամբ մասնագէտ Ստեփան Կամսարականին, իմ մօր մօտիկ ազգականներից մէկին: Նա ագարակ էր բացել Թուրքմալու լքւած

թուրքական գիւղում, որի կառավարիչն էր ինձանից տարեց եղբայրս, Մեսրոպ Պահլաւունին: Այդ ագարակում աշխատում էին 75-80 չափահաս որբեր եւ մի քանի սասունցի ընտանիքներ:

Նման ագարակ բացւեց եւ Սարդարապատում, որի կառավարիչ նշանակւեցի ես. տակաւին չէի վերջացրել շինարարական նախնական աշխատանքները, Թիֆլիսում սատակեցրին Ջամալ փաշային: Ինձ Սեպտեմբերի 22ին 1922թ. նորից ձերբակալեցին Սարդարապատում՝ աշխատանքների եռուն միջոցին: Նորից չեկա, նորից արտառոց մեղադրանքներ, որ ես մասնակցել եմ այդ ակտի կատարմանը: Երեւանում 75 օր չեկայում նստելուց յետոյ կրկին Թիֆլիս փոխադրեցին. երեք ամիս եւս Թիֆլիսում մնացի բանտարկւած, երբ Գայլի՝ Հայկ Բժշկեանի երաշխաւորութեամբ ինձ ազատ արձակեցին: Գայլը Թիֆլիսում ինձ մտերմիկ խորհուրդ տւեց անցնել արտասահման. «Դու հանգստութիւն չպիտի ունենաս, պիտ հալածւես անվերջ, անցիր, գնայ»: Երբ ասացի, որ «այնքան էլ հեշտ չէ արտասահման անցնելը», նա ինձ պատասխանեց. «Ես նշանակւած եմ Լենականի ճակատի ընդհանուր հրամանատար, ինձ հետ կգաս, իսկ այնտեղից ինձ համար դժւար չի լինի քեզ արտասահման անցկացնել: Նիւթականի մասին մի մտածիր»: Սակայն ըստ պայմանի ես պարտաւոր էի նախ Երեւան մտնել եւ ներկայանալ չեկային, որ ես կամ եւ գոյութիւն ունեմ եւ յետոյ աշխատեմ Հայկի հետ մեկնելու, կամ եթէ նա մեկնած լինի, ես կարողանամ յարմարութիւն ստեղծել առանձին նրա մօտ գնալու: Սակայն ծրագիրը բոլորովին փոխւեց, երբ կնոջս հօրից, Թուրքեստանից, նամակ ստացանք, որ կանչում էր իր մօտ՝ Սամարղանդ, որտեղ ինքը շատ պատասխանատու պաշտօն ունէր եւ գրեթէ ամենաազդեցիկ կուսակցականն էր համարւում: Նա նախկին Հնչակեան էր, հակւած մեծամասնականներին եւ նման պատասխանատու պաշտօնի տիրած, «Էկաս»ի նախագահ, ամբողջ երկրի տնտեսութեան ղեկավարը: Նախկին, երկար տարիների ուսուցիչ եւ շատ պատրաստւած գործնական անձնաւորութիւն Ղուկաս Մալենցեան, այժմ Ազիրեան: Կինը՝ Շուշանիկ Մալենցեանը, նոյնպէս երկար տարիների ուսուցչուհի, ապրում էր Երեւանում: Ղուկաս Մալենցեանը, աքսորավայրից (Սիբիրից) փախած, հաստատւել էր Սամարղանդ՝ որպէս Ազիրեան: Նա իր գրութիւնների համաձայն, երաշխաւորում էր մեր ապահովութիւնը այդ հեռաւոր Միջին Ասիայում, որտեղի իշխանաւորներից ամենաազդեցիկն էր ինքը... Ես կնոջս առաջարկեցի անմիջապէս պատրաստւի եւ մեկնի Սամարղանդ, իսկ ես կաշխատեմ ստեղծել յարմարութիւն, նոյնպէս, որքան



հնարաւոր է շուտ ճանապարհւելու: Չնկատւելու համար մենք զատ-զատ մեկնեցինք այն պատճառով, որ Բագուն անցնելու խնդիրը կար, որտեղ ինձ կարող էին նկատել եւ ձերբակալել, իսկ կինս պիտի մնար այդ քաղաքում անպաշտպան: Նա ճանապարհւեց, եւ մի քանի օր անց ես հեռագիր ստացա, որ ապահով տեղ է հասել ու շատ լաւ ընդունելութիւն գտել, եւ անհամբեր ինձ են սպասում: Այդ ժամանակամիջոցին ես երկու նամակներ ստացայ. նախ՝ Դրոյից. Մոսկւայից գրում էր, որ Երեւանում չմնամ եւ ճանապարհւեմ Մոսկւա՝ իրեն մօտ: Այնտեղ՝ Մոսկւա էին հաւաքւած մեր սպաներից եւ կուսակցական ընկերներից շատերը, որոնց համար Դրօն ստեղծել է յարմարութիւն: Դա «Նէպի» շրջանն էր, եւ ծխախոտի ու գինու մենաշնորհը վերապահւած էր Դրոյին, եւ այդ երկու գործում Դրօն մի քանի տասնեակ հալածւածներ էր պատսպարել: Մի քանի օր անց ստացայ երկրորդ նամակը Վլադիվոստոկից՝ իմ դասընկեր եւ հայրենակից Սուրէն Աւագեանից: Նա եւս ինձ կանչում էր իրեն մօտ՝ մի շարք գործերում իրեն օգնելու: Նա Սիբիրի շրջանից զանազան թանկարժէք մորթեղէն էր արտահանում Ճապոնիա եւ Ամերիկա, որտեղ իր հինգ եղբայրներն էին աշխատում: Ես որոշում կայացրի անցնել նախ Սամարղանդ, ապա Վլադիվոստոկ՝ ընկերոջս մօտ, որտեղից ամեն վայրկեան հնարաւորութիւն կունենայի Ճապոնիա կամ Ամերիկա անցնելու ընկերոջս միջոցաւ: Այդ որոշմամբ ես մարտի սկզբներին մեկնեցի Սամարղանդ: Բագու իմ մտնելս կապւած էր մեծ ռիսկի հետ, դրա պատճառով էլ ես ընտրեցի հեռաւոր շրջուղին՝ Մոսկւա, Սամարա, Օրէնբուրգ, Տաշքէնդ, Սամարղանդ: Ես Մոսկւայում կանգ չառա, որովհետեւ երկու ժամից յետոյ գնացք էր մեկնում դէպի Սամարա: Այդ օրերին տեղ գտնելը երկաթուղում շատ դժւարութիւնների հետ էր կապւած: Նախ՝ անկանոնութիւն, որոշակի ժամանակ սահմանւած չէր հաղորդակցութեան եւ տեղափոխութեան համար, իսկ թալան, կողոպուտ եւ սպանութիւն վագոններում շատ յաճախակի էին: Մարդիկ սարսափով էին ճանապարհորդում: Տո՛ւր, երբ պահանջում էին, ուրիշ միջոց չկար: Այս միջոցներով էին բոլշեւիկները իրենց յաջողութիւններն ապահովում, որեւէ դիմում-գանգատ գրոշի արժէք չունէր, որովհետեւ կողոպտիչները հովանաւորւում էին օրւայ իշխանութեան ներկայացուցիչների կողմից: Անհետեւանք էր մնում մասնաւորապէս նախկին ունեւոր, սակայն մինչեւ վերջին կոճակը կողոպտւած դիմողը: «Այժմ էլ նա է ուզում ապրել». ահա բոլշեւիկեան բարոյականութիւնը, որը ստահակների ապրելու միջոց էր՝ հովանաւորւած իշխանաւորների կողմից: Ես գնացքի մէջ հանդիպեցի

մէկ շատ ազնիւ, գերմանական ծագումով նախկին զինուորական բժշկի: Այդ բժիշկը մերձվոլգեան շրջանի գերմանական գաղութից էր, վերին աստիճանի կիրթ, կոռեկտ եւ պահպանողական: Նա ինձ խորհուրդ տուեց ձեռքից չտալ այդ պատեհութիւնը՝ յարմար գնացքը, որը պիտի շարունակէր ընթացքը մինչեւ Թուրքեստան:

Մեր գնացքը մեկնեց երեք ժամից յետոյ: Թէ ինչ դէպքերի եւ դէմքերի մենք ականատես եղանք, աստուած գիտէ, նման անմարդկային տեսարաններ, ինձ թւում է, Ռուսաստանից դուրս որեւէ թէ՛ քաղաքակիրթ եւ թէ՛ կիսավայրենի աֆրիկեան ջունգլիների մէջ անգամ գարշանք ու նողկանք միայն կարող են առաջացնել: Օրը ցերեկով հարիւրաւոր ճանապարհորդների աչքի առաջ ռուս բոլշեւիկացած տականքը, դուրս շպրտած ամօթխածութեան ամբողջ պատռշանութիւն եւ պարկեշտութիւն, ակտեր էր կատարում եւ ներկաների վրայ լկտիօրէն ծիծաղում: Կամ դառնում տարեցներին. «Դուք ձեր ննջարաններում մի՞թէ նոյնը չէք անում: Դուք տուն, ննջարան ունէք, իսկ մենք ոչ տուն, ոչ էլ ննջարան ունենք»:

Պարկեշտ ճանապարհորդները երեսները շուռ էին տալիս եւ չտեսնել էին ձեւացնում այդ նողկալի տեսարանները, մինչ շատերը թերեւս հրճւանքով էին դիտում... Մոսկւայից-Սամարա մենք հասանք միայն չորրորդ օրը՝ մեծ դժուարութիւններով:

Սամարայից մենք բաժանւեցինք. ես՝ դէպի հարաւ-արեւելք, իսկ բժիշկը՝ հիւսիս-արեւելք:

Համեմատաբար, Սամարայից դէպի Միջին Ասիա մեկնած գնացքը աւելի տանելի էր: Լուսաբացին մենք կանգ առանք Բուզուլուկ կայարանում: Գիտէի, որ այդ կայարանում է թաղուած մեր անմահ Վահան Տէրեանը: Ես ոչ մեծ դժուարութեամբ գտայ գերեզմանը, որի վրայ դրուած էր մի խոշոր, անտաշ քար, մէկ կողմը միայն յղկուած եւ արձանագրուած (ռուսերէն)՝ Սովետսկիյ պօէտ Վահան Տէրեան, ծնւած 1884 մահ. 1920: Երեւակայում էք՝ ինչպիսի յեգնանք... Ողբերգութիւն չէ՞ արդեօք Հայ հանճարեղ բանաստեղծը դարձրել են «Սովետսկի պօէտ»:

Երկու կաթիլ արցունք եւ բեկւած սրտով հեռացա գերեզմանից: Շուտ եկա դէպի կայարան, թաշկինակով արցունքներս էի ցամաքեցնում, լսեցի անունս եւ հեռացնելով թաշկինակն աչքերիցս՝ նկատեցի դիմացս կանգնած Կ. Եսայեանին: Նա Միջին Ասիայի երկաթուղիների հաղորդակցութեան ընդհանուր պետն էր: Մենք ծանօթներ էինք Ալեքսանդրապոլից: Մայիսեան ապստամբութեան նախօրեակին նա իմ կողմից բանտարկւած



էր... Այդ վայրկեանին հեռաւոր միջինասիական անշան Բուզուլուկ կայարանում այդ անակնկալ հանդիպումը կարծէք մոռացութեան տուեց անցեալ տխուր անցքերը, եւ մենք ողջագուրւեցինք: «Ցուզած էք, ընկ. Եղիշէ»... Այո, Տէրեանի անշուք գերեզմանը այդ «հեռու-հեռաւոր» անկիւնում չէր կարող չյուզել ինձ... Բայց նա մեծամասնական էր»: - Կարեւոր չէ՝ նրա ինչ լինելը, նա տաղանդաւոր Հայ բանաստեղծ էր... Եսայեանը թեւս անցած՝ մտանք կայարան: Նա պատուիրեց մեզ կերակրել: Ժամանակն անցնում էր, եւ նա նկատեց, որ ես անհանգստութեան նշաններ եմ ցուցադրում տոմսակի համար: «Ժամանակ տակաւին ունենք, եւ կարիք չկայ տոմսակի մասին մտածելու: Դուք իմ վագոնում կլինէք, եւ Ձեզ ոչ ոք չի անհանգստացնի...»:

Նա պատուիրեց երկրորդ շիշ գինի եւ խորոված ձուկ: Փառաւոր նախաճաշեցինք: Մեկնումի ժամը մօտենում էր, կրկին թեւ անցնելով մենք մօտեցանք իր սալօն վագոնին: Վեր բարձրացանք, նա ինձ ներկայացրեց քարտուղարին եւ մեքենագրուհի օրիորդին՝ ռուս, որը նստած գիտար էր նւագում եւ ցիգանական երգեր երգում անուշ եւ մշակւած ձայնով... ինքը ներողութիւն խնդրեց կէս ժամով բացակայելու կարեւոր գործով եւ կայարան վերադարձաւ: Ճիշտ կէս ժամ անց եկաւ մէկ ծառայողի հետ՝ բեռնաւորւած խմիչքով եւ զանազան խորտիկներով: Մի քանի րոպէից հնչեց երկրորդ զանգն ու գիտարի հնչիւնների եւ օրիորդի անուշ երգի կշռոյթով գնացքը շարժւեց Թուրքեստանի լայնածաւալ անապատներով դէպի արեւելք...

Մենք ամբողջ ժամանակ խօսում եւ վերյիշում էինք մեր անցեալից: Բոլոր գործող դէմքերը ընդհանուր ծաօթներ էին ինձ եւ իրեն: Նա զարմանք յայտնեց, որ, այդքան լայն ծանօթ-բարեկամներ ունենալով, մեր ղեկավար ընկերների հետ չեմ մնացել հարազատ ժողովրդի մէջ եւ Թուրքեստան եմ եկել...

Չեմ եկել, այլ «եկեցրել» են անկախ իմ ցանկութիւնից. «Հասկանալի է»,- ասաց նա:

«Ինչով կարող եմ օգտակար լինել Ձեզ: Ազատ կարող եք արտայայտւել: Ես իմ պաշտօնիս բերումով ի վիճակի եմ ընդառաջելու Ձեզ եւ յարմար պաշտօն ապահովելու իմ իրաւասութեան սահմաններում: Վստահ եմ, որ ազնւօրէն մաքուր կաշխատէք, որեւէ կասկած չի կարող լինել Ձեր մասին»: Եսայեանը ծանօթ էր կնոջս հօր հետ նախապէս: Երբ իմացաւ հարազատութեան մասին, նա յայտնեց իր ուրախութիւնը եւ ասաց. «Անպայման կհանդիպեմ եւ հանգամանօրէն կխօսեմ իր հետ Ձեր մասին: Տաշքէնդից

կհեռագրեմ, որ կայարան գա Ձեզ դիմաւորելու եւ ես կօգտուեմ առիթից, ու կխորհրդակցենք միասին»:

Դանդաղ ընթացքով, երբեմն ժամեր ուշացումով վառելիքի պատճառով, անկանոն, սակայն վագոնի յարմարութիւնը փարատեց իմ անհանգստութիւնը, եւ մենք վերջապէս կանգ առանք Սամարղանդում: Նախօրոք Տաշքէնդից, ըստ իր խոստման, Կ. Եսայեանը հեռագրել էր: Ժամանակին ստանալով հեռագիրը՝ փութացել էին կայարան կինս, երեխաները, հայրը եւ մի շարք ծանօթ եւ անծանօթներ՝ դիմաւորելու: Նախ կնոջս հայրը իր շնորհակալութիւնը յայտնեց Կ. Եսայեանին, ծանօթացրի կնոջս եւ երեխաներիս հետ: Կինս յայտնեց իր խորին շնորհակալութիւնը նրա այնքան մարդասիրական վերաբերմունքի համար: Կնոջս հայրը հրաւիրեց մի օր գոնէ հիւրասիրուելու իրեն մօտ, սակայն գործի բերումով նա ներողութիւն խնդրեց, որ, հակառակ բուռն ցանկութեանը, անհնար էր գործից բացակայել եւ ժամանակին տեղ չհասնել: Նա խօսեց իմ մասին աներոջս հետ: Սակայն խօսք առնելով, որ երբ պէտք եղաւ, աներս իրեն լուր կտայ: Աներս նրբօրէն նշեց պատճառաբանելով, որ Եղիշէն ինձ պէտք է բամբակի գործի համար, որովհետեւ նա այդ գործին ծանօթ է, իսկ մենք կարիք ունենք մասնագէտների եւ հաւատարիմ աշխատակիցների: Կնոջս հայրը ամբողջ Թուրքեստանի տնտեսութեան արդիւնաբերութեան ընդհանուր ղեկավարն էր այդ ժամանակ (ԷԿԱՍՕԻ) (Էկոնոմիչեսկի սովետ):

Եսայեանը մեկնեց դէպի Կրասնովոդսկ նոյն գնացքով, իսկ մենք կայարանից տուն մեկնեցինք: Մերոնք ապրում էին Սամարղանդի նշանաւոր պողոտայի վրայ՝ մէկ շատ յարմար բնակարանում՝ ընդարձակ պարտէզով: Պողոտան ծածկուած էր երկու կողմից չորս շարք խոշոր ու տերեւաշատ չինարիներով, որ հեռուից փակուղու տեսք էր տալիս այդ պողոտային, որի ծայրին էր գտնւում քաղաքային լայնանիստ զբօսավայր-այգին՝ իր թատրոնի շէնքով, մեզանից ոչ հեռու առ առաւել 85-90 մետր: Իմ Սամարղանդ հասած գիշերը Սարդարեան ամուսինները ներկայացում ունէին: Կնոջս հայրը հրաւիրատոմսեր ունէր, ինձ էլ անհեռատեսութիւն ունեցաւ ստիպելու, որ միասին գնանք ներկայացման: Տեղի տուեցի եւ յետագայում այդ չստացած հաճոյքը թանկ վերջացաւ ինձ համար: Տասնեակ ծանօթների հանդիպեցի, Բագւից, Թիֆլիսից եւ զանազան քաղաքներից՝ կենտրոնացած Սամարղանդում:

Ամեն մէկը պարտք էր համարում մօտենալ եւ բարի գալուստ մաղթել: Որեւէ մէկի տեսողութիւնից չվրիպեց այդ երեւոյթը: Աներս ինքը երկրորդ



սխալը գործեց՝ առաջարկելով տուն վերադառնալ: Մենք, ներկայացումը չվերջացած, թողեցինք եւ խորտակուած տրամադրութեամբ տուն վերադարձանք: «Մտքովս չէր անցնի, որ այդքան մեծ թւով ծանօթներ կարող էիր այս հեռաւոր անկիւնում ունենալ»: Չարաբաստիկ ներկայացումը այն նշանակութիւնը ունեցաւ, որ ես ստիպուած եղայ հեռանալ Սամարղանդից, աներոջս մէկ յայտարարութիւնից յետոյ, որ Եղիշէն վերադարձաւ Մոսկւա, որտեղից Դրօն շտապ կանչել էր: Դրոյի ինձ կանչելը ճիշտ է, սակայն շատ օրեր անցնելուց յետոյ: Ես հաստատուեցի Ռոստովցեւօ՝ առաջին կայարանում Սամարղանդ Տաշքէնդ գծի վրայ՝ որպէս կառավարիչ բամբակի կենտրոնական պահեստների եւ ընդունելութեան ու որակաւորման:

Ես Մարտ ամսից 1923թ. անցա գործի եւ մինչեւ 12 Յունուարի 1924թ. աշխատում էի այդ շրջանում: Մենք ծննդեան գիշերը անցկացրինք Սամարղանդում՝ բոլորս միասին: Յունուար 9ին ես անցայ իմ սովորական աշխատանքին՝ մինչեւ ճաշ: Հանգստանում էի, երբ ժամը 3ին ինձ մօտ բարձրացան մէկ ուսանող եւ չորս զինուորներ: Ուսանողը հայ էր եւ եկել էր Թիֆլիսից (ուղարկուած): Նա հարցրեց անուն-ազգանունս եւ ներկայացրեց իմ նկարս. «Դո՞ւք եք»:

- Այո:
- Խնդրում եմ պատրաստուէք մեզ հետ միասին Մոսկւա գնալու:
- Թոյլ կտա՞ք Սամարղանդ անցնենք: Կնոջս եւ երեխաներիս տեսնելու՝ հարկաւ միասին:
- Անշուշտ, կարող էք, որեւէ արգելք չկայ:

Ես կանչեցի օգնականիս եւ հաշւապահին: Այդ չեկիստ ուսանողի ներկայութեամբ հարցրի հաշւապահից հաշիւներիս մասին. նրա դրական պատասխանից յետոյ կազմեցինք արձանագրութիւն, եւ չեկիստի ներկայութեամբ հաշիւները յանձնեցի օգնականիս՝ ստանալով համապատասխան ստացական, եւ մենք մեկնեցինք Սամարղանդ. անմիջապէս լուր տուեցի մերոնց, եւ կինս ու հայրը եկան չեկա: Աներս, որպէս պատասխանատու պաշտօնեայ եւ ազդեցիկ կուսակցական, հետաքրքրուեց իմ գործին վերաբերող գրութիւնների ծալքերի մասին եւ ինձ հասկացրեց. «Կաշխատես ինչ գնով էլ լինի ճողոպրել, մինչեւ բանտ հասցնելը Տաշքէնդ: Քեզ տանելու են Մոսկւա. այս անգամ քեզ վիճակուած չէ ունենալ Թիֆլիսի պաշտպանների միջամտութիւնը: Մեղադրականդ լուրջ է, որոշ կարգադրութիւններ կարւի իմ կողմից, որից դու կարող կլինես օգտուել: Զգաստ եղիր եւ յաջողելու դէպքում ինձ անմիջապէս լուր տուր՝ յետագայի մասին մտածելու: Ինձ պահե-

ցին Սամարղանդում մինչեւ լոյս 12ը Յունվարի, 12ին մեկնեց մեր գնացքը դէպի Տաշքէնդ: Բոլոր ծանօթները եկել էին կայարան՝ ճանապարհ դնելու: Կնոջս եւ երեխաներիս արցունքները յուզեցին բոլորին…

Ես սրտապնդիչ խօսքերով վստահեցնում էի կնոջս. «Իզուր մի տանջիր քեզ, իմ գլուխը սրանց կոկորդից չի անցնի, վստահ եղիր եւ մտածիր քո եւ գալիք երեխայի մասին»: Կնոջս յղիութեան վերջին օրերն էին:

13ին, առաւօտեան նոր էր արշալոյսը իր ճառագայթները դէպի հորիզոն արձակել, երբ գնացքը կանգ առաւ Տաշքէնդի կայարանում: Շտապ վար իջանք գնացքից եւ ուղղուեցինք դէպի քաղաք: Քաղաքամայրում բացուել եւ բացւում էին ճաշարաններն ու զանազան մթերքների վաճառատները, խանութները: Աշխատաւորները շտապ անց ու դարձ էին անում, ոմանք ճաշարաններ էին մտնում մէկ բաժակ օղի կամ կաթ խմելու, ոմանք կէս շիշ օղի վերցրած մուտքի առաջ բացում եւ մինչեւ տակը կոկորդը լցնում ու դատարկ շիշը յետ տալիս խանութպանին:

Ես առաջարկեցի իմ երկու պահակ զինուորներին՝ մտնենք ճաշարան մէկ-մէկ կաթ եւ օղի խմենք, մէկ պատառ համտեսենք ու շարունակենք մեր երթը: Հաճոյքով համաձայնուեցին իմ՝ օղու մոլի ռուս պահակները: Մենք ներս մտանք բաւականին ընդարձակ մէկ ճաշարանի ընդհանուր սրահը, որ մուտք ունէր փողոցից ու ելք դէպի բակը: Դէպի բակը տանող դուռը բաց էր, որի դիմաց գտնւում էր երկար, 10-12 բաժանմունքներով, արտաքնոցը: Նկատում էի՝ ինչպէս հակառակ կողմի փողոցից անգամ այդ արտաքնոցներից օգտուողներ էին մտնում, ելնում: Անմիջապէս մտքովս անցաւ օգտուել առիթից: Ես պատուիրեցի մէկ շիշ օղի, երշիկ եւ զանազան խորտիկներ ու իսկոյն վճարեցի: Օղին իր ազդեցութիւնը աստիճանաբար ներգործում էր իմ պահակներիս ջղերի թմրեցման վրայ… Այդ թւին՝ 1924ին, Տաշքէնդը տեսաւ աննախընթաց մէկ ձմեռ, որ շատ ծերունիներ անգամ չէին յիշում: Ես առանց գլխարկի (դիտաւորեալ) խնդրեցի թոյլտուութիւն արտաքնոց անցնելու: Իմ պահակները տեղներից անգամ չշարժուեցին: Ես անցայ արտաքնոց, առանց խուցերը մտնելու, միւս կողմից շտապ դուրս եկայ բակը եւ փողոց՝ հակառակ կողմից: Կարծէք թէ նախօրօք պատուիրուած մէկ կառք ինձ էր սպասում: Ես անմիջապէս կառք բարձրացայ ու կարգադրեցի քաղաքի արեւելակողմը քշել: Մի քանի փողոցներ էի անցել, կառքը կանգնեցրի, վճարեցի եւ շտապ ուղղութիւնս փոխեցի հակառակ կողմը: Գնում եմ, չգիտեմ՝ ուր: Մէկ խուլ փողոցով անցածս ժամանակ նկատեցի փողոցից դէպի պատշգամբ բարձրացող աստիճանների վրայ ձնագնդի



են խաղում երկու դեռատի, դպրոցական տարիք ունեցող աղջիկներ: Չգիտեմ ինչու կռահեցի, որ այդ թուխ մազերով գեղեցիկ աղջիկները հայ պիտի լինեն: Ցածից հարցրի. «Հա՞յ էք»:

- Այո, ո՞ւմ էք ուզում:

Նրանցից մէկը շտապ վազեց ներս եւ լսեցի՝ «պապա, պապա, մէկ հայ է հարցնում»: Մէկ վայրկեանից դուրս եկաւ պատշգամբ վերնազգեստը հագին մէկ անծանօթ անձնաւորութիւն: Ներս հրաւիրեց: Ես բարձրացայ: Կոկիկ կահաւորուած երեք սենեակից բնակարան: Նոր էին պատրաստւում թէյելու:

Նախ ես ցանկացա իմանալ իրենց որտեղացի լինելը:

- Մենք ախալքալաքցիներ ենք, պատերազմի թոհ ու բոհի ժամանակ անցանք Թիֆլիս եւ այնտեղից էլ փոխադրուել ենք այստեղ, երրորդ տարին է: Այս տարուան արտակարգ ցրտերի պատճառով երեխաները դպրոց չեն յաճախում, արձակուրդներ են: Երբ իմացայ ախալքալաքցի լինելու հանգամանքը, հարց տուեցի. «Դուք Պարոյր Ղարիբեանին չէ՞ք ճանաչում»: Ամուսինները նայեցին միմեանց երեսին, իսկ աղջիկներից մեծը պատասխանեց. «Ինչպէ՞ս չէ, նա մեր ուսուցիչն է եղել»:

Իսկ հայրը վրայ բերեց. «Նա մեզ մօտ էր ապրում Ախալքալաքում»:

Այս կարճ հարց ու պատասխանից յետոյ սկսուեց մտերիմ խօսակցութիւնը:

Թէյը վերջացնելուց յետոյ տիկինը անցաւ իր առօրեայ աշխատանքներին եւ ճաշի պատրաստութեան, իսկ աղջիկներին հայրը կարգադրեց անցնել իրենց սենեակը: Մենք մնացինք երկուսով:

- Այժմ խնդրում եմ ազատ զգաք Ձեզ եւ ինձանից ոչինչ մի թաքցրէք: Թերեւս ես կարող լինեմ պէտք եղած օգնութիւնը ձեզ տալու…

Ես Պարոյրից լսել էի այդ ընտանիքի մասին եւ հանգամանօրէն պատմեցի իրեն ամբողջն առանց կասկածելու:

Նախ խնդրեցի գտնել, տալով հասցէն, Սամարղանդից նշանակուած որպէս աջակից իմ փախուստի յաջողութեան համար, Իշխան Մելիքեանին, որին կարելի էր գտնել քահանայի տանը: Այդ տխրահռչակ Իշխանը աներոջս կողմից որպէս վստահելի անձնաւորութիւն եւ դաշնակցական, որոշ յանձնարարական նամակով դրուեց ինձ հետ ճանապարհից փախցնելու համար, մինչեւ Տաշքէնդ հասնելը: Նա ոչ թէ փոքր աջակցութիւն ցոյց չտուեց, այլ ինձ, որ հնարաւորութիւն ունէի ճանապարհից փախչելու, միայն խանգարեց: Երբ ես նրան յայտնեցի, որ յաջորդ կայարանից պիտի թռչեմ, նա սոսկումով վրայ պրծաւ. «Իմ տունը քանդել ես ուզում, իմ որբերս կմնան,

քո պատճառով ինձ կձերբակալեն: Բոլորն էլ նկատել են, որ ես յաճախ եմ լինում քեզ մօտ, որ ես եմ քեզ փախցրել, եւ այսօր այդ քայլը եթէ անես, ես ստիպուած կլինեմ յայտնելու ուր որ պէտք է... մտքովդ չանցնի»: Աներս այս մարդուն նոյնիսկ վստահել էր ԿԿ-ին ուղղուած նամակը, որ եթէ Եղիշէին չյաջողի ճանապարհից փախչել, աշխատեն Տաշքէնդի չեկայից փախցնել: Մեր կուսակցական մարմնի հետ սերտ յարաբերութեան մէջ էին: Ես խնդրեցի այդ մարդուկին կանչել՝ մտածելով, որ անգիտակցաբար անտեղեակ իմ փախուստից, նա եւ ԿԿ-ի անդամներից ոմանք կգնան չեկա եւ թակարդ կընկնեն իմ պատճառով, ուստի պիտի նախօրօք զգուշացնել, որպէսզի ինձանով ոչ ոք չհետաքրքրուի: Իմ հիւրընկալն, ինձ տանը թողնելով, պատուիրեց աղջիկներին ինձ զբաղեցնել եւ ինքը շտապեց վերոյիշեալ յանձնարարութիւն խնդիրս կատարել: 3/4 ժամ չանցած՝ եկաւ Իշխանի հետ: Բարեբախտաբար ժամանակին էր հասել եւ Իշխանին գտել էր Տէր հօր մօտ: Նա յայտնել էր Տէր հօրը իմ փախուստի մասին: Տէր հայրը շնորհակալութիւն էր յայտնել իմ հիւրընկալին, որ Իշխանին վերցրած շտապել էին ինձ մօտ: Իշխանը փոխանակ ուրախանալու, որ առանց գլխացաւանքի ինձ յաջողուել է ճողոպրել, յարձակուեց վրաս՝ սպառնալով, որ եթէ այս րոպէին իր հետ չգնամ եւ չյանձնուեմ, ինքը ստիպուած կլինի յայտնելու: Ես խոստացա. «Մի վրդովուի, կգնամ եւ կյանձնուեմ, միայն դու յայտնիր, որ մինչեւ իմ գնալս ոչ քահանան եւ ոչ էլ մարմնի որեւէ անդամ չգնան չեկա: Շտապիր»: Նա վեր կացաւ եւ առանց ցտեսութեան հեռացաւ: Նրա գնալուց յետոյ ես պատրաստուեցի որեւէ ապահով տեղ փոխադրուել, մինչեւ հնարաւոր լինի Տաշքէնդից հեռանալ: Հիւրընկալս եւ իր ընտանիքը շշմել էին այդ արտակարգ երեւոյթից: «Նզովք քեզ պէս հային»,- պոռթկաց յարգելի տիկինը: «Ուր որ լինես, ինձ իմաց տուր տեղդ»,- ասաց հիւրընկալս: Ես խնդրեցի մի քանի վստահելի անձնաւորութիւնների անուններ եւ հասցէներ: Նա մի շարք անուններ թուեց, բայց հասցէներ չգիտէր ճիշտը: Ես վերցրի իրենց հասցէն՝ կնոջիցս դրամ ստանալու համար: Նա ոչ թէ հասցէն միայն տուեց, այլ պատրաստակամութիւն յայտնեց անձամբ գնալու Սամարղանդ եւ ինչ որ պէտք է կարգադրելու ու հաղորդելու տեսած պատկերը: Ես 1500 ռուբլի չեւոնեց ոսկու գնով ունէի մօտս: Երկար ժամանակ ապահով էի: Ճաշի չէի կարող մնալ այդ ազնիւ հայ ընտանիքի մօտ՝ մտածելով, որ միւս անազնիւ հայը կարող է իր սպառնալիքն իրագործել, եւ այս ազնիւ հայ ընտանիքի խաղաղութիւնը վտանգել իմ պատճառով: Ընդառաջելով իր թախանձանքին՝ խոստացայ այդ դժոխքից ազատուե-



լուց յետոյ իրենց տեղեկացնել: Իմ խոստումը կատարեցի երկու ամիս յետոյ՝ համոզուած լինելով, որ չափազանց ուրախութիւն եմ պատճառած եղել:

Ես դուրս եկայ եւ ուղղուեցի դէպի քաղաքի ասիական մասը – հին քաղաքը: Գնեցի մէկ տեղացիական սարդի գլխարկ եւ գունաւոր ակնոց՝ երկու նպատակով. նախ՝ ձիւնից պաշտպանուելու եւ երկրորդ՝ աչքերս քօղարկելու համար: Իսկ գլխարկ չունէի, որովհետեւ թողել էի ճաշարանում՝ որպէս գրաւական իմ պահակներիս մօտ:

Երկար թափառեցի հին քաղաքում, գոհ էի, որ այդ մասում ինձ ճանաչողներ չէին կարող լինել: Սպասում էի մութն ընկնելուն, կայարան անցնելու, թերեւս կարողանամ տոմսակ ձեռք բերել Տաշքէնդից հեռանալու համար:

Գնեցի մէկ յարմար փոքր ճամպրուկ, մտայ նպարավաճառանոց, ինչ որ պէտք էր գնեցի եւ մէկ շիշ էլ օղի վերցնելով՝ ուղղուեցի դէպի կայարան: Գնացքի մեկնումի մասին ոչ ոքից որոշ պատասխան չստացայ: Անցայ ապրանքատար կայարանը, որտեղից մեկնող գնացքներն աւելի ապահով էին: Կայարաններում երկար կանգ առնելու մասին այնքան էլ մտահոգուած չէի, միայն թէ շուտ հեռանամ Տաշքէնդից...

Ապրանքատար գնացքի կայարանը 1/2 կիլոմետր հեռաւորութեան վրայ էր մարդատարի կայարանից: Քայլում էի երկաթուղու գծով, որովհետեւ այլ ճանապարհ չգիտէի: Կամուրջի վրայ էի հասել, որի տակից անցնում էր լայն խճուղի, քաղաքից դէպի մօտակայ գիւղերը եւ Ֆերգանա:

Կամուրջի վրայի պահակ զինուորը ինձ պատուիրեց կանգնել, ես կանգ առա, եւ նա, ինձ մօտենալով, առաջարկեց պահականոց գնալ, որովհետեւ այս ժամին ոչ ոք իրաւունք չունի կամուրջին մօտենալու: Ես հնազանդուեցի, եւ նա սուլեց, որի սուլոցից երկու զինուորներ մօտիկ պահականոցից մեզ մօտեցան եւ ինձ առաջնորդեցին պահականոց: Նկատելով իմ փոքրիկ ճամպրուկը նրանք կասկածեցին, որ կարող է պայթուցիկ նիւթեր լինեն ճամպրուկում... «Դուք սխալուած չէք, սակայն պարունակութիւնը ոչ թէ կամուրջ պայթեցնելու համար է, այլ կոկորդ պայթեցնող է... «Ինչպէ՞ս»,- զարմացած հարցրին: «Ձեր տրամադրութեան տակ է բացէք եւ ստուգեցէք»: «Ոչ, դուք բացէք»: Ես բացեցի եւ օղու շիշը իր պարագաներով դրեցի սեղանին: Համոզուեցի՞ք, որ ես կամուրջ պայթեցնող չեմ, Դէ՛ բաց արեք, եւ միասին ընթրենք»: Չուշացրին պատուէրս, կարճ ժամանակում շիշը դատարկուեց: «Ափսո՛ս»: Պահակապետը գլուխը աջ ու ձախ դարձրեց: «Մի ափսոսիր»: Ես անմիջապէս դրամ առաջարկեցի եւ խնդրեցի զինուորներից

մէկին ուղարկել մօտիկ գինետնից երկու շիշ օղի բերելու եւ հաց, երշիկ: Խնդիրս անմիջապէս կատարուեց, եւ մենք երկար չսպասեցինք: Իմ երեք խմելացի պահակները եւ չորրորդը՝ պահակապետը, իրար ետեւից անցան Մորփէոսի գիրկը… Ի՞նչ էր մնում ինձ անել:

Ես որովհետեւ անելիքիս մասին էի մտածում ամբողջ ժամանակ, ուստի խուսափում էի հետեւել նրանց օրինակին: Երբ վերջնականապէս համոզուեցի, որ խորը քնած են, բարձրացայ, ճամպրուկս յարմարեցրի թիկունքիս, պատից գօտիով կախուած «Նագան» ատրճանակը վերցրի, վերարկուի տակով մեջքս կապեցի, նախօրօք ստուգելով՝ փամփուշտ ունի, թէ ոչ: Այո՛, 7 հատ մէջում, իսկ 14 հատ փամփուշտակալում՝ 21 հատ: Որոշ չափով ապահովուած էի: Թէ գայլ գազաններից եւ թէ մարդակերպ գազաններից: Ձեան արտակարգ առատութեան հետեւանքով գայլերի վոհմակները շատ յաճախ մինչեւ քաղաք են հասցրել իրենց արշաւները եւ մեծ վնասներ պատճառել: Իսկ գիշերները աւելի քան վտանգաւոր էր քաղաքից դուրս ճանապարհորդելը: Մենակ եւ անպաշտպան… Ահա դրա համար էլ դիմեցի այդ աններելի միջոցին… մէկի կեանքը վտանգել, իմ անձի փրկութեան համար…

Ես արագօրէն անցա երկաթուղուց դէպի հարաւ, մտայ մէկ նեղ, այգիներով շրջապատուած ճանապարհ, գնում եմ ձեան մէջ խրուելով: Չգիտեմ, որքան էի գնացել եւ ուր էի գնում. միշտ նայելով շրջապատս, երբեմն կանգ էի առնում եւ յետ նայում՝ արդեօք չեն հետապնդում ինձ: Միշտ ատրճանակը պատրաստ ձեռքումս: Պահանջ էի զգում ծխելու, սակայն հնարաւոր չէր, խուսափում էի եւ զսպում ինձ: Այդ վայրկեանին աջ կողմում նկատեցի մէկ աղօտ լոյս եւ կրկին չքացում: Կռահեցի, որ անտարակոյս այդ այգում բնակչութիւն կա՛յ, իսկ եթէ կայ, այնքան էլ վնասակար չեն կարող լինել, ուստի բարձրացայ հողապատից, անցայ մէկ որոշ տարածութիւն եւ առջեւումս նկատեցի քառակուսի մէկ փոքրիկ շէնք, քոլիկ, որ սովորաբար լինում է բոլոր այգիներում: Ես զգուշութեամբ մօտեցայ այդ շէնքին՝ ենթադրելով, որ քիչ առաջ երեւացող լոյսը թերեւս այստեղից լինէր: Մօտեցել էի մուտքին, ոչ մի շշուկ եւ ոչ իսկ կենդանութեան նշան նկատեցի: Ատրճանակը պատրաստ՝ առաջացայ եւ ներս մտայ: Դատարկութիւն, դուռը՝ շրջանակից քարշ ընկած, եւ մէկ փոքրիկ լուսամուտ՝ դէպի այգին նայող: Մէկ անկիւնում տակաւին խոտի մնացորդներ կային: Իսկ մուտքի մօտ դասաւորված էին մեծ քանակութեամբ երկճղանի փայտեր, որոնք սովորաբար գործ են ածում խաղողի վազերի ճիւղերը եւ խաղողը հողից բարձր պահելու համար:



Լուսամուտը լաւ ծածկեցի խոտով, իսկ դուռը մեծ դժւարութեամբ տեղը դրեցի եւ ներսի կողմից ապահովեցի՝ գործածելով կիտուած փայտերը: Ըստ երեւոյթին աշխատանքի ձայնը խանգարել էր այգու միւս կողմում բնակողների շան հանգիստը, եւ շղթայւած շունը մի չտեսնուած կաղկանձ բարձրացրեց, որի այդ արտակարգ կաղկանձի ձայնից դուռը բացուեց եւ լսւեց նախ մէկի, ապա երկրորդի ձայնը, նախ ռուսերէն եւ ապա ուզբեկերէն: Առաջին ձայնը կրկնուեց, եւ ես նկատեցի, որ խօսողը ռուս չի կարող լինել, ուստի խնդրեցի շանը հանգստացնեն, որպէսզի ես հնարաւորութիւն ունենամ մօտենալու:

Պարզ լսեցի՝ «Արշակ շանը պահիր» եւ այդ մէկ հարազատ նախադասութիւնը, փարատեց ամեն տարակուսանք, չարչարանք եւ անորոշ հեռապատկեր: Ես մօտեցայ եւ անմիջապէս հայերէնով բարի երեկոյ ասելիս… ով զարմանք, դիմացս կանգնած էր մեր նախկին խոնարհ հերոսներից մէկը՝ Բոլանուխցի Բաղդասարը, որի մէկ աչքը գնդակը կուրացրել էր Դաղուանի կռիւներում: Երբ անցանք լոյսի տակ, նա ակնոցն աչքերիցս հեռացրեց եւ բարձրաձայն, որքան կարելի էր՝ «Ծօղօ, քեօ տուն չաւրի, արի, արի տես՝ ով է»… եւ վզովս ընկաւ աւելի քան 5 րոպէ չէի կարողանում ազատուել նրա գրկախառնութիւնից… «Ծօտ կնա վառեկներից էրկու-իրեքը մորթել տուր եւ անմիջապէս մէկ լաւ փլաւ եփիր, շուտ արա»:

«Վայ մեռնիմ քըզի, կուռնար աչքս, քեզ էս օրին չտեսնէի: Տղա Արշակ էնա վառկներ մորթիր, տուր Ծօղոյին: Արի՝ արի ծանօթացիր, մկա չեմ ասի՝ ով է, յետոյ կիմանաս…»:



Եղիշէ Պահլաւունին Արաքսի մէջ: Պարսկական ափից հայեացքը յառած դէպի հայրենիք: 1925թ.



Արաքսի պարսկական ափում: Եղիշէ Պահլաւունին (աջից առաջինը) սահմանապահների եւ պաշտօնեաների հետ:



Ջուլֆայի կամուրջը: Եղիշէ Պահլաւունին ատրպատականի զօրահրամանատար Ֆաթուլլահ Խանի հետ:



Ձախից աջ՝ Վարոս Բաբայեան, Եղիշէ Պահլաւունի, Խաչիկ Մելքումեան նկարուած Թաւրիզում 1930-ական թւականներին «Փէյքարի» այգում:



Երկու հին եւ սրտակից ընկերներ՝ Մալխասը եւ Եղիշէ Պահլաւունին Թեհրանի մեր բնակարանում, 1957թ.



Մալխաս եւ Նորայր Պահլաւունի, Թեհրան, 1957թ.



Սիմոն Վրացեան եւ Եղիշէ Պահլաւունի, Թեհրան, 1956թ.։



Ե. Պահլաւունու վերջին նկարը տարագիր ընկերների հետ, Թեհրան։
Ձախից աջ կանգնած են՝ Բագրատ Եղիազարեան, Վազգէն Միրզաբէկեան, ?,
Մուկուչ Նաւասարդեան, ?, Գեղամ, ?, Վահան Աղամալեան, Խէչօ։
Նստած են՝ Արիս Աբրահամեան, Սիմոն Յարութիւնեան, Զաքար Եօլեան, Եղիշէ Պահլաւունի,
Ռուբէն Նարինեան, Խաչատուր Սաղաթէլեան։

Ե. Պաhլաւունու
Գերաշնորհ Տէր Ներսէս
Արքեպիսկոպոս
Մելիք Թանգեանին նւիրած
փորագրութիւնը նրա
յոբելեանի առթիւ:





Եղիշէ Պաhլաւունու կողմից
իր որդուն նվիրուած փորագրութիւնը:



Գերաշնորհ Տէր Ներսէս
Արքեպիսկոպոս Մելիք Թանգեանի
յոբելեանի առթիւ
Ե. Պաhլաւունու նվիրած
փորագրութեան ամբողջական
շրջանակը:

Փորագրութեան արձանագրությունն է.
«Իմ սիրելի ուսուցիչ մեծ հայրենասէր
Ա. Ահարոնեանին
Եղիշէ Պաhլաւունի
Ա.Ահարոնեանի ազգային,
քաղաքական, գրական քառասնամեայ
յոբելեանի առթիւ»



# ԻԳԴԻՐԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

## ԵՂԻՇԷ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ





Սուրմալուի բերդի աւերակները:

* * *

Երբ Բօգոսլաւսկին նշանակւեց Իգդիրի շրջանի գաւառապետ, առաջին հերթին նա ձեռնարկեց Իգդիրում ռուսաց եկեղեցու կառուցմանը: Կանայաններից բռնագրաւեց Բուլւարին կից բաց հողամասը, Պահլաւունիներից խլեց մեր վեց հեկտար երկու կտոր հողամասերը ու յատկացրեց որպէս եկամտային կալուած ռուս քահանային եւ եկեղեցու միւս սպասարկուներին:

Եկեղեցու քարաշէն պատերը երբ սկսում են բարձրանալ, մի գիշեր եղբայրս՝ Արտաշէսը, Կանայեան Արամը եւ Աբրահամեան Վահրամը քանդում են այդ պատերը եւ քարերը կոտրատում: Առաւօտեան վաղ, երբ աշխատաւորները գործի են գալիս, տեսնում են կատարուածը եւ իրար անցնում: Կատարուածի մասին տեղեկացնում են գաւառապետին, որը գործակալ Տիգրան աղային հրամայում է անպատճառ գտնել քանդիչներին: Իգդիրի երիտասարդութեան ղեկավարներն էին յիշեալ երեքը, եւ առաջին հերթին նա ձերբակալում է Արամին, մի քանի ժամ յետոյ՝ Վահրամին, եւ երբ Արտաշէսը լսում է այդ մասին, խոյս է տալիս, անցնում է Ալիղամար, գիշերում է այնտեղ ու վաղ առաւօտեան հօրաքրոջս տղայի՝ Մելիք Վրթանէսեան Վասիլ աղայի ձին նստում եւ Կողբ է գնում՝ ամուսնացած մեծ քրոջս մօտ, եւ այնտեղից էլ անցնում է Կարս եւ մնում այնտեղ: Արամին եւ Վահրամին դատարանը որոշում է մէկ տարի ու կէս խիստ բանտարկութիւն, որոնք, լրացնելով այդ ժամանակաշրջանը, քայքայուած առողջութեամբ ազատւում ու վերադառնում են Իգդիր: Վահրամը, երեք ամիս հազիւ ապրած, մահանում է, իսկ Արամը ամուսնանում ու միայն երկու տարի է գոյատեւում, եւ նա եւս մահանում է՝ բոլոր իգդիրցիներին անխտիր վիշտ ու ցաւ պատճառելով:

Տիգրան աղայի երկրորդ ազգադաւ դէպքը տեղի է ունենում 1895 թւին Ծաղկաձորին. մեզ մօտ գիշերում են երկիր գնացող 11 հոգի ընկերութեան մարդիկ՝ յեղափոխականներ… Այդ մասին տեղեկանում է նա եւ շտապում է խուզարկութեան եւ ձերբակալման: Զինւած տղաները նստած էին հացատանը, մենք էլ, մեծ ու փոքր, շրջապատած նրանց, լսում էինք զրոյցը: Նրանց հետ խօսում էին հօրեղբայրս, մեծ քոյրս եւ աւագ եղբայրս՝ Արամը: Մենք՝ չորս փոքրերս, միայն դիտողի եւ լսողի դերում էինք եւ միմեանց էինք նայում՝ ակնարկելով նրանց զէնքերին, որոնք դիտում էինք յափշտակութեամբ:

Փողոցից բակ եւ մեր բնակւելու յարկաբաժինը երկար տարածութիւն էր: Աջ ու ձախ զանազան շէնքեր, սրահ ամառուան համար՝ առջեւի մասը բաց, ձմռան համար հացատունը, փայտանոցը եւ այլն: Այդ բոլորի կտուրները միաձոյլ էին, իսկ կտրանը դիզւած էր առւոյտի մեծ դէզ՝ անասունների յաւելեալ պաշար: Մեր հուժկու ծառայ Մանուկին պատւիրւած էր՝ դէզի հետ խաղալ եւ հսկել:

Նա երբ նկատում է հեռուից Տիգրան աղայի եւ ոստիկանների դէպի մեր կողմ գալը, անմիջապէս հացատան կտուրի լուսանցքից իմացրեց, առանց ժամանակ կորցնելու բոլորը ոտքի ցատկեցին եւ շտապ, երկար պատշգամբի տակով անցան բակի ծայրը, մտան մեր եւ հօրեղբօրս յարկաբաժինները միացնող դռնով միւս բակը, որտեղ նրանց միացաւ, եղբօրս կարգադրութեամբ, կտուրից շտապ ցած իջած Մանուկը, որը եւ նրանց առաջնորդեց Ղարիբեան Արմենակենց մօտ (Արմենակը մեծ եղբայրն էր մեր Պարոյր Ղարիբեանի, Ջէմալ փաշայի երկու ահաբեկիչներից մէկը):

Դռան մեծ թակը երկու անգամ զարկեցին, Նուբար բաջին (աղախինը) գնաց դուռը բացելու: Տղաների հեռանալուն պէս մենք բարձրացանք վերնայարկ եւ սկսեցինք իբրեւ թէ զբաղւել մեր առօրեայ զբաղումներով: Տիգրան աղան եւ ոստիկանները ներս եկան: Մեր գամփռները՝ Սուլթանը եւ Համիդը, որոնց գիշերները արձակում էինք շղթաներից, կատաղած յարձակւեցին անկոչ հիւրերի վրայ: Տիգրան աղան իրեն հազիւ պատշգամբ գցեց, իսկ հետեւորդները պաշտպանւեցին պատշգամբի տակ պառկեցւած գինու դատարկ կարասների եւ պատշգամբից կախւած խնոցիների արանքում, մինչեւ եղբայրներս հասան ու հանգստացրին այդ անկաշառ եւ հաւատարիմ պահակներին: Նրանք հսկայ գամփռներ էին երկուսն էլ: Նրանց ես լծում էի իմ գեղեցիկ սայլակին, նստում մէջը եւ մեր այգին գնում: Շատ յաճախ էր պատահում, որ փողոցում, մեր այգու ճանապարհին, երբ նրանք նկատում էին ուրիշ շների, առանց ինձնից թոյլտւութիւն ունենալու եւ նախազգուշացման, վրայ էին հասնում եւ սկսում գզգզել խեղճ անասուններին՝ հաճոյք պատճառելով ինձ՝ բայց միշտ էլ ինձ ու սայլակս փոշիների մէջ թաւալեցնելով եւ ծունկս, արմունկս կամ մարմնիս որեւէ մասը վիրաւորելով:

Եղբայրներս Սուլթանին եւ Համիդին քշեցին միւս բակը, դուռը կողպեցին եւ ոստիկաններից մի քանիսի հետ վեր բարձրացան:

Եղբայրս հարցրեց. «Տիգրան աղա, նրեւի Ծաղկազարդ շնորհաւորելու



ես եկել»: Այո, պատասխանեց նա. «Մէկ էլ ինձ ասացին, որ ձեզ մօտ ինչոր աւազակներ կան»:

-Աւազակներ ձեզ մօտ փնտռէք, իմ տունը միթէ աւազականոց է,- ջղայնացած պատասխանեց մայրս:

-Դէ, պաշտօն է, ի՞նչ կարող ենք անել, հրաման է:

-Գլուխներդ ուտի պաշտօններդ: Պաշտօնները սրա-նրա տունը քանդելու համա՞ր են միայն:

Տիգրան աղան նայեց հօրեղբօրս եւ եղբօրս.

-Նա մեր մեծն է,- յարեց հօրեղբայրս, դու կատարիր պարտքդ:

Տիգրան աղան թոյլտւութիւն խնդրեց խուզարկութիւն կատարելու: Նայեց չորս կողմ, մտաւ սենեակները, իջաւ հացատուն, ապա ներքնայարկի բաժինները, մտաւ մարագը, գոմերը եւ ձեռնունայն դուրս եկաւ բակ:

-Տեսա՞ք, մայրիկ, ոչինչ չկայ, ցտեսութիւն:

-Սեւ հագնի մայրդ, դեռ մայրիկ էլ ասում է ինձ,- յարեց մայրս:

* * *

Մայրս պատմում էր իր աչք հանելու դէպքը… Ինքը նորահարս է լինում. փարթամ ապրած մեծատան աղջիկ՝ Կամսարական: Սուրմալուի հռչակաւոր Մուշեղ Կամսարականի քոյրը, Կոգովիտցի՝ Գուլար, Մոլլաղամար, Աքասգեօլ (Հին Կոգովիտ) եւ Ղուջաղ գիւղերի տէրը: Վերին երեք գիւղերը՝ հայկական, իսկ վերջինը՝ եզդիների: Մայրս հասակ էր նետել եղբօր հետ՝ միշտ լեռներում, գիւղից գիւղ, քուրդ եւ եզիդի աղաների ու ցեղապետների մօտ, ձիարշաւների, զինախաղերի եւ հիւրասիրութիւնների մասնակից: Այդ բերումով անւանի ձիավար էր համարւում: Ծնւած է 1843 թւին: Իրենից երկու տարով մեծ Վահրամ եղբայրը ամուսնանում է 1863 թւականին, որի հարսնացուն Սարդարապատի Տէր Մինասի աղջիկն է լինում: 300 ձիաւորներով գալիս են հարս տանելու: Հիւր ձիաւորների մէջ են լինում ցեղապետներ Օսման աղան, Հասան աղան, մեր պարլամենտի անդամ Ուսուր բէկի պատկառելի հայրը, Շարկունի Բաքր աղան (Բագրատ էր անւանում իրեն), Ալչալուի Ջաֆար աղան եւ մի շարք պատւաւոր քրդեր ու եզդիների էլաղաներ՝ իրենց կանանցով ու ձիաւորներով: Երեք օր հիւրասիրւելուց յետոյ, հարսին պատգարակ են նստեցնում եւ մեկնում են: Սարդարապատի լայնածաւալ դաշտը վերածւում է երկու կողմի հարիւրաւոր ընտիր ձիերի ու ձիաւորների մրցադաշտի: Սրարշաւում են ու նիզակներ նետում:

Մի խումբ ընտիր ձիաւորներ խլում են փեսացուի գլխարկը եւ առաջ սլանում: Մուշեղը ցեղապետների հետ, սուր ու նիզակ խաղացնելով, դէպի Արաքս են խոյանում, մինչ մայրս՝ շրջապատուած մի քանի ձիաւորներով եւ ցեղապետների կանանցով, հարսի պատգարակի առջեւից է ձիավարում, երբ զանազան ձիախաղեր են սկսւում: Այդ միջոցին մօրեղբօրս ծառան՝ Մուրադը, մօտենում մայրիկիս եւ զգուշացնում է, որ հարսի եղբայրը՝ Առաքելը, առիթ է փնտռում քեզնից համբոյր առնելու: Մեզանում հարսանեկան տօնախմբութիւններում սովորութիւն էր այդ համբոյր առնելը, սակայն ենթական առնւում էր խիստ պաշտպանութեան տակ, եւ նոյնիսկ արեան գնով էին պաշտպանում նրան: Մուրադը մէկ ուրիշին շտապեցնում է Մուշեղին իմաց տալու Առաքելի դիտաւորութեան մասին, իսկ ինքը իր ձիով քայլ առ քայլ հետեւում է մայրիկիս ձիուն, որը իր եղբօր ընտրելագոյն նժոյգներից մէկն էր: Նա, իւր ձեռքի ամուր եւ երկար ճիպոտը օդի մէջ ճոճելով, խթանում է իր նժոյգին, որը, հարթ տարածութիւնը ճեղքելով, շտապում է հասնել իրենից առաջ անցածներին: Եղբօրը լուր տանողը երբ հասնում է Մուշեղին եւ տեղեկացնում սպասուելիքի մասին, նա անխռով պատասխանում է. «Եթէ նա իմ քոյրն է, չեն կարող, իսկ եթէ կհամբուրեն, ամուսին ունի, թող նա մտածի այդ մասին»:

Առաքելը, նկատելով մայրիկիս բազմութեան շարքերից դուրս պրծնելն ու սլանալը, իրեն նոյնպես լաւ ձին խթանում է՝ հասնելու նրան եւ իրագործելու իր մտադրութիւնը: Առաքելից ոչ հեռու՝ բլուրի վրայ են կանգ առնում առաջին ձիաւորները՝ Մուշեղի գլխաւորութեամբ, եւ սպասում ու դիտում են հարս բերողներին: Բլուրի վրայ գտնուողների ուշադրութիւնը գրաւում են առաջ անցած երեք ձիաւորները: Օդի մէջ սպիտակ լաչագը հորիզոնական ձգուած, ինչպէս գիսաւոր աստղ սլացողին դիտելով՝ մօրեղբայրս կռահում է, որ անպատճառ քոյրն է, իսկ ետեւից եկողները՝ հետապնդողները: Չէր սխալուել: Մայրս, իր ձին երբեմն աջ, երբեմն ձախ խաղացնելով, յանկարծ իր ձեռքի ամուր ճիպոտն արձակում է դէպի Առաքելը, որը մխւում է աչքի մէջ: Առաքելը աչքը բռնում ու կանգ է առնում: Մայրս, այդ նկատելով, մտածում է՝ մօտենալ օգնել, թէ առաջ անցնել: Մինչ այդ Մուրադը, տեսնելով կատարուածը, հասնում եւ յայտնում է մօրեղբօրս դէպքի մասին: «Ուրիշ կերպ էլ չէր վերջանալու, երկուսից մէկը պիտի զոհուէին,- բացատրում է իրեն շրջապատած բէկերին,- կամ պիտի համբուրէին, եւ խայտառակուէր, կամ որեւէ վնաս պէտք է հասցնէր: Այլ կերպ չէր աւարտուի այդ հետապնդումը: Քոյրս մեր ազատ լեռներում է բոյ քաշել»: Մայրս մօտենում է եղբօրը, որը, ցած թռչելով ձիուց, գրկում եւ համբուրում է քրոջը, մօտենում են բէկերը եւ յայտնում իրենց հրճւանքն ու ուրախութիւնը եւ շռայլում գովասանքների մի ամբողջ շարք: Հարսից ծածկում են իրականութիւնը՝ յայտնելով միայն, որ Առաքելի ճակատի մաշկն է ճեղքուել, եւ մի քանիսի հետ վերադարձել է Սարդարապատ:



* * *

Մինչեւ 1898 թիւը Հ. Յ. Դաշնակցութիւնը Իգդիրի բոլոր դռները թակել եւ ներս էր մտել: Խմբերը կազմւում էին մէկը միւսի հետեւից: Դրոյենք ունէին «Կոկոն» խումբը: Նրանք վերածուեցին «Ծաղիկ» խմբի, իսկ «Կոկոնը» մնաց մեզ ժառանգութիւն: Նրանք երկսեռ խմբի վերածեցին իրենց խումբը՝ վերակազմելով այն եւ վերանուանելով «Ծաղիկ»: Իմ անդամակցութիւնը «Կոկոն» խմբին երկար չտեւեց, մեր խմբի գանձապահ Յակոբին գեղծարարութեան համար ծեծեցի, այդ պատճառով էլ երկուսս էլ պատժուեցինք: Նրան խմբից ընդմիշտ հեռացրին, իսկ ինձ մէկ ամսով կախակայեցին: Ես, սաստիկ զայրացած այդպիսի անբարեխիղճ վերաբերմունքից, հրաժարուեցի խմբից, շուրջս հաւաքեցի մեր «կապկտրածներին»՝ թւով աւելի քան 20 հոգի, եւ կազմեցի «Աւարայր» խումբը: Արագ յառաջադիմեցինք: Յաճախ ներկայացումներ էինք կազմակերպում: Շնորհալի դերակատարներ ունէինք: Ամեն շաբաթ որեւէ գիւղ կանցնէինք խմբով եւ կը ներկայացնէինք «Ասլան Բալասի», «Սեւ հողեր», «Քաջն Վարդան», որոնք գոց գիտէինք: Բոլոր գիւղերում դպրոցական ընկերներ ունէինք: Ամեն տեղ մեր գիտցած ու սերտած հայրենասիրական մի քանի քառոզներով անմիջապէս խմբեր էինք կազմում:

Արարատեան դաշտի մի գեղեցիկ արշալոյսի ես, Վահանը, Վաղինակը, Նորայրը, Օհաննէսը՝ հօրեղբայրներիս տղաները, եւ Ատոմ ու Բաղդասար Ռշտունիները զինուած եւ մի քանի օրուայ պաշարով ճանապարհ ընկանք դէպի Երկիր, Հայաստան դրախտավայր: Մեծ պապս բոլորիս շուրջը կառնէր, Զամչեանի հաստափոր հատորներից մէկը բաց կանէր ու շատ սահուն կկսէր կարդալ մեզ անհասկանալի գրաբարով: Այդ անծանօթ եւ առեղծուածային «դրախտի» մասին, որով եւ մենք խանդավառուած էինք: Զինուած էինք ատրճանակներով, ֆիննական դանակներով, երեք որսորդական հրացաններով, որոնց փամփուշտները լցրել էինք մէկական գնդակներով, կոտորակների փոխարէն: Ես ունէի կարճ բերդան հրացան (կա-

րաքին), հայրս այն նուէր էր ստացել զօրավար Տէր Ղուկասովից, ռուս-տաճկական պատերազմին՝ 1877 թւին: Զօրավարը մեր տներում է ապրելիս եղել:

Լոյսը չբացուած՝ մենք անցանք Ալիղամար հայկական Մելիք Վրթանէսեանների գիւղը, Քիլլուգը եւ Փիրիլուից թեքւեցինք Մաղմաղա՝ դէպի քեռոնցս գիւղերը: Արեւը բաւական բարձրացել էր, երբ մենք հանգիստ առանք Մաղմաղայի աղբիւրի մօտ եւ նոր էինք սկսել մեր նախաճաշը, երբ հեռուից նկատեցինք երկու ձիաւորներ, որոնք շտապ դէպի մեր կողմն էին արշաւում: Ես անմիջապէս կարգադրեցի հաւաքւել եւ դիրքեր բռնել քարերի ետեւում: Վահանի հետ միասին դիրք բռնեցինք կենտրոնում: Զէնքերը պատրաստած՝ տղաները հրամանի էին սպասում կրակելու համար, իսկ ես քրոջս թատերական փոքրիկ հեռադիտակով նայում էի դէպի մեզ արագօրէն արշաւող ձիաւորներին: Հեռադիտակս սովորական աչքի չափ էլ ցոյց չտւեց եկողների ով լինելը: Այն կողմ գցեցի եւ լարեցի տեսողութիւնս ու վերջապէս կարողացայ նշմարել եղբօրս, որն առջեւից էր ձիավարում: Ցայտնեցի Վահանին, նա եւս ճանաչեց, եւ մենք ընկանք ահ ու դողի մէջ... Ի՞նչ անել, փախչե՞լ, թէ յանձնւել: Մինչ մեր որոշում կայացնելը, եղբայրս՝ ժպիտը դէմքին, արդէն 50-60 քայլի վրայ էր: Մենք ամօթից կարմրեցինք: Նա արագ մօտեցաւ մեզ, բարեւեց եւ ուտելիք պահանջեց: Անմիջապէս մեր առատ պաշարը փռեցինք: Կանչեց մեր ծառայ Մանուկին եւս: Սկսեցին նախաճաշել:

-Ժամը քանիսի՞ն էք մեկնել,- հարցրեց եղբայրս:

-Լուսաստղն արդէն երեւում էր, որ մենք Ալիղամարն անցանք...

-Լաւ էք եկել, հո չէ՞ք յոգնել...

-Չէ...

-Բա ինչո՞ւ էք միայն եօթ հոգով, ի՞նչ կարող էք անել այսքանով:

-Ծառերը պէտք եղած համապատասխան զէնքեր չունէին, չուզեցինք վերցնել:

-Ձեր կաքաւի ու տատրակի հրացանները մի՞թէ համապատասխան են եւ կարո՞ղ են կռւել տաճկական այնալու հրացանների դէմ: Մենք լռեցինք... եղբայրս եւ Մանուկը նախաճաշը վերջացրին...

-Դէ՛, պատրաստւէք,- ասաց եղբայրս:

Մենք նայեցինք միմեանց՝ մտովի հարց տալով, թէ ի՞նչ է կատարւում, չէինք հասկանում: Եղբայրս հեծաւ ձին, Մանուկին կարգադրեց ձին ինձ տալ, ես հրաժարւեցի:



-Հասկանում եմ,- ասաց նա,- Մանուկ, նստիր ձիդ: Մենք ոտքով վերադարձանք: Այսպէս անփառունակ աւարտւեց մեր արշաւանքը դէպի «Երկիր դրախտավայր»:

* * *

1896 թւի Սեպտեմբերին Կոմիտաս վարդապետը Ստեփան Կանայեանի հետ Իգդիր էր եկել՝ Սուրմալուի ֆօլքլօրին ծանօթանալու եւ ժողովրդական երգերն ու լէլէներն ուսումնասիրելու: Վարդապետը մեծ եղբօրս՝ Արամի հետ ճեմարանում դասընկերներ էին եղել: Ըմբոստութեան պատճառով եղբօրս եւ մի քանի ուրիշների, որոնց թւում՝ Ռուստմ բէկին, հեռացնում են ճեմարանից: Եղբայրս երբ իմացաւ Վարդապետի Իգդիր գալը, մեզ մօտ բերեց: Մի քանի օր հիւր լինելով, եղբօրս հետ միասին շրջելով Սուրմալուի գիւղերը՝ գլխաւորապէս Կողբ մնաց՝ մերոնց մօտ, ուր ամուսնացած քոյրս էր բնակւում. բեռնաւորուած մեծ քանակութեամբ Կողբի ննման լէլէներով՝ վերադարձաւ Իգդիր:

Ես շատ լաւ ձայն ունէի եւ լաւ էլ երգում էի: Ամբողջ երեք օր նա ինձ երգել տւեց եւ ձայնագրեց երգածս ժողովրդական երգերը: Երբ Էջմիածին մեկնելու պատրաստութիւն տեսաւ, նկատեցի, որ իմ հագուստներս էլ են պատրաստել նաեւ Վահանի հագուստների հետ: Ես եւ Վահանը նայեցինք միմեանց եւ քրքջացինք: Մեկնելու օրը ճաշին եղբայր Ստեփանն էլ մեզ մօտ էր (այդպէս էինք դիմում նրան բոլորս), եւ նա բոլոր իգդիրցիների եղբայր Ստեփանն էր.

-Եղօ եարի ըստաղ,- դիմեց ինձ,- ճեմարանը Իգդիր չի, խելօք կմնաս, կռիւներ չանես, թէ չէ եղբօրդ նման ճեմարանէն կվռնդեն հա՛...

Ես նայեցի Վահանին, նա՝ ինձ: Ժամը 4 1/2ին մենք կառք նստեցինք, եւ մեր կառքը շարժւեց, կէս ժամ կանգ առնելով եղբայր Ստեփանենց տան առաջ, որտեղից իրեր դուրս բերեցին եւ կապեցին կառքի յետեւի մասում, ու բոլորին մնաս բարեւ ասելով՝ եղբայր Ստեփանը եւ Կոմիտաս վարդապետը նստեցին վերեւի մասում, իսկ ես ու Վահանը՝ կառապանի կողմի աթոռակի վրայ: Ամբողջ ճանապարհին կառավար Ալւանդենց Կարապետը իր քաղցր ձայնով ժողովրդական երգեր էր երգում, իսկ վարդապետը տետրակը ձեռքին ձայնագրում էր: Երբ Կարապետը դադարեց երգել «Վարդ սիրեցի, փուշ դառաւ, գնաց ուրիշին առաւ» երգը, Կոմիտաս վարդապետն ինքը սկսեց երգել իր մշակւած տենորով:

Կարապետը շուռ եկաւ եւ զարմացած նայեց վարդապետին ու. «Եա՛, էտենց էլ երգել կլի՞, բլբո՛ւլի հայր սուրփը»: Այնուհետեւ էլ որքան խնդրեցին, Կարապետը հրաժարուեց երգել:

Ես խորասուզուած էի իմ մտքերի մէջ, ինչո՞ւ եկայ, ո՞ւր են տանում ինձ: Չէ՞ որ ճեմարանցիները փակուած կեանք են վարում, իրաւունք չունեն որսի գնալու, կռիւներ անելու... Ինձ համար բոլորովին մի անծանօթ միջավայր, չնայած մէկ տասնեակ իգդիրցի աշակերտներ կային այդ ժամանակ ճեմարանում, սակայն նրանք ինձ համար ընկերներ չէին կարող լինել, որովհետեւ մեծ էին տարիքով, բացառութեամբ Արշաւիր Ծաւարշեանի, որը հօրաքրոջս թոռն էր եւ ինձ հասակակից, իսկ Վահանն էլ երթեւեկ էր լինելու, որովհետեւ ապրելու էր իր քեռոնց՝ Ա. Գիւլխանդանեանենց մօտ: Դա ինձ ամենից շատ էր մտահոգում եւ անհանգստութիւն պատճառում, որ մենք գիշերները միասին չենք լինի: Որքան մօտենում էինք Վաղարշապատին, աւելի ու աւելի էի տխրում եւ, եթէ չամաչէի, լաց պիտի լինէի հանգստանալու համար: Վերջապէս դեռ լոյս էր, երբ հասանք Վաղարշապատ, եւ արագընթաց մեր կառքը սլացաւ դէպի հրապարակ (մէյդան) եւ հիւսիս-արեւելեան դռնից ներս մտաւ: Սոսկացի, ինձ թւաց թէ բանտ են տանում: Ո՛չ վանքը, ո՛չ յարակից շէնքերն ինձ չհետաքրքրեցին: Կառքը կանգ առաւ, մենք իջանք, տխուր, տրտում նայեցի չորս կողմս, Վահանը նկատեց իմ դրութիւնը եւ տրամադրութիւնս. առաջարկեց իր քեռոնց գնալ, այնտեղ ապրելու իրեն հետ միասին:

-Բա ի՞մ ձեռքն է, որ գամ, մոռացա՞ր՝ ինչ կարգադրութիւններ էին անում մեր տանեցիք: Մանաւանդ հայրս, եթէ հայրդ լինէր, դու էլ պիտի բանտարկուէիր ճեմարանի չորս պատերի մէջ, հասկանո՞ւմ ես»:

Լուր ուղարկուեց Գիւլխանդանեանենց, որ գան Վահանին տանեն: Յովհաննէս Գիւլխանդանեանը ճեմարանական էր, եկաւ, բարեւեցինք, ապա Վահանի հետ գրկախառնուեցինք, ու երկուսս էլ արտասուեցինք, գնաց... Եղբայր Ստեփանը կանչեց իգդիրցի սաներին՝ Յարութիւնեան Խաչատուրին, լսարանական Երուանդ Աւագեանին, նոյնպէս Գեղամ Տէր Թովմասեանին, Խաչատուր եւ Ներսէս Կանայեան եղբայրներին (Ստեփանի եղբայրները), Դաւիթ Լալայեանին (Դրոյի մեծ քրոջ տղան), Լեւոն եւ Վրոյր Տէր Յարութիւնեաններին, Արշաւիր Ծաւարշեանին, Վահագն Կանայեանին, որ իմ հասակակիցն ու մտերիմն էր, եւ Կարապետ Ոշտունուն:

Ինձ որ տեսան վրայ թափուեցին, փաթաթուեցին, համբոյր, քաշքշոց՝ չնայած ընդամենը երկու շաբաթ էր, որ նրանք Իգդիրից վերադարձել էին



ճեմարան՝ ամառային արձակուրդներից: Հագուստներս վերցրած, ինձ էլ թեւերիցս բռնած՝ ներս տարան ընդհանուր կացարան, ուր որ բոլորը քնում էին: Խաչատուրը ծանօթացրեց ննջարանում եղածների հետ՝ յայտարարելով. «Էյ, զգուշ կացէք, կուտէք հա՛», եւ մարգարէացաւ, որովհետեւ նոյն օրը, երբ դեռեւս մէկ ժամ չէր անցել, Յովհաննէս Խաչատրեանը Ալեքսանդրապօլցի երկու ուրիշ տղաների հետ խօսելիս իմ մասին, արտայայտուեց, որ «իսկապէս վայրենի է երեւում», «սարում շատ է ապրել երեւի»,- յարեց երկրորդը... Ես կամաց մօտեցայ Յովհաննէսին եւ մէկ շռնդալից ապտակ հասցրի երեսին: Ամբողջ աշակերտութիւնն իրար անցաւ, գոռումգոչում, ոմանք թէ՝ «տեղն է»,- ասացին, ոմանք ընդհակառակը, թէ. «վայրենութիւն է արւածը», մինչեւ վերակացուն ներս մտաւ եւ ինձ հետն առած՝ տարաւ եղբայր Ստեփանի մօտ: Եկան եւ Խաչատուր Յարութիւնեանը, եւ ուրիշներ ու պատմեցին եղբայր Ստեփանին եղելութիւնը: Նա վերակացուին խնդրեց հաշտեցնել եւ ընթացք չտալ եղածին: Այսպէս անցաւ իմ ճեմարանական առաջին ելոյթս:

Յաջորդ օրը վահանին եւս ճեմարան բերեցին, Խաչատուրը կրկին կատակեց՝ ասելով թէ. «Տղաներ, զգոյշ եղէք, սա էլ երկրորդ համարն է»: Բոլորի ուշադրութիւնը դարձաւ Վահանի եւ Գիւլխանդանեան Յովհաննէսի կողմը: «Օվիկի հօրաքրոջ տղան է»,- յայտարարեց Խաչատուրը: Քիչ յետոյ Վահանն էլ միացաւ մեզ, սակայն զանգը հնչեց, եւ դասարաններ անցանք: Ես նստեցի Արշաւիրի կողքին, իսկ Վահանը՝ Խորէն Տէր Գրիգորեանի (Դարալագեազցի):

Ափսոս որ միայն երեք ամիս տեւեց իմ ճեմարանականութիւնս: Ես ճեմարանի խստագոյն մօնօտոն կեանքից հետզհետէ սկսեցի նեղուել եւ ձանձրանալ: Սկսեցի թախծոտ դառնալ, կարօտել էի մեր լայնածաւալ դաշտերին, որսորդութեանը, մայրիկիս գուրգուրանքին եւ որոշեցի փախչել ճեմարանից: Բայց ինչպէ՞ս: Դռնապանը մի շատ խիստ վանեցի էր: Մտադրութիւնս յայտնեցի Վահանին: Սկզբում նա աշխատեց տարհամոզել ինձ եւ յետ կանգնեցնել այդ մտադրութիւնից, սակայն յետոյ ինքն էլ միացաւ ինձ:

Նոյեմբերեան մի ցուրտ օր էր, ես մօտեցայ դռնապանին դասերից յետոյ եւ, երեք ռուբլի առաջարկելով, խնդրեցի ինձ մէկ ժամով բաց թողնել՝ պատրւակելով, թէ նամակ ունեմ յանձնելու հօրեղբօրս տղային, շատ շտապ: Նա աջ ու ձախ նայեց եւ յետոյ. «Տո՛ւր տիսնամ դրամդ»,- ասաց: Դրամն իրեն տուեցի եւ դուրս պրծայ փողոց՝ ուղիղ Վահանի մօտ: Թէյ էին խմում,

երբ ես ներս մտայ: Առաջին անգամը չէր, իհարկէ: Վահանի մօրաքոյրեր Աստղիկը եւ Արուսը ինձ շատ էին սիրում: Ամեն ամառ գալիս էին Իգդիր: Այդ ժամանակ կարծեմ Աբրահամն ուսանում էր, իսկ Անդրուշը Բագւում էր գտնւում:

«Եղիշ, հօ չե՞ս փախել, աղա՛»,– թէյի բաժակն առջեւս դնելով եւ գաթայի պնակն առաջարկելով՝ ասաց Աստղիկը:

–Չէ, Աստղիկ ջան, Երեւան էի գնացել, ուշացել եմ եւ այս գիշեր ձեզ մօտ պիտի գիշերեմ:

–Հլա-հլա՛ սրա ասերը: Քեզ ո՞վ կթողնէր մենակ Երեւան գնայիր: Դէհ, լաւ ա, գիշերը մնայ՝ մի քիչ ծիծաղենք, եւ պատմես քո թագաւորութիւնը ոնց վերջացաւ…

Ես խորը շունչ քաշեցի…

«Հը, ի՞նչ պատահեց, կռիւներին կարօտե՞լ ես, հա՞: Ճեմարանում բխով են տուել ոտներիդ, չես կարըմ սրա-նրա քիթ, պռունգին իմուրուղով տալ: Երկսիդ տեղն ա ճեմարանը, մի քիչ կապի կը գաք»:

–Ի՞նչ ես սկսել, չես թողնում՝ հալալ թէյ խմեն,– վրայ բերեց Արուսը…

–Կատակ ենք անում, ի՞նչ կա որ…

Ուրախ անցաւ մեր գիշերը: Վաղ առաւօտեան, փոխանակ ճեմարան գնալու, մենք Օվիին յայտնեցինք եւ անցանք Պուլուզենց քարւանսարան, որտեղից կառք վերցրինք եւ ճանապարհւեցինք Իգդիր: Հետագայում միայն զգացի իմ գործած ճակատագրական սխալը:

1897 թւականի Յունւարից սկսեցի յաճախել Իգդիրում նոր բացւած ռուսական դպրոցը, որտեղ արդէն սովորում էին իմ բոլոր ընկերները: Տեսուչը հայ էր՝ Բագրատ Յարութիւնեան, ուսուցիչներից մէկը, Ռուբէն Օհանջանեանը, մեր նախկին ուսուցիչներից էր: Կրօն եւ հայոց լեզու պարապում էր Տէր Մկրտիչ Զաքարեանը՝ մեծ քրոջս ամուսինը: Երկու ուսուցչուհիներ եւ մէկ վրացի ու մէկ ռուս ուսուցիչներ:

Դպրոցը երկսեռ էր, ռուս աշակերտութեան համար էլ հրաւիրւած էր, որպէս կրօնուսոյց, ռուսաց եկեղեցու քահանան, ծագումով վրացի: Լաւ հայերէն գիտէր: Դասամիջոցներին միշտ մեզ մօտենում էր եւ սկսում ուղղափառ եկեղեցու առաւելութիւններից խօսել եւ ռուս սուրբերից: Իսկ մենք չարաճճիներս սկսում էինք քրքջալ եւ պատասխանել, որ ռուսները սուրբեր չունեն, իսկ այն երկու-երեք հոգին էլ, որ ունեն, խմողներ ու հարբեցողներ են եղել:

–Որդիք, այդպէս մի ասէք, մեղք է, Աստւած կպատժի ձեզ:



–Թող ռուսաց սուրբերը պատժեն, Աստւած ի՞նչ գործ ունի մեզ հետ, մենք որ Աստծուն ոչինչ չենք ասում…

Երբեք չէր բարկանում, սակայն միեւնոյն երգը կրկնում էր ամեն օր:

Մեզ ստիպում էին խօսել ռուսերէն եւ յաճախ նոյնիսկ պատժում, երբ յամառում էինք: Գլխաւորաբար ռուս ուսուցիչ Խախլովը, որ կարճահասակ էր եւ հայատեաց:

Անխտիր բոլորս էլ ատում էինք նրան: Նա այդ զգում էր եւ յաճախ բողոքով դիմում էր տեսչին: Նա կգար եւ կասէր. «Տղաներ, ես ձեզնից պահանջում եմ կորեկտ վերաբերմունք հանդէպ ձեր ուսուցչին»: Ես հայկական դպրոցի լաւագոյն սովորող աշակերտներից էի, եւ երկու տարի ես եւ Վահանը գովասանական գրութիւններով ենք անցել յաջորդ դասարան: Վահանը ինձանից միայն թւաբանութիւնից էր ուժեղ (ա՛խ, այդ կոտորակները ու փակագծերը, որ իմ հոգիս մաշեցին), վատ չէի սովորում եւ այս ռուսական դպրոցում, սակայն Խախլովը սկզբից իսկ ինձ հետ չունեցաւ, եւ իմ ամենալաւ պատասխանած դասս անգամ բաւարար թւանշանի չարժանացրեց:

Ուսումնական տարին աւարտւեց, եւ սկսւեցին քննութիւնները: Լաւ քննութիւն տւեցի, սակայն ինձ եւ բոլորին անսպասելի կերպով վերաքննութիւն տւեցին ռուսաց լեզւից: Ես ամառը մէկ ամիս վերապատրաստւեցի ռուս ուսուցչուհու մօտ եւ աշնանը շատ լաւ քննութիւն տւեցի ու փոխադրւեցի նախավերջին դասարան: Սկսւեցին պարապմունքները, միաժամանակ՝ ընդարձակ ու լայնածաւալ այգու աշխատանքները: Օրւայ որոշ ժամերի մեզ աշխատեցնում էին այգում: Սիրով էինք կատարում այդ աշխատանքները, երգով ու ծիծաղով: Մեծ աշակերտները սկսեցին մի մեծ աւազան փորել՝ երկու մետրից աւելի խորութեամբ: Ես արդէն Ռ. Օհանջանեանից ջութակի դասեր էի վերցնում մեծ դասամիջոցներին: Նրա բնակարանը դպրոցից հազիւ երկու տասնեակ մետր հեռաւորութեան վրայ էր գտնւում: Մէկ օր, երբ դասերի վերսկսման զանգը տրւեց, շտապ դուրս եկայ պ. Ռուբէնի բնակարանից, նկատեցի, որ Խախլովը, դէմքը դէպի դպրոցը, կանգնած է փորւած աւազանի եզրին ու ծխում է: Զգոյշ մօտեցայ եւ ուժգին հրեցի, ու նա թրըմփոցով ընկաւ դատարկ աւազանը, իսկ ես արագ անցայ եւ երգելով մտայ դասարան: Աշակերտներից շատերը դեռ ներս չէին եկել: Ես, կաւիճը ձեռքս առած, սկսեցի գրատախտակի վրայ արագ գրել Լերմոնտովի «Երեք արմաւենի» բանաստեղծութիւնը: Արդէն երկու տուն գրել էի, երբ դասարան մտաւ վրացի ուսուցիչը:

–Նստիր տեղդ,– ասաց նա, իրար ետեւից եկան ուշ մնացած աշակերտները: Դասարանը լռեց, բայց դրսից ձայներ լսւեցին, ծառան, ոտքը կոտրւած Խախլովին շալակած, ուսուցչանոց էր բերում: Ուսուցիչները դասարաններից դուրս եկան՝ դիմելով դէպի ուսուցչանոց: Ամբողջ աշակերտութիւնն իմացաւ կատարւած դէպքի մասին, եւ մենք եւս սկսեցինք դուրս պրծնել դասարանից: Խախլովը յայտնել էր, թէ չիմացաւ՝ ով իրեն հրեց յետեւից ու գցեց աւազանը: «Բայց կասկածում եմ Էգիշէի վրայ»: Նա Եղիշէ չէր կարողանում արտասանել: Տեսուչը, սաստիկ զայրացած, մօտեցաւ ինձ.

–Դո՞ւ ես արել այդ...

–Ո՛չ, պարոն տեսուչ, ես դասարանում էի, բոլորը գիտեն, նոյնիսկ պ. Վառլամը կարող է վկայել: Մօտեցաւ պ. Վառլամը եւ վկայեց, որ նա դասարանում զբաղւած էր Լերմոնտովի «Երեք արմաւենիներ»ի գրութեամբ գրատախտակի վրայ, կարող էք ստուգել: Տեսուչը ներս մտաւ եւ տեսաւ իմ ձեռագրով գրւած երկու տուն ոտանաւորը, որը գրելու համար բաւական ժամանակ էր պէտք, հետեւաբար չէր կարող պատահել, որ այդ յանցանքը ես կատարած լինէի, մանաւանդ, երբ ամբողջ դասարանը վկայեց, որ Եղիշէն առաջիններից է, որ դասարան է մտել: Գլուխը շարժելով եւ ժպտալով դուրս գնաց դասարանից:

–Աչքն էլ հանել ես,– լսւեցին աղջիկների շարքերից, եւ ինձ նայեցին ժպտալով:

Աւազան ընկած ժամանակ Խախլովի ծունկը ուժգին կպել էր աւազանում դեռ չմաքրւած քարերին, եւ ոսկրը ճեղքւել էր: Երկար տեւեց նրա բժշկութիւնը: Կատարւեցին քննութիւններ, սակայն անարդիւնք: Ինձ պաշտպանեցին Ռ. Օհանջանեան եւ Վառլամ ուսուցիչները: Առաջինը պատասխանել էր, որ ջութակի դասի էր ինձ մօտ, եւ միասին ենք դուրս եկել իմ բնակարանից, իսկ երկրորդը՝ որ կատարւած դէպքի ժամանակ նա դասարանում գրատախտակի վրայ ոտանաւոր գրելիս է եղել: Իսկ իմ դասարանի աշակերտներն անխտիր վկայեցին, որ դասարան մտնող առաջիններից եմ եղել:

Ես փրկւած էի:

Խախլովը Յունւարից յետոյ միայն կարողացաւ աշխատանքի անցնել՝ ձեռնափայտով եւ խիստ կաղալով: Ծունկը չէր կարողանում ծալել եւ ոտքը ուղիղ էր դնում:

Մենք նրան «կիսլանջ» անւանեցինք: Նա ինձ անունով երբեք չէր կանչում եւ միայն Է՛յ էր ասում, իսկ ես էլ չէի ընդունում, որ ինձ է վերաբերում այդ «Էյ»-ը: Ես նրան երբեք չբարեւեցի, թէ՛ դպրոցում եւ թէ՛ դրսում: Նրա վերաբերմունքի համար եղբօրս բողոքներն անցան ապարդիւն եւ անհետեւանք, որովհետեւ նրան հովանաւորում էր գաւառապետ, տխրահռչակ Բոգուլաւսկին:



Ապրիլի վերջերին ես թողեցի դպրոցի վերջին դասարանն առանց վկայական ստանալու: Վերջին օրն էր: Նա ինձ արտասանել տւեց «Երեք արմաւենին» սկզբից մինչեւ վերջ: Ես լաւ էի արտասանում, երբ վերջացրի.

–Պլօխօ (վատ է):

–Թքա՛ծ,– ասացի հայերէն:

–Չտօ՞, չտօ՞ (ի՞նչ, ի՞նչ):

Ոչինչ չպատասխանեցի, պայուսակիս մէջ դասաւորելով գրքերս՝ դուրս եկայ դասարանից՝ ցտեսութիւն ասելով ընկեր-ընկերուհիներիս:

Միջանցքում հանդիպեցի պ. Վառլամին.

–Ո՞ւր, Եղիշէ:

–Տուն, պ. Վառլամ:

–Ինչո՞ւ:

–Աւարտեցի դպրոցը:

–Խե՞նթ ես:

–Դեռ ոչ:

Նա կռահեց պատճառը:

–Սպասիր յայտնեմ տեսուչին:

Մենք քայլեցինք հակառակ կողմեր: Նա դէպի տեսչարան, ես դէպի դուրս: Բաւական հեռացել էի, որ լսեցի ծառա Յովսէփի ձայնը, որը վազելով դէպի ինձ էր գալիս: Ես յետ նայեցի խոժոռ, նա կանգ առաւ:

–Տեսուչը քեզ է ուզում, ասաց, որ տանեմ...

–Եկ, տար...

Նա գիտէր, որ ես միշտ դանակ կամ ատրճանակ եմ կրում, եւ մօտ չեկաւ:

–Ափսոս,– ասաց ու յետ գնաց:

Ես տուն հասայ: Մեծ քոյրս՝ միջնակարգը վերջացրած, պարապում էր ինձնից երէց քրոջս եւ հօրեղբայրներիս աղջիկների հետ, ինձ տեսնելով՝ ասաց. «Հը՛, աւարտեցիր»:

–Այո:

–Էդպէս էլ գիտէի, գնա քեռոնց գառներն արածացնելու եւ քրդերի լամուկների հետ աւազակութիւն անելու:

–Սաթենի՛կ, ինչե՞ր ես խօսում,– ասաց մայրս:

-Բաւական է, ամբողջ մեղքը քոնն է, դէ միշտ պաշտպանիր, տեսնենք՝ ո՞ւր կհասցնես: Ես մայրիկիս մանրամասն պատմեցի անցուդարձի մասին: Նա գոհացաւ եւ ինձ հաւատաց:

Երեկոյեան տեսուչ պ. Բագրատը եկաւ մեզ մօտ: Թէյեցինք: Երկար խօսեցին մեծերի հետ, մինչ ես մութ սենեակում նկարածս նկարների ապակիներն էի լւանում: Վերջացրի, դուրս եկայ: Պ. Բագրատը ժպտալով հարցրեց.

-Հը՛, ինչպէ՞ս են ապակիները,- նա շատ էր սիրում որսորդութիւն, եւ մենք մի քանի աշակերտներով որսի կգնայինք նրա հետ: Նկարածս ապակիներից 4ը մեր որսորդութիւններից էին սարում: Յաջող էին, ցոյց տւեցի: Մեկնելուց պատւիրեց, որ յաջորդ օրը անպատճառ դպրոց գնամ: Իզուր:

-Հարամ լինի իմ տան փշրանքները նրան, վրայ նետեց մայրս ակնարկելով Խախլովին: Եղբայրս յաճախ հիւրընկալութիւններ էր ունենում եւ երբեմն էլ հրաւիրուած էր լինում Խախլովը: Եւ ես մնացի անդրդւելի:

* * *

Մեր տանը ծեծ գոյութիւն չունէր, փոքրերս չէինք ծեծւի, որքան էլ որ չարութիւն անէինք, եւ ուրախանում էինք, երբ պատժում էին: Մեր պատժարանը մառանն էր, որտեղ բոլոր եղանակների մրգեղէններ էին լինում կողպւած սնդուկների մէջ: Այդ սնդուկների բանալիները քոյրս լուսամուտից մեզ էր տալիս, նա շատ խելօք էր իր պահւածքով, եւ նրա վրայ կասկածել չէին կարող, ու մենք միշտ նրա հաւասար բաժինը հասցնում էինք: Ես, Վահանը, Նորայրը շատ յաճախ էինք բանտարկւում մառանում, եւ քաւութեան նոխազը միշտ Նորայրն էր:

* * *

Մեր տան դիմաց հօրեղբօրենցս տանն ապրում էր երկրաչափ Կանգարդը՝ ծագումով դանիացի, ծնւած ու կրթւած Ռուսաստանում, որի կինը ռուս էր՝ շատ համակրելի, բարձրագոյն կրթութեամբ եւ գեղեցիկ: Նախորդ ամառը մէկ ամիս ես նրա մօտ պատրաստւեցի, եւ յաջող քննութիւն տալով՝ փոխադրւեցի: Ամուսինը շարունակ լեռներում զբաղւած էր երկրաչափական (տօպօգրաֆիկ) աշխատանքներով եւ ամիսներով բացակայում էր: Կինը մնում էր աղախնի եւ խոհարարի՝ Պետիայի հետ, երկուսն էլ՝ ռուս: Պետիան հարբեցող էր եւ շարունակ հարբած վիճակում էր:



Ալեքսանդրա Էսպիրովնան (այդպէս էր տիկնոջ անունը) նրանից վախենում էր: Մերոնցից խնդրեց թոյլ տան ինձ իրենց մօտ գիշերելու: Թոյլտւութիւն տրւեց: Մի քանի օր էր միայն անցել, մի օր երեկոյեան ես ընթրեցի մեզ մօտ եւ նրանց գնացի: Վարժուհիս որքան առաջարկեց ընթրել իրեն հետ, ես հրաժարւեցի, որովհետեւ ընթրել էի արդէն եւ տրամադիր չէի որեւէ բան ուտելու: Պետիան, ափսէն ձեռքում բռնած, օրօրւելով մօտեցաւ սեղանին, հազիւ ափսէն ցած դրեց եւ, ինձ խոժոռ նայելով, ռուսերէնով ասաց. «Էչ դու, ինչո՞ւ չես լափում»:

Ուսուցչուհիս տեղից վեր թռաւ, ոտքը գետին խփեց եւ «դուրս կորիր, սրիկայ, այս րոպէին»,- բղաւեց: Ուսուցչուհու ձայնից աղախինը ներս վազեց, իսկ ես այս ու այն կողմ նայեցի՝ որեւէ իր գտնեմ հարւածելու, որովհետեւ այդ Մեղւեդեւ Պետիան խոշորակազմ մէկն էր՝ զինւորական ծառայութիւնը վերջացրած եւ շատ ուժեղ: Աղախինը, այդ տեսարանը տեսնելով, անմիջապէս վազեց դէպի մեր տուն, եւ երբ Պետիան պատրաստւում էր ինձ վրայ խոյանալու, մեր ալաշկերտցի ծառա Մանուկի մէկ հարւածով փռւեց յատակի վրայ, իսկ ուսուցչուհիս մօտենալով սկսեց ոտքով հարւածներ տեղալ Պետիայի քիթ ու բերնին: Մանուկը արնաշաղախ Պետիային քարշ տւեց խոհանոց եւ պառկեցրեց մահճակալին: Մայրս, քոյրերս եւ եղբայրս եւս եկան, բայց արդէն ուշացած: Ուսուցչուհիս պատմեց եղելութիւնը շատ ջղայնացած վիճակով եւ սպառնաց լուսանալուն պէս վռնդել եւ բանտարկել տալ Պետիային: Առաւօտեան Պետիայի բոլոր պաղատանքներն ու ներողութիւններն անցան ապարդիւն: Հաշիւը մաքրեց, տոմս գրեց Բոգոսլաւսկուն, որի կնոջ հետ շատ մօտ էին: Կէս ժամ հազիւ էր անցել, երբ ոստիկանապետը եկաւ եւ ձերբակալելով Պետիային՝ տարաւ: Մէկ շաբաթ ոստիկանատանը բանտարկելուց յետոյ նրան Իգդիրից քշեցին:

Այդ տարի աշնանը բացւեց 6րդ դասարան Իգդիրի քաղաքային դպրոցում: Ալեքսանդրա Էսպիրովնան հրաւիրւեց ուսուցչուհի: Նա ինձ հետ սկսեց շատ լուրջ պարապել քաղաքային դպրոցի համար: Ես քննութեամբ, իսկ իմ ընկերները Ջեմսկի դպրոցի աւարտական վկայականներով ընդունւեցինք 3րդ դասարան: Մեր տնօրէնն էր Լէօնտեւ ազգանունով մի անհաւասարակշիռ հայատեաց անձնաւորութիւն: Նա մեզ հետ պարապում էր ռուս գրականութիւն եւ երաժշտութիւն: Ինքը վիրտուոզ ջութակահար էր եւ մեզ համար երբեմն նւագում էր դասարանում: Մենք բաւարար յառաջադիմութիւն էինք ունեցել ամսավերջին: Ուսումնական տարին անցաւ լաւ, խաղաղ մթնոլորտում:

Սկսուեց յաջորդ տարին, եւ մեր դպրոցական կեանքն անցնում էր համեմատաբար խաղաղ մինչեւ Դեկտեմբեր:

Տնօրէնը մէկ օր գրատախտակի վրայ տողեր գծեց եւ ձայնանիշեր նկարեց.

– Պա՞րզ է:

– Այո,– պատասխանեցինք:

– Արտագրէք տետրերի մէջ:

Մենք կատարեցինք յանձնարարութիւնը, այդ ժամանակ նա ձայնանիշների տակ տեղադրեց «Գօսպօդի պօմիլույ», ռուսերէն «Տէր ողորմեա՛» բառերը: «Վերջացրի՞ք»: «Այո»: «Գրեցէ՛ք»:

Ես տեղիցս բարձրացայ եւ խաչակնքեցի ու ձեռներս բարձրացրած՝ սկսեցի մրմնջալ «Տէր ողորմեան» ռուսերէն:

– Դու ծաղրո՞ւմ ես:

– Ոչ, ես աղօթում եմ,– պատասխանեցի:

– Դո՛ւրս դասարանից:

– Տո՞ւն, թէ՞ բակ:

– Սատանային:

– Լաւ:

Ես դուրս եկայ բակ: Հինգ րոպէ չէր անցել, բոլոր տղաները բակ դուրս եկան, բացի մի քանի ռուս աշակերտներից:

«Ի՞նչ պատահեց»,– հարցրի, տղաները պատասխանեցին, որ մենք բողոքեցինք՝ յայտնելով, որ եթէ ռուսական եկեղեցու արարողութիւն է մեր երաժշտութեան դասը, մենք այդ երաժշտութիւնը չենք ուզում: Բարկացաւ եւ բոլորիս էլ վռնդեց դուրս: Այդ օրը նա մեզ առանց ճաշի թողեց:

Դասերը վերջացան, բոլորը տուն գնացին, բացի մեր դարպասանից, իհարկէ, մեր ռուս դասընկերներն էլ գնացին: Ուսուցչուհին, տետրակները ձեռքը, ինձ մօտեցաւ ըստ սովորականի: Ամեն օր ես էի նրա տետրակները տուն տանում:

– Ես պատժուած եմ,– ասացի նրան:

– Պատճա՞ռը,– հարցրեց նա:

– Իմ անմեղ աղօթքիս համար:

Գլուխն աջ ու ձախ շարժեց եւ «Յոգնեցի քո արկածախնդրութիւններից»,– ասաց եւ ուղղուեց տեսչանոց: Մի քանի րոպէ յետոյ դուրս եկաւ, կարմրած, ջղայնացած եւ շտապ քայլելով փողոց իջաւ:

Մեզ կարգադրուեց դասարան մտնել եւ սերտողութեամբ պարապել: Կա-



տարեցինք հրամանը: Աշակերտները գրաւեցին իրենց տեղերը, իսկ ես՝ ուսուցչի ամբիոնը:

Ծնորհիւ Յարութիւն Խաչատրեանի, որն ամեն ամառ Իգդիր էր գալիս եւ մեզ հետ երգեցողութիւն էր պարապում, մենք մի քանի քառաձայն երգեր էինք սովորել, շատ լաւ էինք կատարում եւ յատկապէս «Մեր հայրենիքը»:

Ես սկսեցի չափ տալ եւ սկսեցինք շատ ներդաշնակ «Մեր հայրենիք» երգել: Ըստ երեւոյթին տնօրէնը ճաշը դեռ չէր վերջացրել, որովհետեւ պատառը ծամելով դասարան մտաւ եւ գոռաց.

– Լռէ՛ք, այդ ի՞նչ է,– պատառի կտորները բերնից դուրս թռցնելով:

– Կէս մնացած երաժշտութեան դասն էինք շարունակում, պարոն տնօրէն,– ասացի ես:

– Կրկի՛ն ծա՞ղր, լռիր, անպէտք, եւ տեղդ նստիր,– բղաւեց նա:

Ես ցած իջայ ամբիոնից, իսկ ինքը դուրս գնաց… Ժամն անցաւ, եւ մենք վերջապէս ազատուելով մեկնեցինք տուն:

Բոլորիս ծնողներն էլ գոհ էին մեր ըմբոստութիւնից: Սբ. Ծննդեան տօները մօտենում էին: Մեզ կարգադրուեց վաղը՝ կիրակի, պատրաստուել եկեղեցի գնալու: Հարց տուեցի մեր մէկ ռուս ուսուցչին.

– Ո՞ր եկեղեցին պիտի տանէք…

– Ես չգիտեմ, դա կկարգադրի տնօրէնը:

Մենք կիրակի առաւօտեան պատրաստ սպասում էինք տնօրէնին: Եկաւ, տնտղեց բոլորիս, ոտքից գլուխ, մի քանիսի գօտիներն ուղղեց եւ պատուիրեց մեզ լաւ պահել եկեղեցում, որովհետեւ այնտեղ են լինելու նահանգապետի օգնականը, գաւառապետը ու մի քանի պատուաւոր հիւրեր: Մենք հրաժարուեցինք ռուսական եկեղեցի գնալ՝ նոյնիսկ դպրոցից վռնդուելու գնով: Նա կատաղեց, փրփրեց, սակայն անօգուտ: Մենք դուրս եկանք շարքից եւ սկսեցինք հեռանալ դպրոցի բակից:

Ռուս 22 աշակերտ միայն տարան եկեղեցի: Յաջորդ օրը՝ երկուշաբթի, մենք գնացինք դպրոց: Դեռ վաղ էր: Ինձ, Վահանին, Սուսանեան Գեղամին, Նորայր եւ Օհաննէս՝ հօրեղբօրս տղաներին եւ Միրիմանեան Հայկին կանչեցին տեսչանոց: Մենք ներս մտանք, բարեւեցինք եւ լուռ շարուեցինք: Տնօրէնն սկսեց շատ մեղմ խրատներ կարդալ գլխներիս.

– Լաւ չէք անում, իմ թանկագիններս, ձեր ըմբոստութեամբ դուք դէպի կորուստ էք տանում ձեզ. մեղք են ձեր ծնողները, որոնք ձեզ համար այդքան ծախսեր են անում, չպիտի երախտամոռ լինէք հանդէպ ձեր թանկագին ծնողները եւն:

-Մի՞թէ մենք յանցանք ենք գործել մեր ծնողների հանդէպ, նրանք գանգատուե՞լ են ձեզ,- ասացի:

Նա խոժոռ ինձ նայեց, վառեց ծխախոտը, կոկորդը մաքրեց եւ յայտարարեց, որ վաղուանից Ծննդեան տօների պատճառով դպրոցն արձակւում է մինչեւ Յունուարի 8ը: Վաղը չէ միւս օրը՝ ամսոյս 24ին, մաքուր հագնուած կգաք դպրոց՝ շարքով եկեղեցի գնալու, նայեցէ՛ք, ովքեր բացակայեն, Յունուարից կարձակուեն դպրոցից:

-Նշանակում է, որ ես այսօրուանից արձակուած եմ,- վրայ բերեցի ես...

-Ինչպէ՛ս:

-Որովհետեւ ես ռուսական եկեղեցի գնացողների թւում չեմ լինելու:

Նոյնպէս պատասխանեցին եւ ընկերներս: Նա կատաղեց եւ մեզ դուրս վռնդեց տեսչանոցից:

Իսկ մենք մի օր էլ շահեցինք, եւ մեզ ընդմիշտ ազատեցինք Իգդիրի քաղաքային դպրոցից:

* * *

1896 թուականին, երկրորդ անգամ լինելով, ռուս ցարական կառավարութիւնը փակեց Կովկասի հայոց դպրոցները: Նախապէս Բոգոսլաւսկին, այդ դաժան հայակեր բռնակալ հրէշը, ահ ու սարսափի մէջ էր պահել գաւառի հայութիւնը՝ իր ստրաժնիկներով ու Տիգրան աղայի նման գործակալներով, մինչեւ որ 1904ին ահաբեկման ենթարկւեց իգդիրցի երկու երիտասարդների ձեռքով:

Իգդիրում լարուած վիճակ էր տիրում 1896 թուականին՝ կալուածների գրաւման եւ դպրոցների փակման պատճառով, եւ մենք, որ ըմբոստ ու անսանձ մի սերունդի էինք պատկանում Իգդիրում, «Թագաւոր, թագաւոր» ռազմական խաղերով երկու հատուածի բաժանուած «պատերազմներ» էինք մղում միմեանց դէմ, եւ երբ անհրաժեշտ էր լինում դիմագրաւել թուրք ստրաժնիկների հալածանքները, միացեալ ուժերով էինք դուրս գալիս նրանց դիմաց եւ յատկապէս ատելութեամբ էինք լցուած Տիգրան աղայի դէմ 1896ի այդ օրերին, երբ մեր դպրոցի տեսուչն էր Ա. Ահարոնեանը:

Բոգոսլաւսկու հալածանքների այդ օրերին մի ընդհարում էինք ունեցել նրա ոստիկանների հետ եւ նետ-աղեղով կուրացրել Տիգրան աղայի աչքը: Կալանաւորել էին մեր մի քանի տարեցների, իսկ մենք մի քանի հոգի՝ բուն



դերակատարներս, փախել էինք Ալիղամար գիւղը, որտեղից ուշ գիշերով էինք վերադարձել, երբ մասամբ խաղաղուել էին կրքերը:

Հետեւեալ օրն առաւօտեան, երբ իմ հարազատ եւ մտերիմ ընկեր Վահանի հետ ուշացած դպրոց գնացինք, դեռ բակում էինք, երբ տեսանք, որ մեր «Թագաւոր-թագաւոր» ռազմախաղի մի շարք պատասխանատու տղաներ ու «աստիճանաւորներ» շարք են կանգնած դպրոցի միջանցքում եւ հարցաքննւում են մեր շատ սիրելի տեսչի կողմից:

Հարցաքննութիւնից յետոյ ոմանք ենթարկւում են պատժի՝ քանոնի հարուածներ ստանալով իրենց ձեռքի ափերին, ըստ իրենց պատասխանատուութեան:

Ես դարձայ դէպի Վահանը եւ. «Վահան, տես՝ ի՞նչ է կատարւում,- ասացի,- բա որ հերթը մեզ հասնի, քանի՞ հատ ենք ուտելու»:

Այդ պահին հնչեց տեսչի ձայնը. «Ո՞ւր է հոնների առաջնորդը»:

Առաջնորդ բառին ծանօթ էի, բայց «հոն» բառի ո՛չ իմաստը եւ ո՛չ էլ ո՞վ կամ ի՞նչ լինելը չհասկացայ: Ձեռքիս խաղողի ողկոյզը շտապ տուեցի Վահանին եւ մօտենալով լուսամուտին. «Այստեղ եմ, պր. տեսուչ»,- ասացի ու առանց ժամանակ կորցնելու՝ մօտակայ դռնով բակից ներս մտայ, բարձրացայ դպրոցի շէնքը եւ երկար միջանցքով մօտեցայ ուսուցչանոցին, ճեղքելով ուսուցիչների շարքը՝ կանգնեցի մեր պաշտելի տեսչի՝ Ա. Ահարոնեանի դէմ դիմաց ու համարձակ յայտարարեցի, որ «պարոն տեսուչ, մեղաւորը ես եմ, սրանք մեղք չունեն», եւ երկու ձեռքերս բաց արած՝ ափերով երկարեցի դէպի տեսուչը: Երկու բիւրեղ կաթիլներ ցոլացին մեր տեսչի խորն ու գեղեցիկ աչքերից, եւ նա, քանոնը նետելով սեղանի վրայ, դուրս եկաւ՝ քայլերն ուղղելով դէպի տեսչանոց, իրեն հետեւեց ուսուցչական կազմը: Ութ հոգի էին միայն «կերել» քանոնի ոչ ուժգին զարկերը: Մեծամասնութիւնն ինձ հետ միասին փրկւեց աստիճանաբար աւելացող զարկերից: «Եղիշէ, տեսուչը քեզ է կանչում»,- լսեց մեր դպրոցի տարիների ծառայ, երկար Մուշեղի ձայնը: Ես անմիջապէս տեսչանոց անցա: Ուսուցիչներից շատերը կանգնած, իսկ ուսուցչուհիները նստած էին: Տեսուչը կանգնած էր մաքուր կանաչ սեղանի միւս կողմում:

-Ինչո՞ւ էիր ուշացել այսօր եւ ժամանակին դպրոց չէիր եկել:

-Գիշերն ուշ էի քնել, չէին արթնացրել:

-Մի՞թէ ամեն օր արթնացնում են քեզ:

-Ոչ, պարոն տեսուչ, յոգնած էի, Ալիղամարից գիշերը շատ ուշ վերադարձանք:

-Ինչո՞ւ էիր Ալիղամար գնացել եւ ուշ մնացել: Ո՞ւմ հետ ես վերադարձել:

-Ընկերներով պարոն տեսուչ:

-Երբ եկար, մայրդ եւ եղբայրդ, ի՞նչ արեցին քեզ եւ ի՞նչ ասացին:

-Նախ մայրս եւ ապա եղբայրս գրկեցին եւ համբուրեցին ինձ:

Տեսուչը նայեց շուրջը եւ ասաց. «Պատմիր դէպքը առանց ինքնարդարացման»: Ես մանրամասն պատմեցի՝ նկատելով տեսչի տարօրինակ վերաբերմունքը: Մենք բոլորս միայն տեսչից էինք վախենում, նրա սեւ եւ խոր աչքերից, երբ նա յատկապէս մեզ էր նայում:

-Իսկ եթէ ձեզ խփէին, գնդակահարէին ստրաժնիկները:

-Երբ նրանք մեզ վրայ կրակեցին, մենք էլ մեր զէնքերով սկսեցինք պատասխանել եւ առաջին արձակած նետերից մէկը կուրացրեց Տիգրան աղայի աչքը, ու մենք ցրիւ եկանք՝ վախենալով, որ ստրաժնիկները կարող են մեզ վրայ կրակել հրացաններով, որոնց մենք պատասխանել անկարող էինք:

-Իսկ եթէ հրացան եւ ատրճանակներ ունենայիք, չպէ՞տք է փախչէիք, միթէ:

-Ոչ, պարոն տեսուչ, մենք էլ նրանց կպատասխանէինք մեր ատրճանակներով:

-Ձեզ կառավարութիւնը կբանտարկի եւ կուղարկի ուղիղ բանտ:

-Մենք վեց հարիւր հոգի ենք, հո բոլորիս էլ չեն տանելու:

-Կտանեն ղեկավարներիդ եւ կտանջեն ուղիղ բանտում:

-Մեր միւս ընկերները մեզ ճանապարհից կփախցնեն, մենք բոլորս էլ կմիանանք, ամբողջ Իգդիրի տղաները, մեծերը մեր...

-Մեր մեծերը... այդ ապիկար մեծերը:

Նոր եւ անծանօթ բառ էր ինձ համար, ապիկար, գեղեցիկ էր բառ՛ը, բայց իմաստը տարակուսելի: Կառավարութեան միջոցառումները անցան ապարդիւն, ոչ ոք դպրոցից չհեռացուեց, բանտից երկու օր յետոյ ազատուեցին բանտարկուած մեր մեծերը: Միայն արգելուեց «Թագաւոր, թագաւոր» խաղալը, եւ դադարեցին մեր «պատերազմները»:

Խաղաղ անցան մեր դպրոցական ձմեռային ամիսները, եւ վրայ հասաւ գարունը չարաղէտ:

Մարտ ամիսը (մեծ պասին) շանթահարիչ եղաւ մեզ համար. երբ մեր տեսուչը արտասուալից աչքերով կարդաց դպրոցների փակման կառավարութեան հրահանգը, մեր մանուկ հոգիները մղկտացին, սակայն մենք նորից լարեցինք մեր աղեղները եւ սկսեցինք պատրաստութիւն տեսնել պաշտպանելու մեր պաշտելի դպրոցը: Այդ օրը մենք դպրոցից չհեռացանք: Ցա-



ջորդ օրը ովքեր զէնք ունէին հետները առած, առաւօտեան շատ վաղ շտապեցին դպրոց: Հարիւրաւոր պատանիներ լարել էին իրենց աղեղները՝ երեսները դէպի դպրոց եւ մեծ դուռը: Ժամը ինն էր, երբ երեւացին կառավարութեան ներկայացուցիչները՝ վրացի նոր պրիստաւի գլխաւորութեամբ՝ ստրաժնիկներով շրջապատուած: Աղեղնաւոր հարիւր նետեր սուրացին դէպի դարպաս: Ոչ ոք չկարողացաւ ներս մտնել: Ընդարձակ բակն ունէր չորս դուռ: Ամեն դռան դիմաց մի քանի տասնեակ աղեղնաւորներ դրեցինք (այս անգամ մեծերն էլ մեզ օգնում էին): Գլխաւոր ուժը կենտրոնացուած էր մեծ դարպասի դիմաց: Ժամեր անցան, եւ կառավարական ոչ մէկ պաշտօնեայ չյանդգնեց ներս մտնել: Եկաւ եւ Շահզադան՝ գաւառապետի օգնականը, որ համախմբուած պատկառելիներից մի քանիսին հրահանգել էր ներս մտնել եւ առաջն առնել այդ աննախընթաց ըմբոստութեան: Պատկառելի տարիքաւորները հրաժարուել էին՝ պատճառաբանելով, որ մեզ եւս կհարուածեն իրենց նետերով: Շահզադան սպառնացել էր եւ կրկնել իր հրամանը, որից յետոյ, երբ փորձեց ներս մտնել դարպասից, մենք կրկին լարեցինք մեր աղեղները, եւ տասնեակ նետեր անդադար սուրացին դէպի դարպաս: Շահզադան կատաղած կարգադրեց կրակել օդում: Հրացաններից արձակուած գնդակները սլացան դէպի երկինք:

-Մենք՝ թւով 18 հոգի, ոգեւորուած հանեցինք ատրճանակները եւ գնդակներն ուղղեցինք դէպի մեծ դուռը: «Դրսից լսեցին աղմուկ-աղաղակ, հայհոյ, փախաւ, փախա՛ւ հա ձեր հոգուն մատաղ, մի վախեցէք, պինդ կացէք»,- ապա սուլոց, հուռա՛, ծիծաղ, ուրախութեան բացականչութիւններ մեր մեծերի կողմից:

Շահզադան, չորս ստրաժնիկներ թողնելով դարպասի մօտ, միւս կողմում գտնուող կամուրջի վրայ, ինքը կառավարութեան միւս ներկայացուցիչների հետ գնաց զեկուցելու գաւառապետին: Երբ մեզ տեղեկացրին Շահզադայի փախուստի մասին, մենք մի քանի հոգի դուրս եկանք մեծ դարպասից եւ նկատելով, որ կամուրջի վրայ կանգնած են չորս թուրք ստրաժնիկներ, անմիջապէս մտանք Քարառուն (այդպէս էր կոչւում եկեղեցու բակով անցնող Իգդիրի մեծ առուներից մէկը) եւ սկսեցինք ջուր շաղ տալ նրանց վրայ, որովհետեւ հայի թափած ջրից Կովկասի թուրքերը շատ էին խորշում: Հենց որ մեր երկու ափերով շպրտուած առաջին ջուրը թափուեց նրանց վրայ, յետ նայեցին եւ փախան մինչեւ Լալայենց դուռը: Երբ հեռացան, մենք կրկին ներս մտանք բակ: Վերցրինք մեր աղեղները, մօտեցանք դռանը եւ աղեղները լարեցինք դէպի նրանց: Նրանք, նկատելով մեր ռազմի պատրաս-

տութիւնը, Լալայենց դռնից էլ հեռացան եւ գնացին կանգնեցին դէպի Վան տանող մեծ ճանապարհի վրայ: Մենք հոհոալով ներս անցանք՝ դրսում թողնելով մեր մեծերին, որոնք քրքջում եւ աղմկում էին: Հասաւ ճաշի ժամը, ամեն կողմից բերեցին ուտեստեղէն, չոր միրգ եւ թխուածք: Մենք կուշտ ու կուռ կերանք եւ սկսեցինք պատրաստութիւններ տեսնել՝ յաջորդ այլեցութիւնը դիմագրաւելու: Ոմանք դուրս գնացին որսորդական հրացաններ բերելու, դաշոյններ, կառապաններից վերցնելու մտրակի ոլորած աղիքների լարեր աղեղների համար, որովհետեւ շատերի աղեղները ոլորած ամուր թելերից էր սարքուած: Ոմանք էլ՝ տաք հագուստեղէն բերելու համար, որովհետեւ եղանակը դեռեւս ցուրտ էր: Յաջորդ օրը նոյնպէս չկարողացաւ որեւէ մէկը ներս մտնել, որովհետեւ մենք սկսեցինք որսորդական հրացաններից խոշոր գնդակներ արձակել: Չորս օր տեւեց մեր՝ պատանիների եւ մանուկների դիմադրութիւնը: Հինգերորդ օրը Երեւանից եկան երկու հարիւր կոզակներ, եւ մեր մեծերը մեր ուսուցիչների հետ միասին մեզ համոզեցին վերջ տալ դիմադրութեանը, որովհետեւ կոզակները կարող էին աւելի լուրջ եւ կտրուկ միջոցների դիմել, եթէ ոչ մեր՝ անչափահասների հանդէպ, գէթ մեծերի: Տեսուչը մեզ գրկեց, համբուրեց եւ թաշկինակն աչքերին գլխահակ շուռ եկաւ եւ անցաւ դպրոցի շէնքից ներս, միւսներն էլ նրա ետեւից:

Անցաւ միառժամանակ, երեւաց երկար Մուշեղը եւ՝ «Եղիշ, տեսուչը քեզ է կանչում»: Ես զօրականի քայլերով եւ յաղթական վեր բարձրացայ: Տեսչանոցում շարուած էին հոգաբարձուները, բացակայութեամբ հօրիցս, որը նախագահն էր կազմի, ուսուցիչները եւ մի քանի իգդիրցի «աղսակալներ»՝ պատկառելիներ:

Երբ ներկայացայ, իմ պաշտելի տեսուչ Ահարոնեանը, դառնալով ինձ, ասաց.

– Իմ սիրելի հոններ առաջնորդ, այս գիշեր կարո՞ղ ես գրադարանի գրքերը տուն փոխադրել:

– Որտե՞ղ պարոն տեսուչ, Ձեզ մօ՞տ, թէ՞ պարոն Սմբատենց մօ՞տ:

Ես կանգ առայ: Սմբատ եղբայրն ինձ հասկացաւ: Չէ՞ որ իր եղբօր հետ մենք հակառակորդներ էինք, նա բացատրեց իմ այլայլելու պատճառը միւսներին:

– Չէ՞ որ դու ամիսներ առաջ ասացիր, որ վտանգի ժամանակ մենք կմիանանք:

– Այո, պատրաստ եմ, եւ այս գիշեր բոլոր գրքերը, տետրակները, մատիտ,



գրիչ, թանաք, գրենական բոլոր պիտոյքները, եւ ինչ որ կայ եւ կասէք, կփոխադրենք:

– Պատրաստիր տղաներին եւ ժ. 9ից սկսէք աշխատանքը: Այժմ կարող ես գնալ:

Ես մօտեցայ մեր տղաներին, կանչեցի աւելի մտերիմներիս եւ յայտնեցի պր. տեսչի կարգադրութիւնը: Մենք տխուր, գլխիկոր բաժանուեցինք միմեանցից եւ ցրուեցինք:

Երեկոյեան ժ. 9ին սկսեցինք փոխադրութեան աշխատանքը, եւ ժ. 11ին լիուլի կատարուած էր տեսչի կարգադրութիւնը:

Վեցերորդ օրը առաւօտեան եկան կառավարութեան ներկայացուցիչները, ցուցակագրեցին կահ-կարասիները եւ ինչ որ կար դպրոցում ու կնքեցին դպրոցի մուտքերը եւ բոլոր դռները, որտեղից տասնեակ տարիներ լոյս էր սփռուել Սուրմալու, եւ դաստիարակուել էին Իգդիրի եւ ամբողջ Սուրմալուի ըմբոստ ու հայրենասէր սերունդները՝ ունենալով Գնունիի, Քալանթարեանի, Թաւաքալեանի (յետագային՝ եպիսկոպոս), Վարդազարեան Բագրատի եւ Ա. Ահարոնեանի նման նուիրեալ անձինք՝ որպէս տեսուչ հայոց դպրոցի:

## Պարոյր Ղարիբեան (Քեռի)
## Կենսագրական

### (Ե. Պահլաւունի)

1934թ. 20 Փետրուարի, 9 տարի բանտ-աքսորից յետոյ, կնքել է իր մահկանացուն՝ հեռաւոր Սիբիրի սառնամանիքներում՝ Նարիմ շրջանի Տօբօլսկ նահանգի Պարաբել գիւղում:

Պարոյրը մեր ինտելիգենտ լաւագոյն մարտական ոյժերից էր, որին բոլորը ճանաչում էին եւ վստահում:

Ծնւել է Իգդիրում 1888թ.՝ յեղափոխական բարեկեցիկ ընտանիքում: Նախնական կրթութիւնն ստացել էր Իգդիրի քաղաքային ռուսական դպրոցում: Վերջացնելով քաղաքային դպրոցը՝ անցնում է Երեւանի թեմականը եւ 1907 թւին վերջացնում չափազանց լաւ վկայականով:

Թէ Իգդիրում եւ թէ Երեւանում թեմական դպրոցում նա յարգւած ու սիրւած էր շրջապատից եւ ղեկավարը աշակերտական միութիւնների: Յիշում եմ դեռ Իգդիրի քաղաքային դպրոցից 1901-02թթ. ինձանից մէկ դասարան ցած, նա հազիւ 13-14 տարեկան, իր շուրջն էր համախմբել 10-12 վառվռուն հասակակիցների, որոնց հետ զինավարժութիւն էր պարապում (ինքը լաւ որսորդ էր), եւ պատրաստւում էին սահմանն անցնելու դէպի Երկիր: Սակայն եղբօր եղերական մահը խանգարեց այդ վառվռուն պատանեակների գեղեցիկ ծրագիրը (Պարոյրը իրար ետեւից կորցրեց իրենից մեծ երկու եղբայրներին): Իսկ հայրն աւելի վաղ էր վախճանւել: Ինքը մնացել էր միակ նեցուկը ծերացած մօր:

1908 թւին մտնում է զինւորական ծառայութեան Մինսկում եւ 18 ամսեայ զինւորական ծառայութիւնից յետոյ վերադառնում է հայրենի Իգդիր՝ որպէս պահեստի սպայ:

Դեռ աշակերտական նստարանից հետեւելով եղբայրների (Յակոբ ու Հայրապետ) օրինակին՝ իրեն նետում է յեղափոխութեան գիրկը: Նա երեխայութիւնից տեսել էր իրենց տանը կազմւած իր եղբօր՝ Հայրապետի «Ծաղիկ Սասնոյ» երկսեռ խումբը, որի անդրանիկ եւ արժանաւոր անդամներից մէկն էր մեր ազգային հերոս Դրօն:

1910 թւից Պարոյրն սկսում է զբաղւել ուսուցչութեամբ: Նախ՝ Ախալքալաքում եւ 1913-14 թւերին՝ Բալախանի նաւթահանքերում՝ որպէս



ուսուցիչ եւ պրոպագանդիստ: Սերմանելով ամենուրեք յեղափոխական հայրենասիրական գաղափարներ: Քանի-քանի անգամ Պարոյրը աչքի է ընկել ու հալածւել ռուս միապետութեան ժանդարմաներից...

Վրայ հասաւ Համաշխարհային պատերազմը: 1914թւից սկսւում է Պարոյրի եռուն շրջանը. նա անընդհատ գտնւել է կամ ռազմի դաշտում առաջաւոր դիրքերում՝ նախ յիսնապետի, ապա վաշտապետի պաշտօններով, կամ տարել է պատասխանատու պաշտօններ զանազան շրջաններում:

1917թ. յեղաշրջումից յետոյ Իգդիրում կազմւեց գաւառային վարչութիւն, որի գործունեայ անդամներից մէկն էր Պարոյրը մինչեւ 1918:

Հայաստանի Հանրապետութեան օրօք նշանակւում է նախ Ալեքսանդրապօլի գաւառային կոմիսարի օգնական, որտեղ իր կատարած մի շարք արդիւնաւէտ աշխատանքների համար գնահատւում եւ նշանակւում է Ղարաքիլիսէի գաւառային կոմիսար:



# Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԻԳԴԻՐԻ ԽՄԲԵՐԻ ԿԱՌՈՅՑՆ ՈՒ ԱՆԽԱՆԱԾԱՆԿԵՐԸ

1. Մայր խումբ - Մասիս 1895
2. Արարատ խումբ 1895
3. Արաքս խումբ 1895-96
4. Բարդող խումբ 1896-97
5. Սասուն խումբ 1897
6. Զէյթուն խումբ 1898
7. Ծաղիկ խումբ 1898
8. Արարատեան Ծաղիկ խումբ
9. Կառապանների
10. Անանուն
11. Ուսանողական
12. Երաժիշտների
13. Անանուն
14. Պատանեկան հիմնուած 1890-ական թուականների վերջերին
15. Կոկոն խումբ 1899
16. Արագած 1899
17. Աւարայր 1900

Պատանեկան միութիւն

1. Պարոյր Ղարիբեան
2. Արամայիս Ղարիբեան
3. Հրահատ Նազարեան
4. Վահագն Աւագեան
5. Գուրգէն Աւագեան
6. Հայկ Տէր-Յարութիւնեան
7. Յովհաննէս Աբրահամեան
8. Գեղամ Յովնանեան
9. Վահագ Ղազարեան
10. Հրանդ (Իգնատ) Նազարեան
11. Վահագն Աբրահամեան
12. Խաչատուր Հայրապետեան
13. Գարեգին Հարիւչեան

**Մասիս-Մայր խումբ 1895թ.**

1. Ա. Ահարոնեան
2. Յակոբ Կանայեան
3. Սմբատ Աւագեան
4. Տիգրան Աւագեան
5. Ալեքսանդր Ծաւարշեան
6. Նշան Ծաւարշեան
7. Խաչատուր Աբրահամեան
8. Ներսէս Ներսիսեան
9. Յակոբ Հայրապետեան
10. Թոմաս Բարսեղեան
11. Վլաս Բաբլոյեան
12. Աւետիս Սուսանեան
13. Բագրատ Արտազեան

**Արարատ խումբ (1895)**

1. Վահան Պահլաւունի
2. Նիկողոս Պահլաւունի
3. Արսէն Պահլաւունի
4. Յարութիւն երեցփոխ Յովեան
5. Յակոբ Չիլինգարեան
6. Բաղդասար Ծէկոյեան
7. Վարդան Պահլաւունի
8. Համբարձում Այանցեան
9. Յակոբ Մահտեսի Աղախանեան
10. Մելիտոս Պահլաւունի

**Արաքս խումբ 1895-96**

1. Արամ Պահլաւունի
2. Արամ Կանայեան
3. Արամ Տէր-Յարութիւնեան
4. Յարութիւն Տէր-Յարութիւնեան
5. Յարութիւն Կանայեան - Գաբրիէլեան
6. Մուշեղ Բարսեղեան - Աւագեան
7. Յակոբ Կանայեան



8. Նիկողայոս Նազարեան
9. Յակոբ Խաչատրեան
10. Աւետիս Իսաբէկեան
11. Արամ Խուդգարեան
12. Սեդրակ Աւետիսեան
13. Ասատուր Պահլաւունի

**Բարդող խումբ 1896-97**

1. Արտաշէս Պահլաւունի
2. Երուանդ Պահլաւունի
3. Եղիշէ Պահլաւունի
4. Սահակ Պահլաւունի
5. Հայրապետ Կանայեան (Գեորդա)
6. Գեղամ Աթոյեան
7. Մկրտիչ Սորոյեան
8. Արամ Ասոյեան
9. Երուանդ Ասոյեան
10. Պեդրէ Ալոյեան
11. Աշոտ Աբրահամեան
12. Ղուկաս Չիլինգարեան
13. Սուքիաս Աւետիսեան
14. Յակոբ Չիլինգարեան
15. Մարտիրոս Թերզիբաշեան
16. Միսակ Աւագեան
17. Սամսոն Աւագեան
18. Վահրամ Աւետիսեան
19. Հմայակ Իսաբէկեան
20. Վաղարշակ Կանայեան
21. Բագրատ Կանայեան
22. Մկրտիչ Սուսանեան
23. Կարապետ Յովհաննիսեան
24. Մկրտիչ Յովհաննիսեան
25. Յակոբ Ջաքարեան
26. Բագրատ Տ.Յարութիւնեան

**Մաղիկ Սասնոյ խումբ**

1. Գայանէ Պահլաւունի
2. Փեփրոնէ Պահլաւունի
3. Արփենիկ Պահլաւունի
4. Նւարդ Աւագեան
5. Արփենիկ Կանայեան
6. Հռիփսիմէ Կանայեան
7. Աննիկ Կանայեան
8. Անահիտ Կանայեան
9. Սեբաստիա Կանայեան
10. Արիգա Զաքարեան
11. Տիգրանուհի Ներսիսեան
12. Հայկանուշ Բարսեղեան
13. Արտաշամա Պահլաւունի
14. Արուսեակ Տէր-Յարութիւնեան

**Սասուն խումբ 1897**

1. Մեսրոպ Պահլաւունի
2. Արամ Վանեցեան
3. Արմենակ Ղարիբեան
4. Մարկոս Տէր-Մինասեան
5. Երւանդ Աւագեան
6. Արշակ Ասոյեան
7. Միսակ Խաչատրեան
8. Արմենակ Կանայեան
9. Վահան Կանայեան
10. Խաչատուր Մելիք-Վրթանէսեան
11. Եսոր Օրդուեան
12. Երւանդ Ֆրանգեան
13. Յաբէթ Խաչատրեան
14. Սմբատ Նազարեան
15. Եսոր Նարինջեան
16. Գէորգ Ֆիդանեան



**Զէյթուն խումբ 1898**

1. Հմայեակ Պահլաւունի
2. Համազասպ Պահլաւունի
3. Սմբատ Նազարեան
4. Գեղամ Ռշտունի
5. Կարապետ (քհն) Ռշտունի
6. Կարապետ Խշտոյեան
7. Եսոր Խշտոյեան
8. Յովսէփ Սողոմոնեան
9. Շաւարշ Զաքարեան (Կանայեան)
10. Բագրատ Նազարեան
11. Երւանդ Յովնանեան
12. Գրիգոր Տէր-Գրիգորեան

**Մաղիկ խումբ 1898**

1. Հայրապետ Ղարիբեան
2. Դրօ Կանայեան
3. Գեղամ Մահտեսի Մարիամեան
4. Խաչատուր Խաչատրեան
5. Անուշաւան Յովհաննիսեան
6. Անուշաւան Աւագեան
8. Գայանէ Պահլաւունի
9. Վահանուշ Պահլաւունի
10. Սօֆիա Պահլաւունի
11. Ծողակաթ Կանայեան
12. Սիրան Աւագեան
13. Աստղիկ Նազարեան
14. Հայկուհի Ներսէսեան
15. Հայկանդուխտ Ռշտունի
16. Նոյեմզար Բէյբութեան
17. Նոյեմզար Տ. Յարութիւնեան
18. Վիկտորիա Ղարիբեան-Պահլաւունի
19. Հեղինէ Յովհաննիսեան
20. Կալիպսէ Աւագեան
21. Սառա Աղախանեան

**Կառապանների**
1. Կարապետ Ազնաւորեան
2. Արսէն Շահիջանեան
3. Հմայեակ Սարուխանեան
4. Թաթեւոս Խուդոյեան
5. Եղիշէ Նազարեան
6. Յովսէփ Շահբազեան
7. Հայրապետ Աղախանեան
8. Մելքոն Նաւոյեան
9. Աթանէս Խուդոյեան
10. Արամ Հարոյեան
11. Մամիկոն Զաքարեան

**Արարատեան «Մաղիկ» խումբ**
1. Շուշանիկ Պահլաւունի
2. Կալիպսէ Պահլաւունի
3. Վարսենիկ Պահլաւունի
4. Զարմանդուխտ Պահլաւունի
5. Շողակաթ Կանայեան
6. Հրանոյշ Կանայեան
7. Օսաննա Նազարեան
8. Վարդուհի Նազարեան
9. Իզաբելլա Աւագեան
10. Վարդուշ Յովնանեան
11. Վառինկա Աղախանեան
12. Օլգա Աղախանեան
13. Իսկուհի Աւետիսեան

1. Արտաշէս Սուսանեան
2. Երուանդ Ղազարեան
3. Աւետիս Աւագեան
4. Ղազար Ամիրխանեան
5. Սմբատ Ամիրխանեան
6. Եղիշէ Նազարեան
7. Եղիա Նազարեան



8. Տիգրան Նիսաւեան
9. Մամբրէ Տ. Թովմասեան
10. Յակոբ Աւագեան
11. Բագրատ Տ.Մինասեան

**Ուսանողական միութիւն**
1. Վահան Խաչատրեան
2. Գեղամ Տ. Թովմասեան
3. Դաւիթ Լալայեան
4. Լեւոն Տ. Յարութիւնեան
5. Էդուարդ Կանայեան
6. Պարոյր Յարութիւնեան
7. Արշաւիր Շաւարշեան
8. Սուրէն Յովնանեան
9. Ռուբէն Կանայեան
10. Համազասպ Կանայեան

**Երաժիշտների խումբ**
1. Մելքոն
2. Օրդու
3. Ենոք
4. Մուշեղ Սէկոյեան
5. Մկրտիչ Սէկոյեան
6. Վարդան Սէկոյեան
7. Մուկուչ Կանայեան
8. Գրիգոր Մադոյեան
9. Գէորգ Ջուջանեան-Նաւոյեան

1. Օսիկ Ներսիսեան
2. Սարգիս Աւետիսեան
3. Մանուէլ Տէր-Մանուէլեան
4. Վարդան Այանցեան
5. Հրանդ Մարուխեան
6. Յակոբ Հայրապետեան
7. Գարեգին Աւետիսեան

8. Մամիկոն Այանցեան
9. Հայկ Այւազեան
10. Պարոյր Յովհաննիսեան
11. Աղասի Կանայեան
12. Յարութիւն Պահլաւունի
13. Բագրատ Ներսիսեան
14. Հայրապետ Իսաբէկեան
15. Աթանագինէ Պահլաւունի
16. Մկրտիչ (Տոօ) Պահլաւունի

**Կոկոն խումբ 1899**
1. Յակոբջան Սէկոյեան
2. Եղիշէ Պահլաւունի
3. Միսակ Սէկոյեան
4. Անուշաւան Պօղոսեան
5. Յակոբ Ծահինեան
6. Յակոբ Ծահսուարեան
7. Համազասպ Յարութիւնեան
8. Զաւէն Կանայեան
9. Վահագն Կանայեան
10. Թադէոս Ծէկոյեան
11. Վարազդատ Յովնանեան
12. Գարեգին Դաւթեան
13. Սմբատ Դաւթեան
14. Սմբատ Սարխոշեան
15. Վահան Ահարոնեան
16. Արամ Մանուկեան

**Արագած խումբ 1899**
1. Ռուբէն Տէր Յարութիւնեան
2. Վաղինակ Նազարեան
3. Տիգրան Աւետիսեան
4. Մկրտիչ (Մանօ) Ասոյեան
5. Արշաւիր Աւագեան
6. Արամ Եաղուբեան



7. Գէորգ Խշտոյեան
8. Քրիստափոր Զաքարեան
9. Եղիշէ Նազարեան
10. Բագրատ Ռուստամեան
11. Եղիշէ Ռուստամեան
12. Երւանդ Աւետիսեան
13. Սուրէն Միրիմանեան
14. Բագրատ Առաքելեան

**Աւարայր խումբ**
**Կազմուած Վարդանանց տօնի օրը 1900 թւին**
1. Եղիշէ Պահլաւունի
2. Զաւէն Կանայեան
3. Վահան Պահլաւունի
4. Վաղինակ Պահլաւունի
5. Նորայր Պահլաւունի
6. Յովհաննէս Պահլաւունի
7. Անտոն Ռշտունի
8. Բաղդասար Ռշտունի
9. Վաղինակ Խաչատրեան
10. Արտաշէս Եաղուբեան
11. Արշակ Տէր-Յարութիւնեան
12. Գեղամ Սուսանեան
13. Եղիշէ Աբրահամեան
14. Հայկ Խաչատրեան
15. Գարեգին Սարխոշեան
16. Հայրապետ Սարխոշեան
17. Հայրապետ Աւետիսեան
18. Վաղինակ Առաքելեան
19. Տրդատ Աւագեան
20. Ալէք Դաւթեան
21. Պօղոս Քոլոյեան
22 .Հմայեակ Չայչեան
23. Ալէք Ֆրանգեան:

# ՕՐԴՈՒՆ ԵՒ ԻՐ ԱՐԿԱԾՆԵՐԸ

## ԵՂԻՇԷ ՊԱՇԱՅՈՒՆԻ



* * *

Օրդուն բնիկ իգդիրցի էր: Կեապոյենցից, որոնք ազգականներ էին Կանայեան մեծ գերդաստանի: Միակնանի էր:

Օրդուն օժտուած էր արտակարգ ընդունակութիւններով՝ սրամիտ էր, սրախօս, անմրցելի դափահար եւ համով-հոտով պատմող, ստեղծագործող: Առակներով կկսէր բոլոր՝ լուրջ թէ կատակ պատմութիւնները:

Իւր սրախօսութիւնների շնորհիւ, նա մի հայաբնակ մեծ գիւղ՝ Ալիղամարը, թշնամացրեց ու լարեց իր դէմ: Այդ գիւղացիք (շատ կուազան) մեծ թէ փոքր սկսեցին լուրջ հետապնդել Օրդուին տարիներ շարունակ՝ մինչեւ իր տարօրինակ մահը:

Սիրուած էր իգդիրցիներից անխտիր: Հարսանիքների, խնջոյքների, հաւաքոյթների զարդ էր: Իր նւագախմբով դաշնակցականներ էին (Օրդու, Մելքոն եւ Ենօք), վերջին երկուսը երկու աչքերով կոյր էին: Նա «միապետական» դաշնակցական էր: Ծաղրում էր հնչակեաններին, կադետներին (ժողովրդական կոչւած), սիսեռներին՝ այդպէս էր կոչում Սոց-յեղափոխականներին (էսէռներին), (էշ տեռներին), Էսդէկ սոց-դեմոկրատներին եւ ընդհանրապէս բոլոր սոցիալիստներին:

Ռէակցիայի օրերին երբ դժւար էր շրջիկներ ուղարկել շրջանները պրոպագանդայի, կազմակերպչական գործով, Օրդուն իւր երկու ընկերներով, նւագելու անւան տակ, ազատ շրջագայում էին եւ Դաշնակցութեան խօսքը տարածում գիւղից գիւղ, յեղափոխական երգեր սովորեցնում սուրմալուցի երգասէր գիւղացիութեան: Նման մէկ շրջագայութեան ժամանակ, երբ Սուրմալուի գաւառապետ բորենի Բոգոսլաւսկու խիստ կարգադրութեամբ արգելւած էր գիւղից գիւղ առանց յատուկ թոյլտուութեան երթեւեկութիւնը, Օրդուն իւր խմբով գնում է Դաշբուռուն հայկական մեծ գիւղը՝ Մասիսի լանջին, որտեղ այդ օրերին 2րդ գաւառակի կառավարիչն էր Բոգոսլաւսկու սիրելի Ծահզադա Մահամադ միրզան: Նա իր մօտ է կանչում երեքին էլ եւ յայտնում գաւառապետի կարգադրութիւնը ու անցագիր պահանջում:

Օրդուն ցոյց է տալիս ընկերների երկու եւ իւր մէկ աչքերը, պատասխանում է՝ ահա մեր վէչնի (յաւիտենական) պասպորտը՝ անցագիրը: Ծահզադան ծիծաղում է եւ թոյլ տալիս երկու օր մնալու գիւղում:

* * *

